

Յ

Ե

Ղ

Ա

# ՁԵՐ ԳԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Համաձայնության գործընկեր

Փ

Ո

Խ

ՈՒ

# ԿԵՐԻ ՔԻՍԻ

Թ

Ի

Ի

Ն

Ը

Յ

Ե

Ղ

Ա

# ՁԵՐ ԳԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Համաձայնության գործընկեր

Փ

Ո

Խ

ՈՒ

# ԿԵՐԻ ՔԻՍԻ

Թ

Ի

Ի

Ն

Ը

**Your Financial Revolution, The Power of Allegiance, Western Armenian**  
Copyright © 2020 by Gary Keesee

Originally published in English  
Copyright © 2015 by Gary Keesee  
ISBN: 978-0-9729035-9-2

Gary Keesee Ministries,  
P.O. Box 779, New Albany,  
OH 43054, USA

GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is  
NOT FOR SALE

**Ձեր ֆինանսական Յեղափոխութիւնը. Համաձայնութեան զօրութիւնը,  
արեւմտահայերէն**

© 2021 Կէրի Քիսի

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէնով  
© 2015 Կէրի Քիսի  
ISBN : 978-0-9729035-9-2

Կէրի Քիսիի ծառայութիւն,  
Փ/Ա 779, Նիւ Ալպանի,  
Օհայօ 43054, ԱՄՆ

GaryKeesee.com

Այս գիրքն ԱՆՎՃԱՐ ՆՈՒԷՐ է Կէրի Քիսիի ծառայութենէն եւ ՎԱՃԱՌՔԻ  
ԵՆԹԱԿԱՅ ՉԷ

Այս գիրքին մէջ Կէրի Քիսին կը խօսի այն մասին, թէ ինչպէս շրջադարձօրէն  
փոխուեցաւ իր կեանքը, երբ ինքը կը գտնուէր ֆինանսապէս փլուզուած  
վիճակի մէջ: Հեղինակն այս գիրքին մէջ անկեղծօրէն կը ներկայացնէ իր  
ծայրայեղ վիճակը, ապա կ'առաջնորդէ դէպի Աստուածաշնչեան հրաշագործ  
սկզբունքները: Ճիշդ այս սկզբունքներն անոր վեր բարձրացուցին դէպի  
յաջողակ եւ օրինուած կեանք:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ . . . . .	5
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ . . . . .	7
ԳԼՈՒԽ 1. ԹԱԳԱԲՈՐՈՒԹԻՒՆԸ . . . . .	21
ԳԼՈՒԽ 2. ԿԱՊՈՅՏ ՄՇՈՒՇԸ . . . . .	67
ԳԼՈՒԽ 3. ԿԸ ԽՆԴՐԵ՛Մ, ԱՍՏՈՒԱ՛Ծ, ՈՂՈՐՄԻ՛Ր . . . . .	75
ԳԼՈՒԽ 4. ՀՍԿԱՅ ՁՈՒԿԸ . . . . .	109
ԳԼՈՒԽ 5. Ո՞Վ ԸՆՏՐԵՑ ԱՏԻԿԱ . . . . .	119
ԳԼՈՒԽ 6. ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ . . . . .	161
ԳԼՈՒԽ 7. ԴՈՒՌԸ . . . . .	183
ԳԼՈՒԽ 8. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ . . . . .	193
ԳԼՈՒԽ 9. ԴՈ՛ՒՔ ԿԵՐԱԿՐԵՑԷՔ ԱՆՈՆՑ . . . . .	203
ԳԼՈՒԽ 10. ԿԵՐՑՈՒՐ՝ ԱՌԱՆՑ ՔՐՏՆԵԼՈՒ . . . . .	219
ԳԼՈՒԽ 11. ԹՈՉԻԼԸ ՔԱԼԵԼԷՆ ԴԻՒՐԻՆ Է . . . . .	227



# ՆԱԽԱԲԱՆ

Արդէն քանի մը տարի է՝ ես կը ցանկամ գրի առնել այն ընթացքը, որուն մէջէն Աստուած անցուցած է Տրենտային եւ ինծի: Մեր կեանքն այնքա՛ն փոխուած է: Տարիներ շարունակ մեր աչքերով տեսած ենք բոլոր հրաշքները, որոնք Յիսուսը կը գործէր Աստուածաշունչին մէջ. մեռելները յարութիւն առած են, անդամալոյծները ոտքի կեցած են, քալած են եւ յաջորդ օրը վերադարձած են իրենց աշխատանքին, անթիւ մարդիկ բժշկուած են, եւ հարիւր հազարաւոր մարդոց ֆինանսները վերականգնուած են: Բայց մեծագոյն հրաշքը, որ տեսած ենք, տեղի ունեցած է մեր ընտանիքին եւ մեր կեանքին մէջ:

Իմ նպատակն է անցընել ձեզ այս ընթացքով՝ բացայայտման ընթացքով, որ, յոյսով եմ, պիտի փոխէ ձեր կեանքն այնպէս, ինչպէս որ փոխեց իմը: Ես չեմ կրնար ամբողջութեամբ պատմել այս պատմութիւնը մէկ գիրքով: Այս գիրքն առաջինն է իմ գրքաշարին մէջ, որ կ'առաջնորդէ ձեզ դէպի անձնական ֆինանսական յեղափոխութիւն եւ կը յայտնէ Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդները, որոնք փոխեցին իմ կեանքը: Ինծի համար ասիկա ոգեշնչող ընթացք է, որ երբեք չ'աւարտիր: Բոլորս ալ մշտապէս կը սորվինք: Աստուծոյ Թագաւորութեան գիտելիքն անսպառ է:

Ես այնքա՛ն շնորհակալ եմ Աստուծոյ: Անոր ողորմութիւնը կը նորոգուի ամէն օր, եւ Ան կ'առաջնորդէ մեզ փրկութեան ճանապարհով՝ համբերութեամբ եւ ներողամտութեամբ:

**ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ.** Համաձայնութեան գործիքինը

Հրաւիրելով ձեզ այս ընթացքի մէջ, չեն կրնար չիշատակել իմ հրաշալի կնոջ՝ Տրենտային: Անոր սրտանց նուիրումն Աստուծոյ եւ համբերութիւնն իմ հանդէպ խիզախութիւն տուին ինձի՝ բախելու իմ տկարութիւններուն եւ Աստուծոյ փնտռելու այն պատասխաններուն համար, որոնք խիստ անհրաժեշտ էին ինձի:

Ձեր ֆինանսական յեղափոխութիւնը

*Համաձայնութեան գործիքինը*



# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

*«Ես զրկուած եմ խաղաղութենէն. ես մոռցած եմ, թէ ինչ է բարգաւաճումը»:*

– Ողբ Երեմիա 3.17, NIV

Ես արթնցայ՝ գիտակցելով, որ ինչ որ բան մը բոլորովին սխալ էր: Իմ միտքը համակուեցաւ մեծ վախով: Ես չէի զգար իմ լեզուն: Իմ ձեռքերը, ոտքերը եւ երեսիս մէկ կողմը թմրած էին: Արթնցուցի Տրենտային եւ մեծ դժուարութեամբ ըսի, թէ ինչ կը կատարուէր հետս, քանի որ իմ ամբողջ երեսը եւ լեզուն չէին ենթարկուեր ինծի: Յանկարծ ուշադրութիւն դարձուցի, որ սիրտս շատ արագ կը բաբախէ, իսկ շնչառութիւնս ծանրացած է, մինչ կը պատմէի անոր իմ վիճակը: Ան արթնցաւ եւ անմիջապէս սկսաւ աղօթել ինծի համար: Տարօրինակ եւ վախով լեցուն զգացումները դանդաղօրէն, բայց քիչ մը թեթեւցան: Ես նորէն պառկեցայ մահճակալին, իսկ Տրենտան առաջարկեց ուտելիք բերել: Ես պառկած կ'աղօթէի. շփոթած ու վախցած էի այն պատճառով, թէ ինչ տեղի կ'ունենար իմ մարմինին հետ: Վրայէս կարծես տագնապի ալիքներ անցնէին: Իմ միտքը կ'ենթարկուէր վախերու այնպիսի յարձակման, որոնք նախկինին բնաւ չէի զգացած:

Իմ պարտքերու եւ դրամի մշտական կարիքի պատճառով վախը դարձած էր իմ առօրեայ կեանքի սովորական բաժինը: Ես անասելի ճնշուածութիւն կը զգայի վերջին քանի մը տարուան ընթացքին իմ՝ շարունակ վատթարացող ֆինանսական վիճակին



պատճառով: Ես կ'աշխատէի որպէս վաճառքի գործակալ եւ լուրջ ֆինանսական խնդիրներ ունէի: Մենք վարձքով կ'ապրէինք 1800-ական թուականներուն կառուցուած գիւղական տունի մը մէջ, որ, կը թուէր, կառուցուելէն յետոյ բնաւ չէր վերանորոգուած: Կը կարծեմ՝ ես քիչ մը կը չափազանցնեմ, բայց այդ տունը լաւ վիճակի մէջ չէր: Պատուհաններու շրջանակները բացուածքներ ունէին, եւ բոյսերը կը թափանցէին մեր հիւրասենեակ: Ապակիներէն շատերը կոտրուած էին, եւ մենք կ'աչուն ժապաւէնով ստուարաթուղթ կը փակցնէինք պատուհաններու շրջանակներուն վրայ: Թէեւ Տրենտան շատ կը յոգնէր, ան կրնար յարմարաւէտութիւն ստեղծել, բայց նոյնիսկ անոր զարմանալի հմտութիւններու պարագային, միեւնոյնն է, կ'երեւէր, որ այդ տունը բազմաթիւ լուրջ թերութիւններ ունէր:

Այն ամէնը, ինչ որ մենք ունէինք, անսարք վիճակի մէջ էր: Մեր երկու ինքնաշարժներն ալ հին էին. ատոնց վազքն աւելի քան 350.000 քիլոմէթր էր, եւ շարժիչները հազիւ կը միանային: Մեր երկու տղաները կը քնանային ծերանոցի մը կողմէ մէկ կողմ նստուած ներքնակներու վրայ. անոնց ննջասենեակի յատակի գորզը բերուած էր աղբանոցէն: Գրաւատուները դարձած էին մեր կենսառձը, եւ մենք պարտք կը վերցնէինք անոնցմէ, որոնք, մեր կարծիքով, կրնային օգնել մեզի: Մենք հազիւ կը հոգայինք մեր կարիքները, կը գտնէինք վաճառքի ենթակայ բաներ, կը փորձէինք գոյատեւել եւ յոյս ունէինք, որ յաջորդ օրն ինչ որ բան մը պիտի փոխուէր դէպի լաւը:

Իմ տասը սպառած վարկային քարտերն արգելափակուած էին ամիսներ առաջ, եւ ֆինանսական ընկերութիւններուն մէջ իմ ունեցած տարեկան 28 տոկոսով երեք վարկերը ներկայացուած էին բռնագանձման: Մեր ինքնաշարժներու վճարումները (այդ, ես տակաւին պարտք ունէի իմ երկու անչափ հին ինքնաշարժներուն համար) ուշացած էին 120 օրով, եւ մենք ինքնաշարժներու առգրաւման եզրին էինք: Իմ բոլոր վճարումներն ուշացած էին: Իմ դէմ կ'ըլլային դատական հայցեր եւ արգելանքներ, եւ գանձումներու մասին ծանուցող հեռախօսագանգերը կ'արթնցնէին ինձի ամէն առաւօտ: Ես պարտք էի Հարկային տեսչութեան, եւ անոնք արգելանք դրած էին իմ եկամուտներուն վրայ՝ հարկային պարտաւորութիւններուն

պատճառով: Տրենտան եւ ես պարտք էինք մեր ծնողներուն 26.000 տոլար, եւ անոնք յոգնած էին մեզի օգնելէն: Մեր սառնարանը հազուադէպ լեցուած կ'ըլլար մթերքներով: Ելելկորականութիւն մատակարարող ընկերութիւնը մշտապէս կը սպառնար անջատել մեր հոսանքը, երբեմն՝ ամէն ամիս: Եւ զգացմունքօրէն ես արդէն անկարող էի դիմանալ այդ վիճակին:

Այդ ճնշուածութիւնը կը վնասէր իմ մարմինը, թէեւ ես չէի հասկնար ատիկա: Քանի մը բժիշկի այցելելէն յետոյ ինձի ըսին, որ ես խուճապի նոպայ ունեցած եմ, եւ հակաընկճախտային դեղամիջոցներ (antidepressants) նշանակեցին: Դժբախտաբար, խուճապի նոպաները շարունակուեցան եւ դարձան յաճախակի՝ այն աստիճան, որ կը վախնայի դուրս ելլելու տունէն: Այդ վախով լեցուն մշուշոտ օրերու ընթացքին, երբ ես պատասխաններ կը փնտռէի, նկատեցի, որ շաքար, օսլայ (նշայ) կամ սրճիտ (քաֆէին) պարունակող որոշ կերակրատեսակներ իրենց հերթին խուճապի նոպաներ կը յառաջացնէին քովս: Այժմ ես կը վախնայի ամէն տեսակի կերակուրներ ուտելէն եւ զգուշօրէն կ'ընտրէի այն, ինչ որ պիտի ուտէի: Իմ կեանքը վերածուեցաւ գերութեան՝ այն աստիճան, որ ես չէի կրնար աշխատիլ, ինչ որ, անշուշտ, ա՛լ աւելի վատթարացուց մեր ֆինանսական վիճակը:

Կինս կը մտածէր, որ պիտի կորսնցնէր իր ամուսինին. հետագային, երբ բժշկուեցայ, ան ըսաւ, որ բառացիօրէն կը ծրագրէր, թէ ինչ պիտի ընէր, որպէսզի մեր երեխաներուն մասին հոգար: Ես կ'աղաղակէի Աստուծոյ՝ պատասխաններ ստանալու համար, բայց չունէի փորձառութիւն եւ գիտելիք այն մասին, թէ ինչի հետ կը պայքարէի: Բժիշկները կ'օգտագործէին վախ յառաջացնող հիւանդութիւններու անուններ՝ նկարագրելով իմ առողջական վիճակը, եւ կ'ըսէին, որ այն անբուժելի է, եւ որ ես մշտապէս դեղամիջոցներ պիտի ընդունիմ: Այլ բժիշկներ կ'ըսէին, որ ես շաքարախտով հիւանդանալու եզրին եմ՝ պնդելով, որ ես յարմար հիւանդ էի, որուն անոնք կրնային հետեւիլ, քանի որ տարիքի հետ այդ հիւանդութիւնը պիտի զարգանար:

Թէեւ ես քրիստոնէայ էի, սակայն հոգեւոր պատերազմ վարելու եւ թշնամիին հակառակելու փորձառութիւն չունէի: Իրականութեան

մէջ, մինչեւ այդ պահը եւ չէի հասկցած, որ կը պայքարէի դիւային հոգիի հետ: Ես կը մտածէի, որ պարզապէս խնդիր ունէի իմ մարմինին մէջ եւ կը խնդրէի Աստուծմէ, որ բժշկէ ինձի: Որպէս քրիստոնէայ, գիտէի, որ Աստուած էր իմ պատասխանը, բայց այդ ժամանակ կը թուէր՝ Աստուած այնքան հեռու էր: Բժիշկները տարբեր ախտորոշումներ կ'ընէին իմ առողջական վիճակին համար, որոնք կապուած էին մտաւոր խնդիրներու հետ, եւ բոլոր պարագաներուն անհրաժեշտ էր տարատեսակ դեղեր ընդունիլ: Ինչպէս արդէն ըսի, իմ վիճակն անբուժելի կը համարուէր, եւ բուժման միջոցները պարզապէս պէտք էր օգնէին զսպելու իմ մտաւոր վիճակը: Սակայն այդ դեղերը բոլորովին չէին օգներ, եւ ես կողմնակի բարդութիւններ կ'ունենայի: Իրականութեան մէջ, կը կարծեմ՝ ատոնք կ'աւելցնէին իմ ախտանշանները: Կը թուէր՝ ես կ'ապրէի մշուշի մէջ եւ կը չարչարուէի վախով լեցուն մտքերէն, որոնց չէի կրնար վերահսկել: Ես չունէի պատասխաններ, եւ ոչինչ կ'օգնէր ինձի: Այսպէս շարունակուեցաւ քանի մը շաբաթ, եւ իմ յուսահատութիւնն աւելցաւ, քանի որ կը թուէր՝ վախը պիտի խլէր կեանքս:

Բայց երեկոյ մը, երբ Աստուծոյ կը փնտռէի՝ պատասխաններ ստանալու համար, եւ մեծ ճեղքում ունեցայ: Բացայայտեցի կարեւոր բանալի մը՝ ազատութիւն ստանալու համար: Ես եկեղեցւոյ մէջ էի Չորեքշաբթի երեկոյեան ծառայութեան: Փառաբանութեան եւ երկրպագութեան ժամանակ հետս խուճապի ուժգին նոպայ սկսաւ: Ես չէի գիտեր ինչ ընել: Անյոյս վիճակի մէջ էի եւ գիտէի, որ աղօթքի կարիք ունէի. այնպէս որ, առջեւ գացի: Ինձի չէր հետաքրքրեր, որ ես կ'ընդհատէի ծառայութիւնը: Ես կը յաճախէի շատ մեծ եկեղեցի մը, եւ հովին անձամբ չէր ձանձնար ինձի, բայց փառաբանութեան եւ երկրպագութեան խումբի անդամներէն մէկը, որ կ'աշխատէր եկեղեցիին մէջ, ինձի կը ձանձնար: Ես յուսահատութենէն գրեթէ մազլցեցայ բեմին վրայ. ամէն ինչ կանգ առաւ, եւ բոլորը նայեցան ինձի: Եկեղեցւոյ աշխատակիցը, որ ինձի կը ձանձնար, արագօրէն արծազանգեց՝ տեսնելով, որ կարգուկանոնի ծառայողներն առջեւ կու գային՝ ինձի հեռացնելու համար:

Երբ ան պատմեց հովիւին իմ վիճակը, եւ տեսայ, որ հովիւին

դէմքի արտայայտութիւնը մեղմացաւ: Ան մօտեցաւ եւ աղօթեց ինծի համար: Իմ ընկերը կ'ըսէր հովիւին, որ ես հիւանդ եմ: Հովիւը նայեցաւ ինծի եւ ըսաւ.

- Ան տկարութեան հոգի ունի:

Այդ խօսքերով ան դրաւ իր ձեռքերն իմ գլխուն եւ հրամայեց այդ հոգիին հեռանալ: Այդ պահուն կատարուեցաւ անհաւանական բան մը. ես ազատութիւն ստացայ: Առաջին անգամ ըլլալով՝ քանի մը ամսուան ընթացքին ես լաւ կը զգայի՝ առանց տանջող մտքերու եւ վախի. ես պարզապէս խաղաղ էի: Ըսելը, որ շնորհակալ էի, կը նշանակէր բան մը չըսել: Այն, ինչ որ կը զգայի, շատ աւելին էր ոգեշնչումէն: Գլուխս կարծես կը դառնար. ես փետուրի պէս թեթեւ կը զգայի եւ լեցուած էի ուրախութեամբ:

Հաւաքոյթէն յետոյ Տրենտան եւ ես գացինք «Փիցցա Հաթ» մեր ընկերներէն քանի մը անձերու հետ՝ տեղի ունեցածը նշելու համար: Մինչ նստած փիցցա կ'ուտէինք, կը յիշեմ, որ ռատիոյով երգ մը միացաւ, եւ յանկարծ զգացի վախի նոյն տհաճ զգացումը, որ իմ վրայ եկաւ ծածկոցի մը պէս. այն վերադարձաւ: Կրկին, այդ ժամանակ ես հասկցայ, որ աստիկա հոգի էր: Հովիւը ըսած էր, որ աստիկա տկարութեան հոգի էր, բայց ես չէի գիտեր, թէ իրականութեան մէջ աստիկա ինչ կը նշանակէր, եւ ես քիչ մը շփոթած էի: Մտածեցի, որ բժշկուած եմ այդ հաւաքոյթին, բայց կը պարզուի՝ ո՛չ: Յաջորդ օրը ես կրկին կը պայքարէի խուճապի նոպաներու հետ, բայց շարունակ կը մտածէի այն մասին, թէ ինչ կատարուեցաւ եկեղեցւոյ մէջ նախորդ երեկոյեան: Երբ հովիւն աղօթեց ինծի համար, ան չաղօթեց, որ ես բժշկուիմ: Ան իշխանութիւն վերցուց այդ հոգիին վրայ: Այն, որ ես այդ կերպով արծագանգեցի իմ հովիւին, կարծես թէ ցոյց կու տար, որ թերեւս իմ վիճակի պատճառը հոգի էր, ոչ թէ հիւանդութիւն (կրկին, դուք կրնաք հասկնալ, թէ որքան ոչ հասուն էի եւ Քրիստոսի մէջ, քանի որ չէի հասկնար աստիկա): Այդ պահուն ես շատ քիչ տեղեկութիւն ունէի հոգեւոր պատերազմի մասին, բայց հաստատ գիտէի, որ դելերն իրական են: Մէկ անգամ տեսած էի դել մը:

Երբ երիտասարդ էի, ես կը ղեկավարէի ծնողներու պատկանող

երկու փիցցայի սրահներէն մէկը: Երեկոյ մը մերս մտաւ մարդ մը եւ ըսաւ, որ ինքն արթնութեան հաւաքոյթներ պիտի առաջնորդէ մեր դիմացը գտնուող տեղական Մեթոտիստական եկեղեցիին մէջ: Ան առաջարկեց ինծի մասնակցիլ այդ հաւաքոյթներուն եւ աւարտեց իր հրաւերը հետեւեալ խօսքերով.

- Յիսուսը տակաւին կ'ընէ նոյն բաները, ինչ որ կ'ընէր Աստուածաշունչին մէջ:

Ատիկա գրաւեց իմ ուշադրութիւնը: Ես մեծցած էի եկեղեցւոյ մէջ: Ես յանձնած էի իմ սիրտը Տիրոջը 5-րդ դասարանին՝ արձակուրդային (ամառնային) Աստուածաշնչեան դպրոցը սորվելու ժամանակ: Բայց ատկէ յետոյ տարիներ շարունակ ոչ մէկ անգամ տեսած էի, որ Աստուծոյ գորութիւնը կը բժշկէր ինչ որ մէկուն: Չկար բան մը՝ կապուած Աստուծոյ հետ, ինչն իսկապէս գրաւէր իմ ուշադրութիւնը: Այնպէս որ, ես հեռացայ Տիրոջմէն դպրոցական տարիներուն: Ժամանակ առ ժամանակ կրկին եկեղեցի յաճախելու որոշում կը կայացնէի, բայց կը թուէր՝ իմ հետաքրքրութիւնը երկար չէր տւեր: Իսկ այդ մարդն ուրիշ ձեւով կը խօսէր: Մի՞թէ Յիսուսը տակաւին կ'ընէր նոյն բաները, որոնք կ'ընէր Աստուածաշունչին մէջ: Իմ աշխատողներէն քանի մը հոգի կը յաճախէին այդ եկեղեցին. անոնք խրախուսեցին ինծի մասնակցելու այդ հաւաքոյթներուն, եւ ես որոշեցի երթալ:

Առաջին օրը՝ երեկոյեան, երբ հոն էի, ես այնպէս զգացի Աստուծոյ ներկայութիւնը, ինչպէս նախկինին երբեք չէի զգացած: Կը թուէր՝ կրնայի իրականութեան մէջ զգալ Աստուծոյ ներկայութիւնը. այն շօշափելի էր: Այն ուղերձը, որ այդ մարդը քարոզեց, ազդեցիկ էր, եւ երբ ան հարցուց՝ արդեօ՞ք ինչ որ մէկը կը ցանկայ նուիրել կամ կրկին նուիրել իր կեանքը Յիսուսին, ես բարձրացուցի ձեռքս: Ինչպիսի՞ երեկոյ: Ես ոգեշնչուած էի: Ես կ'ուզէի պատմել բոլորին, թէ որքան մեծ է Աստուած:

Այդ ժամանակ չկար համացանց, լսասկաւառակներ եւ լսածապաւէններ, եւ մեր հեռատեսիլը երեք ալիք ունէր: Մեր քաղաքը փոքր էր, եւ աշխատանքային ժամերէն յետոյ գրեթէ ոչ մէկ զբաղում

կար: Այնպես որ, երիտասարդները սովորաբար կը նստեին փիցցայի սրահը մինչեւ ուշ գիշեր՝ ժամանակ անցընելու համար: Սովորաբար մենք հոն կ'ըլլայինք Ուրբաթ եւ Շաբաթ երեկոները՝ գիշերուան ժամը 1:00-ին, իսկ մեր կառատունն ամբողջովին զբաղած կ'ըլլար երիտասարդներու ինքնաշարժներով: Շատ յաճախ ես ստիպուած կ'ըլլայի վռնտելու անոնց, քանի որ իրենց պատճառով իմ յաճախորդներն ինքնաշարժները կայանելու տեղ չէին գտներ: Հոն կռիւներ կը սկսէին, եւ ոստիկանութիւնը ստիպուած կ'ըլլար վերջ տալու ատոնց եւ տուն ուղարկելու երիտասարդներու: Եւ միտք մը ծագեցաւ. այդ երիտասարդները պէտք է լսէին Յիսուսին մասին: Ես մօտեցայ անոնց եւ ըսի, որ եթէ անոնք կ'ուզեն մնալ փիցցայի սրահը, ես Աստուածաշունչի ուսումնասիրութիւն պիտի անցընեմ: Կ'ուզեմ, որ հաշուի առնէք, որ ատիկա տեղի պիտի ունենար մօտաւորապէս գիշերուան 01:30-ին, քանի որ ես պէտք է մաքրէի ամէն ինչ եւ փակէի սրահը 1:00-1:30-ը: Ես չէի գիտեր՝ արդեօ՞ք անոնցմէ ոեւէ մէկը կու գար, բայց քանի մը հոգի եկան, եւ իմ աշխատողներէն քանի մը հոգի նոյնպէս մնացին: Առաջին հանդիպումին գիշերը երիտասարդներէն մէկն ըսաւ, որ կ'ուզէ ծառայել Քրիստոսին, եւ հարցուց ինձի, թէ ինչ պէտք է ընէ: Այս հարցումը խնդիր յառաջացուց ինձի համար, քանի որ ես տակաւին չէի մտածած այդ մասին: Յիշեցէք՝ ըստ էութեան, ես տակաւին ոչինչ գիտէի Աստուածաշունչի մասին, բայց կարդացած էի խօսք մը, որ, իմ կարծիքով, պատասխան էր այդ իրավիճակին.

*«Եւ... ան, ով որ Տիրոջ անունը կանչէ, կը փրկուի»:*

– Գործք 2.21

Ատիկա բաւականին պարզ կը թուէր, եւ ես որոշեցի, որ մենք այդպէս ալ պիտի ընենք: Խումբն արդէն գացած էր, երբ այդ երիտասարդը մօտեցաւ ինձի այդ հարցումով, եւ ես առաջարկեցի անոր նստիլ աթոռին եւ ըսել Յիսուսին անունը: Ես կը կարծէի, որ ատիկա շատ դիւրին էր, բայց նստայ անոր քով աւելի քան երկու վայրկեան, եւ ան ոչինչ ըսաւ: Ես կրկնեցի իմ հրահանգը՝ մտածելով, որ ան չէ լսած ինձի: Կրկին՝ ոչինչ: Յանկարծ նկատեցի, որ ան կը

ցնցուի: Անոր դէմքին արտայայտութենէն հասկցայ, որ չի կրնար արտաբերել այդ անունը: Յանկարծ, պայթող ամբարտակի պէս, ան ըսաւ Յիսուսին անունը, եւ անոր դէմքը խաղաղեցաւ: Ամէն ինչ յաջողեցա՛ւ: Եւ ես այդպէս կը վարուէի ամէն անգամ, երբ ինչ որ մէկը կը ցանկար նուիրել իր սիրտը Տիրոջը: Ես կը խնդրէի երիտասարդներուն նստիլ աթոռին եւ ըսել Յիսուսին անունը: Գրեթէ առանց բացառութեան, անոնք չէին կրնար անմիջապէս արտաբերել այն: Անոնք կը սկսէին ցնցուիլ, իսկ յետոյ, կարծես դժուարութեամբ, յանկարծ կ'ըսէին Յիսուսին անունը եւ կը խաղաղէին:

Մէկ անգամ, երբ խմոր կը պատրաստէի փիցցայի սրահի խոհանոցը, ես լսեցի դրան թակոց: Բանալով՝ տեսայ երկու երիտասարդ, որոնց հետ նախկինին խօսած էի Քրիստոսին մասին: Ներս հրաւիրեցի անոնց, եւ մէկն ըսաւ, որ կ'ուզէ նուիրել իր սիրտն Աստուծոյ: Ես նստայ անոր աթոռին, եւ, ինչպէս միշտ, ան սկսաւ ցնցուիլ եւ վերջապէս ըսաւ Յիսուսին անունը: Վեր նայելով, ես տեսայ, որ միւս երիտասարդը ետ գացած էր եւ վանդակի մէջ փակուած կենդանիի պէս սեղմուած խոհանոցին անկիւնը: Ան կարծես կը փորձէր պատը մտնել եւ ա՛լ աւելի հեռանալ ինձմէ: Ատիկա շատ տարօրինակ էր, եւ ես չէի կրնար բացատրել:

Ես կը նայէի անոր, եւ յանկարծ միտք մը ծագեցաւ. «Թերեւս անոր մէջ դե՞լ կայ»: Ես ոչ մէկ փորձառութիւն ունէի դելերու հետ, բայց կարդացած էի ատոնց մասին Աստուածաշունչին մէջ: Ես իսկապէս չէի կրնար ուրիշ ձեւով բացատրել անոր տարօրինակ վարքը: Եւ ըսի. «Յիսու՛ս, անոր մէջ դե՞լ կայ»: Յանկարծ, կարծես քող մը հեռացաւ, եւ ես տեսայ դել մը, որ կախուած էր այդ տղային քովէն: Դելը մէկ մեթրէն քիչ մը բարձր հասակ ունէր, ան բռնուած էր այդ տղայէն՝ ոտքերով փաթթուելով անոր: Մարդիկ միշտ կը հարցնեն ինձի. «Ինչպիսի՞ն էր ան»: Ան նման էր կապիկի, բայց այլ տեսակի էր: Ան մագոտ էր՝ կապիկի պէս, անոր ձեռքերը երկար էին՝ կապիկի պէս, բայց ան ունէր վառ կարմիր աչքեր եւ տծել կազմուածք: Այն պահուն, երբ տեսայ այդ աչքերը, ճչացի: Այն ատելութիւնը, որ ես տեսայ այդ դելին աչքերուն մէջ, աւելին էր, քան կրնայի կրել: Այն, ինչ որ ես տեսայ այդ աչքերուն մէջ, լաւագոյնս կարելի է անուանել

հեղուկ ատելություն, ներթափանցող ատելություն, որ գրեթե շօշափելի էր: Ես անմիջապես հասկցայ, որ ան ոչ միայն կ'ատեր ինձի, այլև խիստ բարկացած էր իմ վրայ:

Եւ ի՞նչ: Ես չէի գիտեր ինչ ընել, երբ տեսայ այդ դեւը: Բայց մտածեցի, որ եթէ Յիսուսին անունը կը բերէ մեզ Աստուծոյ Թագաւորութեան մէջ, այն պէտք է որ նաեւ իշխանութիւն ունենայ այդ դեւին վրայ, եւ ես բարձրաձայն ըսի.

- Յիսուսի անունով:

Քողն ակնթարթօրէն փակուեցաւ: Եթէ կը յիշէք հին սեւ-սպիտակ հեռատեսիլները, երբ կ'անջատէիք, վերջին պատկերը դանդաղօրէն կը մարէր էքրանէն: Ահա թէ ինչպէս ատիկա եղաւ: Ես չէի տեսներ այդ դեւին, բայց կը տեսնէի այդ մարող պատկերը: Երբ քողը փակուեցաւ, այդ երիտասարդն անմիջապէս դուրս վազեց խոհանոցէն:

Այնպէս որ, ես գիտէի, որ դեւերն իրական են: Երանի՛ կարենայի ըսել, որ հասկնալով, որ գործ ունէի դիւային հոգիին հետ, ես անմիջապէս հեռացուցի այն ինձմէ եւ այդ պահէն սկսայ ապրիլ ազատութեան մէջ: Բայց ատիկա անմիջապէս տեղի չունեցաւ: Յաւալի է, որ, տարիներ շարունակ եկեղեցիին մէջ ըլլալով, ես այդպէս ալ ժամանակ չէի յատկացուցած, որպէսզի իմանայի, թէ ով էի ես Քրիստոսին մէջ, եւ սորվէի կիրառել իմ օրինական իրաւունքները ընդդէմ թշնամիին: Բայց այժմ, երբ հասկցայ կամ, առնուազն, կասկածեցայ, որ թերեւս գործ ունէի դիւային հոգիի հետ, ես խրախուսուեցայ՝ իմանալով, որ կրնայի սորվիլ, թէ ինչպէս պարտութեան մատնել այն: Ես բաւականաչափ գիտելիք ունէի՝ հասկնալու համար, որ դեւը պէտք է հնազանդէր իմ իշխանութեան, բայց ես շփոթած էի, քանի որ ատիկա տեղի չէր ունենար: Քանի մը օր յետոյ ես ունեցայ եւս մէկ դրական փորձառութիւն, որ հաստատեց, որ ես գործ ունէի դիւային հոգիի հետ:

Ես կ'աղօթէի Սուրբ Հոգիով իմ մնջատեսնակը եւ վճռած էի այնքան աղօթել, մինչեւ որ հասկնայի, թէ ինչ կը կատարուէր: Այդ աղօթքին ընթացքին յանկարծ թեթեւութիւն զգացի եւ կրկին ազատութիւն վերապրեցայ, ինչպէս այն ժամանակ, երբ հովիւն աղօթեց ինձի համար:



Այդ գիշեր ես մնացի ազատութեան մէջ գրեթէ երկու ժամ, մինչեւ որ այդ դէւը վերադարձաւ, բայց ես արդէն բոլորովին համոզուած էի, որ գործ ունէի դիւային հոգիի հետ, եւ որ այն հնազանդեցաւ աղօթքին: Ես կրկին փորձեցի աղօթել, բայց ոչինչ կատարուեցաւ: Այնպէս որ, սկսայ հոգեւոր պատերազմի մասին կարդալ եւ ժամանակ տրամադրեցի՝ սորվելու, թէ ով եմ ես Քրիստոսին մէջ: Բայց այդ դէւը, միեւնոյնն է, չէր հեռանար: Այն հնազանդած էր իմ իշխանութեան միայն մէկ անգամ՝ աղօթքի ժամանակ: Ես շփոթած էի, եւ ջերմեռանդօրէն հարցուցի Տիրոջը, թէ ինչ պէտք է ընեն: Թէեւ չէի կրնար լիարժէք ազատութիւն ստանալ, ես այլեւս խուճապի նոպաներ չէի ունենար, եւ մարմինս թմրածութիւնը բոլորովին անցած էր: Այնպէս որ, ես արդէն իսկ մեծ յաղթանակներ ունեցած էի: Ես դեռ կը պայքարէի տանջող մտքերու եւ ընկճուածութեան հետ, բայց վստահ էի, որ աւելի կը զօրանայի: Ես ամէն օր ժամանակ կը տրամադրէի՝ վերանայելու համար այն, ինչ որ Աստուածաշունչը կ'ըսէ Քրիստոսի մէջ մեր իշխանութեան մասին:

Մէկ անգամ ես կը պայքարէի արդէն ծանօթ սարսափի եւ վախի մտքերու հետ, մինչ կ'աշխատէի իմ գրասենեակը: Ես փորձեցի աղօթել եւ հրամայել վախի հոգիին հեռանալ, բայց, ինչպէս միշտ, ատիկա ոչ մէկ արդիւնք տուաւ: Յանկարծ լսեցի Տիրոջ ծայնը: Ան պատուիրեց, որ բարձրաձայն՝ իշխանութեամբ, հրամայեմ այդ հոգիին հեռանալ: Ատորմէ յետոյ Ան ըսաւ եւս բան մը, ինչ որ փոխեց այն, թէ ինչպէս ես կը դիտարկէի հոգեւոր իշխանութիւնը: Ան պատուիրեց ուշադրութիւն չդարձնել իմ զգացումներուն, երբ կը հրամայեմ անոր հեռանալ, այլ յենիլ Իր Խօսքին վրայ, ոչ թէ այն բանին, թէ ես ինչ կը տեսնէի եւ կը զգայի: Ես կ'աշխատէի իմ գրասենեակը, եւ չէի կրնար պարզապէս կանգնիլ եւ պոռալ սատանային վրայ, քանի որ իմ աշխատողները նոյնպէս հոն էին: Այնպէս որ, ես ոտքի ելայ, գացի զուգարան եւ բարձրաձայն ըսի.

- Յիսուսի անունով, ես կը կապե՛մ քեզի, վախի՛ հոգի: Այն, ինչ որ դուն կ'ընես, անօրինական է, եւ ես կը հրամայեմ քեզի հեռանալ ճիշդ հիմա՝ Յիսուսի անունով:

Ոչի՛նչ. ես ոչ մէկ փոփոխութիւն զգացի: Բայց յիշեցի այն, ինչ որ Տէրը ըսաւ ինձի. «Ուշադրութիւն մի՛ դարձնէր քու զգացումներուն»:

Ես գոհացայ Տիրոջմէն այն իշխանութեան համար, որ Ան տուած էր ինձի, եւ սկսայ փառաբանել Աստուծոյ, որ ես ազատ եմ: Ես վերադարձայ իմ գրասենեակ եւ կրկին աշխատանքի անցայ: Ես նստած էի իմ սեղանին քով, ու թէեւ ոչ մէկ փոփոխութիւն կը զգայի, ես պարզապէս կը գոհանայի Տիրոջմէն, որ ազատ էի, ամէն անգամ, երբ վախը կը յարձակէր իմ մտքին վրայ: Մինչ կ'աշխատէի յաճախորդներէն մէկուն թղթապանակին հետ, յանկարծ զգացի, որ Աստուծոյ ներկայութիւնն իջաւ իմ վրայ, եւ ես տեսայ սեւ թեթեւ ամպ, որ հեռացաւ ինձմէ, եւ արագօրէն անհետացաւ՝ անցնելով իմ գրասենեակի առաստաղին մէջէն:

Ես ազա՛տ էի:

Վախի դիւային հոգին հեռացաւ, եւ եթէ ան վերադառնար, ես գիտէի, թէ ինչպէս պարտութեան մատնէի: Ես այնքա՛ն ոգեշնչուած էի: Զանգեցի Տրենտային եւ պատմեցի այն, ինչ որ քիչ առաջ տեղի ունեցած էր: Ան ըսաւ, որ պիտի գայ քովս, եւ մենք պիտի տօնենք ատիկա չինական ճաշարանի մը մէջ (որ իմ նախընտրելի վայրն էր): Ես ստիպուած էի այդ օրուընէ յետոյ, վախի հոգիի դէմ իմ դիրքորոշումը կրկնելու շատ անգամներ, քանի որ դեւերը դիւրաբար չեն յանձնուիր: Ու թէեւ այդ դեւը հեռացաւ, իմ կեանքին մէջ տակաւին ֆինանսական քաոս էր: Եւ վախը շարունակ կը փորձէր կրկին յիշեցնել իր մասին իմ մտքին մէջ՝ իմ ֆինանսներու վերաբերեալ, եւ ես պէտք է սորվէի, թէ ինչպէս վերահսկէի իմ միտքը եւ պահէի այն խաղաղութեան մէջ:

Կային այլ մարտեր, որ ես պէտք է մասնակցէի եւ սորվէի իմ կեանքի ընթացքին, ինչպէս նաեւ շատ այլ հոգեւոր դասեր Աստուծոյ Թագաւորութեան մասին, որոնք տակաւին պէտք է սորվիմ, բայց ես կ'ուզէի պատմել ձեզի այս պատմութիւնը, որպէսզի ցոյց տայի, որ ես կը հասկնամ, թէ ինչպէս ֆինանսական ճնշուածութիւնը կ'ազդէ մարդոց վրայ եւ դուռ կը բանայ տանջող վախերու համար:

Կ'ուզեմ, որ վստահաբար գիտնաք, որ ես եղած եմ այդ վիճակին մէջ:

Այսպիսով, անկախ այն բանէն, թէ ինչպիսի խառնաշփոթ

վիճակի մէջ էք դուք այսօր, կայ յոյս: Երանի՛ ես աւելի կանուխ գիտնայի Աստուծոյ Թագաւորութեան մասին: Ցաւալի է մտածելը, որ Տրենտան եւ ես կ'ապրէինք ֆինանսական քառսի մէջ ինը տարի, այնինչ այդպէս պէտք չէ ըլլար:

Դժբախտաբար, մեր ֆինանսական խառնաշփոթը մեր կեանքի աննշան մասնիկը չէր. այն կը զբաղեցնէր մեր ամբողջ կեանքը: Այն մեր կենսատճն էր: Ինը տարի, որոնց ընթացքին մենք շարունակ դրամ կը խնդրէինք. յիշողութիւններ նուաստացուցիչ իրադարձութիւններու եւ հանգամանքներու մասին: Ես կը գերադասէի իսպառ մոռնալ այդ ամէնը: Օրհնեա՛լ ըլլայ իմ կինը: Այդ տարիներու ընթացքին ան այնքա՛ն բաներու դիմացաւ: Եւ այդ պատճառով ալ ամէն անգամ ես կը փորձեմ օրհնել անոր:

Ինչպէս որ Տէրը սորվեցուց ինձի պարտութեան մատուցել վախի դիւային հոգիին, այնպէս ալ Ան սկսաւ սորվեցնել ինձի վարուիլ իմ ֆինանսներու հետ՝ հոգեւոր տեսանկիւնէն: Այն ամէնը, ինչ որ Աստուած սորվեցուց Տրենտային եւ ինձի, եւ ինչ որ Ան ցոյց տուաւ մեզի մեր ֆինանսներու վերաբերեալ, այն աստիճան փոխեց մեր կեանքը եւ այնքան շրջադարձային էր, որ մենք որոշում կայացուցինք նուիրել մեր կեանքի մնացած մասը՝ օգնելով մարդոց բացայայտելու նոյն սկզբունքները:

Տրենտան եւ ես անցում կատարեցինք անյուսօրէն սնանկ վիճակէն եւ մեր ինքնաշարժները գնեցինք կանխիկ գումարով, մեր երազանքի տունը կառուցեցինք առանց որեւէ պարտքի, բազմաթիւ ընկերութիւններ հիմնադրեցինք եւ հեռարձակեցինք «*Ֆինանսներու կարգաւորում*» ամենօրեայ հեռուստահաղորդումն աշխարհի բոլոր ժամային գօտիներուն մէջ: Տրենտան նոյնպէս սկսաւ «*Տրենտա*» շաբաթական հեռուստահաղորդումը, որ կը հեռարձակուի «ԷյՊիՍի Ընտանիք» հեռուստատեսային ցանցին մէջ, որպէսզի օգնէ ընտանիքներուն ճիշդ կեանք կառուցելու եւ խրախուսէ կիներուն: Մենք զգացինք, որ Աստուած կ'առաջնորդէր մեզ հիմնադրելու «Հաւատքի կեանք» եկեղեցին, ուր մենք ամէն շաբաթ հազարաւոր մարդոց կը սորվեցնենք Աստուծոյ Թագաւորութեան մասին: Այժմ տարեկան միլիոնաւոր տոլարներ կը

Ժախսենք մեր ամբողջ գործունեության համար. այս գիրքը գրելու պահուն կը ծախսենք աւելի քան 200.000 տոլար ամէն ամիս՝ միայն մեր հեռուստահաղորդումները պատրաստելու եւ հեռարձակելու համար: Անշուշտ, այս ամէնն անկարելի կ'ըլլար, եթէ Աստուած չսորվեցնէր մեզի այն, ինչ որ մենք կը ցանկանք սորվեցնել ձեզի այս գրքաշարին մէջ: Ես չեմ ուզեր, որ դիտարկէք այս գիրքը որպէս հերթական ձեռնարկ ֆինանսներու մասին: Ասիկա հերթական ձեռնարկը չէ այն մասին, թէ ինչպէս պիտոճէ կազմել, թէեւ ատիկա, հաւանաբար, անհրաժեշտ է եւ խրախուսելի: Ասիկա հերթական ձեռնարկը չէ այն մասին, որ եթէ ձեր եկամուտը չի բաւականացներ, դուք պէտք է կրճատէք ձեր ծախսերը:

Ո՛չ, այս գիրքը յեղափոխութեան՝ խաւարի թագաւորութեան եւ ասոր խեղդող աղքատութեան դէմ ապստամբելու մասին է: Այս գիրքը խեղաթիւրուած իշխանութեան սահմանափակումներէն ազատելու եւ կեանքի նոր ընթացք սկսելու մասին է: Իմ պատասխանն ընդհանուր ֆինանսական խորհուրդներ չեն: Ես հասկցայ, որ ինձի անհրաժեշտ էր ամբողջական ֆինանսական հիմնանորոգում՝

### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՄՈՒԹ՛ԻՆ:**



## ԳԼՈՒԽ 1

# ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ներածության մէջ ես պատմեցի ձեզի, որ իմ կեանքը համակուած էր տանջալի վախով: Այնպէս որ, կը կարծեմ՝ կարելի է, որ սկսինք մեր ընթացքը հետեւեալ պնդումով, որ դուք պէտք է իրականութեան մէջ հասկնաք. ՄԻ՝ ՍՈՐՎԻՔ ԱՊՐԻԼ ՎԱՆՈՎ: Վախը դուռ կը բանայ ամէն տեսակի դիւային ազդեցութիւններու, շփոթութեան եւ ընկճուածութեան համար, ինչպէս որ մենք տեսանք ատիկա իմ կեանքին մէջ, եւ ինչպէս որ ատիկա տեղի կ'ունենայ միլիոնաւոր մարդոց կեանքերուն մէջ: Ես համոզուած եմ, որ ֆինանսական խնդիրներն այն հիմնական գործօններէն են, որոնք դուռ կը բանան վախի համար: Արդէն 34 տարի է՝ իմ ֆինանսական ծրագրաւորման ընկերութեան միջոցով ես կ'օգնեմ մարդոց ֆինանսական խնդիրներու մէջ եւ պարզեցի, որ միակ մարդը չեմ, որ կեանքին մէջ կը բախի ֆինանսական խնդիրներու:

Իրականութեան մէջ, իմ կողմէն եղած հետազօտութեան արդիւնքով ես պարզեցի, որ Ամերիկայի բնակչութեան 23 տոկոսը նոյնիսկ չի կրնար կատարել պարտքերու նուազագոյն վճարումները եւ դանդաղօրէն կը սահի դէպի ֆինանսական մոռացութիւն<sup>1</sup>: Խօսքն ամբողջ երկրի մը մէկ չորրորդի մասին է: Մեր երկրի բնակչութեան մէկ վեցերորդը՝ 47 միլիոն մարդ, կ'ապրի սնունդի կտրօններով, եւ տասը

---

1 Թրէյսի Թըրնըր. «Պարտքը մարդոց մեծագոյն հոգն է... ֆինանսական խնդիրներու սպառնալիքն աւելին է, քան ահաբեկչութեան եւ տարերային աղէտներու սպառնալիքը»: «The Columbus Dispatch», 2006թ.:

ընտանիքէն ուրն կ'ապրի աշխատավարձքէ՝ աշխատավարձք<sup>2</sup>: Ես նոյնիսկ չեմ խօսիր այն 18 թրիլիոն արտաքին պարտքի մասին, որ ունի մեր երկիրը, եւ որ երբեք չի կրնար վճարել: Ես նոյնպէս չեմ յիշեցներ 120 թրիլիոն ֆինանսական պարտաւորութիւններու մասին, որոնք մեր երկիրը յանձն առած է կատարել՝ չունենալով որեւէ ֆինանսաւորման համակարգ, որ կը հոգար այդ ծախսերը<sup>3</sup>: Մենք կ'ապրինք լուրջ ֆինանսական խնդիրներ ունեցող երկրի մէջ: Ես հասկցայ իմ իսկ օրինակով, որ չլուծուած ֆինանսական խնդիրներու եւ ֆինանսական ճնշումի պատճառով վախի մէջ ապրիլը կենսառճ կը դառնայ:

Այնուամենայնիւ, կան պատասխաններ. դուք կրնաք ազա՛տ ըլլալ: Աստուածաշունչը պարզօրէն կը յայտնէ իր տեսանկիւնն այս մասին. Յիսուսը եկաւ քարոզելու բարի լուրն աղքատներուն:

*«Գերիշխան Տիրոջ Հոգին Իմ վրայ է, որովհետեւ Տէրն  
օճած է ինձի՝ ազդարարելու բարի լուրն աղքատներուն»:*

– Եսայիա 61.1, NIV

Ի՞նչն է բարի լուրն աղքատ մարդուն համար: Այն, որ ան կրնայ ազատ ըլլալ: Այսօր թերեւս դուք նոյնիսկ գաղափար չունիք, թէ ինչպէս ատրկա կրնայ տեղի ունենալ: Ժամանակ մը իմ կեանքին մէջ ես բոլորովին անօգնական կը զգայի ինքզինքս: Միտքն այն մասին, որ ես կրնայի ունենալ ընդամենը 100 տոլար՝ առանց ունէ մէկէն պարտք վերցնելու, այնքան խորթ էր ինձի համար, որ ես կը ծիծաղէի ատոր վրայ, եթէ այդ միտքն այդքան զարհուրելի եւ ցաւալի չըլլար: Ինչ տարի շարունակ գոյատեւելը զգացմունքօրէն ծանր ազդեցութիւն ձգած էր իմ վրայ: Ֆինանսական ճնշուածութիւնը կը զրկէ մեզ ամէն բարի բանէ: Երբ ես կը նայիմ այդ տարիներու մեր ընտանեկան տեսերիզները, այնքա՛ն կ'ամչնամ: Տեսերիզին մէջ

2 Պրետ Փլամըր. «Ինչո՞ւ 47 միլիոն ամերիկացիներ կ'ապրին սնունդի կտրօններով: Պատճառը, հիմնականին, տնտեսութեան անկումն է»: «The Washington Post», 2013թ.:

3 Կլեմ Զեւլըր. «Մեր ազգն ունի՞ 128 թրիլիոն չվճարուած պարտաւորութիւններ»: «The Washington Post», 2013թ.:

ես կ'ելլեմ ինքնաշարժէն, եւ իմ հրաշալի երեխաները կը վազեն քովս, որպէսզի տեսնեն ինծի գրասենեակի մէջ անցուցած երկար աշխատանքային օրէ ետք: Անոնք վազելով կը մօտենան եւ ամուր կը գրկեն ոտքս՝ գոչելով. «Քարտ՛ւ, հայրի՛կ»: Այդ տեսանիւթին մէջ ես չեմ պատասխաներ անոնց եւ նոյնիսկ չեմ նայիր անոնց: Ես այնքա՛ն ճնշուած եւ յուսալքուած էի, որ ուշադրութիւն չէի դարձներ նոյնիսկ կարելոր բաներուն:

Իմ այդ ժամանակուան մտածելակերպը կը յիշեցնէ ինծի բան մը, ինչ որ ես մէկ անգամ սորվեցայ լողի դասի ժամանակ: Եթէ ինչ որ մէկը կը խեղդուի ջուրին մէջ եւ օգնութեան կը կանչէ, զգո՛յշ եղէք, երբ երթաք օգնելու անոր: Ինչո՞ւ: Քանի որ ան այն աստիճան կլանուած է իր փրկութեամբ, որ կրնայ ակամայ քաշել ձեզի ջուրին տակ: Ահա թէ ինչպիսին էի ես. նման զոմպիի, ես կտրուած էի կեանքէն եւ պարզապէս շարժումներ կը կատարէի՝ առանց զգացումներու: Ես ձախողած էի՝ որպէս ամուսին: Ես ձախողած էի՝ որպէս հայր: Ես ձախողած էի՝ որպէս կերակրող: Իմ կեանքը զուրկ էր զգացումներէն եւ տեսիլքէն. ես ընկճուած էի:

**«ԳԵՐԻՇԵՆԱՆ ՏԻՐՈՋ ՀՈԳԻՆ ԻՄ ՎՐԱՅ Է, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՏԵՐՆ ՕԾԱԾ Է ԻՆԾԻ՝ ԱԶՂԱՐԱՐԵԼՈՒ ԲԱՐԻ ԼՈՒՐՆ ԱՂՔԱՏՆԵՐՈՒՄ»:**

– ԵՍԱՅԻԱ 61.1, NIV

Այդ տարիներուն Օհայօ նահանգի Քոլամպոս քաղաքը բնակարանային իրարանցում էր: Մարդիկ ամէնուր տուններ կը կառուցէին, եւ այդ պատճառով մեր քաղաքը տարիներ շարունակ Տուներու շքերթ կը կազմակերպէր: Եթէ չէք գիտեր, թէ ինչ է ատիկա, ես կը բացատրեմ: Տուներու շքերթը բաղկացած էր խումբ մը տուներէ, որոնք կը կառուցէին տարբեր շինարարներ՝ ցուցադրելու համար իրենց եզակի ոճերն ու կարողութիւնները, ինչպէս նաեւ տարատեսակ նոր կենցաղային սարքեր եւ երեսպատուածքներ: Այդ միջոցառումը շատ սպասուած էր, եւ հազարաւոր մարդիկ հաճոյքով կը մասնակցէին: Իսկ ես կը զարհուրէի Տուներու շքերթէն: Քանի որ մենք կ'ապրէինք սաստիկ աղքատութեան մէջ, ես չէի ցանկար,



որ Տրենտան երթար այդ տուները տեսնելու: Ես արդէն իսկ վատ կը զգայի իմ ֆինանսական ծախսողութիւններու պատճառով, եւ չէի ցանկար, որ կինս գիտնար, թէ իրականութեան մէջ որքան վատ էր իր կեանքը: Այժմ գիտեմ, որ ատիկա անմտութիւն է, բայց այդ ժամանակ ես այդպէս կը մտածէի: Ես գիտէի, որ եթէ ան երթար հոն, պիտի ցանկար այդ տուներէն մէկը: Եւ ամէն տարի ես պիտի արգիլէի անոր հոն երթալ: Բայց, ի վերջոյ, անգամ մը ես տեղի տուի եւ որոշում կայացուցի, որ մենք կ'երթանք:

Այդ տուները, ինչպէս որ կրնաք պատկերացնել, ուղղակի աներեւակայելի էին: Ատոնք տեսնելէն յետոյ մեր 1800-ական թուականներու գիւղական տունը քանդման ենթակայ շինութիւն կը թուէր: Առաջին քանի մը տուները տեսնելէն ետք մենք կը քալէինք մայթէն, երբ յանկարծ նկատեցի, որ Տրենտան քովս չէ: Ես դարձայ՝ անոր գտնելու համար, եւ ցաւով տեսայ, որ ան կանգնած էր այն տան դիմացը, ուրկէ մենք քիչ առաջ դուրս ելանք: Անոր աչքերէն արցունքներ կը հոսէին: Ես վերադարձայ անոր քով եւ յիմար հարցում մը տուի.

- Ի՞նչ պատահած է:

Իբրեւ թէ չէի գիտեր պատասխանը: Ան պարզապէս նայեցաւ ինձի եւ հարցուց.

- Ե՞րբ ես տուն կ'ունենամ:

Իմ մտքին մէջ շրջապտոյտ սկսաւ. «Տո՛ւն: Այսպիսի՞: Այս տուները 500.000-700.000 տոլար կ'արժեն»: Ես կը փորձէի գտնել 300 տոլար, որպէսզի գոցէի մեր հին գիւղական տան ամսական վարձավճարը: Ես գիտեմ, որ ատիկա ցաւալի է, բայց ոչ մէկ ելք կը տեսնէի, եւ ես որեւէ կերպով չյուսադրեցի իմ գեղեցիկ եւ թանկ կնոջը: Վախը եւ ծախողումն աղաւաղած էին իմ մտահորիզոնը: Ես այդպիսին չէի. ո՞ւր էին իմ ուրախութիւնը եւ երջանկութիւնը: Ես պարզապէս չէի կրնար տեսնել ֆինանսական ճնշուածութենէն այն կողմ:

Գիշերուան ժամը 2:00-ն էր կամ 3:00-ը, եւ ես չէի կրնար քնանալ: Ծնօտս եւ դէմքս կը ցաւէին, կարծես ասեղներով ծակծկէին: Երեսունվեց ժամ առաջ ես ատամնախոռոչի վիրահատութեան

ենթարկուած էի, դադրեցնելու համար վարակ մը, որուն պատճառով իմ դէմքը կ'ուռէր փուչիկի պէս: Անհաւատալիցաւ եւ անյարմարութիւն կը զգայի: Ես «Թայլենօլ» (tylenol – ցաւազրկիչ) կ'առնէի չորս ժամը մէկ՝ ցաւը մեղմացնելու համար, բայց այն կարծես շատ չէր օգնէր: Նստած էի հիւրասենեակը եւ չէի կրնար քնանալ: Ես առի եւս մէկ չափաբաժին եւ պարզապէս նայեցայ «Թայլենօլի» տուփին ու սկսայ կարդալ ցուցմունքները: Ոչ թէ այն պատճառով, որ չէի գիտեր, թէ ինչպէս կ'առնեն «Թայլենօլը», այլ հասարակ ծանծրոյթէն, ինչպէս որ բոլորս կը կարդանք գրուած տեղեկութիւնը շիլայի տուփին վրայ՝ առաւօտեան շիլա ուտելու ժամանակ: Ոչ թէ, որ ատիկա կը հետաքրքրէ մեզի, այլ՝ որ այն մեր աչքի առջեւն է: Այո՛, երկու դեղահատ չորս ժամը մէկ, բայց ի՞նչ գրուած է: Ոչ աւելի, քան 10 դեղահատ 24 ժամուան մէջ: Ես սկսայ արագօրէն հաշուել, թէ որքան դեղահատ կ'առնէ մարդը՝ իւրաքանչիւր չորս ժամուան մէջ երկու դեղահատ ընդունելու պարագային, ինչպէս որ ես կ'օգտագործէի ատիկա վերջին երկու օրուան ընթացքին: Պատահեցաւ օրը 12 դեղահատ՝ առաւելագոյն չափաբաժինէն երկու դեղահատով աւելի: Յանկարծ իմ ստամոքսը կծկուեցաւ, եւ վախը պատեց ինձի:

Ինը տարի շարունակ իմ ընտանիքի կարիքները ձեւով մը հոգալը, իմ ձախողումը՝ որպէս անուսին, որպէս հայր եւ որպէս կերակրող, ըստ էութեան, զգացմունքօրէն քայքայած էին ինձի: Բժիշկները հակաընկճախտային դեղամիջոցներ նշանակած էին ինձի՝ փորձելով օգնել, բայց ոչինչ կ'օգնէր: Այդ գիշեր ես նստած էի՝ ակռայի վարակով: Արդէն երկու օր էր՝ չէի քնացած, եւ ցաւն այնքան ուժգին էր, որ դեռ չէի կրնար քնանալ: Եւ կարդալով «Թայլենօլի» ցուցմունքերը՝ հասկցայ, որ ունիմ անհանգստութեան եւս մէկ պատճառ՝ «Թայլենօլի» չափաքանակի հնարաւոր գերազանցում: Ես չէի գիտեր, թէ ինչ կրնար ընել ինձի «Թայլենօլի» չափաքանակի գերազանցումը, բայց համոզուած էի, որ այդ դեղը բաւականին անվտանգ էր, քանի որ իւրաքանչիւրը կրնար գնել այն առանց դեղատոմսի: Ես մտածեցի, որ անոնք պարզապէս զգուշացումներ աւելցուցած են տուփին վրայ՝ իրենց իրաւաբաններուն խաղաղեցնելու եւ օրինական պահանջներուն համապատասխանելու համար:

Իմ մտքով չէր ալ անցներ, որ այդ դեղը երկու դեղահատով աւելի օգտագործելը կրնար լուրջ խնդիր յառաջացնել: Բայց վախի հոգին գրաւեց իմ ուշադրութիւնը, վերցուց այդ փաստը եւ սկսաւ գրոհել մտքիս վրայ «իսկ ի՞նչ, եթէ...» հարցումներով: Այնպէս որ, ես պարզապէս հանդարտեցայ եւ որոշեցի հեռաձայնել Թունաւորման վերահսկողութեան կեդրոն՝ տեղեկութիւն ստանալու համար: Ես համոզուած էի, որ անոնք պարզապէս կ'ըսէին, որ ատիկա լուրջ խնդիր չէ:

Ինծի պատասխանող կինը մասնագէտի տպաւորութիւն ձգեց իմ վրայ: Ան հարցուց, թէ ինչով կրնար օգնել, եւ ես բացատրեցի անոր, որ «Թայլենօլ» առած էի չորս ժամը մէկ 36 ժամուան ընթացքին, այսինքն՝ առած էի օրական 12 դեղահատ, թէեւ ցուցմունքներուն մէջ կը նշուի, որ կարելի չէ գերազանցել 10 դեղահատ: Ես ըսի անոր, որ պարզապէս կը հեռաձայնէի, որպէսզի ան ըսէր ինծի, որ այդ երկու աւելորդ հապերը լուրջ վնաս չէր հասցներ ինծի: Պահ մը ան լռեց, եւ ես համակարգիչի ստեղներու ձայն լսեցի: Յանկարծ լսեցի հետեւեալը, եւ հիմա բառացիօրէն կը մէջբերեմ անոր ըսածը.

- Պարո՛ն, նման չափաբաժինն անհամատեղելի է կեանքի հետ:

Ես ճի՞շդ հասկցայ անոր: Երեւի թէ , ո՛չ: Կրկին բացատրեցի անոր, որ պարզապէս երկու աւելի դեղահատ ընդունած էի 24 ժամուան ընթացքին, եւ ատիկա տեսած էր ընդամէնը երկու օր:

Այս անգամ ան պատասխանեց աւելի խիստ ձայնով.

- Պարո՛ն, ինչպէս արդէն ըսի, նման չափաբաժինն անհամատեղելի է կեանքի հետ: Դուք պէտք է գաք վերակենդանացման բաժին ՃԻՇԴ ՀԻՄԱ:

Երբ կրկին փորձեցի բացատրել անոր, թէ ինչ տեղի կ'ունենար, քանի որ ես համոզուած էի, որ ան ինչ որ բան սխալ լսած էր, ան ընդհատեց ինծի եւ ըսաւ.

- Կա՛մ դուք անձնապէս հիւանդանոց կու գաք, կա՛մ ես շտապ օգնութիւն կ'ուղարկեմ:

Ես ցնցուա՛ծ էի:

- Ես անձնապէս կու գամ, - կարկամեցայ:

- Ո՞ր հիւանդանոցը պիտի երթաք, - հարցուց ան:

Ես պատասխանեցի, եւ ան վար դրաւ խօսափողը:

Ես ապշած կեցած էի սենեակին մէջ: Շատ կարեւոր հանդիպում ունէի առաւօտեան ժամը 9:00-ին, իսկ այդ պահուն գիշերուան 3:30-ն էր: Ուղքերս քստքստացնելով հասայ ննջասենեակ, արթնցուցի Տրենտային եւ պատմեցի տեղի ունեցածը: Ան նայեցաւ ինծի խղճահարութիւն եւ վհատութիւն արտայայտող հայեացքով: Անոր ամուսինի վարքն արդէն քանի մը ամիս էր՝ տարօրինակ էր, եւ ան յոգնած էր ամէն ինչի մասին ինքնուրոյն հոգալէն, իսկ հիմա ա՛յս խնդիրը:

- Կէ՛րի, դուն ընդամէնը երկու աւելի դեղահատ օգտագործած ես: Մի՞թէ չես հասկնար, որ ատիկա չի կրնար սպաննել քեզ: Կրկի՛ն հեռաձայնէ անոնց, - ըսաւ ան:

Բայց վախն անտրամաբանական եւ տանջող է:

- Այդ կինը ըսաւ, որ ատիկա կրնայ սպաննել ինծի. ես պէտք է հիւանդանոց երթամ:

Իմ կնոջ հայեացքը կ'ըսէր. «Երեւի, դուն կատակ կ'ընես», ես շրջուեցայ եւ դուրս ելայ ննջասենեակէն:

Երբ ինքնաշարժով մօտեցայ հիւանդանոցին, երկու աշխատակից սպիտակ հագուստներով կը սպասէին ինծի վերակենդանացման բաժանմունքի մուտքի դրան մօտ: Երբ կայանեցի ինքնաշարժը, անոնք մօտեցան ինծի եւ հարցուցին.

- Դուք Կէրի Քիսի՞ն էք:

Անոնք արագ տարին ինծի ուղիղ բուժման սենեակ: Անցնելով վերակենդանացման բաժնի գրատախտակի կողքով՝ ես տեսայ իմ անունը: Հոն գրուած էր. «Կէրի Քիսի. դեղաքանակի գերազանցում»:  
Հաւատալիս չէր գար: Սակայն երբ բժիշկն արիւն առաւ ինձմէ, ան վերադարձաւ բուժման սենեակ եւ ըսաւ.

- Ինչո՞ւ հոս էք: «Թայլենօլի» քանակը ձեր արեան մէջ նոյնիսկ բաւական չէ՝ զլխացաւն անցընելու համար:

Երբ ես պատմեցի անոր պատմութիւնը Թունաւորման վերահսկողութեան կեդրոնի մասին, ան սկսաւ ծիծաղիլ: Ես չկարծեցի, որ ատիկա զուարճալի էր, եւ առաւել եւս այդպէս չկարծեցի, երբ փոստով 2.000 տոլար հաշիւ ստացայ այդ այցին համար: Սատանան կրկին խաբեց եւ թալանեց ինձի:

Ես կը պատմեմ այս պատմութիւնները՝ ներածութեան հետ մէկտեղ, որպէսզի օգնեմ ձեզի հասկնալու, թէ ինչպիսին էր իմ կեանքը, մինչեւ որ բացայայտեցի Աստուծոյ Թագաւորութիւնը: Այո՛, ես քրիստոնեայ էի: Այո՛, ես տասանորդ կու տայի: Այո՛, ես որոշ ժամանակ փառաբանութեան խումբի աւագ էի եկեղեցւոյ մը մէջ: Այո՛, ես կը սիրէի Աստուծոյ: Բայց ինչ որ բան սխալ էր, սարսափելիօրէն սխալ էր: Ես պատմեցի ձեզի, թէ ինչպէս Աստուած սորվեցուց ինձի պայքարիլ վախի հոգիին դէմ, եւ ինչպէս ես ազատեցայ հակաընկճախտային դեղամիջոցներէն եւ խուճապի նոպաներէն: Բայց ես տակաւին ազատ չէի այն հանգամանքէն, որուն պատճառով յառաջացաւ պայքարը վախի հետ, այսինքն՝ իմ անյոյս ֆինանսական դրութենէն: Ես տակաւին անասելի ճնշում կը զգայի ամէն օր, որպէսզի դրամ հայթայթէի եւ փակէի իմ հաշիւները, եւ բացի այդ՝ ունէի տասն սպառած եւ արգելափակուած վարկային քարտ, երեք վարկ ֆինանսական ընկերութիւններուն մէջ, պարտքեր Հարկային տեսչութեան, պարտքեր մեր ազգականներուն, նաեւ բազմաթիւ դատեր եւ արգելանքներ:

Ինչպէս արդէն ըսի, մենք ֆինանսական խառնաշփոթի մէջ էինք: Ճնշուածութիւնը եւ զգացմունքային շփոթութիւնն իմ սովորական վիճակն էր: Թէեւ ես քրիստոնեայ էի, մենք մօտ էինք ֆինանսական մահուան, եւ իմ վարկային քարտերը մէկ առ մէկ կ'արգելափակուէին: Ինձի ծանուցումներ կ'ուղարկուէին արգելանքներու մասին, իմ վարկային քարտերը կ'արգելափակուէին, իսկ վարկային կազմակերպութիւնները կը հեռաձայնէին: Մեր ֆինանսական կացութեան ամենածանր պահերուն, երբ իմ աշխատանքը մեծ եկամուտ չէր բերեր, մենք նոյնիսկ չէինք կրնար կերակուր գնել: Ամբողջ ընտանիքով իրար կը սեղմուէինք փայտի վառարանին քով, քանի որ չէինք կրնար վառելիքի իւր գնել: Մենք կը գննէինք

աթոռներու եւ բազմոցներու եզրերու ծալքերը, որպէսզի գտնէինք  
ատոնց մէջ պատահաբար ինկած մետաղադրամներ՝ յուսալով  
գտնել այնքան մետաղադրամներ, որ կարենայինք գնել մէկ «Ուրախ  
ճաշ» «ՄաքՏոնալտս»-էն՝ մեր երկու երեխաներու միջեւ կիսելու  
համար:

Ինծի կը յաջողէր ազատիլ  
վարկային կազմակերպութիւններու  
ներկայացուցիչներէն, երբ անոնք  
կը հեռաձայնէին, բայց մէկ անգամ  
այդ կազմակերպութիւններէն մէկն  
իրաւաբան վարձեց՝ իր պարտքը ետ  
առնելու համար: Ան հեռաձայնեց ինծի  
եւ առանց ներկայանալու՝ ուղղակի  
ըսաւ:

- Ինծի պէտք է այդ գումարը երեք  
օրուան մէջ: Հակառակ պարագային,  
ես դատական հայց կը ներկայացնեմ  
իմ յաճախորդի անունէն:

Ես անելանելի դրութեան մէջ էի: Ոչ մէկ տարբերակ ունէի եւ  
չէի կրնար եւս մէկ վարկ վերցնել: Ես արդէն պարտքեր ըրած էի  
իմ բոլոր ընկերներէն եւ հասած էի այնպիսի կէտի, որ ոչ մէկ ելք  
ունէի: Ես ծելով մը հասայ ննջասենեակ, ինկայ մահճակալիս վրայ եւ  
աղաղակեցի Աստուծոյ: Շատ արագ ես լսեցի Տիրոջ ձայնը: Խօսք մը,  
որ շատ անգամներ լսած էի, բարձրացաւ իմ մտքին մէջ:

*«Եւ իմ Աստուած պիտի հոգայ ձեր բոլոր կարիքները՝ իր  
փառաւոր հարստութեան համաձայն՝ Քրիստոս Յիսուսին  
մէջ»:*

– Փիլիպպեցիս 4.19, NIV

Ես պատասխանեցի Տիրոջը՝ ըսելով, որ գիտէի այդ խօսքը, բայց  
իմ կարիքները չէին լրացուեր: Ան անմիջապէս պատասխանեց իմ  
հարցումին. «Այո՛, բայց ատիկա Իմ մեղաւորութիւնը չէ: Դուն երբեք

Ժամանակ չես տրամադրած՝ սորվելու համար, թէ ինչպէս կը գործէ Իմ Թագաւորութիւնը: Իրականութեան մէջ, Իմ եկեղեցւոյ մեծ մասը կ'ապրի՝ ինչպէս Իսրայէլը Հին կտակարանին մէջ՝ ստրկութեան մէջ: Անոնք կ'ապրին պարտքի եւ ֆինանսական գերութեան մէջ: Ես կ'ուզեմ, որ Իմ ժողովուրդն ազատ ըլլայ»:

Ես արագօրէն վազեցի առաջին յարկ, բռնեցի Տրենտայի ուսերէն եւ պատմեցի անոր այն, ինչ որ Տէրն ըսաւ ինծի: Ես ապաշխարեցի իմ կնոջ առջեւ, որ չէի փնտռած Աստուծոյ եւ չէի սորված, թէ ինչպէս կը գործէ Անոր Թագաւորութիւնը: Ի վերջոյ, մենք եկեղեցւոյ մէջ էինք, գրեթէ միշտ տասանորդ կու տայինք մեր եկամուտներէն եւ կը սիրէինք Աստուծոյ: Մենք կը մտածէինք, որ արդէն իսկ կը ճանչնայինք Աստուծոյ Թագաւորութիւնը: Այնուամենայնիւ, ինչպէս պիտի պարզէի, խնդիրը հետեւեալն էր. այո՛, ես Երկինք կ'երթայի, բայց նոյնիսկ գաղափար չունէի, թէ ինչպէս բերէի Երկինքի գորութիւնը եւ իշխանութիւնն իմ կեանքին մէջ եւ ազդէի իմ բնական հանգամանքներուն վրայ: Այնպէս որ, մենք սկսանք ուսումնասիրել Աստուածաշունչը, եւ Աստուած սկսաւ խօսիլ մեզի հետ եւ օգնեց հասկնալ, թէ Ան ինչ նկատի ունի՝ Թագաւորութիւն ըսելով: Այն, ինչ որ իմացանք, իսկապէս զարմանալի էր: Մենք կարծես լոյս վառեցինք մութ սենեակին մէջ: Առաջին անգամ մեր կեանքին մէջ մենք պատասխաններ գտանք մեր ֆինանսական կեանքին վերաբերեալ:

### **Աստուած, ի՞նչ նկատի ունիս՝ Թագաւորութիւն ըսելով**

Երբ Աստուած ըսաւ, որ ես երբեք չեմ սորված, թէ ինչպէս կը գործէ Իր Թագաւորութիւնը, ես առնուազն շփոթած էի: Թագաւորութիւն: Տրենտան եւ ես նոյնիսկ գաղափար չունէինք այդ մասին: Մենք աղօթեցինք եւ խնդրեցինք Աստուծմէ սորվեցնել մեզի, թէ Ան ինչ նկատի ունի. «Տէ՛ր, սորվեցո՛ւր մեզի, թէ ինչ նկատի ունիս՝ Թագաւորութիւն ըսելով»: Այնպէս որ, առաջին հերթին ես պէտք է գիտնայի, թէ ինչ էր Թագաւորութիւնը: Կը կարծեմ՝ Արեւմուտքի բնակիչները, որոնք ժողովրդավարութեան եւ ազատ ինքնաարտայայտման մտածելակերպ ունին, կը դժուարանան ընկալելու այս հասկացութիւնը: Աստուծոյ Թագաւորութիւնը

Ժողովրդավարություն չէ. այն Թագաւորութիւն է, ուր կայ Թագաւոր: Թագաւորի իշխանութիւնը կը տարածուի Թագաւորութեան մէջ՝ բազմաթիւ լիազօրուած պետական պաշտօններու եւ մարդոց միջոցով, որոնք կը հպատակին այդ իշխանութեան: Ամբոխը տակաւին Թագաւորութիւն չէ: Նոյնիսկ մէկ միլիոն մարդէ բաղկացած ամբոխը Թագաւորութիւն չէ: Թագաւորութիւնը մարդոց խումբ է, որոնք միաւորուած են օրէնքով կամ կառավարման համակարգով: Թագաւորութեան սահմանունը բառարանին մէջ հետեւեալն է. «Թագաւորութիւն. պետութիւն կամ կառավարման համակարգ, որ կը ղեկավարուի թագաւորի կամ թագուհիի կողմէ»:

Թէեւ մենք կը տօնենք Սուրբ ծնունդը՝ Յիսուսի գալուստն այս երկիր, մենք, որպէս կանոն, չենք գիտակցիր, որ Ան բերաւ Իրեն հետ կառավարման համակարգ: Աստուածաշունչը կը խօսի այս կառավարման համակարգի կամ իշխանութեան մասին Եսայիա 9.6,7-ին մէջ.

*«Որովհետեւ մեզի համար Մանուկ մը ծնաւ, մեզի Որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը կ'ըլլայ Անոր ուսին վրայ, եւ Անոր անունը կը կոչուի Սքանչելի, Խորհրդական, Հզօր Աստուած, Յաւիտենութեան Հայր, Խաղաղութեան Իշխան: Իշխանութիւնը շատցնելուն եւ խաղաղութեան վերջ չկայ Դաւիթի աթոռին վրայ եւ անոր Թագաւորութեան վրայ, որ զանկէկա հաստատէ եւ պնդացնէ իրաւունքով եւ արդարութեամբ՝ այսօրուրնէ մինչեւ յաւիտեան: Զօրաց Տիրոջ նախանձը պիտի ընէ այս»:*

Յիսուսն այս կառավարման համակարգի գլուխն է, եւ ընդունելով Յիսուսին՝ որպէս մեր Փրկիչ, մենք կը դառնանք այս կառավարման համակարգի մասը. մենք կը դառնանք քաղաքացիներ: Եւ ոչ միայն կը դառնանք քաղաքացիներ, այլեւ կը դառնանք Աստուծոյ ընտանիքի անդամներ՝ Անոր որդիները եւ դուստրերը:



*«Բայց որոնք որ Անոր ընդունեցին, իշխանութիւն (կամ՝ իրաւունք) տուաւ անոնց Աստուծոյ որդիներ ըլլալու՝ անոնց, որ Անոր անունին կը հաւատան, որոնք ո՛չ արհնէն, եւ ո՛չ մարմինի կամքէն, եւ ո՛չ մարդու կամքէն, այլ՝ Աստուծմէ ծնան»:*

– Յովհաննէս 1.12,13

*«Հետեւաբար, դուք այլեւս օտարականներ եւ պանդուխտներ չէք, այլ Աստուծոյ ժողովորդի համաքաղաքացիներ եւ նոյնպէս Անոր ընտանիքի անդամներ»:*

– Եփեսացիս 2.19, NIV

Մենք կը դառնանք Անոր ընտանիքի մասը, ինչ որ կը նշանակէ, որ այն ամէնը, ինչ որ Աստուծոյ է, կը պատկանի մեզի, իսկ մենք կը պատկանինք Անոր: Բայց մենք նոյնպէս կը դառնանք Անոր մեծ Թագաւորութեան քաղաքացիները: Ասիկա կը նշանակէ, որ մենք ունինք օրինական իրաւունքներ եւ արտօնութիւններ այդ Թագաւորութեան մէջ: Որպէսզի ատլի լաւ հասկնաք այն, ինչ որ կ'ըսեմ, ես կը խօսիմ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքացի ըլլալու մասին: Որպէս Միացեալ Նահանգներու քաղաքացի՝ դուք ունիք օրինական իրաւունքներ: Ձեր օրինական իրաւունքները գրուած են մեր սահմանադրութեան մէջ եւ այն օրէնքներուն մէջ, որոնք ընդունուած են մեր կառավարութեան կողմէն: Այդ օրէնքները եւ արտօնութիւնները կը վերաբերին իւրաքանչիւր քաղաքացիի՝ անկախ այն բանէն, թէ ով է ան: Այդ իրաւունքները հիմնուած չեն մեր զգացումներուն կամ կարողութիւններուն վրայ: Ո՛չ, ատոնք սահմանուած են օրէնքով եւ իրաւաբանօրէն հասանելի են իւրաքանչիւր քաղաքացիի, որ կը համարէ Ամերիկան իր տունը: Հնարաւոր է, որ քաղաքացին նոյնիսկ չգիտնայ իր օրինական իրաւունքները, բայց, այնուամենայնիւ, ան ունի այդ իրաւունքները՝ պարզապէս Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքացի ըլլալով:

Ասիկա մտածելու առիթ կու տայ, եւ յոյսով են, որ ասիկա կը

Վոյսէ ձեր ամբողջ պատկերացումն Աստուծոյ մասին եւ այն մասին, թէ ինչպէս դուք ինչ որ բան կը ստանաք Աստուծմէ: Միացեալ Նահանգներու մէջ, եթէ մենք պարզենք, որ ինչ որ մէկը կը վործէ զրկել մեզ մեր օրինական իրաւունքներէն, կամ որ մեզի հետ անարդարացի կը վարուին, գոյութիւն ունի արդարադատութեան հասանելիութիւն (արդարադատութիւնը կը նշանակէ օրէնքի կիրառում կամ օրինականութեան ապահովում)՝ գործընթաց մը, որ կ'ապահովէ մեր օրինական իրաւունքները: Մենք կը դիմենք դատարան, եւ դատաւորն ուշադրութիւն չի դարձնէր մեր տեսքին եւ հարուստ կամ աղքատ ըլլալուն: Ան կը հետեւի օրէնքին: Իւրաքանչիւր պարագայի ան պէտք է որոշում կայացնէ ի օգուտ օրէնքի: Ասիկա մեր ապահովութիւնն է՝ այն, որ մենք ունինք օրինական իրաւունքներ, եւ որ մեր կառավարութիւնը կ'ապահովէ մեր օրինական իրաւունքները՝ Միացեալ Նահանգներու մէջ գործող արդարադատութեան ընթացակարգերէն մէկուն միջոցով: Մտապահելով ասիկա՝ աւելի ուշադրութեամբ կարդանք, թէ ինչպէս Եսայիա 9-րդ գլուխը կը ներկայացնէ այն նոր կառավարման համակարգը, որ Յիսուսը կը բերէ այս երկիր:

*«... (Յիսուսը կ'իշխէ) Ղաւիթի աթոռին վրայ եւ անոր Թագաւորութեան վրայ, որ զանիկա հաստատէ եւ պնդացնէ իրաւունքով եւ արդարութեամբ ...»:*

– Եսայիա 9.7բ.

Այս խօսքը կը յայտնէ, որ Աստուծոյ Թագաւորութիւնը հաստատուած է եւ կը պահուի իրաւունքով՝ Աստուծոյ օրէնքի կիրառմամբ: Խօսքը ձեր օրինական իրաւունքներու ապահովման գործընթացի մասին է: Ձեր օրինական իրաւունքներն այն են, ինչ որ Աստուած կ'անուանէ արդարութիւն կամ ինչն արդար կը կոչէ Իր օրէնքին մէջ: Եւ հաւաստիանալու համար, որ դուք կ'ունենաք այն, ինչ որ Ան արդարութիւն կը համարէ Իր Թագաւորութեան մէջ, եւ ինչ որ իրաւաբանօրէն կը պատկանի ձեզի՝ որպէս այդ Թագաւորութեան քաղաքացի, Աստուած հասանելի դարձուցած է ձեզի համար

արդարադատութիւնը՝ այն գործընթացը, որ կ'երաշխաւորէ, թէ դուք կ'ունենաք այն, ինչ որ խոստացած է ձեզի: Աստուած յայտնած է մեզի Իր կամքն Իր Խօսքին՝ Աստուածաշունչին միջոցով, որպէսզի մենք գիտնանք մեր իրաւունքներն Իր Թագաւորութեան մէջ: Ասիկա բարի լո՛ւր է: Աստուծմէ՛ ձեզի տրուած բոլոր խոստումները, որոնց մասին դուք կը կարդաք Աստուածաշունչին մէջ, իրաւաբանօրէն կը պատկանին ձեզի՝ որպէս Անոր Թագաւորութեան քաղաքացի:

Երկրորդ Կորնթացիս 1.20-ին մէջ պարզօրէն գրուած է, որ իւրաքանչիւր խոստում՝ ԻՒՐԱՔԱՆԶԻՒՐ ԽՈՍՏՈՒՄ «Այո» եւ «Ամէն» է: Ասիկա արդէն որոշուած է, եւ այդ խոստումներն արդէն ձերն են ըստ օրէնքի:

*«Որովհետեւ որչափ որ Աստուծոյ խոստումներ կան, Անոր մէջ է «այո»-ն եւ Անոր մէջ է «ամէն»-ն Աստուծոյ փառքին համար մեզմով»:*

– Բ. Կորնթացիս 1.20

Աստուծոյ Թագաւորութեան հիմքը՝ արդարութիւնն ու իրաւունքն է, եւ այն չի կրնար սասանուիլ: Ուրեմն, մտածեցէ՛ք այսպէս. «Եթէ ես գիտեմ Աստուծոյ Թագաւորութեան օրէնքը (Անոր կամքը), եւ գիտեմ, որ ինձի համար հասանելի է արդարադատութիւնը՝ իմ իրաւունքներու ապահովման գործընթացը, որ կ'երաշխաւորէ ինձի այն, ինչ որ գրուած է օրէնքին մէջ, ես վստահ կ'ըլլամ եւ չեմ վախնար»:

*«Եւ այս է այն համարձակութիւնը, որ ունինք Անոր քով, թէ ինչ որ Անոր կամքի պէս կը խնդրենք, կը լսէ մեզի: Եւ եթէ գիտենք, թէ կը լսէ մեզի, ինչ որ կը խնդրենք, գիտենք, որ կ'առնենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Անորմէ»:*

– Ա. Յովհաննէս 5.14,15

Ըսելով, որ Ան կը լսէ մեզի, այս խօսքը նկատի չունի սոսկ մեր ձայնը կամ բառերը լսելը. այն նկատի ունի, որ Ան կ'ընդունի մեր

հայցը: Պատկերացուցէք դատաւոր մը, որ դատական գործ կը լսէ՝ արդարադատութիւն իրականացնելու համար: Դատական ատենանի եւ դատաւորի նպատակն է երաշխաւորել, որ արդարադատութիւնը հասանելի ըլլայ իւրաքանչիւր քաղաքացիի: Դատաւորի որոշումը հիմնուած չէ իր զգացումներուն վրայ, այլ՝ օրէնքի, եւ ան կը նախագահէ դատարանին մէջ, որպէսզի ապահովէ օրէնքի կիրառումն իւրաքանչիւր քաղաքացիի համար: Դատաւորը պէտք է երաշխաւորէ, որ արդարադատութիւնը (օրէնքի կիրառումը) պիտի իրականանայ գրուած օրէնքին համաձայն: Ինչ կը վերաբերի Աստուծոյ, Անոր գահը (իշխանութեան վայրը) եւ Անոր զօրութիւնը պատրաստ են ապահովելու արդարադատութիւնը (Իր կամքի կիրառումը) այն մարդոց համար, որոնք կ'ընդունին Յիսուսին եւ մուտք կը գործեն Իր Թագաւորութեան մէջ:

**ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԿԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆ  
ՕՐԷՆՔՆԵՐՈՒ, ԵՒ ԱՅՂ  
ՕՐԷՆՔՆԵՐԸ ՉԵՆ  
ՓՈՒՍՈՒԻՐ:**

Կը խնդրե՛մ, որ շատ դանդաղ կարդաք այս վերջին նախադասութիւնը եւ թոյլ տաք, որ այն առանձնանայ Աստուծոյ մասին ձեր ներկայ պատկերացումէն: Մարդոց մեծամասնութեան կը թուի, թէ Աստուած որոշումներ կը կայացնէ անհատական սկզբունքով, բայց ատիկա ճիշդ չէ: Ան Թագաւոր է Թագաւորութեան մը մէջ, որուն օրէնքները չեն փոխուիր: Ան չի կայացներ եւ պիտի չկայացնէ այնպիսի որոշումներ, որոնք դուրս են Իր օրէնքէն: Այսպիսով, մենք կրնանք գիտնալ, թէ Ան ինչ պիտի պատասխանէ, Անորմէ խնդրելէն առաջ, եւ մենք կրնանք վստահ ըլլալ, որ ունինք այն, ինչ որ գրուած է Իր օրէնքին մէջ, ատիկա տեսնելէն առաջ, քանի որ Ան կրնայ ապահովել Իր օրէնքի կիրառումը:

Երբ Տրեմտան եւ ես գիտցանք Թագաւորութեան մէջ մեր ունեցած օրինական իրաւունքները, ատիկա շրջադարձօրէն փոխեց մեր պատկերացումն Աստուծոյ եւ Աստուածաշունչին մասին: Մեր նոր ըմբռնման արդիւնքով մեր կեանքերը փոխուեցան: Մենք այլեւս չէինք մուրար եւ չէինք աղաչեր: Մենք իմացանք, որ այն, ինչ որ

Աստուած կ'ըսէ, արդէն իսկ իրաւաբանօրէն տրուած է մեզի՝ որպէս Անոր Թագաւորութեան քաղաքացիներ: Մենք պարզապէս պէտք է շարունակէինք սորվիլ, թէ ինչպէս օրինական հայց ներկայացնել այն ամէնուն հանդէպ, ինչ որ իրաւաբանօրէն մերն է, եւ արծակել այդ ամէնն այս երկրային տիրոջին մէջ: Օրինակ, ինչպէ՞ս տեղի կ'ունենայ պանքային չէքի կանխիկացումը: Եթէ ուզեմ դուք մեծ գումար ունենաք ձեր չէքային հաշուին վրայ, գոյութիւն ունի իրաւաբանական գործընթաց, որուն միջոցով դուք հայց կը ներկայացնէք այդ գումարին հանդէպ եւ կը կանխիկացնէք ձեր չէքը: Որեւէ համակարգի մէջ գոյութիւն ունի գործընթաց, որուն միջոցով մենք հայց կը ներկայացնենք ինչ որ բանի մը հանդէպ, նոյնիսկ եթէ ատիկա արդէն իսկ մեզի կը պատկանի:

*«Անոր Աստուածային գորութիւնը տուաւ մեզի այն ամէնը, ինչին կարիքը մենք ունինք կեանքի եւ Աստուածապաշտութեան համար՝ Անոր մասին իմանալու միջոցով, որ կանչեց մեզ Իր փառքով եւ բարութեամբ»:*

– Բ. Պետրոս 1.3, NIV

Մենք կը գտնուինք Թագաւորութեան մէջ: Եւ Աստուծոյ Թագաւորութեան իւրաքանչիւր քաղաքացի ունի նոյն իրաւունքները: Կարելոր է, որ հասկնանք հետեւեալը. Թագաւորութիւնները կը կառավարուին համաձայն օրէնքներու, եւ այդ օրէնքները չեն փոխուիր: Ինչո՞ւ ասիկա կարելոր է: Ասիկա կարելոր է, քանի որ եթէ այս Թագաւորութիւնը հիմնուած է անփոփոխ օրէնքներու վրայ, կը նշանակէ՝ այս Թագաւորութեան մէջ չկայ աչառութիւն: Փոխարէնը, իւրաքանչիւրն այս Թագաւորութեան մէջ կրնայ կիրառել Թագաւորութեան օրէնքներն իր օգուտին համար՝ առանց որեւէ խտրութեան:

Այս փաստը քիչ մը շփոթութիւն կը յառաջացնէ եկեղեցական միջավայրին մէջ: Քրիստոնէաներու մեծամասնութիւնը կը կարծէ, որ Աստուած կամայականօրէն կ'որոշէ այն, ինչ որ կը ցանկայ ընել առանձին անհատներու կեանքին մէջ: Ուրիշ ձեւով ըսելու համար,

անոնք կը կարծեն, որ Աստուած կ'որոշէ օրհնել մէկուն եւ չօրհնել միւսին: Անոնք կը մտածեն, որ Ան կը բժշկէ մէկուն եւ չի բժշկեր միւսին: Քրիստոնեաներու մեծամասնութիւնը կ'աղաչէ Աստուծոյ օգնելու իրենց, այնինչ որ Ան արդէն իսկ ըրած է այն ամէնը, ինչ որ կրնայ, որպէսզի օգնէ անոնց: Ան տուած է անոնց Թագաւորութիւնը՝ ամբողջ Թագաւորութիւնը:

Երբ Աստուած սկսաւ խօսիլ ինծի հետ իմ ֆինանսներու մասին՝ ըսելով, որ ես պէտք է աւելին գիտնայի Իր Թագաւորութեան մասին, Ան տուաւ ինծի այս խօսքը.

*«... Երանի՛ աղքատներուդ, որ ձերն է Աստուծոյ Արքայութիւնը»:*

– Ղուկաս 6.20բ.

Աստուած կ'ըսէր ինծի, որ իմ ֆինանսական խնդիրներու պատասխանն Իր Թագաւորութիւնն է: Մենք պէտք է գիտնանք, թէ ինչպէս օգտուինք Թագաւորութեան օրէնքներէն այս երկրի վրայ այնպէս, ինչպէս Յիսուսն ատիկա կ'ընէր: Ես կը խոստովանիմ, որ յատկապէս սկիզբը ես նոյնիսկ գաղափար չունէի՝ ինչ կը նշանակէր այդ ամէնը: Բայց մտածելով այն մասին, ինչ որ Աստուած ըսաւ, ես հասկցայ, որ իսկապէս, թագաւորութիւնները կը կառավարուին ըստ օրէնքի: Այնպէս որ, կարելի է ճանչնալ որեւէ օրէնքի գործառոյթը եւ ազդեցութիւնը, եւ կարելի է վստահ ըլլալ, որ այդ օրէնքը կը գործէ նոյն կերպով ամէն անգամ, քանի որ օրէնքները չեն փոխուիր: Նախկինին ես երբեք չէի մտածած այդ մասին հոգեւոր տեսանկիւնէն: Այնուամենայնիւ, եթէ այդպէս է, եւ եթէ Աստուծոյ Թագաւորութիւնն իրականութեան մէջ կը կառավարուի այդ կերպով, ես հասկցայ, որ կրնայի սորվիլ այդ օրէնքները, կիրառել ասոնք եւ օգտուիլ ասոնց արդիւնքէն:

Ես հասկցայ, որ այս աշխարհը կառավարող օրէնքները նոյնպէս չեն փոխուիր: Իրականութեան մէջ, մենք կրնանք յենիլ ասոնց մշտական եւ անփոփոխ բնոյթի վրայ: Ասոնց շնորհիւ մենք կրնանք մարդ ուղարկել դէպի լուսին կամ օդանաւներ օդ բարձրացնել: Բայց

քրիստոնեաներու մեծամասնութիւնը չի մօտենար Աստուծոյ այս ընկալմամբ: Փոխարէնը, անոնք կ'աղաչեն եւ կու լան, երբ ինչ որ բանի մը պէտք կ'ունենան՝ փորձելով համոզել Աստուծոյ տալու այն, ինչ որ պէտք է իրենց, կարծես թէ Աստուած կ'որոշէ՝ հոգ տանի՞լ անոնց մասին, թէ ոչ:

Օրինակ, եթէ ես երթայի քարոզելու եկեղեցական համաժողովի մը, մի՞թէ այդ եկեղեցւոյ բոլոր անդամները կը սկսէին աղօթել, որ լոյսերը միանային այդ միջոցառման ժամանակ: Մի՞թէ անոնք ծոմ կը պահէին եւ կ'աղօթէին՝ լալով եւ աղաչելով Աստուծոյ. «Աստուած, Ղուն գիտես, թէ որքան կարեւոր է այս հաւաքոյթը, եւ որքան մեզի պէտք է, որ լոյսերը միանան»: Չեմ կարծեր: Իրականութեան մէջ, ես կը կասկածիմ, որ ինչ որ մէկուն մտքէն նոյնիսկ անցնէր մտահոգուիլ լոյսերու մասին, երբ անոնք ծրագրէին այդ հաւաքոյթները: Եթէ ինչ-ինչ պատճառով անոնք գային այդ համաժողովին երեկոյեան, եւ լոյսերը միացուցած չըլլային, մի՞թէ կը կարծէք, որ անոնք կը հեռաձայնէին ելեկտրական հոսանքի ուժ մատակարարող ընկերութեան եւ կ'աղաչէին միացնելու լոյսերը: Ո՛չ: Եթէ անոնք այդպէս վարուէին, համոզուած եմ, որ այդ ընկերութեան ներկայացուցիչը պահ մը պիտի լսէր, պիտի նայէր մէկ ուրիշ աշխատակիցի եւ պիտի ըսէր՝ խելագար մը հեռաձայնած է, իսկ յետոյ պիտի պատասխանէր՝ տիկին, լոյսերը միացուած են. խնդիրը ձեր քովէն է»:

Երբ ես կը բերեմ այս օրինակն իմ համաժողովներուն, բոլորը կը ծիծաղին: Գիտէ՞ք ինչու: Որովհետեւ մարդիկ գիտեն, որ անմտութիւն է հեռաձայնել ելեկտրական հոսանքի ուժ մատակարարող ընկերութեան եւ լալագին ծայնով խնդրել անոնցմէ միացնելու լոյսերը. բոլորը գիտեն, թէ ինչ պէտք է ընել այդ իրավիճակին մէջ: Պէտք է պարզապէս միացնել անջատիչը: Ատիկա այնքա՛ն դիրիւն է: Պէտք չեն զգացնունքային ջանքեր եւ լարուածութիւն. պէտք է պարզապէս անջատիչը միացնել: Գիտէ՞ք, թէ ինչու մարդիկ լարուածութիւն չեն զգար լոյսերը միացնելու ժամանակ: Քանի որ անոնք Կ'ԱԿՆԿԱԼԵՆ, որ լոյսերը պիտի միանան: Անոնք կ'ակնկալեն, որ լոյսերը պիտի միանան, քանի որ գիտեն, թէ ինչպէս կը գործէ ելեկտրականութիւնը: Անոնք կը հասկնան այն ՕՐԷՆՔՆԵՐԸ,

որոնցմով ելեկտրականութիւնը կը գործէ, եւ անոնք գիտեն, որ այդ օրէնքները երբեք չեն փոխուիր:

Բայց եթէ դուք ետ երթայիք հազար տարիով եւ ըսէիք ինչ որ մէկուն, որ կարելի է լուսաւորել ամբողջ քաղաք մը փոքրիկ ապակիէ լամպերով, անոնք կը մտածէին, որ դուք խելագար էք: Եւ եթէ տեսնէին թաղամաս մը՝ լուսաւորուած փոքրիկ ապակիէ լամպերով, անոնք հրաշք կ'անուանէին ասիկա: Բայց ասիկա հրաշք չէ. պարզապէս ելեկտրականութեան օրէնքը կը գործէ, ինչպէս որ այն կը գործէ իւրաքանչիւրին համար, որ ժամանակ կը տրամադրէ, որպէսզի սորվի ելեկտրականութեան օրէնքները:

Մենք իմացանք, թէ ինչպէս կը գործէ ելեկտրականութիւնը, կամ, կարելի է ըսել՝ նորոգեցինք մեր միտքը ելեկտրականութիւնը կառավարող օրէնքներու վերաբերեալ: Այնպէս որ, մենք կ'ակնկալենք, որ այն պիտի գործէ, եւ չենք զարմանար, երբ կը տեսնենք ատոր ազդեցութիւնը: Իրականութեան մէջ, մենք աւելի շատ կը զարմանանք, երբ այն չի գործեր: Հասկնալով եւ գրի առնելով ելեկտրականութեան օրէնքները՝ մենք կրնանք տարածել լուսաւորութիւնը ողջ աշխարհի տարածքին: Ինչպէ՞ս: Սորվեցնելով մարդոց այն մասին, թէ ինչպէս կը գործեն այդ օրէնքները եւ թոյլ տալով անոնց վայելել լուսաւորութիւն ունենալու առաւելութիւնները: Այս ամէնը հնարաւոր կը դառնայ, երբ մենք կը հասկնանք ելեկտրականութեան օրէնքները: Նոյնը ճշմարիտ է նաեւ հոգեւոր օրէնքներու պարագային: Եթէ չհասկնանք ատոնք, մենք չենք կրնար օգտուիլ ատոնց առաւելութիւններէն այն ժամանակ, երբ ունենանք ատոնց կարիքը, եւ չենք կրնար տարածել ատոնք:

Երբ օդանաւ կը տեսնենք օդը, չենք ըսեր՝ ասիկա հրա՛շք է: Ո՛չ, մենք կ'ակնկալենք, որ օդանաւը պէտք է թռչի, քանի որ կը հասկնանք, թէ ինչպէս օդանաւը կը թռչի, եւ ինչու այն կը թռչի: Եւ կրկին, եթէ մենք ետ երթայինք 1000 տարիով, եւ նոր երկյարկանի «Էյրպաս 380» մը թռչէր ծառերու կատարներու վրայէն, ի՞նչ կ'ըսէին մարդիկ: Անոնք կ'ըսէին, որ ասիկա հրաշք է: Ես համաձայն եմ, որ 380-րդ մոտելը խիստ տպաւորիչ է. այդ օդանաւին կշիռքը 545.000 քիլոկրամ է, եւ այն կրնայ տեղաւորել աւելի քան 800 մարդ եւ



անցնիլ մինչեւ 14.000 քիլոմէթր՝ 900 քիլոմէթր/ժամ արագութեամբ: Այդ օդանաւն այն աստիճան գարմանալի է, որ թերեւս դուք գայթակղութիւն ունենաք մտածելու, որ այն հրաշք է: Բայց այն հրաշք չէ: Մենք կրնանք հարցնել 380-րդ օրինակը նախագծող ճարտարագէտներուն, թէ ինչպէս այն կը թռչի, եւ անոնք կը պատմեն մեզի ֆիզիքայի իւրաքանչիւր օրէնքի մասին, որ օգտագործած են՝ այդ օդանաւն օդը բարձրացնելու համար, կը պատմեն նաեւ իւրաքանչիւր օգտագործուած պտուտակի եւ մասնիկի մասին: Այդ օդանաւի առաջին թռիչքի ժամանակ ճարտարագէտները գարմանքով չէին ըսեր՝ նայեցէ՛ք, նոյնիսկ չենք կրնար հաւատալ, որ այն կը թռչի: Կրկին, մենք վստահաբար օդանաւ կը նստինք, քանի որ գիտենք, որ ատոր թռչելու կարողութիւնը հիմնուած է ֆիզիքայի օրէնքներու վրայ, որոնք չեն փոխուիր. քանի տակաւին մենք կը մնանք այդ օրէնքներու սահմաններուն մէջ, մեր օդանաւը պիտի թռչի: Յիշեցէ՛ք՝ օրէնքները չեն փոխուիր:

Մենք երբեք օդանաւ չէինք նստեր, եթէ բնութեան օրէնքներն անփոփոխ չըլլային: Պատկերացուցէք, որ մեր գնած օդանաւի տոմսին վրայ գրուած ըլլար մօտաւորապէս հետեւեալը. «Դուք կրնաք վտանգել ձեր կեանքը, եթէ թռչիք այս օդանաւով, քանի որ ամբարձիչ ուժի օրէնքն անկանոն կը գործէ: Օր մը այն կը գործէ, իսկ միւս օրը՝ ոչ: Ոչ ոք հաստատ զիտէ: Եթէ կը զգաք, որ ձեր բախտը կը քալէ, հաճելի թռիչք կը մաղթենք»: Ե՞րբ վերջին անգամ վախցած էք, որ վեր կը թռչիք ձեր նստարանէն: Երբե՛ք: Իսկ ինչո՞ւ: Որովհետեւ դուք գիտէք, որ ձգողութեան օրէնքը երբեք չի՛ փոխուիր:

Ես խօսեցայ երկրային տիրոյթին պատկանող օրէնքներուն մասին, որոնք Աստուած ստեղծած է: Բայց գիտէ՞ք, որ Անոր Թագաւորութեան հոգեւոր օրէնքները կը գործեն նոյն կերպով. ատոնք անփոփոխ են: Մինչեւ որ Աստուած սկսաւ խօսիլ ինձի հետ Իր Թագաւորութեան մասին, ես շատ լաւ տեղեակ էի, թէ ինչպէս կը գործէին այս աշխարհի ֆիզիքական օրէնքները, բայց կը կարծէի, որ Աստուծոյ Թագաւորութիւնն ուրիշ է: Ինձի կը թուէր, թէ Աստուած պարզապէս կ'ընէ՝ ինչ որ ուզէ, եւ երբ որ ուզէ: Բայց յայտնաբերեցի, որ ասիկա ճիշդ չէ: Երբ հասկցայ, որ Աստուծոյ

հոգեւոր Թագաւորութեան օրէնքներն անփոփոխ են, եւ որ ատոնք հնարաւոր է սորվիլ, հասկնալ եւ կիրառել, եւ հասկցայ, թէ ինչու Յիսուսը շարունակ կ'ըսէ. «Աստուծոյ Թագաւորութիւնը նման է այսինչ բանին», եւ կը համեմատէ այն որեւէ բնական երեւոյթի հետ, որպէսզի մենք՝ մարդիկս, հասկնանք, թէ ինչպէս այն կը գործէ: Յանկարծ մտքիս մէջ կարծես լամբ մը վառեցաւ: Ես մտածեցի. «Եթէ Աստուած տուած է մեզի Թագաւորութիւնը, իսկ Ան տուած է մեզի այն, եւ Թագաւորութիւնը կը կառավարուի անփոփոխ օրէնքներով, կը նշանակէ՝ ես կրնամ սորվիլ այդ օրէնքները եւ կիրառել իմ կեանքին մէջ»:

*«Մի՛ վախնար, փոքր հօտ, որովհետեւ ձեր Հայրը հաճեցաւ, որ Արքայութիւնը տայ ձեզի»:*

– Ղուկաս 12.32

Այդ օրուընէ եւ դարձայ հոգեւոր գիտնական: Ես սկսայ դիտարկել Աստուածաշունչը բոլորովին ուրիշ ձեւով: Սկսայ հարցումներ հարցնել, երբ կը կարդայի Աստուածաշունչը. «Ինչո՞ւ ձուկերը բազմապատկուեցան»: «Ինչո՞ւ այդ մարդը բժշկուեցաւ»: «Ինչո՞ւ հացը բազմապատկուեցաւ» եւ այլն: Երբ սկսայ մօտենալ Աստուածաշունչին այդ կերպով՝ խնդրելով Աստուծոմէ ցոյց տալ ինձի ատոր մէջ գտնուող օրէնքները, եւ հասայ ԱՆՀԱԲԱՍԱԼԻ արդիւնքներու:

Երբ Տէրը խօսեցաւ հետս այդ իրաւաբանին հեռաձայնած օրը եւ ըսաւ, որ իմ խնդիրն այն էր, որ ես երբեք ժամանակ չէի տրամադրած՝ սորվելու համար, թէ ինչպէս կը գործէ Իր Թագաւորութիւնը, եւ անմիջապէս իջայ առաջին յարկ եւ ապաշխարեցի իմ կնոջ առջեւ, որ չէի փնտռած Տիրոջը եւ թոյլ տուած էի մեր ընտանիքին յայտնուիլ նման խառնաշփոթ վիճակի մէջ, ինչպէս որ արդէն գրեցի: Բայց մենք չէինք գիտեր, թէ իրականութեան մէջ ինչ կը նշանակէր վստահիլ Թագաւորութեան՝ մեր պատասխաններն ստանալու համար: Կրկին, մենք եկեղեցւոյ մէջ էինք, մենք Երկինք կ'երթայինք, եւ մենք կը սիրէինք Աստուծոյ: Այդ ժամանակ չէինք պատկերացներ, թէ ինչ

նկատի ունէր Աստուած՝ խօսելով Թագաւորութեան մասին: Մենք լուրջ խնդիր ունէինք եւ չէինք գիտեր, թէ ինչպէս գտնել այն գումարը, որ այդ իրաւաբանը պատուիրեց վճարել երեք օրուան մէջ, կամ ինչ ընել այն պարագային, եթէ չկարենայինք վճարել այդ գումարը երեք օրուան մէջ, եւ մեր դէմ դատական հայց ներկայացուէր:

Այնպէս որ, ատիկա լաւ ստուգում էր: Ատիկա Աստուծոյ հետ ֆինանսական խնդիր լուծելու իմ առաջին փորձառութիւնն էր, եւ ես կ'ուզէի, որ Տէրը ցոյց տար ինծի, թէ ինչ նկատի ունէր «Թագաւորութիւն» ըսելով: Թոյլ տուէք պատմել, թէ ինչ տեղի ունեցաւ: Յիշեցէք՝ ինծի հեռաձայնող իրաւաբանը երեք օր ժամանակ տուած էր ինծի՝ պարտքս վերադարձնելու համար, բայց ես դրամ չունէի: Այդ յուսահատութիւնն էր, որ դրոշեց ինծի իմ ննջասենեակը երթալու եւ աղաղակելու Տիրոջը. ես փորձանքի մէջ էի: Անշուշտ, այդ ժամանակ էր, երբ Ան ըսաւ ինծի, որ իմ պատասխանը Թագաւորութիւնն էր, եւ կրկին, ես գաղափար չունէի, թէ Ան ինչ նկատի ունէր, բայց, անշուշտ, կը ցանկայի գիտնալ:

Երկու օր յետոյ ես գացի յաճախորդի մը հանդիպելու՝ կեանքի ապահովագրութեան պայմանագրի կնքման համար: Ի դէպ, այդ օրերուն ես միշտ կը կայանէի իմ ինքնաշարժն իմ յաճախորդներու տուներու կողքի հատուածը, եւ ոչ՝ արջեւի մասը: Իմ ինքնաշարժը պզտիկ խնդիր մը ունէր: Շարժիչը միանալու ժամանակ այն, առանց չափազանցութեան, ամբողջ ճանապարհը կամ փողոցը սպիտակ ծուխով կը պատէր: Ինծի միշտ կը թուէր, թէ իմ գործին համար օգտակար չէր ըլլար, եթէ ես կայանէի իմ ինքնաշարժը յաճախորդի տան մուտքի ճանապարհին եւ հեռանալու ժամանակ ամբողջովին պատէի այն ծուխով: Ես կ'ենթադրէի, որ թերեւս վստահելի չթուէի ֆինանսական բնագաւառին մէջ, եթէ ատիկա տեղի ունենար, քանի որ ես կ'առաջարկէի մարդոց մինչեւ քանի մը հարիւր հազար տոլար ներդրում կատարել: Եւ եթէ ես այդքան լաւ կը տնօրինէի ֆինանսները, ինչո՞ւ իմ ինքնաշարժն անսարք էր: Այդ երեկոյ ես ըրի նոյնը:

Երբ դուրս ելայ յաճախորդի տունէն, ես սարսափեցայ՝ հասկնալով, որ ան կ'ուղեկցէր ինծի դէպի իմ ինքնաշարժը: Ան ոչինչ գիտէր. մենք պարզապէս կը զրուցէինք: Բայց ես քիչ մը մտահոգուած էի, որ

թերեւս ան մնար այնքան, մինչեւ որ միացնէի ինքնաշարժի շարժիչը: Մենք շարունակեցինք գրոյցը, մինչեւ որ ես նստայ իմ ինքնաշարժը: Պատուհանն իջած էր, եւ ես կը շարունակէի խօսիլ՝ յուսալով, որ ան բարի գիշեր կը մաղթեր ինձի, իսկ ես կը ձեւացնէի, թէ մէկ վայրկեանով ինչ որ բան մը կ'ընէի, մինչ ան տուն կ'երթար, բայց ան չէր երթար: Ի վերջոյ, ան բարի գիշեր մաղթեց, բայց պարզապէս ետ գնաց ինքնաշարժէն եւ կեցաւ: Ես գիտէի, որ ուրիշ ելք չունէի: Միացուցի շարժիչը՝ յոյս ունենալով, որ թերեւս այն գոնէ մէկ անգամ ծուխ պիտի չժայթթէ, սակայն իմ ցանկութիւնը չկատարուեցաւ: Օդն անմիջապէս լեցուեցաւ այնպիսի ծուխով, որ աչքերս ցաւցուց:

Ան արագ ձեռքով ըրաւ, որպէսզի ես անջատէի շարժիչը: Մօտեցաւ պատուհանին եւ խնդրեց ինձմէ բարձրացնել արջեւի ծածկը: Ան ըսաւ ինձի, որ կէս դրոյքով մեքանիք կ'աշխատի եւ կ'ուզէ ինչ որ բան մը ստուգել: Մէկ վայրկեան յետոյ վերադարձաւ եւ ըսաւ.

- Ճիշդ այն, ինչ որ ես կը կասկածէի. իւրի խողովակի միջադիրը վնասուած է: Տուն գացէ՛ք եւ անմիջապէս նորոգեցէ՛ք:

Ես շնորհակալութիւն յայտնեցի եւ գացի, բայց անոր ախտորոշումը ոչինչ կը նշանակէր ինձի համար: Ես դրամ չունէի, որ այդ ինքնաշարժը նորոգէի:

Իմ գրասենեակը գրեթէ տասը քիլոմէթրով հեռու էր իմ յաճախորդի տունէն, եւ գրասենեակ երթալու ճանապարհին ընկճուածութեան ծանօթ ծածկոցն իջաւ վրաս: Բայց ինքնաշարժը վարելու ընթացքին ես յիշեցի, թէ Տէրն ինչ ըսած էր ինձի, եւ սկսայ խօսիլ Անոր հետ իմ ինքնաշարժի մասին. «Տէ՛ր, - ըսի, - ես դրամ չունիմ, որ նորոգեմ այս ինքնաշարժը: Ես տակաւին լիովին չեմ վճարած այս ինքնաշարժին համար եւ չեմ կրնար վաճառել այն վնասուած վիճակին: Ես պարզապէս չեմ գիտեր, թէ ինչ ընեմ: Թերեւս աւելի լաւ կ'ըլլար, եթէ այս ինքնաշարժն այրէր: Այդ պարագային, ապահովագրական ընկերութիւնը պիտի վճարէր ինքնաշարժի մնացած պարտքը, իսկ ես կ'ազատէի ասորմէ»:

Իմ գրասենեակին մօտաւորապէս հինգ քիլոմէթր մնացած էր, երբ նկատեցի պղպջակ մը արջեւի ծածկին վրայ, որ մինչ այդ չէի տեսած:

Մինչ կը նայէի ատոր, այն ատելի ու ատելի կը մեծնար, եւ երբ կայանեցի ինքնաշարժն իմ գրասենեակի կայանատեղը, այն պայթեցաւ՝ վերածուելով կրակէ գունդի: Ես ցնցուած էի. ինքնաշարժիս առջեւի մասն ամբողջութեամբ բռնկեցաւ մօտաւորապէս երկու մեթր բարձրութիւն ունեցող կրակով: Ես արագօրէն վազեցի գրասենեակ եւ հեռաձայնեցի հրշէջ բաժանմունք: Յաջորդ օրն ապահովագրական ընկերութիւնը վճարում կատարեց ինքնաշարժին համար: Անոնց կողմէն տրուած չէքով մենք ամբողջութեամբ վճարեցինք

**ՄԵՆՔ ՀԱՍՈՋՈՒԹՅԱՆՔ,  
ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԸ  
ԳՈՐԾԷ, ԵՒ ՈՐՈՇՈՒՄ  
ԿԱՅԱՑՈՒՑԻՆՔ, ՈՐ  
ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ  
ԾԱՆՕԹԱՆԱԼ  
ԱՍՏՈՒԾՈՅ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ԵՒ  
ՕԳՏՈՒԻԼ ԱՏՈՐՄԷ՝  
ՍԿԱՍԾ ԱՅԴ ՊԱՀԷՆ:**

ինքնաշարժին պարտքը, իսկ մնացած մասը բաւական էր՝ վճարելու համար այն իրաւաբանին, որ հեռաձայնած էր ինձի երեք օր առաջ: Մենք չէինք գիտեր՝ ինչ մտածել: Բայց թագաւորութեան սկզբունքներով ապրելու մեր որոշումը նորովի էր փորձուելու, եւ ատիկա պիտի որոշէր մեր ընթացքը հետագայ տարիներուն համար:

Այն բանէն յետոյ, երբ իմ ինքնաշարժն այրեցաւ, մենք, անշուշտ, ոգեշնչուեցանք, բայց յանկարծ հասկցանք, որ մեզի ինքնաշարժ պէտք է: Թէեւ այդ ինքնաշարժին պարտքն ամբողջովին

վճարուեցաւ, եւ ինձի հեռաձայնող իրաւաբանը նոյնպէս ստացաւ իր գումարը, մենք չունէինք դրամ՝ նոր ինքնաշարժ գնելու համար: Լսելով իմ ինքնաշարժի կորուստին մասին, հայրս հեռաձայնեց մեզի՝ ըսելով, որ կ'ուզէ օգնել նոր ինքնաշարժ գնելու հարցով: Մենք ոգեշնչուեցանք: Հայրս եւ ես գացինք տեղական օգտագործուած ինքնաշարժներու վաճառքի կեդրոն եւ գտանք ինքնաշարժ մը, որ յարմար էր ինձի եւ Տրենտային: Հայրս խոստացաւ տալ մեզի 5000 տոլար՝ այդ ինքնաշարժը գնելու համար: Այն կ'արժէր 17.000 տոլար, եւ մենք պէտք է վճարէինք մնացած 12.000-ը: Ես դժկամօրէն

ամբողջացուցի վարկային դիմումը, իսկ հայրս ստորագրեց՝ որպես երաշխավոր: Յաջորդ առաւօտեան վաճառողը պէտք է հեռաձայնէր ինձի եւ տեղեկացնէր դիմումի պատասխանին մասին:

Այդ գիշեր մենք չկրցանք քնանալ: Գիտէիք, որ չէիք կրնար նման վարկ վերցնել: Տէրը հազիւ նոր խօսած էր հետս ուրիշ ձեւով ապրելու մասին: Բայց քանի որ ես ինքնաշարժ չունէի, ճնշումին տեղ տուի: Շատ ծանր գիշերէ յետոյ Տրենտան եւ ես համաձայնեցանք, որ չենք կրնար ստորագրել այդ վարկի փաստաթուղթերը: Ես հեռաձայնեցի ինքնաշարժի շնորհակալութիւն յայտնեցի անոր առատաձեռն առաջարկին համար, բայց ըսի, որ մենք պիտի մերժենք այն: Ատկէ յետոյ հեռաձայնեցի ինքնաշարժներու վաճառքի կեդրոն եւ նոյնը ըսի անոնց: Վաճառողը վիատեցաւ, քանի որ առաւօտեան վարկային դիմումը հաստատուած էր, եւ ինքնաշարժը պատրաստ էր՝ առնելու համար: Թէեւ մենք չէիք գիտեր, թէ ինչպէս Աստուած պիտի օգնէր մեզի նոր ինքնաշարժ ձեռք ձգելու, մենք խաղաղութիւն զգացինք:

Այդ ընթացքին Տրենտան կը զբաղէր հնաոճ առարկաներու վաճառքով, որոնք ձեռք կը ձգէր իրենց իսկ օգտագործած առարկաները վաճառող մարդոցմէ: Ան հաղորդագրութիւն ձգած էր մարդու մը քանի մը սենեակ զբաղեցնող կահոյք գնելու մասին: Այդ մարդը կը վաճառէր իր կահոյքը մեր ինքնաշարժին այրելէն գրեթէ մէկ ամիս առաջ, բայց Տրենտան այդպէս ալ չէր կրցած կապ հաստատել անոր հետ: Քանի մը օր յետոյ այն բանէն ետք, երբ մեր ինքնաշարժն այրեցաւ, այդ մարդը հեռաձայնեց եւ համաձայնեցաւ վաճառել երեք սենեակ զբաղեցնող կահոյքը 1000 տոլարէն պակաս գինով: Տրենտան փոխանցեց այդ կահոյքն աճուրդային ընկերութեան մը՝ իր փոխարէն վաճառելու համար, եւ այնպէս պայմանաւորուեցաւ անոնց հետ, որ իր շահաբաժինի վճարի փոխարէն առաւ լաւ վիճակի մէջ գտնուող օգտագործուած ինքնաշարժ մը, որ կը պատկանէր այդ աճուրդային ընկերութեան: Այնպէս որ, վերջաւորութեան մենք ունեցանք լաւ վիճակի մէջ գտնուող ինքնաշարժ, որուն համար ոչինչ պարտք էինք, բոլորովին փակուած վարկային քարտ եւ բոլորովին վճարուած ինքնաշարժի վարկ:

Ջարմանալի՜ է: Ահա թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը: Մենք

համոզուեցանք, որ Աստուծոյ համակարգը կը գործէ, եւ որոշում կայացուցինք, որ պիտի շարունակենք ծանօթանալ Աստուծոյ Թագաւորութեան համակարգին եւ օգտուիլ ատկէ՝ այդ պահէն սկսեալ: Թերեւս հարցնէք. «Ո՞ր սկզբունքը դուք օգտագործեցիք»: Ամենակարեւոր սկզբունքն էր՝ յոյս չդնել պարտքի վրայ, այլ խնդրել Աստուծմէ այն, ինչին որ կարիքն ունինք, եւ թոյլ տալ, որ Ան ցոյց տայ, թէ ինչպէս հնծել այն:

Իմ ինքնաշարժին հետ տեղի ունեցածը հետաքրքրութիւն յառաջացուց եւ հաստատեց եւս մէկ իրադարձութիւն, որ տեղի ունեցած էր քանի մը ամիս առաջ, բայց այդ ժամանակ ես չէի հասկնար, թէ Աստուած ինչ ցոյց կու տար ինծի: Իմ մտքին մէջ ես տակաւին չէի ընկալեր այն որպէս Թագաւորութեան սկզբունք:

Ես եղնիկի որսի սիրահար եմ, բայց տարիներ շարունակ ձեռնունայն տուն կը վերադառնայի: Կ'երթայի անտառ ցուրտ եղանակին եւ քանի մը օր շարունակ ոչինչ կ'որսայի: Այնպէս չէր, որ ես պարզապէս կը սիրէի որսորդութիւնը. ես երեխաներ ունէի, որոնց պէտք էր կերակրել, եւ անշուշտ, կրնայի օգտագործել որսի միսը: Թէեւ անցեալին կ'ունենայի յաջողութիւններ, արդէն տարիներ անցած էին իմ վերջին յաջողակ եղնիկներու որսաշրջանէն, երբ ես որսի միս կը բերէի տուն: Անգամ մը, երբ կը մտածէի եղնիկներու յառաջիկայ որսաշրջանին մասին, ես լսեցի Տիրոջ ձայնը. «Ինչո՞ւ թոյլ չես տար, որ ցոյց տամ քեզի, թէ ինչպէս եղջերու որսաս այս տարի»: Ես շատ զարմացայ: Ցոյց տալ ինծի, թէ ինչպէս եղջերո՞ւ որսամ այս տարի: Ի՞նչ կը նշանակէ ատիկա: Աղօթելով այդ խօսքերուն վերաբերեալ՝ ես զգացի, որ պէտք է ֆինանսական սերմ կամ նուէր ցանեմ յատկապէս եղջերու հնծելու նպատակին համար: Ես զգացի, որ Տէրը կ'ըսէ ինծի, որ երբ ցանեմ իմ եղջերուին համար, ես պէտք է հաւատամ, որ արդէն ստացած եմ, մինչեւ այն որսալը՝ համաձայն Մարկոս 11.24-ի:

*«Ասոր համար կ'ըսեմ ձեզի, թէ ամէն ինչ, որ աղօթելով կը խնդրէք, հաւատացէ՛ք, թէ պիտի առնէք, եւ պիտի ըլլայ ձեզի»:*

Թէեւ ես՝ որպէս քրիստոնեայ, մշտապէս նուիրատուութիւններ կը կատարէի եւ կ'աջակցէի իմ եկեղեցիին, նպատակաւորօրէն կերպով ցանելը եւ հաւատալը, որ կը ստանամ աղօթելու պահուն, նոր էր ինծի համար: Ես չէք մը առի եւ գրեցի յաւելեալ նշումներու բաժինի մէջ. «Իմ 1987 թուականի եղջերուին համար»: Ես դրի ձեռքերս ասոր վրայ, իսկ յետոյ փոստով ուղարկեցի ծառայութեան մը, որուն կը վստահէի, եւ հռչակեցի, որ ստացայ իմ եղջերուն այն պահուն, երբ ուղարկեցի այդ չէքը: Այդ ժամանակ ես կ'ապրէի Օքլահոմա նահանգի Տալսա քաղաքը, ուր որս ընելու տեղ չկար, բայց իմ ընկերներէն մէկը, որ մեր եկեղեցիէն էր, Գոհութեան տօնին կապակցութեամբ հրաւիրեց ինծի իր տատիկին տունը, որ քաղաքէն դուրս էր: Ան ըսաւ, որ անոնց ազարակի տարածքին եղնիկներ կ'ըլլան: Այսպիսով, իմ ընտանիքն ուղեւորեցաւ Գոհութեան օրուան առաւօտեան՝ համեղ կերակուրներով յագեցած օր անցընելու եւ եղջերու տուն բերելու համար:

Ընկերս այդքան ալ լաւ չէր գիտեր, թէ ուր տանէր ինծի, բայց հոն անտառին սահմանակից արօտավայր կար, եւ ան առաջարկեց երթալ այդ արօտավայրը եւ նստիլ մեծ ծառի մը տակ: Կ'ուզեմ, որ պատկերացնէք ատիկա. ես նստած էի հնձած արօտավայրին մէջտեղը գտնուող մեծ ծառի մը տակ՝ մէջքով յենած այդ ծառին եւ դէմքով դէպի անտառը, որ գրեթէ 120 մետրով հեռու էր ինձմէ: Այժմ, երբ կը յիշեմ այդ օրը, ես պարզապէս նստած էի բաց դաշտին մէջ՝ յենած ծառին, ինչ որ հազիւ թէ կարելի է գերազանց դիրք անուանել:

Մօտաւորապէս 30-40 վայրկեան յետոյ, երբ առաւօտը կը մօտենար, եղջերու մը իմ ետեւը, բոլորովին աննկատ կը վազէր դաշտէն դէպի իմ առջեւը գտնուող անտառը: Ծառն իմ եւ եղջերուին միջեւ էր. ան չտեսաւ ինծի: Եղջերուն վազեց ուղիղ դէպի ծառը՝ անտառ երթալու ճանապարհին, եւ չտեսաւ, որ ես յենած էի ատոր: Մօտենալով ծառին՝ ան որսաց իմ հոտը եւ կեցաւ՝ փորձելով հասկնալ, թէ ուր էի: Ան դարձաւ, նայեցաւ ծառին, եւ մեր հայեացքները հանդիպեցան՝ ընդամէնը 5 մետր հեռաւորութեան վրայ: Չեմ գիտեր, թէ ով աւելի զարմացած էր, բայց եղջերուն ժամանակ չկորսնցուց. բարձր փնջացնելով՝ անջատուեցաւ տեղէն եւ արագութեամբ սլացաւ



դէպի անտառ: Ես նստած էի, եւ մինչ եղջերուն արագութեամբ կը փախչէր ինձմէ, կը փորձէի ուղղել հրացանս եւ նշանառութեան տակ առնել իրեն:

Այդ հզօր արագութեամբ վազող սպիտակապոչ եղջերուին նշանառութեան տակ պահելը եւ անսպասելի գնդակ հասցնելն ամենադիւրին բանը չէր: Ճիշդն ըսելու համար, նախկինին ես երբեք չէի կրակած վազող եղջերուի: Ես կը յիշեմ, որ հագու կը պահէի իմ եղջերուին նշանառութեան տակ, քանի որ ան բարձր կը ցատկէր, ինչպէս որ կը վարուին սպիտակապոչ եղջերուներն ամբողջ թափով փախչելու ժամանակ: Բայց երբ քաշեցի ձգանը, ան ինկաւ ու անշարժացաւ: Ես ցնցուած էի: Այդ ամէնը կատարուեցաւ մէկ վայրկեանի մէջ: Կրակոցը եղաւ հարիր մեթրէն. ես քայլերով չափեցի հեռաւորութիւնը:

Լսելով հրացանի ձայնը, ընկերս եկաւ եւ շնորհաւորեց ինձի, քանի որ տեսաւ ինկած եղջերուն: Ես չէի պատմած անոր, որ Տէրը ըսած էր ինձի, թէ ինչպէս պէտք է ստանայի իմ եղջերուին, բայց այդ պահուն նայեցայ անոր եւ ըսի.

- Չեմ կարծեր, որ ե՛ս որսացի այս եղջերուն իմ որսորդական մեծ հմտութիւններուն շնորհիւ:

Ես հանեցի թուղթ մը իմ որսորդական բաձկոնի գրպանէն, որուն վրայ նշուած էր այդ չէքն ուղարկելու օրը: Ատոր վրայ գրուած էր. «Ես կը հաւատամ, որ կը ստանամ իմ 1987 թուականի եղջերուն, Յիսուսի անունով»: Ատոր վրայ գրած էի նաեւ իմ աղօթքի ամսաթիւը եւ ժամը: Ես պահեցի այդ թուղթն այնպէս, որ ընկերս տեսնէր, եւ պատմեցի անոր, թէ ինչ ըսած էր Տէրը:

Այդ դէպքը գրուեց իմ ուշադրութիւնը: Ես նոյնիսկ կասկած չունիմ, որ այն Աստուծմէ էր: Սակայն, ինչ-ինչ պատճառով, չհասկցայ, որ կ'օգտագործէի Երկինքի Թագաւորութեան օրէնքներէն մէկը: Իրականութեան մէջ, ես նոյնիսկ չէի մտածեր «Թագաւորութիւն» հասկացողութեան մասին: Այդ եղջերուն որսալը զարմանալի էր, բայց արդեօ՞ք ասիկա կրկին տեղի պիտի ունենար: Քանի որ ես չունէի պատկերացում Թագաւորութեան օրէնքներուն մասին,

չէի գիտեր, թէ ինչ կերպով այդ եղջերուն եկաւ հոն, կամ ինչ օրէնքներ բերին այն: Այնպէս որ, ես վերագրեցի ատիկա Աստուծոյ եւ սկսայ անհամբեր սպասել եղնիկներու յաջորդ որսաշրջանին՝ այդ սկզբունքը կրկին փորձարկելու համար: Բայց մինչեւ յաջորդ որսաշրջանը, իմ ինքնաշարժն այրեցաւ: Երբ այն այրեցաւ, առանց պարտքի ես ունեցայ ուրիշ ինքնաշարժ մը ատոր փոխարէն, Աստուած լիովին գրաւեց իմ ուշադրութիւնը: Այժմ ես ոգեշնչուած էի յաջորդ որսաշրջանին եւս մէկ եղջերու որսալու մտքով: Ես կը ցանկայի ստուգել իմ տեսութիւնը եւ աւելին իմանալ Աստուծոյ Թագաւորութեան մասին: Եղնիկներու որսաշրջանին շատ ժամանակ չէր մնացած:

Ես որսացի այդ եղջերուն Օքլահոմայի մէջ 1987 թուականի աշնան: Իսկ 1988 թուականի Յուլիսին մենք տեղափոխուեցանք Օհայօ, ուր մեծցած էի: Թէեւ ես հոն մեծցած էի, սակայն վերջին 12 տարուան ընթացքին հոն չէի ապրած: Եւ ինձի ոչ մէկ անգամ յաջողուած էր եղջերու որսալ Օհայոյի մէջ: Ես փորձած էի քանի մը անգամ, բայց նոյնիսկ չէի կրակած որեւէ եղջերուի: Հազիւ որ տեղաւորուեցանք մեր վարձակալած քաղաքային տունն Օհայոյի մէջ, ես հասկցայ, որ չեմ գիտեր, թէ ուր որս ընեմ: Երբ երեխայ էի, ես նապաստակ կ'որսայի իմ հօր տան փողոցի միւս կողմը գտնուող առուակին քով: Երբ դեռահաս էի, քանի մը տարի շարունակ թակարդ կը դնէի հոն, բայց նոյնիսկ մէկ անգամ չէի տեսած եղջերու կամ եղջերուի որեւէ նշան ամբողջ այդ տեղանքը: Անգամ մը, երբ կը սորվէի համալսարանին մէջ, եղբայրս հեռաձայնեց ինձի: Ան մեծ ոգեւորութեամբ պատմեց, որ եղնիկ տեսած է հօրս տան մօտ գտնուող առուակին մօտակայքը: Երկուքս ալ զարմացած էինք:

Յիշելով այդ խօսակցութիւնը՝ ես որոշեցի, որ եղնիկներու որսաշրջանի բացման օրը քալելով պիտի երթամ այդ առուակի հունին ուղղութեամբ: Ես հեռաձայնեցի եղբօրս եւ խորհուրդ հարցուցի, թէ առուակին որ հատուածն արժէր երթալ: Թէեւ ան արդէն քանի մը տարի չէր գտնուած այդտեղ, ան յիշեց մեծ թղկիի (թխկի ծառ) մը մասին, որ այդ առուակի անտառային հատուածն էր եւ կրնար յարմար տեղ ըլլալ: Քանի որ մանկութեանս տարիներուն

Ես վերուվար կ'ընէի այդ առուակէն, ծանօթ էի ասորը ամէն մէկ շրջադարձին եւ յստակ գիտէի, թէ ան ուր կ'ուղղորդէր ինձի:

Տրենտան եւ ես կրկնեցինք այն, ինչ որ Տէրը ցոյց տուած էր մեզի նախորդ տարի Օքլահոմայի մէջ. մենք սերմ ցանեցինք, արձանագրեցինք մեր խնդրանքը եւ հաւատացինք, որ պիտի ստանանք աղօթելու ժամանակ՝ համաձայն Մարկոս 11.24-ին: Այդ ժամանակ Օքլահոմայի մէջ կար երկու եղնիկի սահմանափակում՝ արու կամ էգ, բայց մենք մտածեցինք, որ կը ցանենք մէկ եղնիկի համար, իսկ որոշ ժամանակ յետոյ պիտի որսանք երկրորդը: Տրենտան եւ ես սերմ ցանեցինք եղնիկի համար եւ հաւատացինք, որ կը ստանանք այն աղօթքի ժամանակ: Ձարմանալի էր, բայց եղնիկներու որսաշրջանի բացման առաւօտեան ես 40 վայրկեանի ընթացքին որսացի ոչ թէ մէկ, այլ երկու եղնիկ: Մենք հաստատ ինչ որ բան յայտնաբերած էինք:

Մէկ ամիս յետոյ ես երազ մը տեսայ գործարար գաղափարի վերաբերալ: Այդ գործին համար կը պահանջուէր ամբողջ ֆինանսական գիտելիքը, որ ես ձեռք ձգած էի ապահովագրութեան ոլորտին մէջ, բայց երազիս մէջ այն պիտի օգտագործուէր ուրիշ նպատակով: Ես բոլորովին չհասկցայ այն, բայց համոզուած էի, որ Աստուած կ'առաջնորդէր ինձի, որ սկսէի իմ գործը եւ դուրս ելլէի այն ընկերութենէն, ուր կ'աշխատէի արդէն ութը տարիէ ի վեր: Այդ երազը տեսնելու ժամանակ ես տակաւին կեանքի ապահովագրութեան փաթեթներ եւ արժեթուղթեր կը վաճառէի:

Այն շաբաթ, երբ տեսայ այդ երազը, ես պայմանաւորուած այց ունէի ընտանիքի մը՝ ապահովագրական փաթեթի վաճառքի վերաբերեալ, ու թէեւ մենք կը քննարկէինք անոնց կեանքի ապահովագրութիւնը, ես գիտէի, որ այդ ընտանիքի իրական կարիքը կամ խնդիրը կեանքի ապահովագրութիւն ունենալը չէր: Անոնց ամսական պիտոճէն անկառավարելի էր, եւ անոնք պարտքերու մէջ էին: Իմ յաճախորդներու ֆինանսական ծրագրաւորման մէջ կը մտնէր տուեալներու թերթիկ ամբողջացնելը, որուն մէջ անոնք կ'ընդգրկէին իրենց բոլոր ֆինանսական տուեալները: Ատիկա առիթ կու տար ինձի հասկնալ, թէ ինչ արժողութեան կեանքի

ապահովագրութեան փաթեթ անհրաժեշտ էր անոնց: Այդ երեկոյ ես անհանգստութիւն կը զգայի ընտանիքին համար: Ես կ'ուզէի օգնել անոնց, բայց չէի գիտեր, թէ ինչպէս: Առի անոնց տուեալներու թերթիկը եւ սկսայ որոշ տարբերակներ մշակել: Աշխատելով իմ ֆինանսական հաշուիչով՝ ես շեղեցայ կեանքի ապահովագրութենէն եւ սկսայ ստուգել, թէ արդեօ՞ք անոնք կրնային որոշակի գումար խնայել իրենց ամսական պիտոճէն: Քանի մը բան վերադասաւորելէ եւ հաշուիչով որոշ գործողութիւններ կատարելէ ետք ես ցնցուեցայ՝ հասկնալով, որ այդ ընտանիքը կրնար ազատիլ ամբողջ պարտքէն 7 տարիէն պակաս ժամանակահատուածի ընթացքին, ներառեալ անոնց կալուածագրաւը՝ առանց եկամուտն աւելցնելու:

**ԵՍ ՑՆՑՈՒԵՑԱՅ՝  
ՀԱՍԿՆԱԼՈՎ, ՈՐ  
ԱՅՂ ԸՆՏԱՆԻՔԸ  
ԿՐՆԱՐ ԱԶԱՏԻԼ  
ԱՄԲՈՂՋ ՊԱՐՏՔԷՆ  
7 ՏԱՐԻԷՆ ՊԱԿԱՍ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՈՒԱԾԻ  
ՄԷՋ, ՆԵՐԱՌԵԱԼ  
ԱՆՈՆՑ  
ԿԱՌՈՒԾԱԳՐԱՒԸ՝  
ԱՌԱՆՑ ԵԿԱՍՈՒՏՆ  
ԱՒԵԼՑՆԵԼՈՒ:**

Այդ ժամանակ ես արդէն 8 տարի ֆինանսական ոլորտի մէջ էի, եւ երբեք չէի լսած, որ նման բան կարելի է: Ես կրկին ու կրկին աշխատեցայ այդ տարբերակին վրայ

եւ նոյն պատասխանը ստացայ. 6.2 տարի յետոյ անոնք կ'ազատէին ամբողջ պարտքէն: Ատկէ յետոյ ես բացի իմ թղթապանակներու դարակը եւ վերցուցի այլ յաճախորդներու տուեալներու թերթիկներ: Ես կատարեցի նոյն հաշուարկները եւ ստացայ նոյն պատասխանը՝ պարտքերու փակում 7 տարիէն պակաս ժամանակահատուածի մէջ: Անկեղծ ըսելու համար՝ ես ցնցուած էի:

Ես մտածեցի, որ իմ յաճախորդը պիտի քաջալերուէր՝ գիտնալով այդ մասին, եւ որոշեցի գեղեցիկ զեկոյց պատրաստել եւ մեր յաջորդ հանդիպումին ներկայացնել այն, ինչ որ յայտնաբերած էի: Ես իսկապէս մտահոգուած էի այդ ընտանիքին համար: Գիտէի, որ ֆինանսական ճնշումն ազդած էր անոնց կեանքի իւրաքանչիւր բնագաւառին վրայ, եւ կ'ուզէի, որ անոնք գիտնային, որ իրենց

Վիճակն անյոյս չէր: Ես ներկայացուցի իմ պատրաստած փոքրիկ տպագիր գեկոյցն իմ յաճախորդին, եւ երբ քայլ առ քայլ ցոյց տուի իմ նշած թիւերը, անոնք ապշած էին: Այն բանէն յետոյ, երբ ցոյց տուի, թէ որքան արագ անոնք կրնային ազատիլ պարտքերէն, ամուսինն արցունքն աչքերուն ոտքի ելաւ եւ շնորհակալութիւն յայտնեց: Ատիկա նման էր այն հեռուստատեսային տեսարաններուն, որոնց մէջ որեւէ ընտանիք կը յաղթէ վիճակախաղի մէջ կամ կը շահի որեւէ խաղային հաղորդման գլխաւոր մրցանակը: Անոնք ըսես չհաւատային իմ ըսածին: Այդ պահն իսկապէս զգացմունքային էր անոնց համար, ինչպէս նաեւ ինծի համար:

Մտածելով այդ երեկոյին մասին, չէի կրնար հեռացնել իմ մտքէն այն փաստը, որ պարզապէս վերադասաւորելով այդ յաճախորդի գործարքներն ու թիւերը՝ ես կրցայ ցոյց տալ անոր, թէ ինչպէս փակել բոլոր պարտքերը 7 տարիէն պակաս ժամանակահատուածի մէջ: Ես տեսայ, թէ ինչպէս ատիկա ազդեց անոնց վրայ. այդ մարդիկ յոյսով լեցուեցան: Ես սկսայ ուսումնասիրել իմ յաճախորդներու մեծ մասի տուեալները՝ ստուգելու համար, թէ որքանը կը համապատասխանի «7 տարիէն պակաս ժամանակահատուածի մէջ պարտքերէն ազատելու» ծրագիրին, եւ զարմացայ՝ պարզելով, որ ատիկա կը վերաբերէր 85 տոկոսին: Բայց ո՞վ պիտի ըսէր անոնց այդ մասին: Այն երեկոյէն յետոյ, երբ ես խօսեցայ այդ յաճախորդին հետ, եւ այն բանէն յետոյ, երբ ուսումնասիրեցի իմ հին յաճախորդներու բազմաթիւ տուեալները, ես հասկցայ, որ թերեւս կրնայի սկսիլ իմ սեփական գործը եւ օգնել մարդոց ազատելու պարտքերէն՝ հետեւելով իմ ծրագիրին:

Այդ ժամանակ անձամբ ես դեռ չէի ազատած պարտքերէն, բայց անկասկած, կարեկցանք կը զգայի ֆինանսապէս ճնշուած մարդոց հանդէպ, եւ այդ առաքելութիւնը շատ աւելի գրաւիչ էր ինծի համար, քան կեանքի ապահովագրութեան փաթեթներ վաճառելը: Սկսայ ցոյց տալ իմ բոլոր յաճախորդներուն նոյն տեսակի տպագիր գեկոյցներ, եւ բոլորը, առանց բացառութեան, ցնցուած էին:

Իմ սեփական գործը սկսելու համար, ես պէտք է լուծէի երկու խնդիր: Առաջինն այն էր, որ հաշուարկները ձեռքով կատարելը

Եւ յետոյ ատոնք յաճախորդին ներկայացուող զեկոյցի ձեւին մէջ ձեռքով մուտքագրելը չափազանց շատ ժամանակ կը պահանջէր: Եւ երկրորդը՝ ինչպէ՞ս ես գումար պիտի շահէի ատկէ: Ի վերջոյ, պայմանաւորուեցայ ծրագրաւորողի մը հետ, եւ ան համակարգչային ծրագիր մը ստեղծեց, որուն միջոցով կրնայի աւելի արագ կազմել իմ ֆիանսական ծրագիրը: Ինչ կը վերաբերէր իմ երկրորդ խնդիրին, ես գիտէի, որ չէի կրնար դրամ առնել մարդոցմէ՝ անոնց պարտքերէն ազատելու համար, նախեւառաջ այն պատճառով, որ անոնք դրամ չունէին: Ես սկսայ աղօթել ասոր վերաբերեալ:

Օր մը փայլուն գաղափար մը ստացայ: Ես իսկապէս զգացի, որ Աստուած գաղափար տուաւ ինձի այն մասին, թէ ինչպէս օգնեմ մարդոց՝ առանց անոնցմէ գումար ստանալու, եւ միեւնոյն ժամանակ եկամուտ ունենալ: Ըստ իմ ծրագիրին, ես պիտի փնտռէի այն, ինչ որ անուանեցի կորսուած դրամ՝ այն միջոցները, որոնք յաճախորդն արդէն ունէր, բայց որոնց մասին չէր գիտեր: Օրինակ՝ ես պիտի համեմատէի ինքնաշարժի, տան, կեանքի եւ առողջութեան ապահովագրութեան վճարումներու չափերը՝ խնայողութիւններ փնտռելով: Ես պիտի համեմատէի կալուածագրաւային վճարումներու չափերը՝ պարզելու համար, թէ արդեօ՞ք վերաֆինանսաւորումն օգտակար պիտի ըլլար: Ես պիտի ստուգէի բազմաթիւ նման ոլորտներ, թէ եւ անձամբ չէի աշխատած այդ ոլորտներուն մէջ: Իմ յաճախորդին տանը ցոյց պիտի տայի անոր իր հնարաւոր խնայողութիւնները եւ պիտի առաջարկէի գտնել այնպիսի ֆինանսական կազմակերպութիւն, որ պիտի խնայէր իր միջոցները, կամ ալ պէտք է դիմէր իմ առաջարկած կազմակերպութիւններուն: Յանկարծ ես հասկցայ, որ կրնայի պարզեալվճար ստանալ ֆինանսական կազմակերպութիւններէն՝ իմ յաճախորդներուն անոնց քով ուղղորդելու համար:

Ըստ էութեան, ես արդէն իսկ կը կատարէի ամբողջ աշխատանքը. ես կը վաճառէի իմ յաճախորդին տարբեր կազմակերպութիւններու ֆինանսական արտադրանք, իսկ այդ կազմակերպութիւնները պարզապէս կ'արձանագրէին անոնց: Այնպէս որ, սկսայ կապ հաստատել այն ֆինանսական կազմակերպութիւններու գործակալներուն եւ ներկայացուցիչներուն հետ, որոնք կ'առաջարկէի

իմ յաճախորդներուն, եւ կը հարցնէի՝ արդեօ՞ք անոնք պատրաստ էին պարզեւավճար տալու ինծի ուղղորդումներու համար: Բոլորին պատասխանը «Այո» էր: Եւ ես սկսայ զբաղիլ ատորմով: Ես դուրս ելայ իմ աշխատանքէն եւ հիմնադրեցի իմ ընկերութիւնը, որ կ'օգնէ մարդոց ազատելու պարտքերէն: Իմ գործն առջեւ գնաց եւ տուաւ մեզի բաւականաչափ եկամուտ, ինչ որ առիթ տուաւ Տրենտային եւ ինծի պարտքերէն ազատիլ երկուք ու կէս տարուան մէջ: Մենք այնքա՛ն ոգեշնչուած էինք (Եւ եթէ դուք կը ցանկաք անվճար ֆինանսական ծրագիր ստանալ, հեռաձայնեցէ՛ք 1-800-815-0818 հեռաձայնի թիւին: Մենք կը կազմենք այդ ծրագիրները մինչեւ օրս՝ 28 տարի անց):

Ամէն օրը նոր էր, քանի որ Աստուած կը շարունակէր աւելի ու աւելի բացայայտել, թէ ինչպէս կը գործէր Իր Թագաւորութիւնը: Իմ յաճախորդներէն մէկուն այցելելու ընթացքին Աստուած խօսեցաւ հետս այն մասին, որ վարձէի աշխատողներ եւ վերածէի իմ փոքրիկ գործն իսկական ընկերութեան: Ես աշխատողներ վարձեցի, եւ մեր գործը սկսաւ բարգաւաճիլ՝ հասնելով նորանոր բարձունքներու: Ներածութեան մէջ ես պատմեցի, որ մենք սկսանք կանխիկ գումարով ինքնաշարժներ գնել եւ կառուցեցինք մեր երազանքի տունը: Իմ նոր աշխատողներուն հետ ամենամսեայ աշխատանքային հանդիպումներու ժամանակեսկըպատմէի Աստուծոյ Թագաւորութեան մասին: Մարդիկ կը ձգտէին աշխատիլ մեր ընկերութեան մէջ, քանի որ կը ցանկային աւելին գիտնալ Թագաւորութեան մասին եւ սորվիլ, թէ ինչպէս կիրառեն աստոր սկզբունքներն իրենց կեանքին մէջ նոյնքան, որքան որ կը ցանկային աշխատանք ստանալ:

Այն դասերը, որոնք Աստուած ցոյց կու տար ինծի, զարմանալի էին եւ, անշուշտ, մեծ մասը ես սորված եմ իմ ամենամեայ որսորդութեան ժամանակ: Այն պատմութիւնները, որոնց ես ականատես եղայ որսորդութեան ժամանակ, ամենաքիչը կարելի է ցնցող անուանել: Ես չէի հաւատար ատոնց, եթէ չտեսնեի իմ աչքերով: Իւրաքանչիւր պատմութիւն ինչ որ նոր բան սորվեցուց ինծի Թագաւորութեան մասին, ինչ որ նախկինին չէի գիտեր: Կը կարծեմ՝ ես պիտի բաժնեկցիմ ատոնցմէ քանի մը հատով այս գիրքին մէջ, բայց եթէ դուք իսկապէս

կը ցանկաք կարդալ իմ որսորդական պատմութիւնները, կրնաք ձեռք ձգել իմ «Հաւատքի որսորդութիւն» գիրքն իմ համացանցային կայքէն:

Շտուեալ պատմութիւնը տեղի ունեցաւ քանի մը տարի ետք այն բանէն յետոյ, երբ ես որսացի իմ առաջին եղջերուն՝ օգտագործելով իմ նորագիտ գիտելիքը Թագաւորութեան մասին: Ինչպէս արդէն պատմեցի, Աստուած սորվեցուց ինձի, թէ ինչպէս ցանեմ իմ եղջերուին համար եւ ստանամ այն աղօթելու պահուն: Եւ առանց բացառութեան ես եղջերու հնձած եմ 30-45 վայրկեանի մէջ ամէն տարի: Ի դէպ, ասիկա կը շարունակուի արդէն 28 տարի: Ինչ որ է, այդ տարի ես գացի, ինչպէս միշտ, արդէն բոլորովին վստահ, որ եղջերուն պիտի յայտնուի: Եւ անշուշտ, քանի մը վայրկեանէն տեսայ եղջերու մը, որ կը հեռանար ինձմէ եւ կը պատրաստուէր մտնելու իմ դրացիին հողատարածքը, որ գրեթէ 200 մետրով հեռու էր ինձմէ: Ես գիտէի՝ հագիւ որ եղջերուն անտառ մտնէր, ես պիտի կորսնցնէի այն, սակայն համոզուած էի, որ այդ եղջերուն իմն էր: Ասիկա տակաւին այն ժամանակն էր, երբ ես ոչինչ գիտէի արբալետով (աղեղնազէնով) որսի, փոթկացնող սուլիչներու եւ եղջերուներուն թիսկոցներով գրաւելու մասին: Ես գիտէի, որ այդ եղջերուն իմ հունձքն էր, բայց անօգնական կերպով կը դիտէի, թէ ինչպէս ան կը պատրաստուէր մտնելու իմ դրացիին անտառային տարածքը: Բայց յանկարծ լսեցի իմ հոգիին մէջ. «Հրամայէ՛ այդ եղջերուին քու քովդ գալ»: Ի՞նչ: Ի՞նչ կը նշանակէ հրամայել եղջերուին իմ քովս գալ: Ես համոզուած չէի, եւ այդ պատճառով ըսի ասիկա բարձրաձայն, բայց ոչ այնքան բարձր, որ եղջերուն լսէր ինձի:

- Եղջերո՛ւ, ես կը հրամայեմ քեզի կենալ, դառնալ, գալ եւ կենալ իմ ծառին տակ:

Ես կ'որսայի նետով ու աղեղով, եւ աւելցուցի, որ եղջերուն կենար այն ծառին տակ, որուն վրայ իմ որսորդական դիտանոցն էր, քանի որ կ'ուզէի, որ իմ եղջերուն իսկապէս շատ մօտիկ ըլլար: Ես մտածեցի, որ եթէ հաւատքը պիտի բերէ այդ եղջերուին քովս, կը նշանակէ՝ հաւատքը կրնայ նաեւ կեցնել այն իմ ծառին տակ, ուրկէ ես կրնայի դիպուկ հարուած հասցնել:

Ջարմանալիօրէն, երբ ես ըսի ասիկա, եղջերուն մէկ ակնթարթի



մէջ կեցաւ, շրջուեցաւ եւ եկաւ շիտակ դէպի իմ ծառը: Ես ցնցուած էի, որ ան ետ եկաւ այդ 180 մեթրը եւ կեցաւ ուղիղ իմ ծառին տակ, եւ այո՛, ուղիղ իմ դիտանոցին տակ, որ ընդամէնը 3.5 մեթր բարձր էր անորմէ: Ես քողածածկող հագուստ չունէի, բուրանիւթ կամ փռթկացնող սուլիչ. միայն ես էի եւ Աստուած, սակայն այդ եղջերուն կանգնած էր ուղիղ իմ ներքեւը: Ես եղջերուն տուն տարի մեծ ուրախութեամբ, բայց չէի կրնար մոռնալ այն, ինչ որ տեսայ: Մի՞թէ եղջերուն եկաւ քովս, որովհետեւ ես խօսեցայ եւ հրամայեցի անոր: Անշո՛ւշտ, այդպիսի տպաւորութիւն էր:

Այն ազարակը, որ մենք կը վարձէինք Օհայոյի մէջ, 36 հեքթար տարածք կը զբաղեցնէր: Այն կ'ընդգրկէր անտառի մէկ մասը, մացառուտուներով ծածկուած առուակները եւ դաշտերը: Չմեռնային ամիսներուն, եւ յատկապէս երբ գետինի վրայ ձիւն նստած էր, մենք կը սիրէինք նապաստակ որսալ: Օհայոյի մէջ նախշաւոր վիզերով փասիաններու (գոյնզգոյն փետուրներով ու համեղ միսով թռչուն) որսաշրջանը կը սկսէր նապաստակներու որսաշրջանին հետ, բայց մեր ազարակին մէջ մենք հագուադէպ փասիան կը տեսնէինք:

Օր մը մենք գացինք առուակի քով՝ նապաստակ որսալու, երբ յանկարծ արու մը փասիան յայտնուեցաւ: Ես արագօրէն ուղղեցի հրացանս այդ թռչունին վրայ եւ կրակեցի: Երբ քաշեցի ձգանը, գիտէի, որ վրիպած եմ, եւ միայն վնասեցի թռչունին թեւը: Փասիանն ինկաւ. այնուամենայնիւ, գետինն բախելուն պէս, այդ թռչունը սկսաւ փախչիլ ամբողջ ուժով: Փասիանը կրնայ վազել մէկ ժամուան մէջ մինչեւ 55 քիլոմեթր արագութեամբ, եւ այս թռչունը կ'ընէր այն, ինչ որ կրնար՝ ատիկա ապացուցելու համար: Գետինը ծածկուած էր նոր եկած ձիւնով, եւ թռչունը կը վազէր քիչ մը թեքութիւն ունեցող բաց արօտավայրով. այնպէս որ, ես դիւրութեամբ կը տեսնէի անոր փախուստի ամէն մէկ քայլը:

Պահ մը ես անօգնական կեցած էի՝ մտածելով, որ այդ թռչունը պիտի ազատէր ինձմէ, բայց իմ հոգիին մէջ յանկարծ օծութիւն զգացի: Ես գիտէի, թէ ինչ պիտի կատարուէր, երբ հրամայեցի եղջերուին կենալ եւ քովս գալ: Ես զգացի, որ պէտք է նոյնը ընէի, եւ բարձրաձայն պրռացի.

- Փասիան, Յիսուսի անունով, ԿԵՑԻՐ:

Նոյն ակնթարթին տեսայ, որ թռչունը դադրեցաւ արջու շարժելէ: Ես պարզօրէն կը տեսնէի ամբողջ դաշտը, եւ փասիանը կեցաւ ճիշդ այն պահուն, երբ պոռացի: Թիմը՝ իմ որդին, ինծի հետ էր, եւ ան ըսաւ.

- Հայրի՛կ, փասիանը կեցաւ այն պահուն, երբ դուն պոռացիր:

Բայց ո՞ր էր ան: Թիմը եւ ես գացինք դաշտ՝ անոր հետքերով, եւ թռչունը հոն էր՝ պարզապէս նստած ձիւնին վրայ: Ան գլուխը կէս չափով ձիւնին մէջ մտցուցած էր, բայց ամբողջ մարմինով պարզապէս նստած էր ձիւնոտ գետինը: Ան յայտնուած էր խոտերու արանքը, եւ ատիկա էր պատճառը, որ մենք չէինք տեսներ անոր: Մի՞թէ ան սատկած էր: Ես բարձրացուցի թռչունը, եւ ան անմիջապէս սկսաւ ուժգնօրէն թափահարել թելերն ու սուր ճիչեր արձակել: Այդ թռչունը բոլորովին ողջ էր: Երբ մենք կտրեցինք անոր վիզը, տեսայ, որ ընդամէնը թեթեւ մը քերծած էի անոր թելը: Թիմը եւ ես զարմացած մայեցանք իրար. ոչ ոք կը հաւատայ մեր տեսածին, ո՛չ ոք:

Օհայոյի մէջ, ինչպէս եւ Օքլահոմայի մէջ, կար երկու եղնիկի սահմանափակում՝ արու կամ էգ, սակայն ամէն տարի կարելի էր որսալ միայն մէկ եղջերու: Օհայոն կը փորձէր ցած պահել եղնիկներու գլխաքանակը նահանգին մէջ՝ թիրախաւորելով էգերը: Այնպէս որ, ես սերմ կը ցանէի եղջերուի եւ եղնիկի համար, եւ ժամացոյցի աշխատանքի պէս եղջերուն կը յայտնուէր առաջին իսկ օրը՝ 30 կամ 40 վայրկեան յետոյ, իսկ եղնիկը կը յայտնուէր ատորմէ յետոյ: Անգամ մը ես հասկցայ. «Չէ՞ որ եղնիկները կու գան այն հերթականութեամբ, որուն միջոցով ես գրի կ'առնեմ ատոնք, երբ կը ցանեմ իմ սերմը»: Մի՞թէ ատիկա ճիշդ էր: Իսկ ի՞նչ պիտի ըլլար, եթէ ես փոխէի հերթականութիւնը: Սովորաբար ես կը ցանէի եղջերուի եւ եղնիկի համար, եւ անոնք կը յայտնուէին ճիշդ այդ հերթականութեամբ: Յաջորդ անգամ ես ցանեցի եղնիկի եւ եղջերուի համար, ոչ թէ եղջերուի եւ եղնիկի, եւ կենդանիները կրկին յայտնուեցան, բայց այս անգամ առաջինը եղնիկն էր, իսկ յետոյ՝ եղջերուն: Ես կը փոխէի այս հերթականութիւնը քանի մը տարի շարունակ՝ ստուգելով իմ տեսութիւնը, եւ այն կը գործէր ամէն անգամ: Երբ հասկցայ այս ամէնը,

Ես այնքան զարմացայ եւ հիացայ Աստուծոյ Թագաւորութեամբ, նաեւ՝ թէ որքան քիչ գիտեմ ասորո մասին: Մէկ բան հաստատ էր. Տէրը ցոյց կու տար, որ ես շատ անելի մեծ իշխանութիւն ունէի իմ կեանքի ընթացքին վրայ, քան երբեք մտածած էի:

Որպէս կողմնակի նշում՝ այժմ 2015 թուականի եղնիկներու որսաշրջանն է: Ես ցանած եմ մէկ չորսձիւղանի կամ անելի մեծ կոտոշներով եղջերուի համար, մէկ միամեայ եղնիկի համար եւ մէկ վեցամսական եղջերուի համար՝ որպէս կերակուր: Նման ժամացոյցի աշխատանքին, վեցձիւղանի կոտոշներով եղջերու մը եկաւ անմիջապէս իմ ծառին քով: Յաջորդ անգամ ես որսացի միամեայ եղնիկ մը, որը միակն էր, որ մօտեցաւ իմ ծառին: Ես գիտեմ, որ իմ յաջորդ որսի ժամանակ պիտի յայտնուի վեցամսական եղջերուն: Ես գիտեմ, որ ասիկա անմտութիւն կը թուի. ես ուղղակի կը պատմեմ այն, ինչ որ կը կատարուի իմ կեանքին մէջ:

Բայց կար եղնիկի որսի դէպք մը, որ այնքան պարզ դարձուց այդ ամէնն ինծի համար, որ նոյնիսկ վախցայ: Ես ցանած էի իմ սերմը մէկ չորսձիւղանի կամ անելի մեծ կոտոշներով եղջերուի համար եւ մէկ վեցամսական եղջերուի համար (վեցամսական եղջերուն կը համարուի եղնիկի պէս, քանի որ անոր կոտոշները մորթէն ցած են եւ ընդամէնը նման են փոքրիկ կոճակներու): Աղեղով որսաշրջանի սկիզբը ես սովորականի պէս որսի գացի եւ որսացի ութձիւղանի կոտոշներով եղջերու մը 15 վայրկեանի մէջ: Ես համոզուած էի, որ յաջորդ անգամ վեցամսական եղջերու պիտի որսայի:

Երկու շաբաթ յետոյ ես կրկին գացի որսի եւ, մինչ նստած էի ծառին վրայ գտնուող իմ դիտանոցը, տեսայ գեղեցիկ ութձիւղանի կոտոշներով եղջերու մը, որ կ'անցնէր արօտավայրէն՝ ինծմէ մօտաւորապէս 270 մետր հեռաւորութեան վրայ: Ան կու գար ուղիղ իմ ծառին քով: Չշեղելով իր ճանապարհէն, ան կտրեց-անցաւ ամբողջ դաշտը, հասաւ իմ ծառին տակ եւ կեցաւ գրեթէ 20 վայրկեան: Ատորմէ յետոյ ան դարձաւ եւ ետ գնաց այդ արօտավայրէն՝ նոյն շաւիղով, որուն մէջէն եկած էր: Յիշեցէք՝ Օհայոյի մէջ օրինական էր որսալ միայն մէկ եղջերու, իսկ ես արդէն որսացած էի ութձիւղանի կոտոշներով եղջերու մը: Այնպէս որ, ես պարզապէս պէտք է նստէի

Եւ հետեւէի այդ եղջերուին, բայց չէի կրնար կրակել: Ես բոլորովին շփոթեցայ: Ասիկա առաջին անգամն էր, երբ որսի գացած էի, եւ ինծի մօտեցած եղնիկն այն չէր, ինչին համար ես սերմ ցանած էի: Ահա, թէ ինչպէս վարուեցաւ այդ եղջերուն. ան անցաւ ամբողջ դաշտը եւ կանգնեցաւ ուղիղ իմ ծառին տակ, իսկ յետոյ վերադարձաւ նոյն շաւիղով, որուն միջոցով եկած էր, պարզապէս տարօրինակ էր: Այն կարծես նշուած ըլլար իմ ցուցակին մէջ: Ես սպասեցի ամբողջ առաւօտ, բայց որեւէ վեցամսական եղջերու այդպէս ալ չյայտնուեցաւ:

Այդ երեկոյ ես իմ գրասենեակն էի եւ մտահոգ էի այդ ամէնով: Ինչ որ բան սխալ էր. պէտք է գար իմ նշած վեցամսական եղջերուն: Եւ ինչո՞ւ այդ ութճիւղանի կոտոշներով եղջերուն եկաւ այդ կերպով: Իմ գրասենեակը նստած՝ ես սկսայ աղօթել Հոգիով՝ խնդրելով Աստուծոմէ ցոյց տալ, թէ ինչ տեղի ունեցած էր: Ես լսեցի, թէ ինչպէս Ան ըսաւ. «Նայի՛ր քու սերմին»: Նայիմ իմ սերմի՞ն: Ես գիտէի, թէ ինչի համար ցանած էի: Իմ դրամատունը կու տայ ինծի իմ չէքերու պատճէնները. այնպէս որ, ես հանեցի իմ քաղուածքը եւ ստուգեցի այն չէքը, որ գրած էի, երբ ցանած էի իմ եղնիկներուն համար: Ես կը մտածէի, որ ցանած էի իմ սերմը երկու եղջերուի համար, որոնցմէ մէկը չորսճիւղանի կամ աւելի մեծ կոտոշներով եղջերու է, իսկ միւսը՝ վեց ամսական եղջերու է, որ կը համարուի եղնիկի պէս, ինչպէս արդէն ըսի: Բայց ահա թէ ինչ գրուած էր այդ չէքին վրայ. «Երկու եղջերու՝ չորսճիւղանի կամ աւելի մեծ կոտոշներով, մէկ վեց ամսական եղջերու»: Թէեւ ես նկատի ունէի երկու եղջերու, մէկը՝ չորսճիւղանի կամ աւելի մեծ կոտոշներով, իսկ միւսը՝ վեց ամսական, ես այդպէս չէի գրած: Չէքին վրայ գրուած էր. «Երկու եղջերու՝ չորսճիւղանի կամ աւելի մեծ կոտոշներով, եւ մէկ վեց ամսական եղջերու»: Քանի՞ կենդանի կ'ըլլայ: Երեք, եւ երկրորդը չորսճիւղանի կամ աւելի մեծ կոտոշներով էր, ինչպէս եւ առաջինը: Երբ տեսայ ատիկա, ես ցնցուած էի: Երկրորդ ութճիւղանի կոտոշներով եղջերուն նոյնպէս նշուած էր: Ան պէտք է ըլլար հոն՝ Թագաւորութեան օրէնքի շնորհիւ: Ես վեր ցատկեցի, սկսայ գոչել եւ վագել տունով մէկ: ԶԱՐՄԱՆԱԼԻ՛ Է:

Միեւնոյն ժամանակ այն, ինչ որ ես հասկցայ, վախցուց ինծի:

Եթէ այն, ինչ որ նոր հասկցայ, ցոյց կու տայ, թէ որքան ճշգրիտ է Աստուծոյ Թագաւորութիւնը, այդ պարագային, ես պէտք է աւելի զգոյշ ըլլայի: Ես ակամայ սկիզբ դրած էի ինծի համար անցանկալի իրադարձութիւններու: Այնուամենայնիւ, ատոնք տեղի ունեցան, քանի որ ես ըրած էի ատիկա համաձայն հոգեւոր օրէնքի: Յանկարծ գիտակցեցայ, որ բազմաթիւ մարդիկ, որոնց կարգին նաեւ ես եմ, կը գտնուին իրենց համար անցանկալի իրավիճակներու մէջ, քանի որ յատկապէս իրենք սկիզբ դրած են այդ իրավիճակներուն: Յիշեցէ՛ք. Իր խօսքերով Յիսուսը չորցուց թզենին եւ յարութիւն տուաւ Ղազարոսին գերեզմանէն: Երկու պարագաներուն ալ օգտագործուեցաւ միեւնոյն օրէնքը՝ տարբեր նպատակներով: Յաջորդ անգամ, երբ ես որսի գացի, եկաւ վեցամսական եղջերուն՝ համաձայն իմ ցանքին:

Այդ իրադարձութիւններու շարքը զարմացուց եւ անասելի ազդեցութիւն ունեցաւ Թագաւորութեան մասին իմ պատկերացման վրայ: Այժմ ես անշեղօրէն համոզուած եմ, որ Թագաւորութիւնն իսկապէս ճշգրիտ է: Բայց մի՞թէ ատիկա պէտք է զարմացնէ մեզի: Բնութեան իւրաքանչիւր օրէնք այս երկրի վրայ նոյնքան ճշգրիտ է: Կը կարծեն՝ ես երբեք չէի հասկցած, որ հոգեւոր օրէնքները կը գործեն ֆիզիքական օրէնքներու պէս, որոնք կեանքի կոչուած են հոգեւոր իրականութենէն: Ես պէտք է որ կռահէի ատիկա, բայց չէի կռահած: Բայց այժմ գիտեմ, որ Թագաւորութիւնը ճշգրիտ է, շատ ճշգրիտ:

Լաւ, քանի որ դուք կը խնդրէք, ես պիտի պատմեմ եւս մէկ որսորդական պատմութիւն (ես կը սիրեմ այն դասերը, որոնք սորված են որսալու ժամանակ. այնպէս որ, դուք պէտք է համբերատար ըլլաք ինծի հետ): Երբ հասկցայ, թէ որքան ճշգրիտ է Թագաւորութիւնը, ես որոշեցի ա՛լ աւելի ճշգրիտ փորձ կատարել: Տարի մը որոշեցի ցանել եօթճիւղանի կոտոշներով եղջերուի համար: Սովորաբար եղջերուն կ'ունենայ ճիւղերու նոյն թիւը կոտոշներու երկու կողմերը: Չորսճիւղանի կոտոշներով եղջերուն ունի երկու ճիւղ ամէն մէկ կոտոշի վրայ, իսկ ութճիւղանի կոտոշներով եղջերուն ունի չորս ճիւղ ամէն մէկ կոտոշի վրայ: Սովորաբար, եղջերուի երկու կոտոշներուն վրայ նոյն թիւով ճիւղեր կ'ըլլան: Բայց շատ անգամներ

եղջերուի կոտոշներու երկու կողմերու ճիւղերը հաւասար չեն ըլլար՝ տարբեր պատճառներով: Սակայն, ինչպէս ըսի, սովորաբար երկու կոտոշներու ճիւղերու թիւը նոյնը կ'ըլլան:

Ես կը ցանկայի կիրառել իմ հաւատքը որոշակի եւ ոչ սովորական բանի մը համար եւ, կարելի է ըսել, որ ես փորձ կը կատարէի: Ես արդէն գիտէի, որ որքան ճշգրիտ կ'ըլլաք, այնքան ստիպուած կ'ըլլաք երկար սպասելու եւ յստակ ցուցմունքներ ստանալու: Սուրբ Հոգիէն ձեր խնդրանքի իրականացման համար: Այնպէս որ, ես գիտէի, որ պէտք չէ որսի երթայի որսաշրջանի բացման օրը: Իրականութեան մէջ, ես սպասեցի ամբողջ Հոկտեմբեր ամիսը եւ իմ հոգիին մէջ գիտէի. «Ո՛չ, ան տակաւին հոս չէ»: Ատիկա հիասթափեցնող էր. աշնան գոյները պատած էին անտառը, եւ ես շատ կ'ուզէի որսի երթալ, բայց տակաւին կը սպասէի:

Եւ յանկարծ ատիկա տեղի ունեցաւ: Երեկոյ մը, երբ նստած էի հիւրասենեակը եւ կը խօսէի կնոջս ծնողներուն հետ, որոնք այցելած էին մեզ Ճորճիա նահանգէն, ես լսեցի հետեւեալը. իմ որսի օրը յաջորդ ամառուտեան էր: Եօթնօրեանի կոտոշներով եղջերուն պիտի գա՛ր: Ես ըսի ընտանիքիս, որ յաջորդ օրը պիտի որսայի իմ եղջերուն: Երբ տակաւին չէր լուսցած, ես խիստ ոգեշնչուած արթնցայ եւ անտառ գացի: Ես կ'որսայի արբալետով, ծառի վրայ գտնուող իմ որսորդական դիտանոցէն, որմէ կը տեսնէի իմ անտառին սահմանակից չորս հեքթար զբաղեցնող ճահճուտը: Ատիկա հրաշալի դիտանոց է: Նստած հոն, կարելի է տեսնել թռչող բաղերու, իսկ ճահճուտի եզերքը կը նշմարուին մշկամուկեր եւ նոյնիսկ ջրաքիսներ: Ճահճուտի եզերքը թփուտներ են, եւ ատիկա այն հիմնական վայրն է իմ հողատարածքին մէջ, ուր կարելի է եղնիկներ տեսնել: Ես սպասեցի իմ դիտանոցին մէջ, բայց ոչինչ տեղի ունեցաւ: Սպասեցի 45 վայրկեան, իսկ յետոյ՝ մէկ ժամ, եւ ոչինչ:

Ես լսեցի ինքնաշարժի դռները բացուելու եւ գոցուելու ձայներ դաշտի միւս կողմը՝ իմ տան մօտ. ես գիտէի՝ Տրենտայի ծնողներն էին, որոնք կը պատրաստուէին Ճորճիա վերադառնալու: Ես խոստացած էի նախաձաշել անոնց հետ մինչեւ անոնց մեկնիլը, եւ ես էի նախաձաշը պատրաստողը: Իմ սկզբնական ծրագիրն

այսպիսին էր. վաղ առաւօտեան ես պիտի որսայի իմ եղջերուն, իսկ յետոյ պիտի վերադառնայի տուն՝ նախաճաշելու: Բայց եղջերուն

**ԱՅԺՄ ԵՍ ԱՆՇԵՂՈՐԷՆ  
ՀԱՍՈՋՈՒԿ ԵՍ, ՈՐ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ  
ԻՐԱՊԷՍ ՃՇԳՐԻՏ Է:**

տակաւին չկար, եւ ես դժկամօրէն իջայ ծառի վրայի իմ դիտանոցէն ու քալեցի դէպի տուն: Ճանչնալով իմ հողատարածքը, ես գիտէի, որ եղջերուն կրնար գալ ճահճուտի տարածք աւելի ուշ առաւօտեան, քանի որ, ինչպէս արդէն նշեցի,

ատիկա հիմնական վայրն էր, ուր անոնք կը հանդիպէին: Անշուշտ, ես կը հասկնայի, որ եղջերուն կրնար գալ ամէն վայրկեան, բայց այլեւս չէի կրնար սպասել: Ես ուղղակի ստիպուած կ'ըլլայի երթալու հոն մէկ այլ առաւօտ:

Ես ողջունեցի բոլորին եւ սկսայ նախաճաշ պատրաստել: Իմ տունին մէջ ես միշտ անձնապէս նախաճաշ կը պատրաստեմ, որքան կը յիշեմ այդպէս ըրած եմ: Ես ունիմ ամբողջական հասկերէն ուաֆըլներ պատրաստելու իմ բաղադրատոմսը եւ, իմ կարծիքով, ատոնք շատ համով կ'ըլլան: Հաւկիթը, նրբերշիկը եւ պանիրով վարսակածաւարի շիլան կ'ամբողջացնեն ճաշացանկը, բայց գլխաւոր ուտեստը, որ գերազանց կը դարձնէ իմ պատրաստած նախաճաշը, թխկիի իսկական օշարակն է: Օհայօն թխկիի օշարակի նահանգ է, եւ բոլորն այս տարածքին կը պատրաստեն թխկիի օշարակ եւ կը վաճառեն: Ես թոյլ չեմ տար կեղծ օշարակներ իմ տունին մէջ, միայն՝ իսկականը: Եւ այսպէս, ես նախաճաշ կը պատրաստէի, իսկ մեր խոհանոցի պատուհանը կը բացուի դէպի մեր անտառը եւ ճահճուտը: Յանկարծ տեսայ եղջերու մը, որ կ'անցնէր դաշտը՝ երթալով դէպի ճահճուտը:

- Ասիկա իմ եղջերուն է, - պոռացի: Ես պատուիրեցի միւսներուն շարունակել նախաճաշի պատրաստումը, որովհետեւ ես կ'երթայի՝ այն որսալու:

Հետեւելով այլ եղջերուներուն, որոնք կ'անցնէին իմ դաշտէն, ես գիտէի, թէ ուր կ'երթար այդ եղջերուն, եւ հոն հասնելու համար ան պէտք է անցնէր ուղիղ իմ դիտանոցի ներքեւով: Ես հասկցայ,

որ եթե հասնէի իմ դիտանոցին ճահճուտի կողմէն եւ կարենայի ծառ բարձրանալ, մինչեւ որ եղջերուն հասնէր հոն, պիտի կարենայի կրակել անոր վրայ: Հոն հասնիլը եւ ծառ բարձրանալը, մինչեւ եղջերուին գալը, դժուար պիտի ըլլար, եւ ես պէտք է դուրս ելլէի ՃԻՇԴ ՀԻՄԱ: Ես դուրս վազեցի՝ վերցնելով իմ արբալետը: Վազեցի դաշտի եզերքէն այնքան անաղմուկ, որքան կրնայի, հասայ իմ դիտանոցին քով եւ սկսայ դանդաղօրէն բարձրանալ: Մինչեւ այդ պահն ամէն ինչ բարեյաջող կ'ընթանար, եւ ես դեռ չէի տեսներ եղջերուին:

Երբ տեսայ, որ եղջերուն կ'անցնէր ճահճուտով եւ կու գար ուղիղ դէպի իմ դիտանոցը, ես հասայ իմ դիտանոցին եւ նստայ: Եղջերուն ոչինչի ուշադրութիւն կը դարձնէր՝ բացի այն եղնիկէն, որուն հետքերով կ'երթար. ան ո՛չ կը տեսնէր ինձի, ո՛չ կը զգար իմ հոտը: Եղնիկն անցած էր իմ դիտանոցի ներքեւէն եւ զացած էր դէպի ճահճուտը, եւ եղջերուն կ'երթար նոյն շաւիղով: Հազիւ թէ կարենայի աւելի կատարեալ դարան խնդրել: Ան գրեթէ 20 մետր հեռու էր ինձմէ. ես ուշադրութեամբ նշան բռնեցի իմ արբալետով եւ կորսնցուցի նետը: Այն պահուն, երբ նետը դուրս թռաւ, հասկցայ, որ վրիպած եմ. չէ՞ որ ես գրեթէ շնչահեղձ կ'ըլլայի դաշտը ճահճուտի եզրով շրջանցելու պատճառով, քանի որ կը փորձէի եղջերուէն կանուխ տեղ հասնիլ:

Ես վիատեցայ՝ տեսնելով, որ նետը շատ ցած դպած է կենդանիին, եւ հասկցայ, որ մահացու չէի խոցած անոր: Հարուած ստանալով, եղջերուն ցատկեց ճահճուտի եզերքը գտնուող խիտ թփուտներու մէջ եւ դանդաղօրէն հեռացաւ իմ տեսադաշտէն: Նախորդ որսերու ժամանակ ես տեսած էի, որ նետով խոցելու պարագային երբեմն եղնիկները չեն հասկնար, թէ ինչ տեղի ունեցած է: Յաճախ անոնք պարզապէս կը հեռանան, եթէ չեն տեսած ձեզ կամ չեն զգացած ձեր հոտը: Ես նոյնպէս գիտէի, որ սովորաբար վիրաւոր եղնիկները կը պառկին թփուտներու մէջ եւ շատ հեռու չեն երթար: Քանի որ եղջերուն չէր տեսած ինձի, ան ճիշդ այդպէս կը վարուէր: Ես աննկատ իջայ իմ ծառի վրայի դիտանոցէն եւ գացի տուն այն ճանապարհով, որուն միջոցով եկած էի՝ մեծ կիսաշրջան գծելով, որպէսզի չխրտնեցնէի անոր:



Երբ տուն հասայ, բոլորը հարցուցին, թէ ինչ կատարուած է, եւ թէ արդեօ՞ք ես որսացած եմ եղջերուն: Ես պատմեցի կատարուածը եւ խնդրեցի որդիներուս օգնել ինծի դուրս բերելու եղջերուն թփուտներէն, որպէսզի կարենայի եւս մէկ անգամ կրակել անոր: Մենք շրջապատեցինք թփուտները եւ սկսանք դանդաղօրէն քալել ատոնց մէջէն: Յանկարծ տեսայ, որ որդիներէս մէկը խրտնեցուց եղջերուին, եւ ան սկսաւ ցատկել բարձր թփուտներու մէջ: Ան իմ դիմացս էր՝ գրեթէ 60 մեթր հեռաւորութեամբ, եւ կ'անցնէր իմ աջ կողմէն դէպի ձախը:

Յանկարծ եղջերուն տեսաւ իմ միւս որդին դաշտի եզրին: Հասկնալով, որ ատիկա իրեն խրտնեցնող մարդը չէր, եւ չգիտնալով, թէ որ կողմ վազելն ապահով էր, ան պահ մը կեցաւ՝ արագօրէն իրավիճակը գնահատելու համար: Ես գիտէի, որ ատիկա իմ միակ հնարաւորութիւնն էր՝ զայն որսալու համար: Ան տակաւին չէր տեսած ինծի: Այժմ ան կեցած էր ուղիղ իմ դիմացը՝ 60 մեթր հեռաւորութեան վրայ, եւ կը նայէր որդիիս: Արբալետի ուժը բաւական էր՝ եղջերուն այդ հեռաւորութենէն սպաննելու համար, բայց նետը կրնար իջնել մինչեւ 50 սանթիմեթր՝ հեռաւորութեան պատճառով: Նախկինին ես երբեք նետ չէի արձակած այդ հեռաւորութենէն, եւ իմ արբալետը նոր 80 քիլոկրամ հարուածային ուժով արբալետներէն չէր, որ կրնայ նետ արձակել վայրկեանը 120 մեթր արագութեամբ: Իմ արբալետի ճշգրտութիւնը կը սահմանափակուէր 30-35 մեթրով:

Քանի որ եղջերուն ուղիղ իմ առջեւն է եւ կեցած էր, ես որոշեցի կրակել: Բարձրացուցի իմ արբալետը, մօտաւորապէս նշան բռնեցի եւ արձակեցի նետը: Ես տեսայ, թէ ինչպէս նետը թռաւ դէպի եղջերուն եւ, ի զարմանս ինծի, խոցեց անոր վիզը: Անցնելով եղջերուի վիզի մէջէն (ներողութիւն բոլոր մանրամասներու համար), նետը դուրս ելաւ անոր վիզի միւս կողմէն, մինչ ան փախուստի կը դիմէր: Ան փախաւ թփուտներու մէջ, եւ ես չտեսայ, թէ որ կողմ գնաց: Ես սկսայ դանդաղօրէն քալել դէպի թփուտներու այն մասը, որուն մէջ եղջերուն անհետացաւ: Ան հո՛ն էր: Նետը խոցած էր նպատակակէտը, եւ եղջերուն իմս էր:

Երբ որդիս՝ Թիմը, միացաւ ինծի, ինծի աւելի շատ կը հետաքրքրէին

եղջերուի կոտոշները, քան որեւէ այլ բան: Ես տակաւին չէի հասցուցած հաշուել ատոնց ճիւղերը, բայց հաշուելով, մենք տեսանք, որ ատոնք եօթը ճիւղ ունէին: Աւելի ուշադիր նայելով՝ տեսանք, որ այդ եղջերուն իրականութեան մէջ ութճիւղանի կոտոշներ ունէր, բայց ճիւղերէն մէկը կոտորուած էր, եւ այն եօթճիւղանի դարձած էր: Թիմը եւ ես երկիւղածութեամբ կեցանք եւ փառք տուինք Տիրոջը: Թագաւորութիւնը բոլորովին զարմանալի՛ էր: Հոն կեցած՝ Թիմը եւ ես մտածեցինք. «Ո՞վ կը հաւատայ մեզի: Մի՞թէ կան մարդիկ, որոնք գիտեն, որ Թագաւորութիւնը կը գործէ այս կերպով»:

Կը կարծեն՝ դուք ամէն ինչ հասկցաք: Թագաւորութիւնը կը գործէ խիստ ճշգրիտ օրէնքներով, որոնք որոշուած են, եւ կարելի է վստահ ըլլալ, որ ատոնք պիտի գործեն նոյն կերպով ամէն անգամ: Սկիզբը ես անչափ ոգեշնչուեցայ՝ հասկնալով, որ այդ օրէնքները կը գործեն որեւէ բնագաւառի մէջ, ներառեալ ֆինանսականը: Ես կրնայի սորվիլ այդ օրէնքները: Ես կը դառնայի հոգեւոր գիտնական եւ կը հասկնայի, թէ ինչպէս կը գործէր Թագաւորութիւնը: Եւ Աստուած կ'օգնէր ինձի ատոր մէջ:



## ԳԼՈՒԽ 2

# ԿԱՊՈՅՏ ՄՇՈՒՇՈ

Երբ Աստուծոյ Թագաւորութիւնն սկսաւ գործել Տրենտային եւ իմ կեանքին մէջ, մենք բոլորովին ազատեցանք պարտքերէն եւ կ'ուզէինք պատմել բոլորին այն, ինչ որ սորված էինք: Այն ընթացքին, երբ հիմնեցինք մեր եկեղեցին, եւ ես կը ղեկավարէի մեր ձեռնարկութիւնները, մենք կը պատմէինք այդ մասին անոնց, որոնց կը ցանկային լսել: Իմ հոգիին մէջ կը զգայի, որ ուրիշ բան մը կար, բայց չէի գիտեր՝ ինչ, սակայն գիտէի, որ կար ատելի, որ Աստուած կը դրդէր ինձի ընելու. մարդոց ներկայացնել Թագաւորութիւնը:

Ամբողջ 2005 թուականին հոգիիս մէջ մղում կը զգայի անցընել բան մը, ինչ որ ես պիտի անուանէի ֆինանսական յեղափոխութեան համաժողով՝ հինգ հաւաքոյթէ բաղկացած շարք մը, որոնց ընթացքին, ինչպէս կը կարծէի, ժամանակ կ'ունենայի ներկայացնելու Աստուծոյ Թագաւորութեան ֆինանսական սկզբունքները, որոնք փոխեցին իմ կեանքը: Ես մեծցած եմ Մեթոտիստական եկեղեցւոյ մէջ, ուր մենք երբեմն մէկ շաբթուան տեսողութեամբ արթնութեան հաւաքոյթներ կ'անցընէինք: Ես ճիշդ այդ ձեւաչափի հաւաքոյթներ կը տեսնէի իմ հոգիին մէջ. հինգ դաս, որոնց ընթացքին ես ժամանակ կ'ունենայի ծանօթացնելու մարդոցայն հասկացութիւններուն եւ սկզբունքներուն, որոնք Աստուած սորվեցուց ինձի ֆինանսական ոլորտին մէջ: Մինչեւ այդ պահը ես երբեք չէի համակարգած այդ սկզբունքները: Բայց իմ հոգիին մէջ շարունակ կը տեսնէի, որ ֆինանսներու մասին հինգ դասէ բաղկացած հաւաքոյթներ կ'առաջնորդեն:

Մինչ կ'աղօթէի ատոր վերաբերեալ, հանդիպեցայ Լարիին՝ իմ ընկերներէն մէկուն, որուն երկար ժամանակ չէի տեսած: Ան պատմեց ինծի Ալպանիոյ մէջ կայանալիք համաժողովի մը մասին, որ ինքը կը կազմակերպէր, եւ հրաւիրեց ինծի քարոզելու հոն: Լարին գրեթէ 12 տարիէ ի վեր առաքեալ էր Ալպանիոյ մէջ եւ մեծ ազդեցութիւն կը ձգէր այդ երկրին մէջ: Այդքան հեռու երթալու միտքը նոր էր ինծի համար: Ես ընդհանրապէս շատ չէի ճամբորդած. ոչ մէկ անգամ գտնուած էի Ալպանիոյ մէջ եւ նոյնիսկ չէի գիտեր, թէ ուր կը գտնուէր: Լարին խրախուսեց ինծի՝ ըսելով, որ համազգային համաժողով կազմակերպած է, ուր պիտի ըլլան այդ երկրի հովիւներէն շատերը: Ան կը կարծէր, որ իմ գիտելիքն Աստուծոյ Թագաւորութեան ֆինանսներու վերաբերեալ օգտակար պիտի ըլլար անոնց: Լարին ըսաւ, որ պիտի տրամադրէ ինծի երկու-երեք հաւաքոյթ համաժողովին բաժնեկցելու համար: Թէեւ ատիկա հինգ դաս չէր, ես, միեւնոյնն է, անհամբեր կը սպասէի, որ պիտի սորվեցնէի այդ մասին ինծի տրուած քանի մը հաւաքոյթի ընթացքին: Ես պատասխանեցի, որ կը ցանկամ երթալ:

Երբ հասայ Ալպանիա եւ իջայ օդանաւէն, Լարին դիմաւորեց ինծի զարմանալի կերպով.

- Կէ՛րի, - ըսաւ ան, - քարոզիչներէն մէկը չեղարկած է իր հրաւերը վերջին պահուն, եւ դուն հինգ հաւաքոյթ պիտի առաջնորդես:

Իմ սիրտը թրթռաց: Այո՛, ատիկա Աստուծմէ էր, եւ այժմ ես պիտի տեսնէի, թէ ինչպէս պիտի յաջողէր այն, ինչ որ տեսած էի իմ հոգիին մէջ: Ես առած էի հետս իմ նշումները, բայց չէի համակարգած ատոնք հինգ դասի ձեւաչափով: Այնպէս որ, ամէն օր ես կը սորվեցնէի, իսկ յետոյ Հոգիով կ'աղօթէի եւ կը կազմէի յաջորդ դասի նշումները: Իւրաքանչիւր հաւաքոյթի օծութիւնը պարզապէս աներեւակայելի էր:

Մինչեւ առջեւ երթալը, պէտք է ըսեմ, որ Ալպանիան անսահման աղքատ երկիր էր այն ժամանակ, երբ ես գացի հոն: Միջին ամսական աշխատավարձքը մօտաւորապէս 500 տոլար էր, եւ կաշառակերութիւնն այդ երկրի կենսաոճն էր: Ես չէի գիտեր, թէ ինչպէս անոնք պիտի ընդունէին, երբ սորվեցնէի ֆինանսներու

մասին: Ես գիտեի, որ Խօսքը կը գործէ բոլորին համար, բայց ինձի համար ատիկա նոր փորձառութիւն էր: Առաջին հաւաքոյթին սորվեցնելու ժամանակ ես հակառակութեան պատճէշ կը զգայի: Արդէն երկրորդ հաւաքոյթին կը զգայի մարդոց հոգեւոր քաղցը եւ կը տեսնէի անոնց դէմքերէն, թէ ինչպէս հաւատքը կ'աճէր, երբ կը լսէին Թագաւորութեան բարի լուրը: Ամէն օր հաւաքոյթի ընթացքին մարդիկ աւելի ու աւելի ուրախ կը դառնային, եւ կրնամ ըսել, որ անոնք ոգեշնչուած էին Աստուծոյ Թագաւորութեամբ:

Վերջին երեկոյեան հաւաքոյթէն առաջ, որուն ես պէտք է սորվեցնէի, Տէրը խօսեցաւ հետս, որ ես պէտք է զոհաբերութիւն հաւաքեմ տեղական եկեղեցիներու համար: Ես վստահ չէի ատոր մէջ, քանի որ, նախեւառաջ, ե՛ս չէի այդ համաժողովի կազմակերպիչը, եւ երկրորդը՝ չէի գիտեր, թէ ինչպէս մարդիկ պիտի արձագանգէին: Լարին եւ ես ստիպուած էինք վճարելու տեղական հովիւներու ճանապարհի եւ կացութեան ծախսերուն մեծ մասը, միայն որպէսզի անոնք մասնակցէին այդ համաժողովին: Ես խօսեցայ Լարիին հետ այդ մասին, եւ ան ըսաւ, որ ես կրնամ զոհաբերութիւն հաւաքել:

Այնպէս որ, վերջին հաւաքոյթի ժամանակ ես զոհաբերութիւն հաւաքեցի համաժողովի ծախսերուն համար, եւ օծութիւնն այնքա՛ն ուժգին էր, որ հազիւ ոտքի կեցած կը մնայի: Բոլորը դահլիճին մէջ կը պարէին եւ կը գոչէին՝ բերելով իրենց զոհաբերութիւնները: Կարգուկանոնի ծառայողները, որոնք կը բռնէին այն պարկերը, որոնց մէջ մարդիկ կը դնէին իրենց գումարը, կու լային եւ հազիւ ոտքի կեցած կը մնային: Նախկինին ես երբեք նման բան չէի տեսած. ամէն պարագային, ո՛չ զոհաբերութիւն հաւաքելու ժամանակ: Տեսնելով, թէ ինչպէս մարդիկ կը պարէին եւ կը բացականչէին ուրախութենէն՝ տալով իրենց զոհաբերութիւնները, ես յուզուեցայ՝ ե՛ւ դահլիճի ներկայ օծութեան, ե՛ւ այդ թանկագին սերմը տուող մարդոց անկեղծ հաւատքին պատճառով:

Այդ հաւաքոյթէն յետոյ Լարին ականյայտօրէն ազդուած էր իր տեսածէն: Ան նոյնպէս զարմացած էր երկու լեփ-լեցուն զոհաբերութեան պարկերուն համար, որոնք մենք պիտի տանէինք իր տունը երեկոյեան հաւաքոյթէն յետոյ: Լարին ըսաւ, որ նախկինին

իր հաւաքած զոհաբերութիւններուն ժամանակ սովորաբար կը լեցուէր միայն մէկ պարկը, այն ալ՝ մասամբ: Մենք պահեցինք դրամի պարկերը եւ արագ քալեցինք դէպի Լարիին փողքիկ տունը՝ անցնելով մարդաշատ փողոցով:

Հասնելով Լարիին տունը, մենք նստանք անոր հիւրասենեակը եւ բացինք զոհաբերութեան պարկերը, որպէսզի դրամը հաշուենք: Երբ Լարին պարպեց պարկերու պարունակութիւնը սեղանին վրայ, կատարուեցաւ այնպիսի բան, ինչ որ մինչեւ օրս դժուար է բացատրել: Յանկարծ սենեակը պարուրուեցաւ բաց կապտաւուն մշուշով, եւ Աստուծոյ օծութիւնն իջաւ մեր վրայ: Մենք ետ նստանք այդ սենեակը պատած օծութեան տակ: Այն նման չէր այն օծութեանը, որ երբեք զգացած էի քարոզելու ժամանակ կամ մարդոց համար աղօթելու ժամանակ: Այդ օծութեան հետ ներկայութիւն կար: Այն սուրբ էր, եւ այդ պատճառով ինծի կը թուէր, թէ ես կը գտնուի անձամբ Աստուծոյ ներկայութեան մէջ: Մինչ մենք նստած էինք, այն աւելի ու աւելի զօրացաւ: Մենք միայն կրնայինք նստած մնալ ու լալ: Յանկարծ, այդ փողքիկ սեղանին վրայ թափած դրամի կոյտին մէջ, տեսայ տղամարդու մը ամուսնական մատանին: Ես զարմացայ այն փաստէն, թէ այդ երեկոյին մէկը, որ դրամ չէ ունեցած, զոհաբերած է իր միակ, թանկ բանը: Այդ պահուն Տէրը խօսեցաւ հետս.

*«Ես կը կանչեմ քեզի դէպի ազգերը, որպէսզի սորվեցնես անոնց այն սկզբունքները Թագաւորութեան եւ ֆինանսներու մասին, որոնք Ես սորվեցուցի քեզի: Այս երեկոյ այս մատանին զոհաբերուած է մեծ հաւատքով: Բայց Ես կ'ուզեմ, որ դուն առնես այն եւ պահես՝ որպէս յուշ այս երեկոյէն: Նոյնպէս գիտցիր՝ ինչպէս որ ամուսնական մատանին ուխտ կը խորհրդանշէ, դուն կ'ազդարարես Իմ մատակարարման ուխտն Իմ ժողովուրդին: Եւ գիտցիր՝ ուր որ ալ ուղարկեմ քեզի, Ես միջոցներ պիտի տամ ատոնք վճարելու համար»:*

Ես ամբողջ գիշեր չկրցայ քնանալ: Այդ գիշեր մնացի Լարիին

տունը, եւ օծութիւնը նոյնպէս մնաց հոն: Ես չկրցայ քնանալ Ատլանտեան ովկիանոսի վրայէն տուն թռչելու ճանապարհին: Միայն կրնայի յառել հայեացքս պատուհանին եւ լալ այդ ութամնոց թռիչքի ընթացքին: Ես չկրցայ քնանալ 46 ժամ այն բանէն յետոյ, երբ Տէրը խօսեցաւ հետս այդ երեկոյ: Այդ երեկոյէն յետոյ ամիսներ շարունակ ես կը զգայի միեւնոյն ներկայութիւնը եւ կու լայի ամէն անգամ, երբ կը մտածէի աստոր մասին:

Ես չըսի Լարիին այն, ինչ որ Տէրն ըսած էր ինծի այդ մատանիին մասին: Այդ զոհաբերութեան գումարը կը պատկանէր Ալպանիոյ եկեղեցիներուն, եւ ես կը հասկնայի, որ այդ մատանին կրնար ծախուիլ՝ յաւելեալ գումար ստանալու համար, բայց ես գիտէի, թէ Տէրն ինչ ըսած էր ինծի այդ մասին: Եւ ես այնպէ՛ս ուրախացայ, երբ Լարին հեռաձայնեց ինծի եւ ըսաւ, որ Տէրը խօսած է իրեն հետ՝ պատուիրելով տալ այդ մատանին ինծի: Այժմ այդ մատանին պահուած է իմ գրասենեակը: Տարիներու ընթացքին, բախելով դժուարին ֆինանսական մարտահրաւերներու, ես շատ անգամներ նայած եմ այդ մատանիին եւ յիշած եմ այն, ինչ որ Տէրն ըսած էր ինծի այդ երեկոյ: Ալպանիայի մէջ այդ երեկոն փոխեց իմ կեանքը, բայց Աստուած կը պատրաստուէր աւելին ցոյց տալու ինծի ապագային:

Երբ տուն վերադարձայ Ալպանիայէն, ուժգին մղում զգացի՝ հասցնելու Թագաւորութեան մասին այս ուղերձն ամէնուր: Ներսս այս տեղեկութիւնը տարածելու խիստ մեծ ձգտում կար. ես կը ցանկայի կրկին սորվեցնել այս հինգ դասերը՝ տեսնելու համար՝ արդեօ՞ք արդիւնքը նոյնը պիտի ըլլար: Ես ստիպուած չէի երկար սպասելու: Ինծի հրաւիրեց հովիւ մը Եութա նահանգէն՝ նոյն հինգ դասերը սորվեցնելու համար: Ան լսած էր Լարիէն, որ աստիկա կեանքեր փոխող ուսմունք է, եւ ան կը ցանկար, որ այցելէի իրենց: Ան քիչ մը եւ շատ աղքատ հնդկացիական եկեղեցւոյ մը հովիւ էր: Այդ մարդիկ ֆինանսական օգնութեան պէտք ունէին, եւ եթէ այն, ինչ որ ան լսած էր Լարիէն, ճիշդ էր, ան կը կարծէր, որ ես կրնայի օգնել իրենց:

Ես թռայ հոն եւ հաւաքոյթներ առաջնորդեցի Կիրակի առաւօտեան եւ երեկոյեան, մինչեւ Չորեքշաբթի երեկոյ: Ես առաջնորդեցի հինգ դաս, ինչպէս Ալպանիա, եւ ստացայ միեւնոյն արծազանգը: Մարդիկ



Կը գոչէին եւ կը պարէին համաժողովի վերջին երեկոյին անչափ ուժգին օծութեան տակ՝ տալով իրենց զոհաբերութիւնները: Այս անգամ ես չտեսայ նոյն կապոյտ մշուշը, բայց զօրաւոր օծութիւն կը զգայի բոլոր հինգ հաւաքոյթներուն ընթացքին: Վերջին հաւաքոյթէն յետոյ ես ցնցուած էի, ինչպէս Լարին՝ Ալպանիոյ մէջ, այն մեծ գումարի պատճառով, որ հաւաքուեցաւ ընդամէնը 17 զոյգի զոհաբերութենէն: Ես դրի այդ գումարը զոհաբերութիւններու համար նախատեսուած կղպանքով պայուսակի մէջ եւ յաջորդ առաւօտեան տարի իմ գրասենեակ՝ իմ ծառայութեան հաշուեհամարին փոխանցելու համար:

Աւելի ուշ այդ առաւօտ ես հեռախօսազանգ ստացայ իմ գրասենեակէն: Ինծի կը հեռաձայնէր իմ քարտուղարուհին, եւ ես հասկցայ, որ ինչ որ բան մը տեղի ունեցած էր: Անոր ծայրը կը դողար, եւ այնպիսի տպաւորութիւն էր, որ ան լացած էր: Ան ըսաւ.

- Հովի՛ւ, ձեր բերած դրամին հետ ինչ որ բան մը կը կատարուի:
- Ի՞նչ նկատի ունիս, Թրէ՛յսի, - հարցուցի ես:

Ան պատմեց ինծի, որ բացած էր այդ պայուսակը՝ դրամը հաշուելու եւ ծառայութեան հաշուեհամարին փոխանցելու համար, բայց նոյն վայրկեանին անոր վրայ զօրաւոր օծութիւն իջած էր գրասենեակը, եւ ան ինկած էր գետին: Իմ միւս քարտուղարուհին, լսելով այդ իրարանցումը, մօտեցած էր սենեակի այդ անկիւնը եւ նոյնպէս սկսած էր ցնցուիլ օծութեան տակ:

- Ի՞նչ կատարուած էր Եութայի մէջ հաւաքուած այդ դրամին հետ, - հարցուց Թրէյսին:

Ես պատասխանեցի անոր, որ չէի գիտեր:

Երկու շաբաթ կը սորվեցնէի նոյն այս սկզբունքները Օհայօնահանգի հարաւը գտնուող փոքրիկ եկեղեցւոյ մը մէջ: Մենք ուղարկած էինք այդ եկեղեցիին առաջին չորս դասերը տեսասկաւառակներով, եւ անոնք դիտած էին ատոնք նախորդ չորս շաբաթներու ընթացքին: Գացի հոն Կիրակի երեկոյեան՝ անցընելու համար վերջին հինգերորդ դասը: Կրկին, մենք հագիւ ոտքի կեցած կը մնայինք օծութեան տակ: Երբ զոհաբերութիւն հաւաքեցի այդ երեկոյ, ես ունեցայ նոյն արծագանգը, որ տեսած էի այլ հաւաքոյթներու ժամանակ: Մարդիկ կը զոհաբերէին

մեծ ոգեշնչումով: Ձոհաբերութեան ընթացքին եկեղեցին զամբիւղ մը դրած էր դահլիճի առջեւի մասը, որպէսզի մարդիկ հոն դնէին իրենց նուիրատուութիւնները: Այս անգամ կապոյտ մշուշը նորէն յայտնուեցաւ: Այն գրեթէ մէկուկէս մէթր տրամագիծով գունդի տեսք ունէր, որ կը շրջապատէր զոհաբերութիւններու զամբիւղը, մինչ մարդիկ կը զոհաբերէին: Օծութիւնն այնքա՛ն զօրաւոր էր, որ հաւաքոյթն յետոյ ինծի ստիպուած էին տանելու ինքնաշարժիս քով, քանի որ ես կարողութիւն չունէի քալելու:

**ԲԱՅՑ ՅԻՍՈՒՄԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՎՃԱՐԵՑ ՄԵՐ ԵՐԿԻՆՔ ԵՐԹԱԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ՀԱՄԱՐ, ԱՅԼԵՒ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ՄԵԶԻ ԱՊՐԵԼՈՒ ՈՐՊԷՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻ ԿԱՍ ԴՈՒՄՏՐ ԵՒ ՎԱՅԵԼԵԼՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՅՍ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ:**

Երբ այդպիսի բաներ տեղի կ'ունենային, ես իրականութեան մէջ չէի գիտեր, թէ ինչ կը կատարուէր, եւ չէի լսած, որ նման բան կատարուէր ուրիշ տեղեր: Ես կը շարունակէի համաժողովներ անցընել, եւ օծութիւնը կրկին շատ ուժգին կ'ըլլար: Այո՛, կապոյտ մշուշը կրկին երեւցած էր քանի մը համաժողովներու ընթացքին: Բայց ամենազարմանալի փաստն ինծի համար այն էր, որ օծութիւնը յատկապէս դրամի վրայ էր: Համաժողովէն յետոյ իմ աշխատակիցները մեծ դժուարութեամբ կը հաշուէին զոհաբերութիւնները: Կը յիշէ՞ք, որ օծութիւնը եկաւ Ալպանիոյ մէջ գտնուող այն բնակարանին մէջ, երբ Լարին պարպեց զոհաբերութիւնը սեղանին: Եթէ առնէիք թղթադրամ մը այդ զոհաբերուած գումարէն, դուք անմիջապէս պիտի զգայիք այդ օծութիւնը եւ պիտի սկսէիք ցնցուիլ: Գիտեմ, որ աստիկա խենթութիւն կը թուի, բայց պարզապէս ես կը պատմեմ այն, ինչ որ անձնապէս տեսած եմ:

Որպէս հոգեւոր գիտնական՝ աստիկա կը շփոթեցնէր ինծի, եւ ես հարցուցի Տիրոջ այդ մասին: Ան խօսեցաւ հետս եւ բացատրեց, թէ ինչու նման ուժգին օծութիւն կու գայ զոհաբերութեան վրայ:

Ան ըսաւ, որ մարդոց մեծամասնութիւնը կը գոհրաբերէ՝ մեկնելով պարտաւորութենէն կամ օրինապաշտութենէն: Ոմանք կու տան՝ մեկնելով ինչ որ բանաձեւէ մը, բայց անոնք չեն տար ճշմարիտ հաւատքով: Շատերը կու տան, որովհետեւ կը կարծեն, որ Աստուած պիտի բարկանայ, եթէ իրենք չգոհաբերեն: Ոմանք կու տան՝ պարտք վերադարձնելու պէս: Ան ըսաւ ինծի, որ երբ ես կը սորվեցնեմ Աստուծոյ Թագաւորութեան մասին եւ կը յայտնեմ Թագաւորութեան պահուած ֆինանսական սկզբունքները, հաւատքը կը բարձրանայ մարդոց սրտերուն մէջ: Եւ երբ անոնք կու տան, կ'ընեն ասիկա ճշմարիտ հաւատքով: Անոնք կապ կը հաստատեն Թագաւորութեան հետ, եւ ասիկա է օծութեան այդպիսի հոսքի պատճառը:

2005 թուականին Ալպանիա կատարած ճանապարհորդութենէն յետոյ իմ կեանքը շատ փոխուած է: Թագաւորութեան բարի լուրը յայտնելու իմ ցանկութիւնը դրդած է Տրենտային եւ ինծի օգտագործելու հեռուստատեսութիւնը՝ այս բարի լուրով ազգերուն հասնելու համար: Մենք բառացիօրէն տարեկան միլիոնաւոր տոլարներ կը ծախսենք, որպէսզի պատմենք մարդոց այս Թագաւորութեան մասին, որ յայտնագործած էինք տարիներ առաջ: Բայց թերեւս դուք տակաւին չէք լսած Աստուծոյ Թագաւորութեան բարի լուրը: Մենք այդպիսին էինք՝ հաւատացեալներ, որոնք Երկինք կ'երթան, բայց չեն գիտեր, թէ ինչպէս Երկինքն իջեցնեն այս երկիր: Բայց Յիսուսը ոչ միայն վճարեց մեր Երկինք երթալու իրաւունքին համար, այլեւ հնարաւորութիւն տուաւ ապրելու որպէս Աստուծոյ որդի կամ դուստր եւ վայելելու Աստուծոյ Թագաւորութեան առաւելութիւններն այս երկրի վրայ: Բայց ամենակարեւորն այն է, որ կան միլիոնաւոր մարդիկ, որոնց մենք պէտք է հասնինք Աւետարանի բարի լուրով, եւ ատոր համար անհրաժեշտ են միջոցներ: Մարդիկ կը նային մեզի: Մենք պէտք է ուրիշ ձեւով ապրինք:

Ի՞նչ կը սորվեցնէի Ալպանիոյ մէջ, եւ ի՞նչը նման օծութեան պատճառ դարձաւ: Աստուած ի՞նչ պատուիրեց ինծի ազգերուն քարոզելու: Այս գիրքը կը սորվեցնէ ճիշդ այս մասին, եւ ես համոզուած եմ, որ այն պիտի փոխէ ձեր կեանքը, ինչպէս որ փոխեց իմ կեանքը:

## ԳԼՈՒԽ 3

# ԿԸ ԽՆԴՐԵ՛Մ, ԱՍՏՈՒԱ՛Ծ, ՈՂՈՐՄԻ՛Ր

Ճերին հեռաձայնեց գրասենեակս եւ հարցուց, թէ արդեօ՞ք կրնայ հանդիպիլ ինձի եւ ճաշել, քանի տակաւին ես կը գտնուէի այն շրջանին մէջ, ուր ան կ'ապրէր: Ես հարցազրոյց կու տայի հեռուստակայանին մէջ, որ անոր դրացի քաղաքի մէջն էր, եւ ան կ'ուզէր պատմել, թէ ինչպէս իր կեանքը փոխուած էր իմ նիւթերուն եւ հեռուստատեսային հաղորդումներուն շնորհիւ: Ես երբեք չէի հանդիպած Ճերիին, բայց մէկ կամ երկու անգամ հեռաձայնով զրուցած էի անոր հետ: Անշուշտ, ես համաձայնեցայ: Միեւնոյնն է, մենք պէտք է ճաշէինք, եւ ես մտածեցի, որ քանի տակաւին հոն էի, սիրով պիտի հանդիպէի անոր եւ պիտի լսէի անոր պատմութիւնը:

Ճաշի ժամանակ ես ծանօթացայ Ճերիին եւ անոր որդիին հետ, եւ Ճերին սկսաւ պատմել ինձի իր պատմութիւնը: Ան 30 տարի հովիւ եղած է, բայց ստիպուած էր ձգելու իր ծառայութիւնը սրտի կաթուածի պատճառով, որ հաշմանդամ դարձուցած էր իրեն: Կաթուածէն յետոյ անոր կեանքը սկսած էր քայքայուիլ: Քանի որ ան չէր կրնար աշխատիլ եւ գումար վաստկիլ, անոր ընտանեկան տան եւ հողատարածքին վրայ արգելանք դրուած էր, եւ ատոնք յայտնուած էին շերիֆի վաճառքի (արգելանքի տակ գտնուող անշարժ գոյքի վաճառքի) ցուցակին մէջ: Անոնք հազիւ կարողութիւն

ունէին վճարելու տնային ծառայութիւններուն համար եւ կերակուր գնելու: Ճերին պատմեց, որ ամէն ինչ այն աստիճան վատացած էր, որ մէկ անգամ ան լիցքաւորուած 45 միլիմետրոց ատրճանակը մէկ ձեռքը պահած եւ Աստուածաշունչը՝ միւս, կը մտածէր կեանքին վերջ տալու մասին:

Այդ անյուսութեան մէջ Ճերին սկսած է դիտել մեր հեռուստատեսային հաղորդումները եւ որոշ բաներ պատուիրել իմ նիւթերէն: Ան ըսաւ, որ երբ նոր ստացած էր այդ նիւթերը, անոր խիստ անհրաժեշտ էր 2.000 տոլար՝ շարք մը հիմնական վճարումներ կատարելու եւ սնունդ գնելու համար: Ան կրկին ու կրկին կը լսէր այդ նիւթերը, մինչեւ որ հաւատքն սկսաւ բարձրանալ սրտին մէջ: Ան որոշեց հաւատալ Աստուծոյ 2.000 տոլարի համար, որուն կարիքն ունէր: Եւ ըրաւ այն, ինչ որ ըրինք Տրենտան եւ ես՝ մեր առաջին եղջերուն ստանալու համար: Ան սերմ ցանեց այդ 2.000 տոլարին համար: Գրեց թուղթի մը վրայ այն ամսաթիւը եւ ժամանակը, երբ պէտք է հաւատար, որ պիտի ստանար այդ դրամը՝ համաձայն Մարկոս 11.24-ին, եւ ուղարկեց իր չէքը մեր ծառայութեանը:

Ես չէի գիտեր այդ մասին, քանի որ չէի խօսած Ճերիին հետ: Ան ըսաւ, որ գրեթէ մէկուկէս շաբաթ յետոյ մարդ մը մօտեցաւ իրենց տունին եւ ուզեց խօսիլ իրեն հետ: Ճերին կը ճանչնար այդ մարդուն, բայց ան ըսաւ, որ անոնք երկար ժամանակ չէին հաղորդակցած: Անոնք քիչ մը գրուցեցին, եւ այդ մարդն ըսաւ, որ իրականութեան մէջ անոր տունը եկած էր, որպէսզի 2.000 տոլարի չէք տար անոր: Ան պատմեց, որ մէկուկէս շաբաթ առաջ՝ այսինչ օրը եւ ժամուն Սուրբ Հոգին դրդած է իրեն 2.000 տոլար տալու Ճերիին:

Ճերին ապշահար կանգնած էր: Ան արագօրէն բացաւ իր դրամապանակը, որուն մէջ դրած էր թուղթի փոքրիկ կտոր մը: Այդ թուղթին վրայ գրուած էր այն օրը եւ ժամը, երբ ինքը կը հաւատար, որ պիտի ստանար իրեն անհրաժեշտ 2.000 տոլարը: Ճերիին թուղթին վրայ գրուած օրը եւ ժամը ճիշդ այն պահն էր, երբ, ինչպէս այդ մարդն ըսաւ, Աստուած դրդած է իրեն տալու Ճերիին այդ 2.000 տոլարը: Ճերին գիտէր, որ ատիկա պատահականութիւն չէր. ան գիտէր, որ ատիկա Աստուծոյ Թագաւորութեան ուղիղ պատասխանն

էր՝ Աստուծոյ Թագաւորութեան օրէնքներու պատասխանը:

Ան շարունակեց՝ պատմելով, որ եօթը երեխայ ունէր, եւ բոլորն ամուսնացած էին՝ բացի իր տասնվեցամեայ որդիէն (որ անոր հետ ճաշի եկած էր): Անոր որդին, ըստ էութեան, հեռացած էր Աստուծէ՝ տեսնելով այն ամէնը, ինչի միջոցով անցած էր իր հայրը: Ան խիստ բարկացած էր Աստուծոյ վրայ այն պատճառով, որ, իր կարծիքով, Աստուած ձգած էր իր հօրը 30 տարի հաւատարիմ ծառայութենէն յետոյ:

Ճերին կը ցանկար ինչ որ ձեւով հասնիլ իր որդիին, եւ անոր քով գաղափար մը ծնաւ: Իմ նիւթերուն մէջ ես շատ կը խօսիմ եղնիկներու որսին մասին եւ կը պատմեմ, թէ ինչպէս Աստուած սորվեցուց ինձի հաւատքով որս ընել: Անոր որդին եղնիկներու որսի սիրահար էր, եւ Ճերին բացատրեց իր որդիին, թէ ինչպէս ան կրնար եղջերու որսալ՝ Աստուծոյ Թագաւորութեան ձեւով: Անոր որդին մտածեց այդ մասին եւ ի վերջոյ համաձայնեցաւ: Ան եւ հայրը կիրառեցին իրենց հաւատքը, ինչպէս որ Ճերին՝ իր 2.000 տոլարին համար: Այդ տղան գեղեցիկ եղջերու մը որսաց ութ վայրկեանի ընթացքին: Երբ Ճերին եւ անոր որդին այդ եղջերուն մսագործին քով կը տանէին, Ճերին միացուցած էր իմ լսասկաւառակներէն մէկը: Երբ ան կը տանէր այդ եղջերուն, անոր որդին ըսաւ, որ կ'ուզէ ինքնաշարժին մէջ մնալ եւ քիչ մը աւելի լսել: Երբ Ճերին վերադարձաւ, անոր որդին ըսաւ.

- Հայրի՛կ, կը կարծեմ՝ մենք տարիներ շարունակ ինչ որ բան մը չէինք հասկցած: Ես գիտեմ, որ որսացի այս եղջերուն Աստուծոյ Թագաւորութեան շնորհիւ:

Անոր որդին կրկին նուիրեց իր կեանքը Տիրոջը եւ ըսաւ հօրը, որ եթէ Աստուած կրնար տալ իրենց 2.000 տոլար եւ այդ եղջերուն, Ան նաեւ կրնար տալ 17.000 տոլար, որ անհրաժեշտ էր՝ իրենց արգելանքին տակ գտնուող տունն ազատելու համար: Այդ ժամանակն էր, որ ես առաջին անգամ գիտցայ Ճերիին մասին: Ես կը յիշեմ Ճերիին նամակը, որուն մէջ Ճերիին եւ անոր որդիին սերմն էր՝ իրենց տունն արգելանքէն ազատելու համար: Ես կը յիշեմ՝ այդ նամակը կարճ էր, եւ ատոր մէջ պարզապէս գրուած էր այն, ինչ որ պէտք ունէին անոնք:

Հոն այլեւս ոչինչ նշուած էր, միայն տունը արգելանքէն ազատելը: Ես նոյնպէս կը յիշեմ, որ դրի ձեռքս այդ նամակին վրայ՝ համաձայնելով անոնց հետ: Ես կը յիշեմ այն պահը, երբ ըրի ատիկա:

Եւ Ճերին պատմեց ինձի, որ մօտաւորապէս երկու շաբաթ յետոյ եւս մարդ մը մօտեցաւ իրենց տունը: Կրկին, Ճերին կը ճանչնար այդ մարդուն: Ան ըսաւ, որ տեսած էր Ճերիին տունը շերիֆի վաճառքի ցուցակին մէջ, եւ հարցուց անոր, թէ որքան գումար անհրաժեշտ էր՝ այն արգելանքէն ազատելու համար: Ճերին անուանեց այդ գումարը՝ աւելի, քան 17.000 տոլար: Այդ մարդը չէք գրեց ամբողջ գումարին համար եւ հեռացաւ: Ճերին կը նայէր այդ չէքին: Պատմութեան այդ բաժինէն սկսեալ, ան կու լար՝ նստած իմ դիմացը ճաշարանին մէջ, եւ շնորհակալութիւն կը յայտնէր ինձի Աստուծոյ Թագաւորութեան մասին սորվեցնելու համար: Ճերին ըսաւ, որ այնքան ուրախ է, որ իր բոլոր երեխաները տեսան Աստուծոյ ձեռքը, եւ ան հնարաւորութիւն ունեցաւ պատմելու անոնց Աստուծոյ Թագաւորութեան մասին: Ինձի համար ասիկա հաճելի է: Ասիկա Աստուծոյ Թագաւորութեան իրականութիւնն է, եւ ես այնքան օրհնուած եմ, որ կրնամ պատմել մարդոց այս մասին, իսկ յետոյ լսել անոնց պատմութիւնները: Իրականութեան մէջ, Ճերիին պէտք չէր խղճահարութիւն: Անոր պէտք էին պատասխաններ, եւ ան գտաւ պատասխաններ Թագաւորութեան մէջ:

Ես կը զգամ, որ պէտք է լրացում մը ընեմ Ճերիի պատմութեան վերաբերեալ: Թէեւ կրնար թուիլ, թէ մարդիկ պարզապէս կը թակէին Ճերիին դուռը եւ դրամ կու տային անոր, ես չեմ ցանկար, որ դուք սխալ պատկերացում կազմէք, որ ձեր ֆինանսական պատասխանը պարզապէս պիտի յայտնուի, մինչ դուք տունը նստած կազաւորուած ըմպելիք կը խմէք: Ո՛չ, դուք պէտք է կատարէք ձեր բաժինը՝ ձեր հունձքը ստանալու եւ ձեր կարիքը լրացնելու համար: Ճերիի պարագային, ան 30 տարի հովիւ եղած է: Ան ցանած է այդ մարդոց կեանքերուն մէջ տարիներ շարունակ: Եւ երկրորդը՝ Ճերին չէր կրնար դուրս ելլել տունէն կաթուածի պատճառով: Ճերին հնձեց այնտեղէն, ուր ցանած էր՝ իր եկեղեցւոյ անդամներէն, որոնց կեանքերուն մէջ ան ցանած էր տարիներ շարունակ:

Եւ պէտք է ըսեմ ձեզի, որ Ճերին նաեւ կատարելապէս բժշկուեցաւ կաթուածէն: Ան կորսնցուցած էր աւելի քան 30 քիլոկրամ, երբ հանդիպեցայ անոր այդ օրը ճաշի ժամանակ: Փա՛ռք Աստուծոյ, ան յենեցաւ Թագաւորութեան վրայ: Թերեւս ըսէք. «Չէ՞ որ Ճերին հովի էր: Անկասկած, ան գիտէր ամէն ինչ Թագաւորութեան մասին»: Ակնյայտ է, որ ոչ, եւ իմ փորձառութենէն եւ համոզուած եմ, որ ան միայնակ չէ աստոր մէջ: Դժբախտաբար, եկեղեցիներ յաճախող բազմաթիւ մարդիկ նոյնպէս չեն գիտեր, թէ ինչպէս ստանան իրենց պատասխաններն Աստուծոյ Թագաւորութենէն: Մատթէոսի Աւետարանին մէջ գտնուող պատմութիւն մը կը նկարագրէ, թէ ինչպէս շատերը կը մտածեն.

**«ՃՇՄԱՐԻՏ Կ'ԸՍԵՄ ՁԵԶԻ՝ ԵԹԷ ՄԱՆԱՆԵՆԻ ՀԱՏԻԿԻ ԶԱՓ ՀԱԻՍՔ ՈՒՆԵՆԱՔ, ԱՅՍ ԼԵՐԱՆ ՊԻՏԻ ԸՍԷՔ՝ ՓՈՒՆԱԴՐՈՒԻՐ ՀՈՍԿԷ ՀՈՆ, ԵՒ ԱՅՆ ՊԻՏԻ ՓՈՒՆԱԴՐՈՒԻ: ԵՒ ՈՉԻՆՉ ԱՆԿԱՐԵԼԻ Կ'ԸԼԼԱՅ ՁԵԶԻ ՀԱՄԱՐ»:**

– ՄԱՏԹԷՈՍ 17.20բ.

*«Եւ երբ որ անոնք ժողովուրդին քով եկան, մարդ մը մօտեցաւ Անոր եւ առջեւը ծունկ դնելով՝ կ'ըսէր. «Տէ՛ր, իմ որդիին ողորմի՛ր, որ կը լուսնոտի եւ չարաչար կը տանջուի, որովհետեւ շատ անգամ կրակը կ'իյնայ, եւ շատ անգամ՝ ջուրը: Եւ եւս անոր աշակերտներուդ քով բերի, եւ անոնք չկրցան բժշկել իրեն»:*

*Յիսուսն ալ պատասխանեց եւ ըսաւ. «Ո՛վ անհաւատ եւ խոտորեալ ազգ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ ե՞րբ ձեզի պիտի համբերեմ: Անոր Իմ քովս բերէք հոս»: Եւ Յիսուս սաստեց անոր, եւ դէւն անորմէ դուրս ելաւ, եւ տղան նոյն ժամուն բժշկուեցաւ:*

*Այն ժամանակ աշակերտներն առանձին Յիսուսին քով եկան եւ ըսին. «Սենք ինչո՞ւ չկրցանք հանել այն»: Յիսուսն ալ ըսաւ անոնց. «Ձեր թերահաւատութեան համար:*



*Որովհետեւ ճշմարիտ կ'ըսեն ձեզի՝ եթէ մանանելսի հատկի չափ հաւատք ունենաք, այս լեռան պիտի ըսէք՝ փոխադրուի՛ր հոսկէ հոն, եւ այն պիտի փոխադրուի: Եւ ոչինչ անկարելի կ'ըլլայ ձեզի համար»»:*

– Մատթէոս 17.14-20

Այս պատմութեան մէջ կը տեսնենք յուսահատ մարդ մը. անոր որդին կը տանջուէր չար հոգիներէն, գրեթէ մահուան աստիճան: Լսելով Յիսուսի ծառայութեան մասին, նաեւ՝ որ Յիսուսը դէւեր հանելու զօրութիւն ունէր՝ ան որոշեց տանիլ իր որդին Անոր քով, որպէսզի բժշկէր: Բայց տեղ հասնելով՝ իմացաւ, որ Յիսուսը հոն չէ, այլ լեռ բարձրացած է Իր երեք աշակերտներուն հետ՝ աղօթելու: Հոն գտնուող միւս աշակերտները ըսին, որ ատիկա խնդիր մը չէր. իրենք դէւեր կը հանէին այն ժամանակէն սկսեալ, երբ Յիսուսն Իր անունով դէւեր հանելու իշխանութիւնը տուած էր, եւ իրենք կրնային հոգալ այդ տղուն մասին: Սակայն երբ անոնք աղօթեցին այդ տղուն համար, դէւը չհեռացաւ: Թէեւ անոնք փորձեցին, բայց դէւը չհեռացաւ: Տղուն հայրը սրտնեղեցաւ, իսկ Յիսուսին հետեւող բազմութիւնը շփոթեցաւ:

Բայց ճիշդ այդ պահուն յայտնուեցաւ Յիսուսը՝ Իր երեք աշակերտներուն հետ: Անոնք վար իջան լեռէն, եւ Յիսուսը, տեսնելով այդ իրարանցումը, հարցուց, թէ ինչ տեղի կ'ունենայ: Տղուն հայրը պատմեց, որ ինքը բերած էր իր որդին աշակերտներուն քով, բայց անոնք չէին կրցած հանել անոր մէջի դէւը: Ատորմէ յետոյ հայրն ըրաւ այն, ինչ որ ճիշդ կը թուի շատերուն, եթէ ոչ մարդոց մեծամասնութեան, որոնք բախած են այնպիսի ճգնաժամի, որ, կը թուի, թէ պատասխան չունի: Ան խնդրեց Յիսուսէն ողորմիլ իրեն: Թէեւ ողորմութիւն խնդրելը լաւ միտք կը թուի, երբ դուք յուսահատ վիճակի մէջ էք, ատիկա այդ մարդուն պատասխանը չէր, եւ ո՛չ ալ ձերը: Այդ հայրը, ցանկալով շարժել Յիսուսին գութն իր իրավիճակին վերաբերեալ, պատմեց, թէ ինչպէս դէւը կը տանջէր իր որդիին՝ նետելով կրակի մէջ կամ փորձելով սպաննել: Յիսուսը թոյլ չտուաւ անոր շարունակել: Կարիք չկար, որ Ան լսէր աւելին այդ մարդու որդիի չարչարանքներուն մասին: Յուսահատութենէն Յիսուսն

աղաղակեց. «Ո՛վ անհաւատ եւ խոտորեալ ազգ, մինչեւ ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ ե՞րբ ձեզի պիտի համբերեմ: Անոր (տղուն) քոյս բերէք հոս»: Այս նախադասութեան մէջ Յիսուսը բոլորովին կը բացատրէ, թէ ինչու այդ դելը դուրս չելաւ:

Բայց մինչ Յիսուսին խօսքերն ուսումնասիրելը, մենք պէտք է վերահաստատենք այն հիմքը, որուն վրայ կը յենինք՝ այն, որ Աստուած չի ստեր եւ չի կրնար ստել: Այն, ինչ որ Ան կ'ըսէ, ճշմարիտ է: Հաստատելով ասիկա՝ մենք կրնանք գնահատել տուեալ իրավիճակը հետեւեալ պնդումով. «Դեւերը ՊԷՏԷ դուրս ելլեն»: Եթէ անոնք դուրս չեն ելլեր, ինչ որ բան մը սխալ է, եւ այդ սխալը ոչ թէ Աստուծմէ է, այլ մեզմէ: Յիսուսը պարզ կ'ըսէ, որ դեւերը դուրս չեկան խոտորուած մտածելակերպի եւ անհաւատութեան պատճառով: Շուտով կը խօսինք այս երկու պատճառներուն մասին: Բայց մեր քննարկման պահուն կ'ուզեմ կեդրոնանալ այս պատմութեան հօր եւ որդիին վրայ:

Հայրը ակնյայտօրէն յուսահատութիւն կը զգար իր որդիին պատճառով: Երբ աշակերտներուն աղօթքէն յետոյ, կը թուի, ոչինչ կատարուեցաւ, ան այլեւս յոյս չունէր: Ոչ մէկ յստակ պատասխան կար: Միակ պատասխանը, որ, անոր կարծիքով, կրնար օգնել, ոչ մէկ օգուտ տուաւ: Կը մնար միայն մէկ բան, եւ ատիկա ողորմութիւն խնդրելն էր: «Ողորմութիւն խնդրել» արտայայտութիւնը կ'ենթադրէ, որ ինչ որ մէկն ուժ ունի, իշխանութիւն՝ օգնելու համար, բայց կ'որոշէ չընել ատիկա: Եւ միակ բանը, որ հայրը կրնար ընել, մանրամասն նկարագրելն էր այն զարհուրելի տանջանքները, որոնք իր որդին կը կրէր՝ փորձելով շարժել Յիսուսի գութն իր իրավիճակին վերաբերեալ:

Անկեղծ ըսելու համար, մարդոց մեծամասնութիւնը ճիշդ այսպէս կ'աղօթէ: Իմանալով, որ Աստուած կրնայ օգնել, բայց համոզուած չըլլալով, թէ ինչպիսին պիտի ըլլայ Անոր արծագանգը, անոնք կը խնդրեն Անոր ողորմութիւնը: Եւ այսպիսով, երկար աղօթքներով եւ բազմաթիւ բառերով, անոնք մանրամասն կը ներկայացնեն իրենց խնդիրները եւ հանգամանքները. «Հայր, Դուն գիտես, որ ինձի պէտք է այդ գումարը մինչեւ ուրբաթ օրը. Աստուա՛ծ, կը խնդրե՛մ, օգնե՛ ինձի», կամ «Աստուա՛ծ, կը խնդրե՛մ, եթէ բժշկես իմ երեխային,

Ես պիտի ծառայեմ Քեզի մինչեւ իմ կեանքի աւարտը: Կը խնդրե՛մ, Աստուա՛ծ»: Ես թեթեւօրէն չեմ նայիր այն իրավիճակներուն, որոնց մարդիկ կը բախին, բայց կը խնդրեմ, ուշադրութիւն դարձուցէք, թէ որքան արագ Յիսուսը գործադրեց Աստուծոյ զօրութիւնն այդ իրավիճակին մէջ եւ ազատութիւն տուաւ այդ տղուն: Ահա թէ ինչպիսին է Աստուծոյ սիրտը, եւ ահա թէ որն է Անոր ցանկութիւնը: Աստուծոյ քով չկայ գթասրտութեան, զօրութեան եւ իշխանութեան պակաս: Նման խնդիր չկար նաեւ այս պատմութեան մէջ: Յիսուսը ցոյց տուաւ, որ խնդիրը խոտորեալ մտածելակերպն ու անհաւատութիւնն էին: Ուրիշ ձեւով ըսելու համար, սխալ մտածելակերպը եւ հաւատքի պակասը սահմանափակեցին Թագաւորութեան իրաւասութիւնն այս պատմութեան մէջ:

Կան շատ բաներ՝ կապուած այս պատմութեան հետ, որոնք մենք պէտք է դիտարկենք՝ Թագաւորութեան բազմաթիւ բանալիներ եւ օրէնքներ: Այս պահուն չեմ ուզեր մանրամասնօրէն քննարկել որոշ բաներ այս պատմութեան մէջ, որոնց մասին դուք պէտք է գիտնաք, բայց գոնէ կը նշեմ ատոնք, եւ մենք կ'ուսումնասիրենք որոշ ժամանակ յետոյ:

Աստուծոյ Թագաւորութեան մասին տարրական գիտելիք ստանալու համար մենք պէտք է հասկնանք հետեւեալ գլխաւոր եւ հիմնարար ճշմարտութիւնը. Աստուած տուաւ Ադամին լիակատար իրաւասութիւն այս երկրի վրայ: Ադամը պէտք է իշխէր այս երկրին վրայ.

*«Եւ Աստուած ըսաւ. «Մեր պատկերով եւ մեր նմանութեան պէս մարդ շինենք, որ իշխեն ծովու ձուկերուն եւ Երկինքի թռչուններու եւ անասուններու եւ ամբողջ երկրի վրայ եւ երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն վրայ»»:*

– Ծանոթոց 1.26

Կը կարծեմ՝ Եբրայեցիներու 2.7,8 խօսքերը շատ պարզ կը ներկայացնեն այս փաստը.

*«Քիչ մը վար ըրիր անոր հրեշտակներէն, փառքով եւ պատիով պսակեցիր անոր ... ամէն բան հնազանդ ըրիր անոր ոտքերուն տակ. որովհետեւ ամէնը, որ հնազանդեցուց իրեն, ոչինչ թողեց, որ հնազանդ չըլլայ անոր»:*

Այս պահուն դուք պէտք է առնուազն հասկնաք, որ Աստուած չի կրնար կիրառել Իր իշխանութիւնն այս երկրի վրայ (մարդոց Թագաւորութեան մէջ), քանի տակաւին ռեւէ տղամարդ կամ կին, որ օրինական իրաւասութիւն ունի այս երկրի վրայ, չկիրառէ Երկինքի իշխանութիւնը:

Ահա թէ ինչու Յիսուսն ըսաւ Իր աշակերտներուն Մատթէոս 18.18-ին մէջ.

*«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ինչ որ երկրի վրայ կապէք, Երկինքն ալ կապուած կ'ըլլայ, եւ ինչ որ երկրի վրայ արծակէք, Երկինքն ալ արծակուած կ'ըլլայ»:*

Կրկին, Երկինքը չունի իրաւասութիւն երկրի վրայ, քանի տակաւին ռեւէ տղամարդ կամ կին չէ արծակած Երկինքի իշխանութիւնը հոս: Ահա թէ ինչու Յիսուսը կ'ըսէ այս հատուածին մէջ, որ եթէ ռեւէ տղամարդ կամ կին արծակէ Երկինքի իշխանութիւնը երկրի վրայ, Երկինքը կը սատարէ ատիկա: Հակառակ պարագային, Երկինքը չի կրնար ընել ատիկա:

Եթէ ասիկա տարօրինակ կը թուի, կը խնդրեմ, կանգ մի՛ առնէք հոս: Աւելի ուշ մանրամասնօրէն կը ներկայացնեն այս թեման: Բայց այս պահուն ընդունեցէ՛ք այս ճշմարտութիւնը որպէս պատճառ, թէ ինչու այդ դէւը չի եռացաւ տղայէն. *ան ստիպուած չէր հեռանալու*: Այդ

**ԲԱՅՑ ԱՍԻԿԱ ՉԻ  
ՎԵՐԱԲԵՐԻՐ ԶԵՋԻ,  
ԻՄ ԸՆԿԵՐ. ԱՍՏՈՒԾՈՅ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԷՋ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ  
ՀԱՍԱՆՆԵԼԻ Է ԶԵՋԻ: ԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԶԵՐ  
ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ:**

դելը հոն մնալու օրինական իրաւունք ունէր: Կրկին, Յիսուսն ըսաւ, որ դելին չհեռանալու պատճառը հաւատքի կամ իրաւասութեան բացակայութիւնն էր: Աստուած կորսնցուց Իր իրաւասութիւնը մարդոց կեանքին մէջ, երբ Ադամը, ըստ էութեան, հեռացուց Աստուծոյ իր ապստամբութեամբ: Այդ պահուն սատանան նաեւ իրաւասութիւն ստացաւ ամբողջ մարդկութեան վրայ:

*«Եւ սատանան Անոր (Յիսուսին) բարձր լեռ մը հանեց եւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցոյց տուաւ Անոր մէկ վայրկեանի մէջ: Եւ սատանան ըսաւ Անոր. «Այս ամբողջ իշխանութիւնը եւ ասոնց փառքը Քեզի կու տամ, որ ինձի տրուած է (Ադամին կողմէ), եւ որո՞ւ որ ուզեմ կու տամ: Արդ Ղուն, եթէ իմ արջեւն ինկած երկրպագութիւն ընես, բոլորը Քուկդ պիտի ըլլայ»»:*

– Ղուկաս 4.5-7

Հետեւաբար, Աստուած կորսնցուց Իր իրաւասութիւնը երկրային տիրոյթին մէջ, ինչպէս որ կորսնցուց այդ իրաւասութիւնն ունեցող մարդուն՝ Ադամին: Հետագային աւելի շատ պիտի խօսիմ այս օրէնքներու մասին, բայց ես օգտագործեցի այս պատմութիւնը, հիմնականին ցոյց տալու համար այդ տղուն հօր վերաբերմունքը եւ յուսահատութիւնը, եւ թէ ինչպէս ան դիմեց ողորմութիւն խնդրելուն: Կը խնդրեմ, մեծ ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ քանի մը նախադասութիւնը:

Եթէ գոյութիւն չունի որեւէ իշխանութիւն կամ օրէնք եւ որեւէ համակարգ՝ արդարադատութիւն իրականացնելու եւ կարիք ունեցող մարդուն լուծումներ տրամադրելու համար, ողորմութիւն խնդրելը միակ տարբերակն է: Թոյլ տուէք ուրիշ ձեւով ըսել ասիկա. եթէ մարդը չունի օրինական լուծում որեւէ խնդրի համար, եւ եթէ անոր հասանելի չէ որեւէ գործընթաց, որուն միջոցով կ'իրականացուի արդարադատութիւնը, կը նշանակէ՝ ան չունի հաւաստիացում, որ պատասխան պիտի ստանայ: Եւ միակ տարբերակը, որ կը մնայ, ողորմութիւն խնդրելն է:

Բայց ասիկա չի վերաբերիր ձեզի, իմ ընկե՛ր. Աստուծոյ Թագաւորութեան մէջ արդարադատութիւնը հասանելի է ձեզի: Կան պատասխաններ ձեր խնդիրներուն: Յիշեցէ՛ք՝ թագաւորութիւնը կառավարման ձեւ է, որու օրէնքներն անկողմնակալ են եւ հասանելի իւրաքանչիւր քաղաքացիի, որ կ'ապրի այդ թագաւորութեան իրաւասութեան ներքոյ: Ինչպէս որ անելի կանուխ ըսի այս գիրքին մէջ, Աստուծոյ Թագաւորութիւնը կառուցուած է իրաւունքի (իրաւաբանական գործընթացի, որուն միջոցով Աստուծոյ իշխանութիւնը կ'ապահովէ այն, ինչ որ ճիշդ է ըստ Իր օրէնքին) եւ արդարութեան վրայ: Կար պատճառ, թէ ինչու այդ դելը դուրս չելաւ, եւ ասիկա ո՛չ Աստուծոյ տկարութիւնն էր, ո՛չ ալ այն, որ Ան փոխած էր Իր կամքը: Յիսուսը ցոյց տուաւ ասիկա այն բանով, թէ որքան արագ Ան յանդիմանեց աշակերտներուն, իսկ յետոյ հանեց այդ դելին:

Քրիստոնեաներու մեծ մասը, չտեսնելով Թագաւորութեան դրսեւորումն ինչ որ իրավիճակի մէջ, կը փոխէ իր վարդապետութիւնը՝ ըսելով. «Բոլոր դելերը չէ, որ դուրս կու գան»: Անոնք գիտեն, որ իշխանութիւնն ամբողջութեամբ կը պատկանի Աստուծոյ, եւ կ'ենթադրեն, որ Աստուած երկրային տիրոյթին մէջ կրնայ ընել այն, ինչ որ կը ցանկայ: Եւ եթէ դելը դուրս չելաւ, կը նշանակէ՝ Աստուած, հաւանաբար, որոշած է չհարկադրել անոր դուրս ելլել: Իմ ընկե՛ր, այս պատկերացումը բոլորովին սխալ է: Յիսուս ըսաւ, որ տուեալ պարագային ԱՆՈՆՑ խոտորուած մտածելակերպն ու անհաւատութիւնը խափանած էին Երկինքի իրաւասութիւնը: Թոյլ տուէք այսպէս ըսել. այդ դելին դուրս չելլելն իրաւական հարց էր, եւ վերջ: Ան ստիպուած չէր հեռանալու, քանի որ ոչ ոք բերաւ Երկինքի իշխանութիւնը եւ օրինական իրաւասութիւնն այդ իրավիճակին մէջ: «Բայց Կէ՛րի, անոնք կը փորձէին հանել անոր»: Այո՛, բայց, ինչպէս ըսի, ան ստիպուած չէր դուրս ելլելու: Ինչո՞ւ: Կրկին, Երկինքը չունէր իրաւասութիւն՝ այդ դելը հանելու համար:

Թոյլ տուէք որիշ ձեւով արտայայտել իմ միտքը: Անոնք խոտորուած մտածելակերպ ունէին. իսկ ասիկա կը նշանակէ, որ անոնք բարի եւ ընդունելի կ'անուանէին այն, ինչ որ, Աստուծոյ կարծիքով, սխալ կամ խեղաթիւրուած մտածելակերպի արդիւնք էր: Անհաւատութիւնը

**ՔԱՆԻ ՈՐ ՕՐԻՆԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ  
ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ  
ԿԸ ՊԱՏԿԱՆԻ  
ՍԱՐԴՈՒՄ, ԱՍՏՈՒԾՈՅ  
ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՒ  
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԵՆ  
ԿՐՆԱՐ ԳՈՐԾԵԼ, ՔԱՆԻ  
ԴԵՌ ՈՅԷ ՏՂԱՍԱՐԴ  
ԿԱՄ ԿԻՆ, ՈՐ ՈՒՆԻ  
ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ  
ԱՅՍ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ,  
ԲՈՒՐՈՐԿԻՆ ՀԱՍՈՋՈՒԲԾ  
ՉԷ ԵՐԿՆԱՅԻՆ  
ԽՕՍՔԵՐՈՒՄ ՄԷՋ ԵՒ  
Չ՝ԱՐՉԱԿԵՐ ԵՐԿՆԱՅԻՆ  
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՀՈՍ:**

նոյնպէս լուրջ խնդիր էր, քանի որ անհրաժեշտ է հաւատք, որպէսզի Երկինքն իրաւասութիւն ունենայ երկրային տիրոյթին մէջ: Աշակերտները վստահ չէին եւ բոլորովին համոզուած չէին, որ այդ դելը դուրս պիտի ելլէր: Անոնք վախցած էին:

Քանի որ օրինական իշխանութիւնն այս երկրին մէջ կը պատկանի մարդուն, Աստուծոյ կառավարումը եւ իշխանութիւնը չեն կրնար գործել, քանի դեռ ռեւէ տղամարդ կամ կին, որ ունի իրաւասութիւն այս երկրի վրայ, բոլորովին համոզուած չէ երկնային խօսքերուն մէջ եւ չ՝արծակեր երկնային իշխանութիւնը հոս: Ի դէպ, հաւատքն այն է, որ մենք բոլորովին համոզուած ենք մեր սրտին մէջ երկնային խօսքերու

ճշմարտացիութեան մէջ, իսկ այդ օրը ոչ ոք հաւատք ունէր: Անոնք երկմիտ էին եւ լեցուած էին անհաւատութեամբ, եւ այդ պատճառով խափանեցին Երկինքի իրաւասութիւնն այդ իրավիճակին մէջ: Բայց Յիսուսը հաւատք ունէր եւ գիտէր, որ այդ դելը դո՛ւրս պիտի ելլէր: Յիսուսն Իր վրայ վերցուց այդ իրավիճակի վերահսկողութիւնը, եւ այդ դելը հեռացաւ: «Բայց Կէ՛րի, երբ Յիսուսը յանդիմանեց դելին, այն դուրս ելաւ, քանի որ յանդիմանողը Յիսուսն էր»: Իսկապէ՞ս: Կարդանք Մարկոս 6.5-ը, երբ Յիսուսը կը ծառայէր Իր հայրենի քաղաքին մէջ:

*«Եւ (Յիսուսը) հոն ոչ մէկ գորութիւն (կամ՝ հրաշք) կրնար ընել, բայց միայն քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ եւ բժշկեց»:*

Դուք պէտք է համաձայնիք, որ Յիսուսն ունէր բժշկելու զօրութիւն, ճիշդ է: Այդ պարագային, պէտք է բացատրէք, թէ ինչու Ան չկրցաւ ընել այն, ինչ որ կը ցանկար ընել այս պատմութեան մէջ: Թէեւ զոյութիւն ունէր կարիք, ինչ որ բան մը խոչընդոտեց Անոր: Պատասխանը 6-րդ խօսքին մէջ է. «Եւ անոնց անհաւատութեան համար կը զարմանար»: Հաւատքը (համաձայնութիւնը Երկինքի հետ) օրինական իշխանութիւն կու տայ Երկինքին այս երկրային տիրոյթին մէջ: Դուք կրնաք դիւրութեամբ տեսնել այս սկզբունքն այն բանին մէջ, թէ ինչպէս փրկուեցաք եւ ընդունեցիք Քրիստոսին:

*«Քանի որ՝ սրտով կը հաւատանք արդարանալու համար, եւ բերանով կը դաւանինք փրկուելու համար»:*

– Հռովմայեցիս 10.10

Դուք կը հաւատաք ձեր սրտով (Երկինքի խօսքերուն) եւ կ'արդարանաք: Ատիկա իրաւական թերմին է, որ կը նշանակէ օրէնքի կիրառում եւ կ'ենթադրէ, որ այժմ Երկինքն օրինական իշխանութիւն ունի երկրային տիրոյթի մէջ: Այս սկզբունքը պարզօրէն դիտարկելու համար յիշենք, որ Ադամն այս երկրի օրինական կառավարիչն է, եւ այս դիրքը դեռ կը պատկանի մարդուն: Ասիկա պէտք չէ շփոթել այն բանին հետ, որ մարդը կորսնցուց իր հոգեւոր իշխանութիւնը՝ տանուլ տալով այն սատանային Եդէմի պարտէզին մէջ: Աստուած չի կրնար խախտել այն օրինական դիրքը, որ մարդը ներկայիս կը զբաղեցնէ այս աշխարհին մէջ: Այնպէս որ, Աստուած պէտք է գտնէ այնպիսի մարդ, որ կու տայ իր համաձայնութիւնը, որպէսզի Երկինքն օրինապէս մուտք գործէ երկրային տիրոյթ եւ գործէ աստոր մէջ:

Դուք կը նկատէք, որ Հռովմայեցիս 10.10-ին մէջ պէտք է տեղի ունենայ երկու բան, մինչեւ որ Երկինքի իշխանութիւնը եւ զօրութիւնն արծակուին այս երկրին մէջ: Ես արդէն խօսեցայ առաջինին մասին. մենք պէտք է բոլորովին համոզուած ըլլանք եւ համաձայնինք մեր սրտերուն մէջ այն ամէնուն հետ, ինչ որ կ'ըսէ Երկինքը, եւ ատիկա կը կոչուի հաւատք: Երկրորդը՝ մենք պէտք է հասկնանք, որ հաւատքն ինքնին չ'արծակեր Երկինքի զօրութիւնն այս երկրի



վրայ: Ատիկա կը զարմացնէ՞ ձեզի: Թոյլ տուէք բացատրել: Լամբն ունի անջատիչ: Ելեկտրականութիւնը միացուած է, բայց դուք, միեւնոյնն է, պէտք է միացնէք անջատիչը, որպէսզի լամբը լոյս տայ: Երբ մենք կը հաւատանք մեր սրտին մէջ Երկինքի խօսքերուն, մեր կապը Երկինքի հետ օրինական եւ արդարացուած կը դառնայ: Բայց ատորմէ յետոյ պէտք է արձակենք այդ իշխանութիւնը հոս: Նման իմ օրինակին, մենք պէտք է միացնենք անջատիչը: Մենք կ'ընենք ատիկա, երբ կը դաւանինք Թագաւորութեան իշխանութիւնը եւ կը վարուինք ատոր հիման վրայ:

Ես գիտեմ, որ կը կրկնեմ, բայց Թագաւորութեան այս օրէնքը հասկնալը ԿԵՆՍԱԿԱՆՈՐԷՆ ԿԱՐԵԻՈՐ Է, որպէսզի դուք կարենաք ստանալ այն, ինչ որ Երկինքն ունի ձեզի համար: Այն ամէնը, ինչ որ կը ստանաք Երկինքէն, պիտի ըլլայ նոյն կերպով, ինչպէս որ դուք փրկուեցաք՝ սրտով հաւատալով երկնային խօսքերուն, իսկ յետոյ դաւանելով երկնային խօսքերը կամ վարուելով ատոնց համաձայն:

Թագաւորութիւնը, ինչպէս որ Յիսուսը կը սորվեցնէր եւ կը ցուցադրէր այն, բոլորովին խորթ էր աշակերտներուն համար: Մենք յաճախ կը տեսնենք, որ աշակերտները կը շփոթէին իրենց տեսածին պատճառով: Ես համոզուած եմ, որ մեր կարդացած նախորդ Աստուածաշնչեան հատուածին մէջ աշակերտները վախցան դեւի դրսեւորումէն եւ սկսան կասկածիլ, որն ալ զերոյացուց անոնց հաւատքը: Ես կ'ենթադրեմ, որ երբ անոնք մօտեցան, որպէսզի հանէին այդ դեւը, ան դրսեւորուեցաւ՝ հաւանաբար, այդ տղուն զետին նետելով եւ ազդեցիկ տեսարան սարքելով: Ատիկա կրնար վախ յառաջացնել: Ատիկա պարզապէս իմ ենթադրութիւնն է, բայց համոզուած եմ՝ տեղի ունեցաւ ինչ որ բան մը, որուն պատճառով անոնց սրտերը խախտեցին համաձայնութիւնը Երկինքի հետ եւ յայտնուեցան անհաւատութեան մէջ:

Ինչ կը վերաբերի Յիսուսին, Ան բոլորովին համոզուած էր այն բանին մէջ, թէ ինչ կ'ըսէր Երկինքը նման իրավիճակին մէջ, եւ Ան հրամայեց այդ դեւին դուրս ելլել: Այսպիսով, մենք կը տեսնենք, որ խնդիրը, թէ ինչու այդ դեւը դուրս չէր ելլեր, երկրային տիրոյթի մէջ էր, ոչ թէ երկնայինին մէջ:

Եթէ կարիք ըլլար ընտրել ընդամէնը մէկ Աստուածաշնչեան հատուած, որ լաւագոյնս պիտի նկարագրէր Թագաւորութեան գործունէութիւնն այս երկրի վրայ, իմ կարծիքով, այդ հատուածը պիտի ըլլար Մարկոս 11.22-24-ը: Այն աւելի լաւ հասկնալու համար մենք պէտք է կարդանք նախորդ երկու խօսքերը, որոնց մէջ Յիսուսը խօսք ըսաւ թզենիին, եւ այն չորրորդ օրը, երբ աշակերտները կ'անցնէին նոյն տեղէն, նկատեցին, որ այն չորրորդ էր: Պետրոսն ապշեցաւ իր տեսածին պատճառով եւ զարմացած դիմեց Յիսուսին:

**«ԱՍՈՐ ՀԱՄԱՐ Կ'ԸՍԵՍ ԶԵԶԻ, ԹԷ ԱՄԷՆ ԻՆՉ, ՈՐ ԱՂՕԹՔ ԸՆԵՆՈՎ ԽՆԴՐԷՔ, ՀԱԲՍՍՑԷՔ, ԹԷ ՊԻՏԻ ԱՌՆԷՔ (ԿԱՄ՝ «ՈՐ ՍՍՑԱԾ ԷՔ»), ԵՒ ՊԻՏԻ ԸՆԼԱՅ ԶԵԶԻ»:**

– ՄԱՐԿՈՍ 11.24

*«Եւ Յիսուսը պատասխանեց եւ ըսաւ անոնց. «Աստուծոյ հաւատքն ունեցէ՛ք: Որովհետեւ ճշմարիտ կ'ըսես մեզի, թէ ով որ այս լերան ըսէ՝ ելի՛ր եւ ծովը ինկի՛ր, եւ իր սրտին մէջ չերկմտի, բայց հաւատա՛, թէ ինչ որ ըսէ, պիտի ըլլայ անոր, պիտի ըլլայ՝ ինչ որ ըսէ: Ասոր համար կ'ըսես մեզի, թէ ամէն ինչ, որ աղօթք ընելով խնդրէք, հաւատացէ՛ք, թէ պիտի առնէք (կամ՝ «որ ստացած էք»), եւ պիտի ըլլայ մեզի»:*

– ՄԱՐԿՈՍ 11.22-24

Ուշադրութիւն դարձուցէք, որ Պետրոսը զարմացած էր տեղի ունեցածին: Ինչպէ՞ս ատիկա կատարուեցաւ: Յիսուսը պարզապէս խօսք ըսաւ այդ ծառին: Սակայն, անկասկած, այդ ծառն արծագանգեց Յիսուսի խօսքերուն եւ չորրորդ: Յիսուսը պատասխանեց՝ յայտնելով Պետրոսին «ճշմարտութիւն» մը կամ Աստուծոյ Թագաւորութեան օրէնք մը: Յիսուսի բացատրութեան շնորհիւ մենք ա՛լ աւելի կը հասկնանք, թէ ինչպէս Աստուծոյ Թագաւորութիւնը կը փոխգործակցի երկրային տիրոջին մէջ: Կրկին, այս օրինակին մէջ կը տեսնենք նոյն օրէնքի

Կիրառոււմը, որուն մասին մենք խօսած ենք. ոեւէ տղամարդ կամ կին այս երկրի վրայ, որ բոլորովին համոզուած է երկնային խօսքերու մէջ (եւ աստորմով արդարացուած է), կը խօսի կամ կ'արծակէ երկնային իշխանութիւնը: Անշուշտ, այս պատմութեան մէջ այդ մարդն Ինքը Յիսուսն էր, բայց Յիսուսը շատ պարզ բացատրեց Իր աշակերտներուն, որ ցանկացած մարդ կրնայ ընել այն, ինչ որ Ինքն ըրաւ:

Համոզուած եմ՝ դուք պիտի համաձայնիք, որ եթէ մարդիկ իրականութեան մէջ իմանային այս մասին եւ հասկնային այն օրէնքը, որ Յիսուսը սորվեցուց Իր աշակերտներուն, այն շրջադարձային ազդեցութիւն պիտի ունենար անոնց կեանքին մէջ: Ես տեսայ Թագաւորութեան ազդեցութիւնն իմ ընտանիքին մէջ, բայց նոյնպէս զարմանալի էր տեսնել Թագաւորութեան ազդեցութիւնն այն ընտանիքներուն մէջ, որոնց մենք կը սորվեցնէինք այն, ինչ որ անձնապէս սորված էինք: Թոյլ տուէք պատմութիւն մը պատմել իմ եկեղեցւոյ անդամներէն մէկուն մասին, որուն կեանքին մէջ գործեց այս օրէնքը: Շատ յաճախ գիտելիքն այն մասին, թէ ինչպիսին է Թագաւորութիւնը եւ ինչպէս այն կը գործէ, կրնայ կեանքի եւ մահու հարց ըլլալ: Այս պատմութիւնն այդպիսին էր:

Ճենիֆըրը սկսաւ յաճախել մեր եկեղեցի եւ լսել հաւատքի ու Թագաւորութեան մասին: Ան խանդավառուեցաւ՝ իմանալով Թագաւորութեան մէջ իր իշխանութեան եւ իրաւունքներուն մասին, քանի որ ան յղի էր իր երկրորդ երեխայով եւ կը ցանկար ծննդաբերել իր տունին մէջ: Ան սկսաւ ուսումնասիրել այն, ինչ որ Աստուծոյ խօսքը կ'ըսէր ծննդաբերութեան մասին, նաեւ Աստուծոյ Թագաւորութեան խոստումները, որոնք կարելի էր վերագրել իր երեխային: Ան համոզուած էր, որ կրնար առողջ տնային ծննդաբերութիւն ունենալ: Ան ընտրեց դայեակ եւ խնդրեց մեր եկեղեցւոյ կիներէն մէկուն, որ քանի մը տնային ծննդաբերութեան փորձառութիւն ունեցած էր, ընդունիլ իր ծնունդը:

Մինչեւ իր ծննդաբերութիւնը ան կը մասնակցէր իւրաքանչիւր հաւաքոյթի եւ կը իւրացնէր Թագաւորութեան սկզբունքները: Այս հասկացութիւնները նոր էին Ճենիֆըրին համար, եւ ան սիրով կը սորվէր, որ Աստուծոյ Թագաւորութեան մէջ կան իրական

պատասխաններ: Դժբախտաբար, այդ ընթացքին անոր ամուսինը ստիպուած էր աշխատելու Կիրակի օրերը եւ հիմնականին չէր կրնար եկեղեցի յաճախել անոր հետ: Ի վերջոյ, եկաւ անոր ծննդաբերելու ժամանակը: Ան կանչեց դայեակին եւ իր ծնունդը ընդունող կնոջը:

Գիշերուան ժամը 2:00-ին, թէ 3:00-ին իմ հեռաձայնը հնչեց: Ես լսեցի Ճենիֆըրին ծնունդն ընդունող կնոջ պղաւոցը.

- Հովի՛ւ, աղօթեցէ՛ք, կը խնդրե՛մ. երեխան մահացա՛ծ ծնած է:

Այդ լուրը բոլորովին արթնցուց ինձի: Ան շարունակեց՝ ըսելով, որ քիչ առաջ երեխային շտապ օգնութեամբ հիւանդանոց տարած են, եւ բժիշկներն արձանագրած են անոր որպէս մեռելածին:

Տրե՛նտան եւ ես ոտքի ելանք եւ հագուեցանք: Ես սկսայ աղօթել Հոգիով՝ սպասելով ցուցնուքներու: Գիտէի, որ սատանան չէր փախցնէր մեր եկեղեցին շարախօսելու առիթը՝ այդ իրադարձութեան պատճառով: Ես արդէն կը պատկերացնէի վերնագիրները. «Տնային ծննդաբերութիւններ խրախուսող եկեղեցւոյ անդամին նորածինը կը մահանայ»: Իրականութեան մէջ մենք ոչ մէկ դիրքորոշում ունինք այն մասին, թէ արդեօ՞ք պէտք է ծննդաբերել տանը, սակայն ճիշդ է, որ մեր եկեղեցւոյ կիներէն շատերը կ'որոշեն տունը ծննդաբերել: Մեր տունէն մինչեւ հիւանդանոց գրեթէ 20 վայրկեանի ճամբայ էր ինքնաշարժով, եւ Տրե՛նտան ու ես ինքնաշարժին մէջ կը շարունակէինք աղօթել Հոգիով: Մօտաւորապէս ճանապարհի կիսուն ես յանկարծ զգացի, որ Աստուծոյ Հոգին իջաւ իմ վրաս, եւ գիտէի, որ երեխային հետ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Նոյն պահուն կինս շրջուեցաւ եւ ըսաւ, որ Տէրը հագիւ նոր յայտնեց անոր, թէ երեխային հետ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ:

Ես գիտէի, թէ ինչ ըսաւ Տէրը կնոջս եւ ինձի: Մտնելով վերակենդանացման բաժանմունք, ինձի կը հետաքրքրէր՝ ինչ պիտի տեսնեմ: Այդ բաժանմունքին մէջ ես տեսայ եօթ-ութ բուժքրոջմէ բաղկացած խումբ մը, որոնք կանգնած էին բոլորովին սովորական, վարդագոյն եւ լացող երեխայի շուրջ: Ես ուշադիր նայեցայ անոնց դէմքերուն: Որպէս կանոն, երբ խումբ մը կանայք կը նային նորածինին, անոնք կը ժպտան: Բայց այս պարագային ոչ ոք

կը ժպտար: Փոխարէնը, անոնց դէմքերուն զարմանք կը նկատուէր:

Մենք հանդիպեցանք այն կնոջը, որ հեռաձայնած էր մեզի: Ան կրկին ըսաւ, որ երեխան մեռելածին ճանչցուած է տանը եւ 20 վայրկեան յետոյ հիւանդանոց հասցուած է: Հիւանդանոցը նոյնպէս արձանագրած էր երեխային որպէս մեռելածին, երբ անոր նոր բերած էին, բայց յանկարծ, առանց որեւէ միջամտութեան, ան արթնցած էր: Փա՛ռք Աստուծոյ: Տրենտան եւ ես յուզուեցանք՝ տեսնելով, որ երեխան ողջ եւ առողջ է, ինչպէս որ Սուրբ Հոգին ըսած էր մեզի:

Միեւնոյն ժամանակ, մէկ ուրիշ շտապ օգնութեան ինքնաշարժ ծննդատան բաժանմունք բերած էր նորածինին մօրը՝ Ճենիֆըրին: Կինս՝ Տրենտան, բարձրացաւ ծննդատան այն յարկը, ուր Ճենիֆըրը կը հանգստանար, եւ ըսաւ.

- Ճենիֆըր, քու երեխան ողջ է, ան այնքա՛ն լաւիկն է:

Ճենիֆըրի կողքին կանգնած բուժքոյրը միջամտեց եւ կտրուկ ըսաւ.

- Ո՛չ, այդ երեխան թաղման պարկի մէջ է:

Կինս մեծ վճռականութեամբ յանդիմանեց այդ բուժքրոջ սխալ վարքը:

Այսօր, փա՛ռք Աստուծոյ, այդ նորածին աղջիկը, որուն անուանեցին Հէյլի, գեղեցիկ երիտասարդ աղջիկ է, որ ո՛չ ուղեղի վնասուածք ունի, ո՛չ ալ որեւէ կողմնակի առողջական խնդիր: Հասկնալով, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կը գործէ հոգեւոր օրէնքներու հիման վրայ՝ ես գիտէի, որ այդ արդիւնքը պատահական չէր: Այնպէս որ, որպէս հոգեւոր գիտնական (ոչ թէ «Քրիստոնէական գիտութեան» հետեւորդ, այլ մարդ, որ կ'ուսումնասիրէ Աստուծոյ Թագաւորութիւնը), ես կ'ուզէի հասկնալ, թէ իրականութեան մէջ ինչ տեղի ունեցած էր:

Ես գիտէի, որ նորածին Հէյլին պաշտօնապէս մեռելածին ճանչցուած էր տուն ժամանած շտապ օգնութեան աշխատակազմին կողմէ: Նոյնպէս գիտէի, որ երեխան մեռելածին ճանչցուած էր հիւանդանոցին կողմէ: Այդ պարագային, ի՞նչ կատարուած էր: Ես խօսեցայ Ճենիֆըրին ծնունդն ընդունող կնոջ հետ, որ ներկայ էր

ծննդաբերութեան, եւ խնդրեցի մանրամասնօրէն պատմել այն, ինչ որ տեղի ունեցած էր: Ես կը փորձէի բանալիներ գտնել: Ան ըսաւ, որ ծննդաբերութիւնը լաւ կ'ընթանար, մինչեւ որ երեխան ծնաւ: Ան չունէր կենդանութեան նշաններ եւ մուգ կապոյտ գոյնի էր: Ինքը փորձեց կեանքի վերադարձնել երեխային, բայց չկրցաւ: Ան շարունակեց՝ ըսելով, որ Ճենիֆըրին ընտանիքի անդամներէն շատերը հոն էին, եւ անոնք խուճապի մատնուեցան: Բայց Ճենիֆըրը հանդարտօրէն պատուիրեց անոնց լռել, իսկ յետոյ ուղղեց մատն իր ամուսինին երեսին՝ ըսելով. «Նոյնիսկ մէկ բառ չըսես. այս երեխային հետ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ»:

Ես անմիջապէս ընդհատեցի անոր եւ խնդրեցի կրկնել, թէ Ճենիֆըրն ինչ ըսած էր իր ամուսինին: Ան ըսաւ ինծի նոյն բանը, ինչ որ արդէն ըսած էր՝ այն, որ Ճենիֆըրն ուղղած էր մատն իր ամուսինին երեսին՝ ըսելով, որ նոյնիսկ մէկ բառ չըսէ, եւ որ երեխային հետ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Զարմանալի՜ է: Ահա եւ բանալին: Ճիշդ այդ պահուն, այդ հռչակումն էր, որ փրկեց նորածին Հէլլիին կեանքը: Ես ինքզինքս քննիչի պէս կը զգայի, որ մեծ գործ բացայայտած էր: Ես հիացած էի: Ամէն ինչ այնքան պարզ էր, բայց եւ այնքան խորունկ: Ճենիֆըրը պարզապէս հոգեւոր օրէնք կիրառած էր այդ իրավիճակին մէջ, եւ այն փրկած էր իր նորածինին կեանքը: Մտորելով այն մասին, ինչ որ ես քիչ ամառ լսեցի, այդ ամէնն իմաստաւորուեցաւ իմ մտքին մէջ:

Ճենիֆըրը գիտէր, որ իր աշխատանքային ժամանակացոյցի պատճառով, նախորդ ամիսներու ընթացքին իր ամուսինը չէր կառուցած իր հաւատքն այնպէս, ինչպէս ինքը: Ան նոյնպէս գիտէր, որ եթէ իր ամուսինը՝ որպէս ընտանիքի գլուխ, համաձայնէր ծննդաբերութեան պահուն տեղի ունեցած այդ զարհուրելի տեսարանին, երեխան ոչ մէկ պարագային կ'ապրէր: Ահա թէ ինչու ան ամառին հերթին դիմեց իր ամուսինն եւ թոյլ չտուաւ անոր համաձայնիլ իրենց երեխայի մահուան: Փոխարէնը, Ճենիֆըրը համոզուած էր, որ երեխան պիտի ապրի, եւ անոր հետ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ, եւ ան հռչակեց ատիկա համարձակութեամբ ու հաւատքով:

Հազիւ որ Ճենիֆըրը դուրս գրուեցաւ հիւանդանոցէն, ան այցելեց իր տուն եկած շտապ օգնութեան անձնակազմին եւ հարցուց, թէ ինչ ըրած էին երեխային համար այդ գիշեր հիւանդանոցի ճանապարհին: Անոնք նայեցան անոր երկչոտ հայեացքով.

- Ոչի՛նչ, - ի վերջոյ ըսաւ անոնցմէ մէկը:

- Ի՞նչ նկատի ունիք, - հարցուց Ճենիֆըրը: - Դուք կատարա՞ծ էք սիրտ-թոքային վերակենդանացում:

- Ո՛չ, - ըսին անոնք:

- Դուք ինչ որ բան ըրա՞ծ էք երեխային համար:

- Ո՛չ, - կրկին պատասխանեցին անոնք:

Բժիշկներն ըսին Ճենիֆըրին, որ երեխան պարզապէս մահացած է, եւ անոնք յոյս չունէին, որ ան կ'ապրի: Այնուամենայնիւ, հիւանդանոց հասնելէն յետոյ երեխան պարզապէս «արթնցաւ»: Այդ շտապ օգնութեան անձնակազմն արժանացաւ գովեստի քաղաքի հիւանդանոցի եւ հրշէջ ծառայութեան կողմէ: Անոնց շնորհուեցաւ «Տարուան արձագանգը» կոչուող ամենամեայ մրցանակ, որ կը տրուէր բարդ իրավիճակներու արդիւնքներու հիման վրայ: Այնուամենայնիւ, անոնք խոստովանեցան, որ ոչինչ ըրած էին:

Վերջերս մենք հրաւիրեցինք Հէյլին մեր հեռուստատեսային հաղորդումին իր մօր՝ Ճենիֆըրին հետ: Բոլորս, արցունքները մեր աչքերուն, կրկին ցնծացինք Աստուծոյ Թագաւորութեան համար: Մենք ուրախ էինք, որ այդ իրավիճակին մէջ կար ինչ որ մէկը, որ գիտէր, թէ ինչպէս օգտագործել Թագաւորութեան հոգեւոր օրէնքները եւ իշխանութիւնը:

Այս պատմութեան մէջ Ճենիֆըրը բոլորովին համոզուած էր այն բանին մէջ, ինչ որ Երկինքը կ'ըսէ, եւ ան կիրառեց Երկինքի իշխանութիւնն իր իրավիճակին մէջ՝ իր խօսքին միջոցով. Թագաւորութեան օրէնքը կը գործէ՛:

Եւս մէկ ընտանիք իմ եկեղեցիին մէջ ունեցաւ հետեւեալ փորձառութիւնն Աստուծոյ Թագաւորութեան նոյն օրէնքին հետ: Երկու քոյր որոշեցին միասին ճաշել, ինչ որ դիւրին գործ էր,

քանի որ անոնք երկուքով 12 կամ 13 երեխայ ունեին: Մինչ անոնք կը ճաշէին, նկատեցին, որ չորսամեայ ժօէլը չկայ: Փնտռեցին երեխային տունով մէկ, բայց չգտան: Անոնք մտածեցին, որ թերեւս պահուըտած է, բայց կրկին, ամէնուր փնտռելէն յետոյ չգտան երեխային: Յանկարծ Թինան՝ անոր մայրը, սարսափելի բան մը մտաբերեց: Տան ետնամասի լողաւազանը: Ան դուրս վազեց տան ետնամասի դռնէն իր զարմուհիի՝ տասներեքամեայ Քորթնիի հետ: Տեսնելով անշարժ ժօէլին լողաւազանի յատակին՝ Թինան վախէն կորսնցուց ինքզինքը: Ոչ ոք գիտէր, թէ որքան ժամանակ ան մնացած էր ջուրին տակ: Թինան պոռագ՝ խնդրելով ինչ որ մէկուն հեռաձայնել 911, եւ սուզուեցաւ լողաւազանի մէջ՝ ժօէլին դուրս հանելու համար: Երեխան չէր շնչեր. ան մոխրագոյն դարձած էր եւ անշարժ էր:

Այդ տասներեքամեայ աղջիկը, որ մեծցած էր մեր եկեղեցույ մանկական ծառայութեան մէջ, ըսաւ իր մօրաքրոջը.

- Ո՛չ, Թի՛նա մօրաքոյր, պէտք չէ հեռաձայնել 911: Մենք իշխանութիւն ունինք: Մենք պէտք է աղօթենք:

Անոնք սկսան աղօթել, բայց ոչինչ տեղի ունեցաւ: Թինան կրկին պոռաց.

- Հեռաձայնեցէ՛ք 911:

Քորթնին ըսաւ իր մօրաքրոջը.

- Թի՛նա, մօրաքոյր, մենք պէտք է կեանք խօսինք անոր: - Եւ ըսաւ. – ժօէ՛լ, Յիսուսի անունով, արթնցի՛ր:

Յանկարծ ժօէլը սկսաւ ծանր շնչել, ջուր թքեց եւ կրկին գիտակցութեան եկաւ՝ բոլորովին կազդուրուելով:

Մտածելով այդ պատմութեան մասին՝ ես միշտ կը զարմանամ, բայց ոչ թէ այն պատճառով, որ այդ տղան անվնաս էր, այլ այդ տասներեքամեայ աղջկայ եւ այդ պահուն անոր ինքնատիրապետման պատճառով: Կեանքի ու մահուան հետ կապուած խիստ ճնշող իրավիճակին մէջ ան կրցաւ գնահատել, թէ ինչ պէտք է ընել՝ առանց տեղի տալու վախին: Քորթնին ցոյց տուաւ, որ գիտելիքն այն մասին, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը, հաճելի քարոզէն աւելին է. այն կեանքի ու մահուան հարց է:



Կրկին, ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութեան օրէնքը: Սկիզբը Քորթինը ըսաւ, որ իրենք պէտք է աղօթեն, եւ անոնք այդպէս ալ վարուեցան, բայց ոչինչ տեղի ունեցաւ: Պատճառն այն էր, որ աղօթելու ժամանակ մենք չենք կիրառեր Աստուծոյ իշխանութիւնը եւ զօրութիւնը: Մենք կ'աղօթենք՝ առաջնորդութիւն ստանալու համար: Այդ պահուն անոնց ճիշդ ատիկա պէտք էր: Դուք կրնաք տեսնել այս պատմութեան մէջ, որ աղօթքէն յետոյ Քորթինը ըսաւ, որ իրենք պէտք է կեանք խօսէին ժօշկին: Երբ անոնք ըրին ատիկա, երեխան արթնցաւ բոլորովին առողջ վիճակի մէջ եւ այդպիսին է մինչեւ օրս: Կրկին, մենք կը տեսնենք այնպիսի սիրտ, որը բոլորովին համոզուած է այն բանին մէջ, ինչ որ Երկինքը կ'ըսէ, սակայն ոչինչ տեղի կ'ունենայ, քանի դեռ Թագաւորութեան իշխանութիւնը չ'արձակուիր այս երկրային տիրոյթին մէջ հաւատք ունեցող տղամարդու կամ կնոջ կողմէն:

Թոյլ տուէք պատմել եւս մէկ պատմութիւն, որ մեր մտերիմ ազգականներուն մասին է: Տրենտային եղբայրը հիւանդանոց տարած էր իր կնոջը՝ Քենտիին, իրենց հինգերորդ երեխային ծննդաբերելու համար: Տրենտան եւ ես հասանք հիւանդանոց առաւօտեան, որպէսզի տեսնէինք ընտանիքի նոր անդամին: Մենք կը մտածէինք, որ ան արդէն իսկ ծննդաբերած է՝ մեր գալէն շատ առաջ: Սակայն գիտցանք, որ ծննդաբերութիւնը քանի մը անգամ ձգձգուած է, եւ երեխան հազիւ նոր ծնած է: Երբ ծննդատուն մտանք, փոքրիկ Հոլանտը կը բերէին նորածիններու սենեակ: Դուք կ'երեւի տեսած կ'ըլլայիք, որ հիւանդանոցներու ծննդատուներուն մէջ նորածիններու սենեակը սովորաբար շրջապատուած է պատուհաններով, ինչ որ թոյլ կու տայ տեսնել նորածիններուն, երբ անոնց կը բերեն:

Երբ անոնք ներս կը տանէին փոքրիկ Հոլանտին, ես նկատեցի, որ աղջիկը գրեթէ սպիտակ է: Ճոնիին բոլոր երեխաներն ալ գրեթէ սպիտակ էին, խարտեաշ մազերով, եւ սկիզբը մտածեցի, որ նորածինի գունատութիւնը, կ'երեւի, անոր երեխաներուն բնորոշ տեսքն էր: Բայց ան առողջ տեսք չունէր: Յանկարծ բոլոր բժիշկներուն քով իրարանցում սկսաւ: Բուժքոյրերն անմիջապէս

իջեցուցին վարագոյրները, որպէսզի եւ չտեսնէի նորածիններու սենեակը, եւ ես գիտէի, որ ասիկա լաւ նշան չէր: Թէեւ վարագոյրերն իջեցուցած էին, կար բացուածք մը, որմէ եւ կը տեսնէի ամէն ինչ: Բուժքոյրերը բացին սարքաւորումները, եւ բժիշկ մը սկսաւ սիրտ-թոքային վերակենդանացում ընել փոքրիկ Հոլանտին վրայ: Ես գացի միւս դրան քով, ուրկէ յստակ կը լսէի բժիշկներու խօսակցութիւնը: Ես ցնցուեցայ. անոնք կ'ըսէին, որ երեխային սիրտը չի բաբախեր, եւ որ անոնք չեն կրնար վերականգնել անոր սրտի աշխատանքը: Ես շարունակեցի լսել եւ հասկցայ, որ սրտի աշխատանքը վերականգնող սարքը չափէն յաճախ կ'աշխատէր: Ես կը լսէի նոր զարկ ամէն 15-20 երկվայրկեանը մէկ, բայց Հոլանտի սիրտը չէ՛ր բաբախեր:

Բժիշկը դուրս ելաւ սենեակէն եւ մօտեցաւ ճոնիին.

- Վիճակը լաւ չէ, ճոնի. կը ցաւիմ, բայց մենք տակաւին կը փորձենք:

Մեզի թոյլ չտուին մտնել նորածիններու սենեակ. այնպէս որ, Տրենտան եւ ճոնին դրին իրենց ձեռքերը սենեակին մէկ կողմը գտնուող դրան վրայ, իսկ ես դրի ձեռքս սենեակին միւս կողմը գտնուող դրան վրայ: Մենք սկսանք աղօթել եւ հռչակել, որ Հոլանտը կ'ապրի եւ չի մահանար, եւ որ անոր հետ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Մենք հրամայեցինք անոր սրտին բաբախիլ՝ Յիսուսի անունով:

**ՅԻՇԵՑԷՔ՝  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ՕՐԷՆՔՆԵՐԸ ԿԸ  
ԳՈՐԾԵՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՐ  
ՊԱՐԱԳԱՅԻ ԵՒ  
ԻՒՐԱՔԱՆՉԻՐԻ ՀԱՍԱՐ:**

Յանկարծ ճոնիին հետ խօսող բժիշկը շատ հապճէպ դուրս ելաւ նորածիններու սենեակէն: Ան արագ անցաւ մեր քովէն՝ առանց մէկ բառ ըսելու: Քանի մը վայրկեանէն շտապելով վերադարձաւ, եւ բուժքոյր մը կու գար անոր ետեւէն՝ բարձրաձայն աղաղակելով.

- Բժի՛շկ, մենք չե՛նք կրնար ընել ասիկա: Մենք չունինք այդ ընթացակարգն ընելու լիազօրութիւն այս հիւանդանոցին մէջ: Ես չե՛մ կրնար առիթ տալ ձեզի առնել այդ արիւնը:

Ան ուշադրութիւն չդարձուց անոր եւ վերադարձաւ նորածիններու սենեակ: Ուղեցոյց մը վերցուց, եւ ես կը տեսնէի, որ ան ուշադրութեամբ կ'ուսումնասիրէր այն՝ հասկնալու համար, թէ ինչպէս ինչ որ ընթացակարգ մը կատարել: Ես կը հետեւէի վարագոյրի բացուածքէն, թէ ինչպէս ան սկսաւ երկար խողովակ մը մտցնել նորածինին մէջ: Ես հասկցայ, որ ան արիւն կու տար երեխային:

Յանկարծ լսեցի սրտի զարկերու ձայնը: Այն սկսաւ արագանալ, եւ հասաւ նորածինի սովորական արագ զարկերու թեմփին: Մէկ վայրկեան ետք բժիշկը դուրս ելաւ եւ ըսաւ.

- Հոն հրեշտակներ կային. Աստուած օգնեց ինձի փրկելու այս երեխային:

Կ'երեւէր, որ ան ցնցուած էր: Հետագային գիտցանք, որ այդ բժիշկը հերթապահութեան պիտի չըլլար այդ օրը, եւ ան չէր ընդունած Քենտիի ծնունդը: Ան պարզապէս հիւանդանոց եկած էր՝ ստուգելու մէկ այլ հիւանդ մը, երբ այդ ամէնը տեղի ունեցած էր: Ես կը տեսնէի, որ այդ բժիշկը տակաւին զարմացած էր կատարուածով. ան ըսաւ, որ Հոլանտին սիրտը 36 վայրկեան (րոպէ) չէ բաբախած:

Այսօր Հոլանտը չորսամեայ գեղեցիկ, առողջ երեխայ է: Ես կը հաւատամ, որ մեր գիտելիքն Աստուծոյ Թագաւորութեան մասին պատասխաններ բերաւ այդ իրավիճակին մէջ: Ես տակաւին կը յիշեմ, որ դնելով ձեռքս այդ նորածիններու սենեակի դրան վրայ՝ կ'ըսէի մտքէս. «Մենք թաղում չե՛նք ըներ Տրենտայի փոքրիկ զարմուհիին համար: Մենք պիտի չտեսնենք այդ բանը»:

Պահ մը մտածենք այն մասին, թէ ինչպէս Թագաւորութիւնն ազդեց իւրաքանչիւր իրավիճակի վրայ, որուն մասին ես պատմեցի: Կ'ուզեմ, որ յիշէք, որ Թագաւորութեան օրէնքները կը գործեն իւրաքանչիւր պարագայի եւ իւրաքանչիւր մարդու համար: Ինչպէս ըսի այս գիրքի սկիզբը, այս երկրային տիրոջ թնական օրէնքները կը գործեն՝ տալով միեւնոյն արդիւնքներն ամէն անգամ: Ատոնք անկողմնակալ են եւ կը գործեն իւրաքանչիւրին համար, որ ժամանակ կը յատկացնէ, որպէսզի ուսումնասիրէ եւ կիրառէ ատոնք: Ելեկտրականութիւնը կը գործէ ԱՄՆ-ի մէջ նոյն կերպով, ինչպէս Ափրիկէի մէջ. տարբերութիւն չկայ:

Երբ սկսայ գիտակցիլ, որ Աստուծոյ Թագաւորութեան մէջ կը գործեն շատ յստակ, թէկուզ եւ պահուած կանոններ, հասկցայ, որ գտած եմ իմ խնդիրներու լուծումը: Ես գիտակցեցայ, որ Աստուած երբեք չէր զրկած ինծի եւ երբեք չէր որոշած չօրհնել կամ չօգնել կարիքի ժամանակ: Ո՛չ, ես հասկցայ, որ Աստուած տուած է ինծի այն, ինչին կարիքը որ ես հետագային կ'ունենամ կեանքիս մէջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, Որ Իր գոհի շնորհիւ հասանելի դարձուցած է ինծի այն, ինչ որ Երկինքն ունի: Այժմ հասկցայ, որ Թագաւորութիւնը կը գործէ սահմանուած օրէնքներով, որոնք կրնամ սորվիլ եւ կիրառել իմ կեանքին մէջ:

Ես սկսայ կարդալ իւրաքանչիւր պատմութիւն Աստուածաշունչին մէջ այլ վերաբերմունքով՝ փնտռելով բանալիներ, որոնք կը յայտնեն Թագաւորութեան նորանոր օրէնքներ: Ես յանձն առի հոգեւոր գիտնական դառնալ, որպէսզի հասկնամ, թէ ինչ կը սորվեցնեն այն Աստուածաշնչեան պատմութիւնները, որոնք ես այդքան յաճախ կը կարդայի: Յովհաննէսի առաջին թուղթին մէջ գրուած այս խօսքը տարօրինակ եւ անհասկնալի է շատերուն համար: Ես գիտեմ, մենք արդէն կարդացած ենք այս խօսքը, բայց կրկին կարդանք, քանի որ այն կը ներկայացնէ ճշմարտութիւն մը, որ ձեր պատասխանն է:

*«Եւ ասիկա է այն համարձակութիւնը, որ ունինք Անոր հանդէպ, թէ ինչ որ Անոր կամքին պէս կը խնդրենք, կը լսէ մեզի: Եւ եթէ գիտենք, թէ կը լսէ մեզի (կ'ընդունի մեր հայցը), ինչ որ կը խնդրենք, ԳԻՏԵՆՔ, որ կ'առնենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Անորմէ»:*

– Ա. Յովհաննէս 5.14,15

Ես կը սիրեմ այս խօսքը, քանի որ այն կը վերաբերի օրէնքին, իսկ օրէնքը վստահութիւն կը հաղորդէ մեզի, որ մենք արդարադատութիւն կը ստանանք: Ասիկա է մեր համարձակութիւնը. եթէ կը խնդրենք ինչ որ բան մը ըստ Աստուծոյ կամքին (օրէնքին՝ այն բանին, ինչ որ Աստուած ճիշդ կը համարէ), Ան կը լսէ մեզի: Կրկին, «կը լսէ մեզի» արտայայտութիւնը չի նշանակեր, որ Աստուած պարզապէս

Կը լսէ մեր ծայնը կամ բառերը, այլ՝ որ Ան կ'ընդունի մեր հայցը: Պատկերացուցէք դատաւոր մը, որ կ'ընդունի որեւէ հայց եւ կը քննէ այն ըստ օրէնքի, ոչ թէ ըստ իր զգացումներուն (համեմայն դէպս, պէտք է այդպէս ըլլայ), եւ կը հասկնաք այս խօսքը: Ան կը լսէ մեզի. ան կ'ընդունի մեր հայցը կամ կը լսէ այն, եւ մենք կրնանք վստահ ըլլալ, որ արդարադատութիւն կը ստանանք, այսինքն՝ կ'ունենանք այն, ինչ որ ըստ օրէնքի կը պատկանի մեզի:

Իմ ընկե՛ր, ես իսկապէս կը կարծեմ, որ դուք պէտք է կենաք եւ կրկին կարդաք ասիկա ատելի դանդաղ: Եթէ այն, ինչ որ դուք կարդացիք, ճիշդ է (իսկ ատիկա ճիշդ է), ձեր կեանքը կը լեցուի մեծ ուրախութեամբ: Այն մարդիկ, որոնք կ'աղօթեն առանց այս գիտելիքին, չունին վստահութիւն. Անոնք պարզապէս կը մրթմրթան աղօթքի ժամանակ: Յիսուսն ըսաւ Մատթէոս 6.7-13-ին մէջ.

*«Եւ երբ կ'աղօթէք, մի՛ մրթմրթաք հեթանոսներու նման, որովհետեւ անոնք կը մտածեն, որ կը լսուին իրենց շատ խօսքերուն պատճառով»:*

– Մատթէոս 6.7, NIV

«Մրթմրթալ» բառը կը նշանակէ արտաբերել անիմաստ խառնաշփոթ բառեր եւ ինչիւններ: Ահա թէ ինչպէս կ'աղօթէ մարդոց մեծ մասը: Անոնք չունին պատկերացում այն մասին, որ իրենք ունին արդարադատութիւն ստանալու իրաւունք, եւ ո՛չ ալ կը պատկերացնեն, որ Աստուած արդէն իրաւաբանօրէն տուած է իրենց ամէն ինչ Իր Թագաւորութեան մէջ: Կարիք չկայ, որ դուք աղաչէք կամ լաք այն բանին համար, ինչ որ արդէն ձերն է:

Պատկերացուցէք ճանապարհին կեցած ուստիկան մը, որ բեռնատար մը կը կանգնեցնէ, եւ ան կը սկսի լալ ու աղաչել բեռնատարին կենալու. «Կը խնդրե՛մ, բեռնատա՛ր, կեցի՛ր: Ողորմէ՛ ինձի: Կը խնդրե՛մ, շա՛տ կը խնդրեմ, կեցի՛ր»: Ատիկա պիտի ըլլայ ամենախղճալի եւ խայտառակ վիրաւորանքը Միացեալ Նահանգներուն եւ ատոր իրաւական համակարգին: Ո՛չ, ուստիկանը կը կենայ բարձր գլուխով եւ պարզօրէն կը հրամայէ բեռնատարին, որ կենայ, եւ ան կը կանգնի՝ համաձայն այդ

երկրի օրէնքին եւ անոր սպայական պաշտօնին, որ կը ներկայացնէ իր երկրի կառավարութիւնը:

Այն մարդիկ, որոնք կ'աղաչեն Աստուծոյ, չունին պատկերացում իրենց երկրի օրէնքին եւ իրենց դիրքին մասին: Եթէ ոստիկանը կ'աղաչէ բեռնատարին կենալու, ատիկա վիրաւորանք է իր երկրին համար, քանի որ ատիկա կը նշանակէ, որ այդ երկրին մէջ չկայ օրէնք եւ իշխանութիւն: Նման երկրի մը մէջ կրնայ միայն անիշխանութիւն ըլլալ: Երբ քրիստոնէականները մշտապէս կ'աղաչեն, ատիկա կը պատկերացնէ Աստուծոյ Թագաւորութիւնը որպէս թոյլ տիրոյթ, որ չունի պատասխաններ: Մարդիկ կը սկսին կասկածիլ, թէ արդե՞օք Աստուած կը ցանկայ եւ կրնայ օգնել իրենց, այնինչ անոնք արդէն իսկ իրաւունք ունին ստանալու այն, ինչ որ կը խնդրեն: Յիսուսը յստակ պատասխան կու տայ այդ անգոր եւ թախանձող աղօթքներուն. «ՀԵՐԻ՛Ք Է»:

*«Եւ աղօթք ընելու ժամանակ շատախօս մի՛ ըլլաք ինչպէս հեթանոսները, որովհետեւ անոնք կը կարծեն, թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին: Արդ՝ անոնց մի՛ նմանիք, որովհետեւ ձեր Հայրը գիտէ, թէ ինչ բաներ պէտք են ձեզի, Անորմէ խնդրելէն առաջ: Արդ՝ դուք այսպէս աղօթք ըրէք.*

*Մեր Հայր, որ Երկինքն ես, սուրբ ըլլայ Քու անունը: Չայ Քու արքայութիւնը, ըլլայ Քու կամքը, ինչպէս Երկինքը, այնպէս ալ երկրի վրայ: Մեր ամէն օրուան հացը տուր մեզի այսօր: Եւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն: Եւ մի՛ տանիր մեզ փորձութեան մէջ, այլ ազատէ՛ մեզ չարէն»:*

– Մատթէոս 6.7-13

Յիշեցէք՝ այս հատուածին մէջ Յիսուսը կը սորվեցնէ մեզի աղօթել: Դժբախտաբար, շատերը դրած են այս խօսքերը գեղեցիկ շրջանակներով իրենց տուներու մէջ, սակայն չեն հասկնար ատոնց իմաստը: Այս հատուածը կը կոչուի «Տէրունական աղօթք», բայց հոս

Յիսուսը կը սորվեցնէր Իր աշակերտներուն աղօթել: Ան բառացիօրէն չէր աղօթեր անոնց հետ այս խօսքերը, ինչպէս որ մենք կ'ընենք մեր եկեղեցական ծառայութիւններուն: Այս հատուածն ուղեցոյց է այն մասին, թէ ինչպէս աղօթել եւ արդիւնք ստանալ. այն պարզապէս գոց սորվելու համար չէ:

*«Գայ Քու արքայութիւնը, ըլլայ Քու կամքը, ինչպէս Երկինքը, այնպէս ալ երկրի վրայ».* այս խօսքը հրահանգ է այն մասին, թէ ինչպէս աղօթել: Մենք պէտք է աղօթենք՝ բերելով Աստուծոյ կամքը, որ Երկինքն է, այս երկրային տիրոջին եւ մեր իրավիճակներուն մէջ: Այսպիսով, ո՞րն է ձեր պատասխանը: Հաւատացէ՛ք, որ այն, ինչ որ Աստուած կ'ընէ, ձերն է, եւ օգտագործեցէ՛ք Երկինքի Թագաւորութեան մէջ ունեցած ձեր իշխանութիւնը, որպէսզի Երկինքն իջեցնէք երկիր եւ հոգաք թէ՛ ձեր, եւ թէ՛ ձեզ շրջապատող մարդոց կարիքները:

Այնպէս որ, պահ մը կեցէք ու մտածեցէք այս մասին: Եթէ դուք գիտնայիք՝ առանց կասկածի նշոյլի, որ ձեր աղօթքը կը գործէ, եւ որ ամբողջ Երկինքը կը սատարէ այն, արդեօ՞ք աստիկա վստահութիւն պիտի հաղորդէր ձեզի աղօթելու ժամանակ: ԱՅՈ՛՛: Գիտնալով ձեր յստակ օրինական իրաւունքները՝ որպէս երկնային քաղաքացի, գիտնալով, թէ ինչ արդէն ձրիաբար տրուած է ձեզի, հասկնալով այդ ամէնը ստանալու գործընթացը եւ վայելելով այդ օրէնքներու առաւելութիւնները, դուք կրնաք ապրիլ բոլորովին նոր կեանքով՝ Թագաւորութեան կեանքով: Ի՞նչ տեղի պիտի ունենար վախի հետ: Ի՞նչ տեղի պիտի ունենար անորոշութեան հետ: Ի՞նչ ձեւով այդ գիտելիքը վստահութիւն կը հաղորդէր ձեր ապագայի հանդէպ. ի՞նչ ձեւով այն վստահութիւն կը հաղորդէր ձեզի որեւէ փոթորիկի ժամանակ: Ահա թէ ինչպէս Թագաւորութիւնն ազդեց Տրենտային եւ իմ վրայ, երբ մենք սկսանք բացայայտել այն: Մենք մշտապէս կը զարմանայինք մեր տեսածով: Ո՛չ, թոյլ տուէք ուրիշ ձեւով ըսել. մենք մշտապէս կը զարմանայինք եւ կ'ապշտինք: Աւելին՝ մենք կը զարմանայինք՝ գիտակցելով, թէ ինչպիսի իշխանութիւն Աստուած տուած է եկեղեցիին, որպէսզի եկեղեցին՝ որպէս երկնային կառավարման ներկայացուցիչ, կիրառէ այն այս երկրի վրայ:

*«Որովհետև կեանքի Հոգիի ՕՐԷՆՔԸ Յիսուս Քրիստոսին մէջ ազատեց ինձի մեղքի եւ մահի ՕՐԷՆՔԷՆ»:*

– Հռովմայեցիս 8.2

Անբերակայելի էր իմանալը, որ մենք ազատած ենք «մեղքի եւ մահի օրէնքէն», եւ որ մենք ստացած ենք Թագաւորութիւնը եւ կրնանք ապրիլ «կեանքի հոգիի օրէնքի» տակ: Կրկին, շատ ատելի անբերակայելի էր տեսնելը, թէ ինչպէս այդ օրէնքը կը բերէր Աստուծոյ Թագաւորութեան արդարութեան պտուղները մեր կեանքին մէջ:

Թագաւորութեան շնորհիւ ես վերապրեցայ բժշկութիւն իմ մարմինին մէջ, ինչպէս եւ զգացմունքային բժշկութիւն՝ ստանալով նոր յոյս եւ ազատելով հակաընկճախտային դեղամիջոցներէն: Թագաւորութեան շնորհիւ ես ազատեցայ աղքատութենէն, երբ հազիւ ամսական 300 տոլար կը վճարէի 1800-ական թուականներէն կառուցուած գիւղական տունի մը համար, եւ կառուցեցի 710 քառակուսի մեթր տարածքով սեփական տուն 24 հեքթար գեղեցիկ հողատարածքի վրայ: Իմ կնոջն ասիկա շատ ատելի հաճելի է: Անգնահատելի է որակեալ ինքնաշարժներ վարելը, որոնք ամէն օր չեն փճանար: Այն, որ ես կրնայի տարեկան հարիւր հազարաւոր տոլարներ տրամադրել Աւետարանի համար, անհնարին միտք կը թուէր ընդամէնը քանի մը կարճ տարիներ առաջ: Կեանքը՝ Թագաւորութեան ազդեցութեան լոյսը, կը կլանէր խաւարը: Եւ ինչպէս որ Ծննդոց գիրքին մէջ Աստուած ըսաւ. «Բարի է»՝ նայելով Իր աւարտած արարչագործութեան, ես նոյնպէս զարմանքով կը նայէի այդ ամէնուն եւ կ'ըսէի. «Այս ամէնը բարի է, շատ բարի է»:

Տրեւտան եւ ես այնքան՝ ոգեշնչուած էինք, որ Աստուծոյ Թագաւորութեան եւ մեր կեանքի վկայութեան մասին կը պատմէինք անոնց, որոնք կը ցանկային լսել մեզի: Մարդիկ մեր եկեղեցիին մէջ կ'որսային աստիկա եւ կը ստանային նոյն արդիւնքները, եւ անոնցմէ մէկը մեր տասներկու տարեկան դուստրն էր: Ան տեսած էր շատ բաներ, որոնք Աստուած ըրած էր, եւ կրկին ու կրկին ակնատես եղած էր Թագաւորութեան հաստատուն օրէնքներու արդիւնքին մեր կեանքին մէջ: Ես գիտէի, որ ան կը հետեւէր մեզի եւ կը սորվէր այդ



օրէնքները, բայց պատմութիւն մը ցոյց տուաւ ինծի, թէ որքան բան ան իրականութեան մէջ սորված էր:

Անգամ մը ես գացի անոր ննջասենեակ՝ բարի գիշեր մաղթելու, եւ հոն ինչ որ բան փոխուած էր: Անոր պատին վրայ պոմերանեան շունի (երկար մազերով պզտիկ շնիկի) լուսանկար փակցուած էր: Իւրաքանչիւր փորձառու ծնողի համար նման լուսանկարն անսխալական նշան է, որ շուտով իրմէ շուն պիտի խնդրեն: Ես որոշեցի թոյլ չտալ աստիկա, քանի որ չէի ցանկար եւս մէկ տնային շուն ունենալ: Քիրսթընի քոյր Փոլին արդէն ունէր տնային շուն, եւ անոնք կը քնանային նոյն ննջասենեակին մէջ. այնպէս որ, Փոլիին շունը մշտապէս Փոլիին եւ Քիրսթընին հետ էր:

Ես մեղմօրէն ըսի Քիրսթընին, որ ինծի շատ հաճելի էր այդ լուսանկարը, բայց չէի ցանկար եւս մէկ տնային շուն ունենալ: Եթէ ան կը ցանկար շուն ունենալ, պէտք է ատելի շատ ժամանակ տրամադրէր իր քրոջ գորշուկաշանը: Քիրսթընը ոչինչ ըսաւ ինծի այդ գիշեր, այլ պարզապէս ընդունեց իմ ըսածը: Ես մտածեցի, որ ամէն ինչ աւարտած է, բայց ատորմէ յետոյ ան քանի մը անգամ յիշատակեց պոմերանեան շունի մասին. «Մի՞թէ հրաշալի պիտի ըլլար պոմերանեան շուն ունենալը», կամ «Անոնք այնքան հաճելի եւ փափկամազիկ շնիկներ են»: Անշուշտ, նման բան մը ըսելէն յետոյ Քիրսթընն արագօրէն ցոյց կու տար պոմերանեան շունի լուսանկար մը, որ ան գտած էր համացանցի մէջ: Կրկին, ես պարզապէս կ'ըսէի՝ ո՛չ: Ես էի մեր տան դեկավարը, եւ մենք չէինք ունենար եւս մէկ շուն մեր տանը:

Կրկին, ես մտածեցի, որ ամէն ինչ աւարտած է, մինչեւ որ գրեթէ մէկ ամիս յետոյ, երբ մենք տուն վերադարձանք եկեղեցիէն, Քիրսթընն ինքնավստահ մօտեցաւ ինծի եւ ժպիտը դէմքին ըսաւ.

- Հայրի՛կ, այսօր ես հաւատքով ստացայ պոմերանեան շուն, ինչպէս որ դուն կը սորվեցնես:

Ես կրկին յիշեցուցի անոր, թէ ինչ ըսած էի նախկինին եւս ուրիշ շուն ունենալու մասին: Շարունակելով ժպտալ՝ ան պնդեց.

- Բայց, հայրի՛կ, մայրիկը կ'ըսէ, որ Աստուած կրնայ փոխել թագաւորին սիրտը:

Անոր խօսքերը լեցուած չէին ապստամբութեամբ: Ան պարզապէս համաձայնած էր իր մօր հետ եւ աղօթած էր, որ Աստուած փոխէր իմ սիրտը: Ես այլեւս ոչինչ կրնայի ընել: Ես հասկցայ, որ ան խօսած էր իր մօր հետ, եւ մայրը խրախուսած էր անոր, որ Աստուած իսկապէս կրնար փոխել իմ սիրտը:

Այդ խրախուսանքին հիման վրայ, այդ առաւօտ ան կիրառած էր իր հաւատքը եկեղեցիին մէջ՝ ցանելով եւ դաւանելով, որ ինքը հաւատքով ստացած է այդ շունը: Հաւաստիացնելով անոր իմ սիրոյ մէջ, ես կրկին յայտնեցի իմ դիրքորոշումը.

- Մենք չենք ունենար եւս շուն մը մեր տանը:

Ես ըսի, որ կը ցաւիմ, բայց ատիկա տեղի պիտի չունենայ: Կը թուէր՝ իմ խօսքերը չմտահոգեցին անոր, եւ ան ժպտալով հեռացաւ: Կրկին, ես մտածեցի, որ վերջապէս ամէն ինչ աւարտած է:

Բայց մօտաւորապէս մէկ ամիս յետոյ ինծի հրաւիրեցին սորվեցնելու Միսսիսիփի գտնուող փոքր եկեղեցւոյ մը մէջ: Ատիկա շատ պզտիկ գիւղական եկեղեցի էր՝ շրջապատուած քիլոմէթրերով երկարող բաց դաշտերով: Առաջին երեկոյի աւարտին հովիւը մօտեցաւ ինծի՝ ըսելով, որ Տէրը խօսած է իրեն հետ ծառայութեան ընթացքին: Ան ըսաւ.

- Չեմ գիտեր՝ դուք տեղեա՞կ էք, թէ՞ ոչ, բայց ես նաեւ կը զբաղիմ պոմերանեան շուներ բուծելով, եւ Տէրը պատուիրեց ինծի նուիրել ձեզի իմ քոթօններէն մէկը, որոնք արդէն վեցշաբաթական են եւ պատրաստ են նոր տուն ունենալ:

Իմ բերանը զարմանքէն բացուեցաւ: Ես տակաւին վճռականօրէն տրամադրուած էի, որ պիտի չառնէի եւս մէկ շուն. այնպէս որ, ըսի.

- Ես տեղեակ կը պահեմ ձեզի:

Ես չէի գիտեր, որ այդ մարդը շուներ կը բուծէր, եւ անշուշտ, նախկինին ես ոչինչ ըսած էի անոր այն մասին, որ Քիրսթընը կը ցանկայ այդ ցեղատեսակի քոթօն ունենալ:

Ի վերջոյ, չդիմացայ եւ պատմեցի Տրենտային տեղի ունեցածը, եւ որ չէի ցանկար տուն տանիլ այդ շունը: Ան նայեցաւ ինծի եւ ըսաւ.

- Դուն պիտի մերժե՞ս քու աղջկան հաւատքը:

Տրենտան նոյնպէս չէր ցանկար, որ տունը երկրորդ շուն ըլլար, բայց ան կը սիրէր Քիրսթընին աւելի շատ, քան որեւէ անյարմարաւէտութիւն, որ պիտի պատճառէր մեզի եւս մէկ շունը: Եւ հիմա, երբ Քիրսթընի հաւատքի արդիւնքով Աստուած բերած էր այդ շնիկը, ինչպէ՞ս մենք կրնայինք մերժել անոր: Ի վերջոյ, ես ըսի այդ հովիւին, որ պիտի առնեմ այդ քոթօթը:

Մենք չէինք ըսած այդ մասին Քիրսթընին, բայց ըսած էինք անոր քրոջը, որ անպայման օդակայան բերէր այն, երբ զար մեզի տուն տանելու: Քիրսթընը եկաւ օդակայան, եւ մենք մօտեցանք անոր՝ փոխանցելով փոքրիկ ճանապարհորդական պայուսակը, որ գնած էինք այդ շնիկին համար: Երբ Քիրսթընը տեսաւ փոքրիկ պոմերանեան շունին, չկրցաւ զսպել արցունքները: Ամէն ինչ կանգ առաւ: Մեզ շրջապատող մարդիկ կեցան, որպէսզի դիտեն այդ տեսարանը: Կարճ ժամանակ յետոյ մեր շուրջը զոյացած էր մարդոց բազմութիւն, որոնք կը նայէին լացող Քիրսթընին, որ գրկած էր այդ շնիկը: Տրենտան կը պատմէր բոլորին, թէ ինչպէս մեզի տուած էին այդ քոթօթը, եւ որ Քիրսթընը կը հաւատար Աստուծոյ աստոր համար:

Այդ պահուն եւ հասկցայ, որ կարելի է արթնութիւն սկսիլ օդակայանի մէջ՝ պարզապէս ձեր ձեռքը քոթօթ պահելով: Բոլորը կը ցանկային տեսնել այդ քոթօթին, եւ մարդիկ օդակայանի մէջ կու լային Քիրսթընին հետ, նոյնիսկ Փոխադրամիջոցային անվտանգութեան կառավարման աշխատակիցները: Այդ ժամանակ ինծի թուեցաւ, թէ ես սարսափելի հայր էի: Տեսնելով այն ուրախութիւնը, որ այդ քոթօթը պարգեւեց իմ աղջկան, եւ թէ ինչպէս Աստուած բերաւ այդ շնիկը՝ իմ աղջկան հաւատքին արդիւնքով, ես կը մտածէի, թէ ինչու կ'ընդդիմանայի բանի մը, ինչ այդքան թանկ էր անոր համար: Շեքսպիրը, ինչպէս որ Քիրսթընն անուանեց անոր, պարզապէս սքանչելի էր: Ան իսկապէս դարձաւ մեր ընտանիքի մասնիկը: Թէեւ ան անկախ բնաւորութիւն ունէր, ան կը հետեւէր Քիրսթընին ամէնուր ցերեկ ու գիշեր:

Թէեւ ասիկա յուզիչ պատմութիւն է, ես պէտք է հարցնեմ,

որուն անհրաժեշտ է պատասխանել, եւ որ իսկապէս այս գիրքի նպատակն է: Ինչպէ՞ս յայտնուեցաւ այդ շնիկը: Ինծի երբեք չուն չէին ամառարկած: Եւ ինչպէ՞ս յաջողեցաւ, որ այդ շնիկը ճիշդ այն ցեղատեսակն էր, որուն համար իմ դուստրը հաւատացած էր: Արդեօ՞ք ատիկա երջանիկ պատահականութիւն էր: Ակնյայտ է, որ ո՛չ: Ատիկա Աստուծոյ Թագաւորութեան եւ այն կառավարող օրէնքներու անմիջական արդիւնքն էր իմ ընտանիքին մէջ: Թագաւորութիւնն արդիւնք տուաւ, եւ այն պիտի ընէ ատիկա ամէն անգամ իւրաքանչիւրի համար, որ հաւատք ունի եւ կ'արձակէ Թագաւորութեան իշխանութիւնն այս երկրի վրայ: Մենք կրնանք ընդունիլ, որ այդ շնիկն Աստուծոյ Թագաւորութեան արդիւնքն էր: Բայց ինչպէ՞ս ատիկա տեղի ունեցաւ: Ինչպիսի՞ օրէնքներ գործեցին, որպէսզի ատիկա կատարուէր: Յոյսով եմ՝ այս գիրքը ընթերցելու ժամանակ մենք պիտի ստանանք պարզ պատասխաններ, որոնք պիտի օգնեն ձեզի հասկնալու, թէ ինչպէս վայելէք Աստուծոյ Թագաւորութիւնը: Չէ՞ որ դուք այդ Թագաւորութեան քաղաքացիներ էք, եւ ձեզի կը պատկանին ատոր օրինական իրաւունքներն ու արտօնութիւնները: Բայց, նախ, թոյլ տուէք եւս օրինակ մը բերել Թագաւորութեան մասին մեր ընտանեկան կեանքէն:



## ԳԼՈՒԽ 4

# ՀՍԿԱՅ ՁՈՒԿԸ

Որքան Տրենտան եւ ես ասելի կը սորվէինք Աստուծոյ Թագաւորութեան մասին եւ այն իշխանութեան մասին, որ ունինք այս երկրին մէջ, այնքան ասելի ու ասելի կը հասկնայինք այն փաստը, որ իրականութեան մէջ մենք կ'որոշենք, թէ ինչպիսին է մեր կեանքը: Աստուծոյ Թագաւորութիւնն ազդեց մեր կեանքի իւրաքանչիւր բնագաւառին վրայ, բայց մենք անձնապէս պէտք է արձակէինք այն մատակարարումը, որուն կարիքն ունէինք, կամ՝ որ մենք կը ցանկայինք: Ատիկա ինքնիրեն տեղի չունեցաւ: Մեր աղջկան շնիկին պէս, չկար այնպիսի բան, ինչ որ չափազանց պզտիկ կամ անկարելի ըլլար Աստուծոյ Թագաւորութեան իշխանութեան տակ բերելու համար: Երբ մենք հասկցանք ատիկա, այլեւս չկար բան մը, որ անկարելի ըլլար մեզի համար: Գրեթէ իմ ամբողջ կեանքին մէջ ես այդպէս ալ չէի հասկցած, որ Աստուած տուած է մեզի Թագաւորութիւնը՝ ԱՄԲՈՂՋ Թագաւորութիւնը՝ վայելելու համար: Այնպէս որ, զարմանալի էր տեսնելը, թէ ինչպէս Թագաւորութիւնն ազդեցութիւն կը ձգէր մեր կեանքի ամէն բնագաւառին մէջ, նոյնիսկ փոքրիկ եւ ոչ էական բնագաւառներուն մէջ: Ատոր օրինակը կարելի է տեսնել հետեւեալ պատմութեան մէջ, որ ես կ'անուանեմ պատմութիւնն հսկայ ծուկին մասին:

Այն տեղի ունեցաւ, երբ մեր ընտանիքն արձակուրդի էր Ալաքա: Նոյնիսկ այն, որ մենք հոն էինք, արդէն իսկ երազանք էր ինձի համար: Մենք թռանք Անքորեճ, երեք շաբաթով տուն վարձեցինք անիւներու

վրայ եւ շրջեցանք արեւմտեան ափի մեծ մասով: Ամէն ինչ այնքա՛ն գեղեցիկ էր: Անգամ մը, երբ ինքնաշարժով կը շրջէինք Քենայ թերակղզին, նկատեցինք մեծ ծուկ մը՝ կախուած նաւի մը դիմաց գտնուող կախաղանէն: Բազմաթիւ նաւեր քիչ առաջ ափ հասած էին, եւ նաւահանգիստի ամբողջ երկայնքով այդպիսի մեծ ծուկեր կախուած էին: Ես նմանցուցի ատոնք հսկայ տափակածուկերու: Նախկինին երբեք վահանածուկ չէի տեսած. ես չէի գիտեր, թէ ինչ տեսակի ծուկեր էին ատոնք, բայց շատ մեծ էին: Մենք զարմացանք՝ անցնելով վարձոյթով նաւեր տուող գրասենեակէ մը միւսը, եւ բոլորը կը գովազդէին ուղեւորութիւն՝ վահանածկան որսով: Յանկարծ կինս նայեցաւ ինձի եւ ըսաւ.

- Ես կ'ուզեմ վահանածուկ որսալ հոն գտնուող նաւապետին հետ,  
- ան մատնացոյց ըրաւ վահանածուկ որսացող նաւուն գովազդային ցուցանակը, որուն վերը ձկան քրիստոնէական նշան կար:

Նախեւառաջ, ես ցնցուա՛ծ էի.

- Դուն կ'ուզես վահանածո՞ւկ որսալ:

Նախկինին ան երբեք չէր ցանկացած ձկնորսութեամբ զբաղիլ: Բայց յամառեցաւ, եւ մենք կայանեցինք ինքնաշարժը եւ մօտեցանք այդ գրասենեակին: Անձնակազմը զբաղած էր մէկ այլ յաճախորդով. այնպէս որ, մենք քիչ մը զննեցինք ամէն ինչ եւ սկսանք կարդալ այն, ինչ որ փակցուած էր յայտարարութիւններու տախտակին: Մենք տեսանք յայտարարութիւն մը, ուր գրուած էր, որ Վահանածուկերու մրցոյթն ընթացքի մէջ է, բայց շուտով պիտի աւարտի: Մենք չէինք գիտեր, թէ ինչ էր ատիկա, հնարաւոր է, որ դուք նոյնպէս չգիտնաք, այնպէս որ, թոյլ տուէք բացատրել: Վահանածուկերու մրցոյթը թէ՛ այդ ժամանակ, թէ՛ այսօր, պայքար է վարձոյթով տրուող նաւերու նաւապետներու միջեւ՝ մէկ ամսուան ընթացքին ամենամեծ վահանածուկը որսալու համար: Յաղթողին լուսանկարը կը տեղադրէին տեղական թերթի մէջ, եւ ան կը պարգեւատրուէր դրամական մրցանակով: Անհրաժեշտ էր մուծել ընդամէնը քանի մը տոլար՝ մրցոյթին մասնակցելու համար, եւ այդ պահուն այն ընթացքի մէջ էր:

Տրենտան՝ իմ շատ նուրբ եւ կանացի կինը, նայեցաւ ինձի եւ ըսաւ,

որ որոշած է յաղթել այդ մրցոյթին, որպէսզի այդ նաւապետին գործը ճանաչուի ստանայ միւս բոլոր նաւապետներուն միջեւ, եւ քանի որ ան քրիստոնէայ էր, Աստուած փառք պիտի ստանար ատոր համար: Տրենտան համարձակութեամբ հռչակեց, որ ինքը պիտի յաղթ Վահանաձուկերու մրցոյթը, որպէսզի Աստուած փառաւորուի, եւ այդ մարդոց գործը ճանաչուի ստանայ, քանի որ անոնք քրիստոնէայ ընկերութիւն էին: Անշուշտ, կարելի էր պատկերացնել, թէ ինչ կը մտածէր այդ նաւապետը: Չէ՞ որ իւրաքանչիւրը պիտի ուզէր յաղթել Վահանաձուկերու մրցոյթին, եւ համոզուած եմ, որ ան լսած էր այդ մասին բազմաթիւ զբօսաշրջիկներէն, որոնց ինքը ծով տարած էր, եթէ ոչ՝ մեծամասնութենէն: Այնուամենայնիւ, համոզուած չեմ, որ շատերը հռչակած էին, որ իրենք այն պիտի յաղթեն Աստուծոյ փառքին համար:

Ինչ որ է, ան գրեթէ չմեկնաբանեց Տրենտային խօսքերն այդ մրցոյթին վերաբերեալ: Մենք դուրս ելանք ծով եւ սկսանք ձկնորսութիւնը, եւ Տրենտան շարունակ կը հարցնէր նաւապետին (որ նաեւ այդ նաւուն տէրն էր), թէ ինչ չափ պէտք է ըլլայ վահանաձուկը՝ այդ մրցոյթին յաղթելու համար: Ան պարզապէս կը պատասխանէր, որ այն պէտք է ըլլայ աւելի մեծ, քան Տրենտային որսացած վերջին ձուկը, եւ այդ պատճառով Տրենտան կը հարցնէր այդ հարցունը ամէն անգամ, երբ ձուկ կ'որսար: Ան որսաց 20 քիլոկրամնոց ձուկ, բայց նաւապետն ըսաւ, որ այն այդքան ալ մեծ չէ: Ան որսաց 30 քիլոկրամնոցը, բայց այն նոյնպէս շատ մեծ չէր: Անշուշտ, իւրաքանչիւրը գիտէ, որ վահանաձուկերը շատ համեղ են, եւ մենք որոշեցինք տուն ուղարկել մեր որսացած ձուկերը: Սահմանափակուի՞նք երկուքն էր մէկ մարդու համար, եւ մենք պահեցինք Տրենտային որսացած 30 քիլոկրամնոց ձուկը:

Երեկոն կը մօտենար, եւ արդէն կը մթնէր: Իմ որդին՝ Թոմը, դուստրն՝ Փոլին, եւ ես, որսացած էինք մեր երկու վահանաձուկերու սահմանաչափը: Մեր միւս երեխաները՝ Էմին եւ Թիմը, պէտք է աւելի կանուխ տուն թռչէին՝ համաժողովի մը մասնակցելու համար, եւ անոնք մեզի հետ չէին: Անշուշտ, Տրենտան մէկ 30 քիլոկրամնոց ձուկ որսացած էր, բայց մեր որսացած ձուկերէն ոչ մէկը կը յաղթէր այդ մրցոյթին: Սակայն Տրենտան տակաւին վստահ էր, որ մեծ ձուկ պիտի



որսայ: Մուօն արագ կ'իյնար, եւ նաւապետը պատուիրեց բոլորիս հաւաքելու մեր ձկնորսական լարերը կարթածողերու վրայ, քանի որ նաւահանգիստ երթալու ժամանակն էր: Տրենտան անտեսեց այդ պատուէրը, մինչ նաւապետը կ'օգնէր բոլորիս վեր բարձրացնելու մեր կարթածողերը եւ դասաւորելու սարքաւորանքը: Տրենտան խնդրեց ընդամէնը քանի մը վայրկեան՝ կրկին հռչակելով, որ ան պիտի որսայ Վահանաձուկերու: մրցոյթին յաղթող ձուկը: Նաւապետը սպասեց եւս քանի մը վայրկեան, եւ վերջապէս մօտեցաւ անոր՝ ըսելով.

- Կը ցաւի՛մ, բայց մենք իսկապէս պէտք է վերադառնանք:

Մինչ ան կը հասնէր բռնել Տրենտայի կարթածողը, այն անակնկալ վարիչաւ: Ակնյայտ է, որ մեծ ձուկ բռնուած էր, քանի որ ձողը թեքեցաւ, եւ կոճը ճռռոց արծակեց: Նաւապետը բարձրացուց ձողը՝ զգալու համար, թէ որքան մեծ է ձուկը, եւ համաձայնեցաւ, որ ատիկա մեծ ձուկ էր, բայց ըսաւ, որ ատիկա շնածուկ է: Բաւականին ժամանակ պահանջուեցաւ, մինչեւ Տրենտան վեր բարձրացուց այն: Պահանջուեցան անոր բոլոր ուժերը, որպէսզի ան, դարձնելով ձկնորսական կոճը, հանէր այդ ձուկը ծովի յատակէն, որ մօտաւորապէս 90 մէթր խորութիւն ունէր: Երբ ձուկը երեւեցաւ ջուրի մակերեսին, բոլորը տեսան, որ ատիկա իսկապէս մեծ վահանաձուկ էր՝ աւելի մեծ, քան Տրենտան:

Երբ ձուկն արդէն մօտ էր նաւին, նաւապետն ըսաւ, որ այն չափազանց մեծ է՝ ձկնորսական եռաժանիով խոցելու եւ նաւուն մէջ քաշելու համար, քանի որ այն պիտի թփռտար, եւ իր մեծութեան պատճառով կրնար վնասել նաւի վրայ գտնուողներէն ոեւէ մէկուն: Ան յատուկ խթան ունէր՝ նախատեսուած նման մեծ ձուկերու համար: Ատոր եզրին փոքրիկ պայթուցիկ գլխիկ կար, որ, սեղմելով ձկան գլխուն, կը պայթէր եւ կը սպաննէր ձուկին: Նաւապետը մօտեցուց այդ խթանը մեծ ձկան գլխուն. պայթուցիկ գլխիկը պայթեցաւ, բայց ձուկը խոյս տուաւ, եւ հարուածը վրիպեցաւ:

Պայթիւնի ձայնէն ձուկը կրկին ամբողջ ուժով իջաւ ծովուն յատակը: Այդ ամբողջ 90 մէթր անկման ընթացքին, կարթածողի կոճը կը ճռռար: Մենք կը վախնայինք, որ կա՛մ ձկնորսական լարը չէր պահեր ձուկին, կա՛մ կեռը դուրս պիտի գար անոր բերանէն

արագօրէն ջուրին յատակը իջնելու ընթացքին: Կրկին, Տրենտան վեր բարձրացուց այդ մեծ ձուկը: Ան մեծ դժուարութեամբ կ'ընէր ատիկա, քանի որ արդէն մէկ անգամ պայքարած էր այդ ձուկին հետ: Այնպէս որ, ես մօտեցայ անոր, միասին բռնեցիք կոճի բռնակը, եւ երկուքս կրկին դանդաղօրէն բարձրացուցինք այդ ձուկը մինչեւ ջուրին մակերեսը: Այս անգամ նաւապետը կրցաւ նաւ նետել այն: Բոլորս զարմացած էինք այդ ձուկի մեծութենէն:

Մենք տարինք այդ վահանաձուկը քաղաքի հրապարակը, ուր բաւականին մեծ կշիռք կար: Այդ ձուկին կշիռքը 55 քիլոկրամ էր, եւ այն Տրենտայէն աւելի երկար էր: Այն կշռող մարդը ըսաւ, որ այդ պահուն ատիկա մրցոյթին մասնակցող ամենամեծ ձուկն էր: Սակայն մրցոյթը պիտի տեսէ եւս երկու շաբաթ, եւ մենք տակաւին չէինք կրնար վստահաբար ըսել, թէ արդեօք այդ ձուկը պիտի յաղթէր: Այնուամենայնիւ, երկու շաբաթ յետոյ մենք չէք մը ստացանք Տրենտային անունով՝ տեղական թերթի յօդուածին հետ միասին, ուր որ անոր լուսանկարը կար: Մենք ոգեւորուած էինք:

Թագաւորութիւնը կրկին գործեց: Կրկին ես պէտք է հարցնեմ. «Ինչպէ՞ս ան բռնեց այդ ձուկը»: Մեր ամբողջ ամուսնական կեանքի ընթացքին ան ձկնորսութեան գացած էր ընդամէնը երկու անգամ, եւ ձկնորսութիւնն անոր տարերքը չէր: Առաջին հերթին, ես զարմացած էի, որ ան ուզեց վահանաձուկ որսալ: Բայց ան լուրջ պատճառ ունէր. ան կը ցանկար որսալ այդ մրցոյթը յաղթողին: Եւ անոր քով յաջողեցաւ: Երբ վճարեցինք մեր ուղեւորութեան համար, մենք պատմեցինք մեր նաւապետին Աստուծոյ Թագաւորութեան մասին եւ այն մասին, թէ ինչպէս Տրենտան որսաց այդ ձուկը: Թէեւ այն օրը, երբ մենք ցտեսութիւն ըսինք այդ նաւապետին, այդ ձուկը տակաւին պաշտօնական յաղթողը չէր, այն բաւականին մեծ էր՝ անոր ուշադրութիւնը գրաւելու համար: Եւ, անշուշտ, ի վերջոյ այն յաղթող ճանչցուեցաւ:

Թերեւս մտածէք, որ ասորմով մեր կամ Տրենտային պատմութիւնը մեծ ձուկին մասին աւարտեցաւ: Ես գիտեմ՝ մարդիկ կը մտածեն, որ անոր բախտը պարզապէս քալած էր, սակայն ի՞նչ կ'ըսէք երկրորդ անգամուան մասին: Գրեթէ հինգ տարի յետոյ, Տրենտան եւ ես հրաւիրեցինք մեր ընկերոջը, որ հովիւ է, սաղմոն (salmon)

որսալու Ալասքայի մէջ: Մենք չէինք գտնուած հոն մեր ընտանեկան ճանապարհորդութենէն յետոյ, բայց շարունակ կը փորձէինք որեւէ պատճառգտնել՝ հոն վերադառնալու համար: Մենք կրկին վարձեցինք տուն անհիւներու վրայ եւ որոշեցինք երթալ սաղմոն որսալու, քանի որ խաղաղ ովկիանոսեան սաղմոնի որսաշրջանն ընթացքի մէջ էր: Մինչ մենք սաղմոն կ'որսային, յիշեցինք վահանաձուկի որսին եւ Տրենտայի ձուկին մասին: Մեր ընկերը նախկինին վահանաձուկ չէր որսացած, եւ առաջարկեցինք անոր միասին վահանաձուկի որսի երթալ: Մենք որոշեցինք, որ պիտի վերադառնանք նոյն վայրը եւ նոյն նաւապետին քով, եթէ ան տակաւին կը զբաղէր այդ գործով:

Հասնելով այն վայրը, ուր անոր ընկերութիւնն էր՝ մենք տեսանք, որ ան այլեւս հոն չէր, եւ մտածեցինք, որ թերեւս ծով ելլենք ուրիշ նաւապետի մը հետ: Սակայն որոշեցինք, նախ, համացանցի մէջ փնտռել անոր, քանի որ մենք չէինք յիշեր անոր նաւուն եւ ընկերութեան անուանումները: Կարճատեւ որոնումէ ետք գտանք հինգ տարի առաջ տպագրուած թերթի յօդուածը Տրենտայի ձուկին մասին, որուն մէջ անոր լուսանկարը կար: Այդ յօդուածին մէջ նշուած էին այդ նաւապետի նաւուն եւ ընկերութեան անուանումները, եւ մէկ հեռախօսազանգով կրցանք պարզել ամէն ինչ: Անոնց ընկերութիւնը տակաւին կը գործէր, բայց այն մօտաւորապէս 8 քիլոմետրով տեղափոխուած էր իրենց առաջուան վայրէն:

Երբ մտանք անոնց գրասենեակը, ընդունարանի սեղանին նստած կինը, որ նաւապետի եւ այդ ընկերութեան սեփականատիրոջ կինն էր, վեր նայեցաւ եւ ըսաւ.

- Վահանաձուկի մրցոյթին յաղթո՛ղը:

Քանի մը վայրկեան մենք հաճոյքով զրուցեցինք անոր հետ մեր մեծ վահանաձուկի մասին եւ այն մասին, թէ ինչ կատարուած էր վերջին հինգ տարուան մէջ: Ատիկա տնտեսական անկման ժամանակ էր, եւ անոնց գործը լաւ չէր ընթանար: Ան ըսաւ, որ մարդիկ այլեւս չէին ճամբորդեր եւ գումար չէին ծախսեր ձկնորսութեան վրայ այնքան, որքան անցեալի մէջ, եւ անոր ամուսինը յուսալքուած էր: Մենք յիշեցուցինք այդ կնոջն Աստուծոյ Թագաւորութեան մասին: Ան ըսաւ,

որ իր ամուսինը հետաքրքրուած չէր Աստուծոյ ծառայելով:

Երբ նստեցանք նաւը, նաւապետը նոյնպէս յիշեց Տրենտային եւ մեծ ձուկին: Տրենտան հարցուց, թէ ինչպէս է ձկնորսութեան գործը, ան պատասխանեց, որ կ'որսայ փոքր ձուկեր՝ այն ձուկին համեմատ, որուն Տրենտան որսացած էր մրցոյթին համար: Ան նոյնպէս ըսաւ, որ այդ նոր վայրին մէջ չկային մեծ ձուկեր, քանի որ ջուրը ծանծաղ (ոչ խորունկ) էր: Ան բացատրեց, որ տեղափոխած է իր գործը հոն, քանի որ նախորդ վայրը, ուր Տրենտան որսաց մրցոյթի յաղթող ձուկը, ջուրը շատ անելի խորունկ էր եւ լեցուն էր շնածուկերով: Շնածուկերը կը գողնային խայծերը, մինչեւ որ ատոնք կը հասնէին ջուրին յատակը, եւ ան չափազանց շատ ծախս կ'ընէր խայծերու համար ու չափազանց շատ ժամանակ կը կորսնցնէր:

Մենք հարցուցինք անոր, թէ ինչ չափի ձուկեր կ'որսային այս վայրին մէջ, եւ ան պատասխանեց, որ չէր տեսած 10-14 քիլոկրամէն անելի մեծ ձուկ վերջին ամսուան մէջ: Տրենտան նայեցաւ անոր եւ ըսաւ.

- Այսօր ես մեծ ձուկ պիտի որսամ՝ ամենամեծ ձուկը, որուն դուք տեսած էք վերջին շրջանին, որպէսզի գիտնաք, որ Աստուած հաւատարիմ է:

Բայց նաւապետը պարզապէս քնծիծաղեցաւ: Ամբողջ օրը մենք որսացինք 10 քիլոկրամնոց ձուկեր, ինչպէս որ կ'ըսէր նաւապետը, եւ ամբողջ օրը ան քնծիծաղով կը խօսէր այն «մեծ ձուկին» մասին, որուն Տրենտան պիտի որսար: Այդ ամէնը նախորդ ձկնորսութեան կրկնութիւնն էր:

Օրուան վերջաւորութեան նաւապետը պատուիրեց մեզի հաւաքել մեր ձկնորսական լարերը կարթածողերու վրայ, եւ Տրենտան ուշադրութիւն չդարձուց ատոր՝ ըսելով, որ իրեն պէտք էր ընդամէնը մէկ կամ երկու վայրկեան՝ իր մեծ ձուկը որսալու համար: Կրկին, նաւապետը սպասեց մէկ կամ երկու վայրկեան, բայց յետոյ ըսաւ, որ ստիպուած էր վերադառնալու: Ճիշդ այդ պահուն Տրենտային կարթածողը վար իջաւ եւ, կարճ ըսելու համար, ան 30 քիլոկրամնոց ձուկ որսաց: Նաւապետը կրկին զարմացած էր:

Մենք ճաշարան գացինք ձկնորսութենէն յետոյ եւ զրուցեցինք

նաւապետի մը հետ, որ նոյնպէս կ'ընթեր: Երբ ան լսեց, որ Տրենտան 30 քիլոկրամնոց ձուկ որսացած էր այդ վայրին մէջ, ան չէր կրնար հաւատալ: Ան հարցուց, թէ մենք ուր էինք ձկնորսութեան եւ ինչ հեռաւորութեան վրայ: Ան կ'ուզէր գիտնալ, թէ մենք ուր այդքան մեծ ձուկ որսացած էինք : Ճաշարանէն դուրս ելլելէն յետոյ պէտք է եւս մէկ անգամ երթայինք այդ նաւուն վարձոյթի գրասենեակը, որպէսզի տեղեկանք ստորագրէինք այդ ձուկը մեր տուն ուղարկելու մասին:

Մինչեւ այդ նաւապետին հրաժեշտ տալը, մենք կրկին պատմեցինք անոր Աստուծոյ Թագաւորութեան մասին: Ես ըսի.

- Դուք իսկապէս պէտք է պարզէք, թէ ինչպէս ան բռնեց այդ երկու ձուկերը: Թագաւորութեան օրէնքները կը գործեն նաեւ ֆինանսներու պարագային:

Այս անգամ մենք գրաւեցինք անոր ուշադրութիւնը, եւ ան առնուազն հետաքրքրուեցաւ: Մենք նուիրեցինք անոր իմ «Ֆինանսներու կարգաւորում» գիրքը եւ գացինք:

Այդ երկու ձուկերը պատահականութիւն էին, թէ՞ Թագաւորութեան օրէնքի արդիւնք: Մտածեցէք՝ ինչպէս կ'ուզէք, բայց Տրենտան եւ ես արդէն կանուխ պատասխանած ենք այս հարցումին: Ե՛ւ ձկնորսական ճանապարհորդութիւններու, ե՛ւ պարտքերէն ազատելու, ե՛ւ բժշկուելու պարագային մեր փորձառութիւնները Աստուծոյ Թագաւորութեան հետ ոգեշնչող եւ շրջադարձային էին: Թագաւորութիւնը կը գործէ շատերու կեանքին մէջ: Ահա նամակ մը կ'ընծմէ, որ լսած էր Տրենտային պատմութիւնը.

«Ողջո՛յն Կէրի եւ Տրենտա,

Ես կարդացած եմ ձեր գիրքը, որուն մէջ Տրենտան վահանաձուկ կ'որսայ, որ կը յաղթէ մրցոյթին, եւ ես մտածեցի, որ նոյնպէս պէտք է պատմեմ ձեզի իմ ձկնորսական պատմութիւնը: Վերջերս մենք ընտանեկան արծակուրդի գացած էինք Ֆլորիտա նահանգի Քոքօ լողափ եւ Քանավերայի հրուանդան: Իմ ամուսինը՝ Ռոպերթը, կը ցանկար բաց ծով դուրս ելլել ձկնորսութեան համար եւ յոյս ունէր, որ մենք ձուկ կ'որսայինք եւ Քոլորատո կը տանէինք մեզի հետ: Քանի մը ամիս կը ծրագրէինք

այդ ճանապարհորդությունը: Երբ ան ըսաւ, որ կը ցանկայ ձկնորսութեան երթալ, եւ ոգեւորուեցայ եւ ըսի. «Մենք կ'ընե՛նք ատիկա: Եւ եկո՛ւր հաւատանք Աստուծոյ մեծ որսի համար»: Ես հարցուցի Ռոպերթին, թէ ինչ տեսակի ձուկեր կան Ֆլորիտա, ուր մենք ձուկ կ'որսայինք: Բոլոր ձկնատեսակներէն, որոնք ան արագօրէն թուարկեց, եւ որոշեցի աղօթել եւ հաւատալ հսկայ կարմիր լուցիանի (ձուկի տեսակ, խածան) համար:

Այդ օրը եկաւ, եւ մենք կը սպասէինք նաւապետին եւ անձնակազմին հրահանգներուն: Ես կը դաւանէի, որ հսկայ կարմիր լուցիան պիտի որսայի, եւ իմ ոգեշնչումը կ'աւելնար, մինչ նաւապետը կը խօսէր: Ես յուսահատութիւն զգացի, երբ նաւապետը ըսաւ, որ այդ ժամանակ մենք չենք կրնար որսալ միայն պերկեսներ (քաղցրահամ ջուրերու ձուկ), տափակաձուկեր եւ կարմիր լուցիաններ: Ես մտածեցի. «Ուրիշ ինչի՞ համար կարելի է հաւատալ»:

Բայց ես չէի պատրաստուեր կորսնցնելու իմ հաւատքը գործադրելու այդ հնարաւորութիւնը եւ ըսի. «Տէ՛ր, ես հաւատացած եմ հսկայ կարմիր լուցիանի համար, եւ թող այդպէս ըլլայ. ես կարմիր լուցիան պիտի որսամ եւ նոյնպէս այլ ձուկեր տուն պիտի տանիմ»:

Մինչ մենք այդ նաւուն մէջն էինք, ես ըսի իմ ութամեայ աղջկան՝ Ռէյչըլին.

- Յիշէ՛, որ դուն կրնաս աղօթել եւ հաւատալ Աստուծոյ, որ այսօր ձուկ պիտի որսաս: Դուն կը հաւատա՞ս:

Ան ժպտաց եւ զլուխով ըրաւ՝ ի նշան համաձայնութեան: Ես ըսի նոյն խրախուսական խօսքերը իմ քսանմէկամեայ աղջկան՝ Ճորտընին: Ան զարմացած հայեացք ձգեց իմ վրայ, բայց յետոյ համաձայնեցաւ: Ես նայեցայ Ռոպերթին եւ ըսի.

- Եկո՛ւր հաւատանք, որ առատ որս պիտի ունենանք:

Քանի մը ժամ անցաւ, իսկ մեր ձկնորսական լարերը ոչինչ որսացած էին: Եւ յանկարծ Ռէյչըլին լարը քաշուեցաւ, եւ ան անչափ ոգեշնչուեցաւ: Կանչեց իր հայրիկին՝ իրեն օգնելու

համար: Քանի մը վայրկեան յետոյ անոնք ատլանտեան շնաձուկ մը հանեցին ջուրէն: Ռէյչըլը հասկցած էր, թէ ինչպէս հաւատալ: Եւ մենք գովեցինք անոր: Ան իսկական թիմակից է:

Ես կը յիշէի, որ սկսայ մտածել, որ ոչինչ պիտի որսայի, բայց լռեցուցի այդ միտքը եւ դաւանեցայ, որ ես արդէն իսկ ձուկ ունիմ: Ես նստեցայ, հանդարտեցայ եւ յանկարծ լսեցի Աստուծոյ ձայնը. «Եթէ պարզապէս հանդարտիս եւ թոյլ տաս, որ ես բերեմ քեզի այդ ձուկը, դուն պիտի ստանաս այն»: Ես գիտէի, որ ընդհանրապէս ձկնորս չէի. այնպէս որ, որոշեցի չյուսալ իմ հմտութիւններուն: Նստեցայ, խորունկ շունչ քաշեցի եւ սպասեցի՝ վստահելով Աստուծոյ: Մօտաւորապէս 20-30 վայրկեան յետոյ իմ լարը քաշուեցաւ, թերեւս ինծի այդպէս թուեցաւ, բայց պարզուեցաւ, որ ես իսկապէս ձուկ որսացած էի:

Ամուսինս սկսաւ հրահանգել ինծի, իսկ յետոյ մօտեցաւ նաւապետը եւ նոյնը ըրաւ: Ան ըսաւ, որ ես մեծ ձուկ բռնած էի, եւ հաւանաբար իմ լարին միւս կողմը հսկայ կարմիր լուցիան կար: Ես այնքա՛ն զարմացած էի, որ ան գիտէր, թէ ինչ տեսակի ձուկ բռնուած էր, այն տեսնելէ առաջ: Անշուշտ, ես շարունակեցի դարձնելով վեր քաշել լարը, եւ իմ 10 քիլոկրամնոց հսկայ կարմիր լուցիանը յայտնուեցաւ ջուրի երեսին: Ես կը գոհանայի Աստուծո՛ւմ մեծ ուրախութեամբ եւ ոգեշնչումով: Ես գիտէի, որ ճեղքում ունեցայ իմ հաւատքի համակարգին մէջ: Ես պարզապէս շարունակ կը յիշէի Տրենտային վստահութիւնը եւ կը մտածէի, որ կրնայի ունենալ նոյն հաւատքը եւ վստահութիւնը: Ես յարատեւեցի, եւ արդիւնքը կ'արժէր ատոր:

Շնորհակալութիւն ձեր ծառայութեան եւ ձեր գիրքերը գրելու համար, ներառեալ «Հաւատքի որսորդութիւն» կոչուող գիրքը: Ես շնորհակալ եմ Աստուծոյ եւ ձեր ծառայութեան, որ օգնեց ինծի քալելու դէպի աւելի մեծ օրհնութիւններ: Ես կը նայիմ ապագային աւելի մեծ հաւատքով եւ ոգեշնչումով: Ես գիտեմ, թէ որքան այս փորձառութիւնը ծառայեց մեր ընտանիքին:

Անկեղծօրէն՝ Ս.Թ.»:

## ԳԼՈՒԽ 5

# Ո՞Վ ԸՆՏՐԵՑ ԱՏԻԿԱ

Նախորդ պատմություններուն մէջ տեսանք, թէ ինչ արդիւնք տուաւ Աստուծոյ Թագաւորութիւնն այս երկրի վրայ՝ շնիկ, ծուկ, դրամ՝ ազատելու համար գրաւադրուած գոյքը, գնելու համար ինքնաշարժներ եւ տուներ, որոնց կարիքը մենք ունէինք, երեք երեխայի կեանքի փրկութիւն եւ աւելին: Բոլոր այս պատմությունները տեղի ունեցան Աստուծոյ Թագաւորութեան շնորհիւ, կամ թոյլ տուէք աւելի անձնական ձեւով ըսելու՝ ՄԵՐ Աստուծոյ Թագաւորութեան: Մենք պէտք չէ գարմանանք, քանի որ Անոր Թագաւորութիւնն անսահմանօրէն մեծ է:

Պետրոսի երկրորդ թուղթի 1.3-ի (NIV) մէջ գրուած է.

*«Անոր Աստուածային զօրութիւնը տուած է մեզի այն ամէնը, ինչին կարիքը մենք ունինք կեանքի եւ Աստուածապաշտութեան համար»:*

Ես կը ցանկան շատ կարեւոր հարցում մը հարցնել ձեզի մեր դիտարկած բոլոր պատմություններուն վերաբերեալ. «Ո՞վ ընտրեց ատիկա»: Ես նկատի ունիմ հետեւեալը. մի՞թէ Աստուած յանկարծակի որոշեց նուիրել Քիրսթընին այդ շնիկը, կամ տալ իմ կնոջ Տրենտային այդ ծուկը: Մի՞թէ Աստուած պարզապէս որոշեց ընել այդ բաները մեզի համար՝ Իր գերիշխան կամքով. թէ՞ այդ իրադարձութիւնները տեղի ունեցան այլ պատճառով: Կը կարծեմ՝ պատասխանը կը ցնցէ



մարդոց մեծ մասը: Ես գիտեմ ատիկա, քանի որ այն նոյնպէս ցնցեց ինձի:

Այս հարցումին պատասխանելու համար դիտարկենք պատմութիւն մը Աստուածաշունչէն՝ Ղուկաս 8-րդ գլուխէն.

*«Եւ Անոր (Յիսուսի) գալու ժամանակ ժողովուրդները կը նեղէին Անոր: Եւ կին մը կար տասներկու տարի շարունակ տեռատեսութեան (արիւնահոսութեան) մէջ, որ իր ամբողջ ինչքը բժիշկներուն ծախսելով չէր կրցած մէկէ մը բժշկուիլ: Ան մօտեցաւ ետեւէն, Անոր հանդերձին ծայրին դպաւ, եւ իսկոյն արիւնի հոսումը դադրեցաւ:*

*Եւ Յիսուս ըսաւ. «Ո՞վ է, որ Ինձի դպաւ»: Եւ երբ որ ամէնքը կ'ուրանային, ըսաւ Պետրոսը եւ անոր հետ եղողները. «Վարդապե՛տ, ժողովուրդները կը սեղմեն Քեզի ու կը նեղեն, եւ Ղուն կ'ըսես՝ ո՞վ է, որ Ինձի դպաւ»: Եւ Յիսուսն ըսաւ. «Մէկը դպաւ Ինձի, որովհետեւ Ես գիտցայ, որ զօրութիւն դուրս ելաւ Ինձմէ»:*

*Եւ երբ որ տեսաւ կինը, որ ծածուկ չմնաց, դողալով եկաւ, Անոր արջեւ ինկաւ եւ ամբողջ ժողովուրդին արջեւ պատմեց Անոր, թէ ինչ պատճառով Անոր դպաւ, եւ թէ ինչպէս իսկոյն բժշկուեցաւ:*

*Ան ալ ըսաւ անոր. «Քաջացի՛ր, դո՛ւստր, քու հաւա՛տքդ բժշկեց քեզի, գնա՛ խաղաղութիւնով»»:*

– Ղուկաս 8.42-48

Աստուածաշունչը շատ յստակ կ'ըսէ, որ Յիսուսին կը սեղմէին բոլոր կողմերէն, եւ նոյնիսկ Պետրոսը զարմացաւ Յիսուսի՝ «ո՞վ դպաւ Ինձի» հարցումէն: Որպէս հոգեւոր գիտնական, կ'ուզեմ գիտնալ, եւ ես պէտք է գիտնամ, թէ ինչո՞ւ բժշկուեցաւ ա՛յդ կինը, եւ ուրիշ ոչ ոք: Ինչո՞ւ օծութիւնը հոսեցաւ դէպի իրեն եւ չհոսեցաւ դէպի միւսներուն, որոնք այդ պահուն կը հպէին Յիսուսին: Պատասխանն այս հատուածին մէջ է, բայց այս հարցումին պատասխանելէ արաջ,

Եւս հարցում մը հարցնենք: Յիսուսն Ի՞նքը որոշեց ծառայել այդ կնոջը: Անիկա՞ էր, որ դրաւ Իր ձեռքերը այդ կնոջ վրայ: Պատասխանն է՝ ո՛չ. իրականութեան մէջ, Յիսուսը նոյնիսկ չէր գիտեր անոր մասին: Ան ստիպուած էր հարցնելու, թէ ով առաւ Իր վրայ եղած օծութենէն, քանի որ Ան չէր տեսած այդ կնոջը: Այնպէս որ, ո՞վ որոշում կայացուց, որ այդ կինը բժշկուած պիտի ըլլայ այդ օրը:

Թոյլ տուէք ուրիշ ձեռով հարցնել այս հարցումը: Յիսուսն էր, որ այդ պահուն որոշեց բժշկել այդ կնոջը, թէ՞ այդ կինը որոշեց ստանալ Աստուծոմէ: Ասիկա կարելի էր հարցում է, քանի որ այնքա՛ն մարդիկ կը «սպասեն», որ Աստուած ինչ որ բան ընէ իրենց կեանքին մէջ: Ես կը հաւատամ՝ այն, որ Յիսուսը նոյնիսկ չէր գիտեր այդ կնոջը, կ'ապացուցէ, որ այդ կինն ինքը որոշեց ստանալ իր պատասխանը, ոչ թէ Յիսուսը որոշեց բժշկել անոր:

Այս փաստը կու տայ մեզի աներեւակայելի կարելի յայտնութիւն մը. Աստուած չ'որոշեր բժշկել մէկուն եւ չբժշկել միւսին՝ պատահականութեան սկզբունքով: Ան արդէն իսկ տուած է բոլորիս բժշկութիւն ստանալու հնարաւորութիւն՝ Իր Թագաւորութեան մէջ ունեցած մեր օրինական դիրքին միջոցով: Այնպէս որ, իրականութեան մէջ, մե՛նք կ'ընտրենք ատիկա: Բայց ես կ'ուզեմ իմանալ, թէ ինչպէս ան առաւ այդ զօրութենէն: Ինչպէ՞ս ան «որոշեց» ստանալ: Յիսուսը կ'ըսէ մեզի, թէ ինչպէս այդ կինը վերցուց Թագաւորութեան իշխանութենէն եւ զօրութենէն: Ան ըսաւ. «Ղո՛ւստր, հաւա՛տքդ բժշկեց քեզի, գնա՛ խաղաղութիւնով»: Այս նախադասութիւնը կը յայտնէ այն ամէնը, ինչ որ պէտք է իմանանք, եւ կը պատասխանէ մեր հարցումներուն այն մասին, թէ ինչու այդ օրը բժշկութիւն ստացաւ ա՛յդ կինը, եւ ուրիշ ոչ ոք: Որպէս հոգեւոր գիտնականներ, աւելի ուշադիր դիտարկենք այս պատմութիւնը եւ տեսնենք՝ կրնա՞նք արդեօք գտնել բանալիներ, որոնք ցոյց կու տան, թէ ինչու ան ստացաւ իր պատասխանը:

Առաջին հերթին, Յիսուսը կ'անուանէ անոր «ղուստր», ինչ որ կը նշանակէ, որ ան Իսրայէլի ժողովուրդէն էր: Կը նշանակէ՝ ան ուխտ ունէր Աստուծոյ հետ: Կամ, կարելի է ըսել, որ ան, ըլլալով Իսրայէլի ժողովուրդի քաղաքացի, օրինական դիրք ունէր Երկինքի առջեւ՝

Աստուծմէ ինչ որ բան մը ստանալու համար: Այս փաստը չի կրնար ըլլալ այդ կնոջ պատասխանին միակ պատճառը, քանի որ այդ օրը եւ այդ վայրը գտնուող մարդիկ, որոնք բոլոր կողմերէն կը սեղմէին Յիսուսին, ունէին միեւնոյն օրինական դիրքը: Պէտք է որ ըլլար այլ պատճառ, թէ ինչու զօրութիւնը հոսեցաւ: Յիսուսը կ'անուանէ եւս պատճառ մը, թէ ինչու այդ կինը ստացաւ իր պատասխանը: Իրականութեան մէջ, Յիսուսն ըսաւ, որ յատկապէս այս պատճառով էր, որ այդ կինն ինչ որ բան ստացաւ անձամբ իրեն համար: Ան ըսաւ, որ այդ կինը բժշկուեցաւ իր հաւատքով:

Այժմ մենք գիտենք, թէ ինչպէս ան կրցաւ ստանալ իր պատասխանը: Առաջինը՝ ան ստանալու օրինական իրաւունք ունէր, քանի որ Աբրահամի դուստր էր, եւ երկրորդը՝ անոր հաւատքն այն անջատիչն էր, որուն շնորհիւ զօրութիւնը հոսեցաւ անձամբ իր մարմինին մէջ ճիշդ այդ պահուն: Այն, որ ան Աբրահամի դուստր էր, ինչ որ կը նշանակէ, որ Երկինքի առջեւ ան կը գտնուէր այն ուխտին տակ, որ Աստուած կնքած էր Աբրահամին հետ, կարելի է համեմատել այն բանին հետ, որ ելեկտրականութիւն մատակարարող ընկերութիւնը լարեր հասցուցած է ձեր տունը եւ միացուցած է հոսանքը: Բայց ատիկա չի նշանակեր, որ ձեր տան լոյսերը պիտի միանան: Որպէսզի լոյսերը միանան, դուք պէտք է նաեւ միացնէք անջատիչը: Եւ այժմ մենք պէտք է հասկնանք, թէ ուր է, կամ որն է այդ անջատիչը: Յիսուսն ըսաւ, որ այդ անջատիչը անոր հաւատքն էր, բայց ի՞նչ է հաւատքը, եւ ինչպէ՞ս կրնամ միացնել այն: Ասիկա անչափ կարեւոր հարցում է, որուն պէտք է պատասխանել:

## **Ի՞նչ է հաւատքը**

Հաւատքը հասկացութիւն մըն է, որ քրիստոնեաներն անփութօրէն կը գործածեն: Եւ ես համոզուած եմ, որ անոնցմէ շատերը, եթէ ոչ մեծ մասը, չեն գիտեր, թէ ինչ է հաւատքը, ինչու անհրաժեշտ է այն, ինչպէս իմանալ, թէ արդեօք իրենք հաւատքի մէջ են, եւ ինչպէս կարելի է հաւատք ստանալ: Եթէ հաւատքն այն անջատիչն է, որ բժշկեց այդ կինը, ուրեմն մենք պէտք է մեծ ուշադրութիւն դարձնենք

հաւատքին: Մենք կը գտնենք հաւատքի սահմանումը Հռովմայեցիս 4.18-21-ին մէջ: Ես գիտեմ, թէ դուք ինչ մտածեցիք. «Ո՛չ, Կէ՛րի, հաւատքի սահմանումը գրուած է Եբրայեցիս 11.1-ին մէջ»:

*«Հաւատքը կը նշանակէ համոզուած ըլլալ այն բանին մէջ, ինչին հանդէպ մենք յոյս ունինք, եւ վստահ ըլլալ այն բանին մէջ, ինչ որ մենք չենք տեսներ»:*

– Եբրայեցիս 11.1, NIV

Այո՛, ասիկա անսովորական պատասխանն է, բայց կարդալով Եբրայեցիս 11-րդ գլուխը՝ կը տեսնէք, որ այն կը ներկայացնէ մեզի հաւատքի առաւելութիւնները, ոչ թէ հաւատքի սահմանումը: Ես կը հաւատամ, որ մեր հատուածը Հռովմայեցիս թուղթն, կու տայ շատ յստակ պատկերացում այն մասին, թէ իրականութեան մէջ ինչ է հաւատքը:

*«Որ առանց յոյսի՝ յոյսով հաւատաց, թէ շատ ազգերու հայր կ'ըլլայ. ինչպէս ըսուեցաւ, թէ՝ «այնպէս պիտի ըլլայ քու գաւակը»:* Եւ չտկարացաւ հաւատքով, այսինքն՝ մտիկ չըրաւ իր մարմինին, որ արդէն մեռած էր, ինքը իբրեւ հարիւրամեայ ըլլալով, եւ ո՛չ ալ՝ Սառայի արգանդին մեռած ըլլալուն: Եւ Աստուծոյ խոստումին համար չերկմտեցաւ անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատքով եւ Աստուծոյ փառք տուաւ: Եւ իր մտքին մէջ համոզուած էր (կամ՝ «բոլորովին համոզուած ըլլալով»), թէ Ան, որ խոստացաւ, կրնայ եւ ընել»:

– Հռովմայեցիս 4.18-21

Ներկայացնենք այս հատուածի նախապատմութիւնը: Աբրահամը եւ Սառան չէին կրնար երեխաներ ունենալ: Ես նկատի չունիմ, որ անոր կինը չէր յղանար, եւ անոնք պէտք է շարունակէին իրենց փորձերը: Այլ՝ որ անոնք գրեթէ 100 տարեկան էին, եւ այլեւս ոչ մէկ յոյս կար: Անոնց մարմիններն անկարող էին երեխաներ

**«ՀԱՒԱՏՔԸ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ  
ՀԱՍՈՋՈՒԲԾ ԸԼԼԱԼ ԱՅՆ  
ԲԱՆԻՆ ՄԷՋ, ԻՆՉԻՆ  
ՀԱՆԴԵՊ ՄԵՆՔ ՅՈՅՍ  
ՈՒՆԻՆՔ, ԵՒ ՎՍՏԱՀ  
ԸԼԼԱԼ ԱՅՆ ԲԱՆԻՆ ՄԷՋ,  
ԻՆՉ ՈՐ ՄԵՆՔ ՉԵՆՔ  
ՏԵՍՆԵՐ»:**

**– ԵՐԲԱՅԵՑԻՍ 11.1, NIV**

ունենալու. ատիկա անկարելի՛ էր: Այնուամենայնիւ, Աստուած երեխայ խոստացաւ Աբրահամին, թէ եւ բնականօրէն ատիկա բոլորովին անհնար էր: Աստուածաշունչին մէջ գրուած է, որ Աբրահամը բոլորովին համոզուած էր, որ Աստուած կրնար ընել այն, ինչ որ խոստացած էր՝ չնայելով իր բնական իրավիճակին, որ այլ բան կ'ըսէր: Այսպիսով, ահա մեր հաւատքի սահմանումը. «բոլորովին համոզուած ըլլալ, որ Աստուած կրնայ ընել այն, ինչ

որ խոստացած է»: Ես կ'ըսեմ ասիկա հետեւեալ ձեւով. *«Ունենալ համաձայնութիւն Երկինքի հետ, ունենալ ոչ միայն մտաւոր, այլեւ լիարժէք համոզուածութիւն, սրտով հաստատ եւ վստահ ըլլալ այն բանին մէջ, ինչ որ Աստուած ըսած է՝ չնայելով բնական իրականութեանը, որ այլ բան ցոյց կու տայ»:*

Հաւատքի մեր սահմանումը հետեւեալն է.

Հաւատքը կը նշանակէ բոլորովին համոզուած ըլլալ Աստուծոյ խօսքերուն մէջ, ունենալ համաձայնութիւն Երկինքի հետ մեր սրտով եւ մտքով, բոլորովին համոզուած, վստահ եւ հանդարտ ըլլալ մեր սրտին մէջ:

## **Ինչո՞ւ հաւատքն անհրաժեշտ է**

Ինչո՞ւ Աստուած պարզապէս չի կրնար բժշկել հիւանդանոցներուն մէջ գտնուող մարդոց, երբ կամենայ: Ինչո՞ւ Ան չի կրնար դադրեցնել պատերազմները: Ինչո՞ւ Ան չի կրնար հրեշտակներ ուղարկել՝ Աւետարանը մեզի քարոզելու համար: Համոզուած եմ, որ նախկինին դուք լսած էք բոլոր այս հարցումները: Պատասխանը հետեւեալն է. Ան չի կրնար ընել այդ բաները: Եւ այնպէս չէ, որ Աստուած չունի կարողութիւն. Ան չունի իրաւասութիւն կամ իշխանութիւն, որ ընէ

աստիկա: «Կէ՛րի, դուք կ'ըսէք, որ Աստուած չի՞ կրնար ընել այն, ինչ որ կը ցանկայ ընել»: Ես գիտեմ, որ աստիկա իսկապէս տարօրինակ կը հնչէ, բայց կարդանք Աստուածաշունչը՝ այս հարցումին պատասխանը գտնելու համար:

*«Մէկը վկայեց մէկտեղ՝ ըսելով.*

*«Մարդը ի՞նչ է, որ Դուն յիշես անոր, կամ մարդու որդին, որ այցելես անոր: Քիչ մը վար ըրիր անոր հրեշտակներէն, փառքով եւ պատիւով պսակեցիր անոր, եւ Քու ձեռքի գործերուն վրայ կեցուցիր անոր: Ամէն բան հնազանդ ըրիր անոր ոտքերուն տակ»:*

*Որովհետեւ ամէնը, որ հնազանդեցուց անոր, ոչինչ ձգեց, որ հնազանդ չըլլայ անոր. բայց հիմա տակաւին չենք տեսներ, թէ ամէն բան հնազանդուած է անոր»:*

– Եբրայեցիս 2.6-8

Այս հատուածէն կրնանք տեսնել, որ Աստուած տուաւ մարդուն լիարժէք օրինական իրաւասութիւն ամբողջ երկրային տիրոյթին մէջ: Չկար բան մը, ինչ որ անոր իրաւասութեան տակ կը գտնուէր: Ան կը տիրէր այս երկրի մէջ բացարձակ իրաւասութեամբ եւ իշխանութեամբ: Ան ունէր այս երկիրը կառավարելու իշխանութիւն՝ շնորհիւ իրեն հաստատող իշխանութեան: Ըստ էութեան, ան կ'իշխէր Աստուծոյ Թագաւորութեան լիազօրած իշխանութեամբ: Մարդը կը կրէր այդ իշխանութեան պսակը, որ կը ներկայացնէր Աստուծոյ փառքը, նաեւ այն օժութիւնն ու պատուաւոր դիրքը, որոնք անոր վրայ էին:

Այս մասին պատկերացում կազմելու համար, մտածեցէ՛ք ռեւէ երկրային թագաւորի մասին: Թէեւ ան բնական մարդ է, որ չունի իրական իշխանութիւն, ան թագ կը կրէ, որ որ ցոյց կու տայ, որ ան կը ներկայացնէ ամբողջ թագաւորութիւն կամ պետութիւն մը: Անոր խօսքն իշխանութիւն ունի, քանի որ այն կը սատարուի իր պետութեան կամ թագաւորութեան բոլոր ուժերու եւ բնական նիւթական միջոցներու կողմէն:

Մտածեցէ՛ք փողոցային շարժումն ուղղորդող ոստիկանին մասին. ան կը կանգնեցնէ հսկայական կցորդով բեռնատար մը՝ հրամայելով. «Կանգ առ՝ օրէնքի անուճով»: Այո՛, այդ բեռնատարը շատ աւելի մեծ է, քան ան, եւ ան ինքնին չի կրնար համեմատուիլ այդ բեռնատարին հետ, բայց բեռնատարը կանգ կ'առնէ: Այն կանգ կ'առնէ ոչ թէ այդ մարդուն պատճառով, այլ անոր կրծքանշանին, որ կը ներկայացնէ այդ երկրի կառավարութիւնը: Այդ պարագային, կառավարութիւնը շատ աւելին է, քան այդ կրծքանշանը կրող մարդը: Բեռնատարի վարորդը չի վախնար այդ մարդէն, բայց ան կը վախնայ այն կառավարութենէն, որ այդ մարդը կը ներկայացնէ. այնպէս որ, ան կը կանգնեցնէ իր բեռնատարը: Նոյնը ճշմարիտ է այս պարագային: Ադամը կ'իշխէր երկրային տիրոյթին մէջ գտնուող ամբողջ արարչագործութեան վրայ: Աստուծոյ իշխանութիւնը եւ կառավարումը՝ ներկայացուած անոր փառքին եւ պատիւին պսակով, վստահութիւն կը հաղորդէին մարդուն, որ իր խօսքերը կ'իշխէին Աստուծոյ Թագաւորութեան անունէն:

Շատ կարեւոր է նշել հետեւեալը. երբ Ադամը կորսնցուց երկրի վրայ իշխելու կարողութիւնը՝ Աստուծոյ կառավարման դէմ դաւաճանութիւն գործելու պատճառով, ան կորսնցուց իր պսակը: Երկրային տիրոյթն արատաւորուեցաւ եւ փոխուեցաւ: Մահը մուտք գործեց այս աշխարհ, եւ այժմ մարդոց կեանքերուն մէջ իշխանութիւն եւ ազդեցութիւն ունենալու օրինական իրաւունքը սատանայինն էր: Անչափ կարեւոր է, որ դուք նաեւ հասկնաք, որ մարդը տակաւին այս երկրի օրինական իշխանն է, քանի որ Աստուած կարգած է անոր, սակայն այժմ չունի հոգեւոր իշխանութիւն, որ ժամանակ մը առաջ ունէր: Այնուամենայնիւ, նոյնիսկ իր անկում ապրած վիճակին մէջ ան դեռ այս երկրի տէրն է: Այո՛, ան այլեւս չունի Աստուծոյ իշխանութեան պսակը, որ կը սատարէր անոր: Ան չի կրնար իշխել Աստուծոյ զօրութեամբ եւ փառքով. ան կորսնցուցած է իր պատուաւոր դիրքը: Բայց, միեւնոյնն է, ան միակ օրինական դուռն է դէպի այս երկրային տիրոյթը: Ահա թէ ինչու Աստուած պէտք է գործածէ Հոգիով լեցուած քրիստոնէաները՝ մարդոց կեանքերուն մէջ Իր կամքը կատարելու համար: Նոյն կերպով, սատանան կ'օգտագործէ դեւերով

ոգեշնչուած մարդիկ, որպէսզի ազդէ այս երկրին վրայ եւ իրագործէ իր ծրագիրը մարդկութեան համար: Երկրի վրայ մարդու իրաւասութեան այս սկզբունքը կենսական նշանակութիւն ունի Թագաւորութեան օրէնքը հասկնալու համար, եւ հազիւ որ հասկնաք, այն պիտի պատասխանէ հետագային ծագող շատ հարցումներու այն մասին, թէ ինչու կը կատարուին որոշ բաներ, իսկ որոշ բաներ չկատարուեցան եւ չեն կատարուիր՝ հոգեւոր առումով:

**ԱՀԱ ԹԷ ԻՆՉՈՒ ԱՍՏՈՒԱԾ  
ՊԷՏՔ Է ԳՈՐԾԱԾԷ  
ՀՈԳԻՈՎ ԼԵՑՈՒԱԾ  
ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ՝  
ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔԵՐՈՒՆ  
ՄԷՋ ԻՐ ԿԱՍՔԸ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:**

Թերեւս ըսէք. «Բայց ես կը կարծէի, որ Տիրոջն է երկիրը եւ ատոր լիութիւնը»: Այո՛, այդպէս է: Յոյսով եմ՝ հետեւեալ օրինակը կ'օգնէ ձեզի հասկնալու, թէ ինչ նկատի ունիմ: Եթէ ես իմ տունը վարձակալութեան յանձնէի ձեզի, թէւ իրաւաբանօրէն այն կը պատկանի ինձի, ես կը հրաժարէի որեւէ պահուն հոն գալու իմ օրինական իրաւունքէն: Վարձակալական պայմանագիրներու մեծամասնութեան մէջ կայ պարբերութիւն մը, որ կը յստակեցնէ, թէ երբ սեփականատէրերը կրնան օրինական կերպով մուտք գործել վարձակալուող տարածքները, օրինակ՝ արտակարգ պատահար կարգաւորելու կամ վերանորոգում կատարելու նպատակով, ինչպէս նաեւ այդ մասին նախապէս ծանուցելու պայմանները: Եթէ ես փորձէի մտնել իմ տուն՝ խախտելով այդ պայմանագիրը, իմ արարքը կոտրանք կը համարուէր, թէւ այդ գոյքը կը պատկանի ինձի: Եթէ ես խախտէի վարձակալական պայմանագիրին մէջ յստակացած օրէնքը, ինձի կարելի էր օրէնքի համաձայն հարկադրաբար հեռացնել հոնկէ, թէւ ատիկա իմ սեփականութիւնն է: Ասիկա կը բացատրէ, թէ ինչու սատանան ստիպուած էր օգտագործելու Ադամին՝ երկրային տիրոջին մէջ իշխանութիւն ստանալու համար: Ադամը միակ բանալի՛ն էր: Սատանան պէտք է մտնէր դուռէն, եւ այդ դուռը Ադամն էր: Եթէ սատանան փորձէր շրջանցել Ադամին, հնարաւոր կ'ըլլար օրինական կերպով վտարել անոր:



*«Եւ սատանան Անոր բարձր լեռ մը հանեց եւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցոյց տուաւ Անոր մէկ երկվայրկեանի մէջ: Եւ սատանան ըսաւ Անոր. «Այս ամբողջ իշխանութիւնը եւ ասոնց փառքը Քեզի կու տամ, որ ինձի տրուած է, եւ որուն որ կը կամենամ, կու տամ: Արդ Դուն, եթէ իմ առջեւը ինկած երկրպագութիւն ընես, բոլորը Քուկդ կ'ըլլայ»:*

– Դուկաս 4.5-7

Ինչպէս կը տեսնէք այս հատուածին մէջ, սատանան կը պնդէր, որ մարդոց թագաւորութիւններու իշխանութիւնը եւ փառքը (հարստութիւնը) տրուած էր իրեն: Ո՞վ տուած էր այդ իշխանութիւնը: Ան, որուն այն կը պատկանէր՝ Ադամը: Այսպիսով, Աստուած չէր կրնար պարզապէս միջամտել մարդոց գործերուն մէջ՝ առանց օրինական դուռէն մտնելու: Եթէ Ան այդպէս վարուէր, սատանան խարդախութիւն կ'անուանէր ատիկա: Ո՛չ, Աստուած պէտք է մտնէր նոյն դուռէն, որուն միջոցով սատանան մտաւ, որպէսզի բերէր Իր կառավարումը եւ իշխանութիւնը այս երկիր, եւ այդ դուռը մարդն էր: Բայց ո՞վ պիտի ըլլար այդ մարդը:

*«Եւ Տէրը ըսաւ Աբրամին. «Գնա՛ քու երկրէն եւ քու ազգականներէն եւ քու հօր տունէն այն երկիրը, որ Ես քեզի ցոյց կու տամ: Եւ Ես քեզի մեծ ազգ պիտի շինեմ եւ քեզ օրհնեմ եւ քու անունը մեծցնեմ, եւ դուն օրհնեալ կ'ըլլաս: Եւ քեզ օրհնողներուն կ'օրհնեմ, եւ քեզ անիծողներուն կ'անիծեմ, եւ երկրի բոլոր ազգերը քեզմով կ'օրհնուին»»:*

– Ծննդոց 12.1-3

Աբրահամը կը կոչուի մեր հաւատքի հայրը, քանի որ ան դուռ բացաւ Աստուծոյ համար երկրային տիրոջին մէջ, որուն միջոցով երկրի բոլոր ազգերն օրհնուած պիտի ըլլային: Անշուշտ, ըսելով, որ ազգերը օրհնուած պիտի ըլլային, այս խօսքը նկատի ունի, որ Յիսուս Քրիստոսը հետագային ճանապարհ պիտի բանար, որպէսզի

Աստուծոյ կառավարումը եւս մէկ անգամ օրինական մուտք ունենար այս երկիր՝ Աբրահամի հաւատքին միջոցով: Աբրահամի հաւատքն օրինական դուռ բացաւ Երկինքի համար, եւ Աստուած յաւիտեան բաց պահեց այն՝ օրինական ուխտ (պայմանագիր) կնքելով Աբրահամին եւ անոր սերունդին կամ ժառանգներուն հետ:

**«ՀԵՏԵՒԱԲԱՐ, ՀԱՒԱՏՔ  
ԿՈՒ ՉԱՅ ՈՒՂԵՐՉԸ  
ԼՍԵԼԷՆ, ԻՍԿ ՈՒՂԵՐՉԸ  
ԿԸ ԼՍՈՒԻ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՄԱՍԻՆ ԽՕՍՔԻՆ  
ՄԻՋՈՑՈՎ»:**

– ՀՈՌՎԱՍՅԵՑԻՍ 10.17, NIV

Թոյլ տուէք ուրիշ ձեւով արտայայտել իմ միտքը: Երկինքի կառավարումը կրնայ մուտք գործել այս երկիր միայն յետոյ տղամարդու կամ կնոջ միջոցով, քանի որ մարդիկ օրինական լիազօրութիւն ունին այս երկրի մէջ: Եւ Երկինքի կառավարումն օրինական է միայն, երբ յետոյ տղամարդ կամ կին բոլորովին համոզուած է իր սրտին մէջ, որ այն, ինչ որ Աստուած կ'ըսէ, ճշմարիտ է (հաւատք):

Կարելի է ըսել նաեւ, որ Երկինքը կրնայ օրինապէս ազդեցութիւն ձգել երկրային տիրոջին մէջ ապրող յետոյ տղամարդու կամ կնոջ կեանքին մէջ, միայն եթէ ան կը ցանկայ կամ որոշում կը կայացնէ ընդունիլ Աստուծոյ կառավարումը եւ իշխանութիւնը: Այս պարագային կը գործէ նոյն սկզբունքը, որ օգտագործեց սատանան՝ Ադամին միջոցով այս երկիր մուտք գործելու համար: Ան համոզեց Ադամին, որ Աստուած վստահելի չէր, եւ հեռացուց Ադամին սիրտը Աստուծոյ հետ ունեցած համաձայնութենէն: Վերջաւորութեան Ադամը որոշեց հաւատալ սատանային եւ մերժեց Աստուծոյ իշխանութիւնը:

Աստուած օգտագործեց նոյն այս սկզբունքը՝ վերադարձնելու համար Իր կառավարումը եւ իշխանութիւնն այս երկիր Աբրահամին միջոցով: Աբրահամը հաւատաց Աստուծոյ, եւ անոր համաձայնութիւնն արդարութիւն համարուեցաւ Աստուծոյ կողմէն, որն ալ կը նշանակէ, որ անհրաժեշտ օրինական համաձայնութիւնը կայացած էր: Այս երկկողմ (Աստուծոյ եւ Աբրահամի) համաձայնութիւնը թոյլ տուաւ Աստուծոյ օրինական պայմանագիր (ուխտ) կնքել, որ կ'ապահովէր Երկինքի մուտքը երկրային տիրոջ, ՍԱԿԱՅՆ անչափ կարելոր

է նշել, որ այս պայմանագիրն ազդեց միայն Աբրահամին եւ անոր ժառանգներուն վրայ: Այս ուխտի նշանը՝ թլփատութիւնը, տրուեցաւ Աբրահամի բոլոր ժառանգներուն: Թլփատութիւնը տղամարդու առնանդամի թլփի կտրումն էր: Երբ տղամարդը կը ցանէր իր սերմը կնոջ մէջ, անոր սերմը կ'անցնէր թլփատուած առնանդամով, ինչ որ կը յայտարարէր սատանային եւ յատկապէս ապագայ երեխայի հօրն ու մօրը, որ ան Աստուծոյ եւ Աբրահամի օրինական ուխտի ժառանգն էր Երկինքի առջեւ:

Ինչպէս արդէն կարդացինք, իւրաքանչիւր տղամարդ եւ կին, որուն հասանելի էր այդ օրինական ուխտը, պէտք է կատարէր նաեւ ատոր իրաւական պահանջը՝ անոր սիրտը պէտք է բոլորովին համոզուած ըլլար Աստուծոյ խօսքերուն մէջ, որպէսզի ան վայելէր Աստուծոյ եւ Աբրահամի կնքած պայմանագրի առաւելութիւնները իր կեանքին մէջ: Ըստ էութեան, այդ ուխտը լարերով միացած էր Աստուծոյ ժողովուրդի տուններուն, բայց անոնք, միեւնոյնն է, պէտք է միացնէին անջատիչը՝ անձամբ հաւատալով Աստուծոյ խօսքին եւ գործելով ատոր հիման վրայ:

Այժմ մենք գիտենք, թէ ինչ է հաւատքը եւ ինչու հաւատքն իրաւաբանօրէն անհրաժեշտ է: Եւ հիմա անչափ կարելոր է, որ իմանանք, թէ ինչպէս հաւատք ստանանք եւ ինչպէս իմանանք, որ մենք հաւատքի մէջ ենք:

## **Ինչպէ՞ս հաւատք ստանալ**

Ես յուշում մը պիտի ընեմ. դուք չէք կրնար աղօթել հաւատքի համար: Ասիկա զարմացո՞ւց ձեզի: Ես այդպէս ալ գիտի:

*«Հետեւաբար, հաւատքը կու գայ ուղերձը լսելէն, իսկ ուղերձը կը լսուի Քրիստոսի մասին խօսքին միջոցով»:*

– Հռովմայեցիս 10.17, NIV

Ինչպէ՞ս հաւատքը կու գայ՝ երբ կը լսենք Աստուծոյ խօսքը: Արդե՞օք լսելը միակ անհրաժեշտ պայմանն է: Ի՞նչ գործընթաց

տեղի կ'ունենայ: Արդեօ՞ք Խօսքը լսելը միակ պահանջն է, որ հաւատքը զարգանայ մարդու հոգիին մէջ: Որպէսզի հասկնանք, թէ ինչպէս կու գայ հաւատքը եւ ինչ նկատի ունի Հռովմայեցիս 10.17-ը, մենք կը կարդանք Մարկոսի 4-րդ գլուխը: Եթէ վեր նետէք ձեր Աստուածաշունչը, այն պէտք է որ վար իյնայ՝ բացուած Մարկոսի 4-րդ գլուխին վրայ. ահա թէ որքան կարեւոր է այս գլուխը: Յիսուսն ըսաւ Մարկոս 4.13-ին մէջ, որ եթէ չէք հասկնար այն, ինչին մասին Ան կը սորվեցնէ այս գլուխին մէջ, դուք չէք կրնար հասկնալ Աստուածաշունչի որեւէ այլ առակ: Ես պիտի ըսէի, որ այս գլուխը չափազանց կարեւոր է:

Ինչո՞ւ այս գլուխն այդքան կարեւոր է: Քանի որ այն կը պատմէ մեզի, թէ ինչպէս Երկինքը կը փոխգործակցի երկրին հետ, ինչպէս այն օրինական իշխանութիւն կը ստանայ, եւ աստիկա ուր տեղի կ'ունենայ: Չկայ աւելի կարեւոր բան ձեր կեանքին մէջ, քան այն, ինչ որ կը սորվեցնէ ամբողջ այս գլուխը: Դուք կրնաք հարցնել. «Ինչպէ՞ս կը գործէ Աստուծոյ Թագաւորութիւնը»: Այս գլուխին մէջ Յիսուսը կը պատմէ երեք առակ այն մասին, թէ ինչպէս հաւատքը կը ծնի մարդու հոգիին մէջ, եւ, ինչպէս գիտէք, աստիկա անհրաժեշտ է, որպէսզի երկինքն օրինապէս ներխուժէ այս երկիր:

Այս գլուխի երեք պատմութիւններն են սերմնացանի առակը, սերմ նետող մարդուն առակը եւ մանանեխի սերմին առակը:

Սկսինք Մարկոսի 4-րդ գլուխի Յիսուսին պատմած երկրորդ պատմութենէն, որ սերմ նետող մարդուն մասին է:

*«Եւ կ'ըսէր. «Այսպէս է Աստուծոյ Արքայութիւնը, որպէս թէ մարդ մը սերմ նետէր հողին մէջ: Եւ զիշեր-ցերեկ քնանայ ու արթննայ, եւ սերմը բուսնի եւ աճի այնպէս, որ ան չգիտնայ: Որովհետեւ երկիրն ինքնիրեն պտուղ կը բերէ՝ առաջ խոտը, յետոյ հասկը, եւ անորմէ յետոյ լեցուած ցորեն հասկի մէջ: Բայց երբ որ պտուղը կու տայ, շուտով կ'ուղարկէ մանգաղը, որովհետեւ հունձքը հասած է»»:*

– Մարկոս 4.26-29

Մինչեւ այս հատուածին անցնիլը, նախ սահմանենք որոշ հասկացութիւններ: Ո՞րն է այն սերմը, որուն մասին կը խօսի Յիսուսը, եւ ո՞րն է հողը: Իրականութեան մէջ, Յիսուսը կը սահմանէ այս հասկացութիւնները նոյն գլուխի նախորդ առակին մէջ, որ սերմնացանի մասին է: Սերմն Աստուծոյ Խօսքն է, իսկ հողը՝ մարդու սիրտը կամ հոգին: Այնպէս որ, օգտագործելով այս երկու բառի Յիսուսի սահմանումը, մենք կրնանք ըսել, որ այս առակին մէջ Յիսուսը կը պատմէ մարդու մը մասին, որ կը ցանէ Աստուծոյ Խօսքն իր սրտին մէջ: Եւ այդ հողը կամ մարդու սիրտը ինքնիրմով կը սկսի յառաջացնել հաւատք (համաձայնութիւն երկինքի հետ) այս երկրային տիրոյթին մէջ:

Մինչեւ առջեւ երթալը, անչափ կարելոր է, որ յիշէք, թէ որն է հաւատքի մեր սահմանումը. երբ ոեւէ տղամարդու կամ կնոջ սիրտը հաստատ համոզուած է այն բանով, ինչ որ կ'ըսէ Երկինքը: Այս հատուածին մէջ գրուած է, որ թէւէ մարդը չի գիտեր, թէ ինչպէս ատիկա տեղի կ'ունենայ, այն Խօսքը, որ ցանուած է անոր սրտին մէջ, ինքնիրմով կը սկսի աճիլ եւ համաձայնութիւն յառաջացնել: Ասիկա տեղի կ'ունենայ թէ՛ քնացած, թէ՛ արթուն ժամանակ. այս գործընթացը կանգ չ'առնէր: Երբ մարդը կը պահէ Խօսքն իր սրտին մէջ, անոր սիրտը աստիճանաբար կը համաձայնի Երկինքի ըսածին հետ, եւ հաւատք կը ծնի:

Մեր սուրբգրային հատուածը Մարկոսի 4-րդ գլուխին մէջ ցոյց կու տայ, որ սիրտը համաձայնութիւն կը յառաջացնէ որոշակի գործընթացի միջոցով: Հոս գրուած է, որ սկիզբը, երբ մեր սիրտը կ'ընդունի Խօսքը, կը սկսի հաւատքը ձեւաւորուիլ: Յիսուսը կը համեմատէ այդ փուլը ծիլ տալու հետ: Բուսած ծիլը կը շարունակէ աճիլ եւ խոտ կամ ցօղուն կը դառնայ: Ի վերջոյ, ցօղունի վրայ կը ձեւաւորուի հասկը, եւ նոյնիսկ այս ուշ փուլին մէջ տակաւին չկայ պտուղ, չկայ համաձայնութիւն եւ չկայ փոփոխութիւն բնական աշխարհին մէջ: Յիսուսը կ'ըսէ, որ այս ընթացքը կը շարունակուի, մինչեւ որ հասկը կը հասուննայ եւ կը լեցուի ցորենով: Երբ գործընթացը կը հասնի այս փուլին՝ երբ հասկը լեցուն է հասած ցորենով, կը յառաջանայ համաձայնութիւն՝ հաւատք, որ թոյլ կու

տայ մարդուն հնձել այս աշխարհին մէջ այն, ինչ որ Երկինքը ցանած է անոր սրտին մէջ:

Այժմ ուշադրութիւն դարձուցէք. եկէք վերանայինք, թէ իրականութեան մէջ ինչ կը կատարուի: Երկինքը կը ցանէ Աստուծոյ Խօսքը երկրային տիրոջին մէջ՝ ունէ տղամարդու կամ կնոջ սրտի մէջ, որ պէտք է համաձայնի Խօսքին հետ: Այդ պահուն մարդուն սիրտը դեռ չունի համաձայնութիւն Երկինքի հետ, բայց անոր սրտին մէջ կը սկսի գործընթաց մը, որ ինքն իրմով անոր սիրտը համաձայնութեան կը բերէ իրեն մէջ ցանուածին հետ: Յիսուսը հրաշալի օրինակ կ'օգտագործէ՝ այս գործընթացը նկարագրելու համար: Համեմատելով այս գործընթացը գիւղացիին կողմէ սերմ ցանելու եւ այդ սերմին հասուննալու հետ, Յիսուսը պատկերացում կու տայ այն մասին, թէ ինչպիսին է հաւատքը: Բնական աշխարհին մէջ, երբ սերմը կը հասուննայ հասկին մէջ, այն ունի **ՃԻՇՂ** նոյն տեսքը, ինչ որ հողին մէջ ցանուած սերմը: Թոյլ տուէք կրկին ըսել ասիկա:

**Երբ սերմը կը հասուննայ հասկին մէջ, այն ունի ՃԻՇՂ նոյն տեսքը, ինչ որ հողին մէջ ցանուած սերմը:**

Եթէ եզիպտացորեն ցանէք, հասկին մէջի հասուն սերմը ճշդօրէն նման պիտի ըլլայ ձեր ցանած սերմին: Ատոնք նոյնն են եւ ունին նոյն տեսքն ու համը: Այդ երկուքն անկարելի պիտի ըլլայ տարբերել. ատոնք նոյնական են:

Թոյլ տուէք շրջասութեան ենթարկել այն, ինչ որ նկատի ունի Յիսուսը: Երբ մենք ըլլանք Խօսքը (տե՛ս Հռոմ. 10.17), իրականութեան մէջ կը ցանենք Աստուծոյ Խօսքը մեր հոգեւոր մարդու կամ մեր սրտին մէջ: Եթէ մենք պահենք Խօսքը մեր սրտերուն մէջ, այն պիտի հասուննայ, եւ երբ հասուննայ, մեր սրտի պատկերացումները (այս երկրային տիրոջի մասին) պիտի համապատասխանին Երկինքի Խօսքերուն: Այսինքն, կարելի է ըսել, որ եթէ դուք շարունակէք ցանել Երկինքէն եկած որեւէ խոստում ձեր սրտին մէջ, այն աստիճանաբար եւ ինքնաբերաբար վստահութիւն պիտի յառաջացնէ Աստուծոյ ըսածին վերաբերեալ: Վերջաւորութեան, ձեր սրտերը բոլորովին

համոզուած պիտի ըլլան այն բանին մէջ, ինչ որ կ'ըսէ Երկինքը, եւ դուք պիտի համաձայնիք Երկինքի խօսքերուն հետ: Օրինակ, եթէ դուք բախած էք հիւանդութեան, ձեր մարմինին վիճակը կ'ըսէ, որ դուք հիւանդ էք: Սակայն եթէ սկսիք ցանել ձեր սրտին մէջ Աստուծոյ խօսքը այն մասին, որ Աստուած զին վճարած է ձեր բժշկութեան համար՝ Յիսուսի կատարած աշխատանքին միջոցով, ձեր սրտին մէջ աստիճանաբար եւ ինքնաբերաբար կը յառաջանայ համոզուածութիւն Աստուծոյ ըսածին մէջ:

Երբ բժշկութեան մասին խօսքը հասուննայ ձեր սրտին մէջ, ձեր ներսը վստահութիւն կը յառաջանայ, որ դուք բժշկուած էք, եւ **դուք** կը սկսիք հաւատալ ատոր եւ խօսիլ ատիկա: Դուք արդէն պարզապէս չէք կրկներ Երկինքի խօսքերը. ձեր սիրտը հաստատ համոզուած կ'ըլլայ: Երբ ըսէք՝ ես բժշկուած եմ, դուք պարզապէս չէք կրկներ ինչ որ բանաձեւ մը, այլ կը հաւատաք եւ վստահ կ'ըլլաք, որ ատիկա փաստ է: Այն, ինչ որ կ'ըսէ Երկինքը, կը դառնայ իրականութեան ձեր ընկալումը:

Ահա թէ ինչու Եբրայեցիս 11.1-ին մէջ գրուած է.

*«Հաւատքը կը նշանակէ համոզուած ըլլալ այն բանին մէջ, ինչին հանդէպ մենք յոյս ունինք, եւ վստահ ըլլալ այն բանին մէջ, ինչ որ մենք չենք տեսներ» (NIV):*

Ուր կայ հաւատք, կայ նաեւ գերբնական համոզուածութիւն այն բանին մէջ, ինչ որ կ'ըսէ Երկինքը. այնուամենայնիւ, այս գործընթացն ունի եւս մէկ քայլ:

Այժմ մարդը կ'ուղարկէ կամ կը մօտեցնէ իր մանգաղը՝ հնձելու համար, որպէսզի բերէ իր իրականութեան մէջ այն, ինչին մէջ որ ինքը սրտանց համոզուած է:

*«Հազիւ որ հասկը կը հասուննայ, ան կը մօտեցնէ իր մանգաղը, որովհետեւ հունձքը հասած է»:*

– Մարկոս 4.29, NIV

Ուշադրութիւն դարձուցէք, որ թէեւ սիրտն ունի համաձայնութիւն Երկինքի հետ, եւ երկնային իրականութիւնը դարձած է փաստ այդ տղամարդուն կամ կնոջ համար, ոչ մէկ իրական փոփոխութիւն տակաւին տեղի ունեցած է այս երկրին մէջ: Քանի որ մարդն ինքը իրաւասութիւն ունի այս նիւթական աշխարհին մէջ, ան պէտք է արձակէ Երկինքի իշխանութիւնն այս երկրին մէջ: Աստուած չի կրնար ընել ատիկա՝ առանց անոր: Ես կրնամ ցոյց տալ ասիկա շատ յայտնի Աստուածաշնչեան հատուածէ մը, որ դիտարկեցինք քիչ առաջ:

*«Քանի որ սրտով կը հաւատանք արդարանայու համար եւ բերանով կը դաւանինք փրկուելու համար»:*

– Հռովմայեցիս 10.10

Մարդը սրտով կը հաւատայ այն Խօսքին, որ հաւատք յառաջացուցած է իրեն մէջ, եւ կ'արդարանայ: Արդարացումը իրաւաբանական թերմին է, որ կը նշանակէ օրէնքի կիրառում: Երբ մարդուն սիրտը համաձայնութիւն ունի Երկինքի հետ եւ բոլորովին համոզուած է այն բանին մէջ, ինչ կ'ըսէ Երկինքը, ան կ'արդարանայ: Այնպէս որ, Երկինքն օրինապէս կրնայ գալ անոր կեանքին մէջ՝ այս երկրային տիրոյթ: Բայց արդարացումն ինքնին չ'արձակեր Աստուծոյ զօրութիւնը: Ինչպէս տունը, ուր ելեկտրականութիւն միացուցած է՝ այն հոսանքով ապահովելու համար, կայ եւս մէկ քայլ՝ միացնել անջատիչը եւ թոյլ տալ, որ հոսանքը ներս մտնէ, եւ լոյսերը միանան: Ինչո՞ւ: Քանի որ Հռովմայեցիս 10.10-ը կը պնդէ, որ կայ եւս մէկ քայլ արդարացում ստանալէն ետք:

Այն տղամարդը կամ կինը, որ արդարացուած է Երկինքի եւ երկրի առջեւ, պէտք է դաւանի կամ քայլ ընէ իր համաձայնութեան հիման վրայ, որպէսզի արձակէ Աստուծոյ զօրութիւնը եւ օծութիւնը այս երկրին մէջ: Կրկին ու կրկին կարդացէ՛ք Հռովմայեցիս 10.10-ը, մինչեւ լիովին հասկնաք, թէ ինչ նկատի ունին: Ահա թէ ինչպէս ասիկա կը գործէ: Ահա թէ ինչպէս Երկինքն օրինական իրաւունք կը ստանայ այս երկրին մէջ. սիրտը կը կրէ Երկինքի փոխազդեցութիւնն այս երկրային



տիրոջին մէջ, իսկ յետոյ մեր խօսքերը եւ գործերը՝ անջատիչի նման, կ'արձակեն Երկինքի զօրութիւնը: Կրկին ուշադիր կարդացէ՛ք այս խօսքի երկրորդ մասը. մենք ենք, որ պէտք է արձակենք Երկինքի իշխանութիւնը հոս:

Գաղափարն այն մասին, որ Երկինքը կը սպասէ, որպէսզի մարդն առաջին հերթին ապահովէ օրինական իրաւունք, իսկ երկրորդ հերթին՝ իրաւասութիւն այս երկրի վրայ, կարելի է տեսնել Մատթէոս 16 եւ 18 զլուխներուն մէջ Յիսուսի ուսուցումներուն մէջ:

*«Ճշմարիտ կ'ըսես ձեզի, ինչ որ երկրի վրայ կապէք, Երկինքի մէջ ալ կապուած կ'ըլլայ, եւ ինչ որ երկրի վրայ արձակէք, Երկինքի մէջ ալ արձակուած կ'ըլլայ»:*

– Մատթէոս 18.18

Այս խօսքին մէջ Յիսուսը կը պնդէ, որ Ինքը պիտի տայ եկեղեցիին Թագաւորութեան բանալիները (իշխանութիւնը) երկրային տիրոջին մէջ: Ան կ'ըսէ, որ Երկինքը կը սատարէ ձեզի, երբ որեւէ բան կապէք այս երկրի վրայ, եւ Երկինքը կը սատարէ ձեզի, երբ որեւէ բան արձակէք

այս երկրի վրայ: Կրկին, յիշեցէք ուստիկանին օրինակը. ան ունի իշխանութիւն, բայց զօրութիւնը կը պատկանի պետութեանը: Ուստիկանը կը կրէ պետութեան բանալին կամ իշխանութիւնը, քանի որ ան երդուած է ըլլալ այդ պետութեան գործակալը: Իշխանութիւնը կը սատարէ այն, ինչ որ ան կ'ըսէ: Յիշեցէք՝ միայն մարդն ունի իրաւասութիւն այս երկրի մէջ, այսինքն՝ միայն մարդը կրնայ իրաւասութիւն տրամադրել այս երկրին մէջ:

Կայ եւս կարելոր փաստ մը

**ԱՀԱ ԹԷ ԻՆՉՊԷՍ  
ԵՐԿԻՆՔՆ ՕՐԻՆԱԿԱՆ  
ԻՐԱՒՈՒՆՔ ԿԸ ՍՏԱՆԱՅ  
ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ.  
ՍԻՐՏԸ ԿԸ ԿՐԷ ԵՐԿԻՆՔԻ  
ՓՈՒՍԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆ  
ԱՅՍ ԵՐԿՐԱՅԻՆ  
ՏԻՐՈՅԹԻՆ ՄԷՋ, ԻՍԿ  
ՅԵՏՈՅ ՄԵՐ ԽՕՍՔԵՐԸ  
ԵՒ ԳՈՐԾԵՐՆ ԱՆՋԱՏԻՉԻ  
ՆՄԱՆ Կ'ԱՐՉԱԿԵՆ  
ԵՐԿԻՆՔԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ:**

հաւատքի մասին, որ դուք պէտք է գիտնաք: Թոյլ տուէք կրկին մէջբերել Մարկոսի 4-րդ գլուխին մէջ գտնուող մեր հատուածէն.

*«Որովհետեւ երկիրը ինքնիրեն պտուղ կը բերէ՝ առաջ խոտը, յետոյ հասկը, եւ անորմէ՝ յետոյ լեցուած ցորեն հասկի մէջ»:*

– Մարկոս 4.28

Յիշեցէք՝ Յիսուսը սահմանեց երկիրը կամ հողը, որ յիշատակուած է այս առակին մէջ, որպէս մարդու սիրտը կամ հոգին, ինչպէս արդէն նշեցի: Ուշադրութիւն դարձուցէք, թէ ուր կը յառաջանայ հաւատքը. ասիկա կը զարմացնէ՞ ձեզի: Այն չի յառաջանար Երկինքի մէջ, ինչպէս որ կը հաւատայ մարդոց մեծ մասը. այն կը զարգանայ հոս՝ երկրի վրայ, եւ կը յառաջանայ ձեր սրտին մէջ: Դուք չէք կրնար աղօթել հաւատքի համար կամ խնդրել հաւատք Աստուծմէ: Երկինքը հաւատքի կարիք չ'ըլլար: Երկինքի մէջ մենք համաձայնութեան գալու կարիք չենք ունենար: Ո՛չ, հաւատքն անհրաժեշտ է միայն հոս՝ երկրային տիրոջին մէջ, եւ այն կրնայ յառաջանալ միայն երկրի վրայ գտնուող մարդոց սրտերուն մէջ: Ինչպէս որ կը սորվեցնէ Մարկոսի 4-րդ գլուխի այս առակը, գոյութիւն ունի հաւատք ստանալու միայն մէկ միջոց՝ ցանել Աստուծոյ խօսքը ձեր սրտին մէջ եւ թոյլ տալ, որ համաձայնութեան գործընթացը տեղի ունենայ: Այնպէս որ, եթէ ես հաւատքի կարիք ունիմ, ի՞նչ պէտք է ընեմ: Ես պէտք է ցանեմ Աստուծոյ խօսքն իմ սրտին մէջ եւ թոյլ տամ, որ այն աճի, մինչեւ որ իմ սրտին մէջ հաւատք ըլլայ: Ասիկա հաւատք ունենալու միակ միջոցն է:

Մինչեւ Մարկոսի 4-րդ գլուխի այս պատմութիւնն աւարտելը, կ'ուզեմ կրկին խօսիլ հոս նշուած մանգաղին մասին:

*«Հազիւ որ հասկը կը հասուննայ, ան կը մօտեցնէ իր մանգաղը, որովհետեւ հունձքը հասած է»:*

– Մարկոս 4.29, NIV

Ես կը հաւատամ, որ եկեղեցական աշխարհի մեծ մասին չեն սորվեցուցած, թէ ինչպէս գործածեն մանգաղը, այսինքն՝ անոնց չեն սորվեցուցած, թէ ինչպէս հնձեն այն, ինչի կարիքը որ իրենք ունին: Եկեղեցին մեծ մասամբ սորված է տալ, բայց ոչ՝ աճեցնել իր ցանած սերմը եւ հնձել: Այս խօսքին մէջ Յիսուսը շատ յստակ կը բացատրէ, որ երբ մեր հաւատքի հունձքը պատրաստ է, ՄԵՆՔ պէտք է մօտեցնենք մանգաղը: Նոյնիսկ եթէ հաւատքով ցանենք մեր սերմը, չնայած դեռ չենք գիտեր, թէ ինչպէս մօտեցնենք մանգաղը, հունձք չ'ըլլար: Անկեղծ ըսելու համար, ես ոչինչ գիտէի այս մասին, մինչեւ որ Տէրը չորվեցուց ինձի Թագաւորութեան գործելակերպը: Թոյլ տուէք քանի մը օրինակ բերել այն մասին, թէ ինչպէս ասիկա տեղի կ'ունենայ:

Ինձի հրաւիրած էին քարոզելու Աթլանթա գտնուող եկեղեցւոյ մը մէջ, Չորեքշաբթի երեկոյեան հաւաքոյթին: Այդ եկեղեցին այնքան ալ մեծ չէր, բայց ինձի համար ատիկա խնդիր չէր: Ես կը սիրէի սորվեցնել մարդոց Թագաւորութեան մասին: Երբ եկեղեցի հասայ, ինձի համար տարօրինակ էր, որ դռները փակ էին, եւ ոչ ոք կար: Ես տեղ հասած էի ծառայութենէն տասը վայրկեան առաջ: Յանկարծ լսեցի բաց թափքով ինքնաշարժի շատ զօրաւոր ձայն իմ ետեւը: Չայնը այնքան զօրաւոր էր, ըսես այդ ինքնաշարժն ընդհանրապէս խլացուցիչ չունէր: Ետ նայելով՝ տեսայ հին, մաշած եւ վնասուած բաց թափքով ինքնաշարժ մը, որ կը մօտենար եկեղեցւոյ շէնքին՝ ետնամասը գտնուող ծառուղիով: Ես ոչինչ մտածեցի այդ մասին. թէ եւ քաղաքի կեդրոնն էի, ատիկա այնքան ալ անսովոր չէր Աթլանթայի համար: Մինչ կը սպասէի, շէնքի ետնամասէն մօտեցաւ մարդ մը եւ ներկայացաւ որպէս այդ եկեղեցւոյ հովիւ: Ան ըսաւ, որ կը ցաւի ուշանալու համար, պարզապէս անոր հին ինքնաշարժի շարժիչը չէր միանար, եւ ան ստիպուած էր իջեցնելու իր ինքնաշարժը թեքութիւն ունեցող ճամբայով եւ քիչ մը արագութիւն հաւաքելէն յետոյ, շարունակ սեղմած էր կցորդիչի ոտնակը, քանի որ ընթացաշարժիչն անսարք էր: Ան ըսաւ, որ յաճախ շարժիչն ընդհանրապէս չէր միանար, եւ ան ստիպուած կ'ըլլար ութ քիլոմետր ոտքով քալելու՝ եկեղեցի հասնելու համար:

Ան պատմեց իր եկեղեցւոյ մասին եւ ըսաւ, որ եկեղեցւոյ հիմնական գործունէութիւնը քաղաքի կեդրոնական շրջանի անապահով մարդոց կերակրելն է: Եկեղեցին կը բաժնէր ամսական մօտաւորապէս 10.000 ճաշ այդ տարածքին մէջ: Մինչ այդ հովիւը կը խօսէր, ես կը բարկանայի: Ան Աստուծոյ մարդ էր, որ կը կերակրէր 10.000 մարդ ամէն ամիս, բայց նոյնիսկ յուսալի ինքնաշարժ չունէր: Ան Աստուծոյ միակ պատկերն էր, որ երբեք պիտի տեսնէին այն մարդիկ, որոնց ան կը կերակրէր: Եթէ անոնք տեսնէին, որ ան հազիւ կը հոգար իր կարիքները եւ ստիպուած էր ոտքով անցնելու ութ քիլոմէթր 38 աստիճան տաքութեամբ՝ եկեղեցի հասնելու համար, ի՞նչ վստահութիւն կ'ունենային, որ Աստուած պիտի օգնէր իրենց: Ես կրնայի լուծել այդ խնդիրը: Ես շատ լաւ վիճակի մէջ գտնուող ինքնաշարժ մը ունէի տանը, որուն վազքը 32.000 քիլոմէթր էր, որ կրնայի նուիրել անոր: Ես պատմեցի անոր իմ որոշման մասին եւ ըսի, որ իմ աշխատակիցներէն մէկուն հետ այդ ինքնաշարժը պիտի ուղարկեմ Աթլանթա: Անշուշտ, ան ոգեշնչուեցաւ: Այդ երեկոյի ամբողջ ընթացքին ես կը սորվեցնէի անոր եւ անոր փոքր եկեղեցիին Աստուծոյ Թագաւորութեան մասին եւ այն մասին, թէ ինչպէս այն կը գործէ ֆինանսական ոլորտին մէջ:

Երբ տուն գացի, ես հրահանգեցի Աթլանթա տանիլ այդ ինքնաշարժը: Երբ իմ աշխատակազմի անդամներէն մէկը եկաւ մեր տուն՝ այդ ինքնաշարժը տանելու համար, ես գիտէի, որ հոգեւոր գործարք կը կատարէի Երկինքի մէջ: Գիտէի՝ քանի որ ես կու տայի այդ ինքնաշարժն Աստուծոյ Թագաւորութեան, ես կրնայի հաւատալ Աստուծոյ այլ ինքնաշարժի համար: Ես ինքնաշարժներու սիրահար չեմ, այսինքն՝ ինքնաշարժները չեն տպաւորեր ինձի: Որոշ մարդիկ այդպիսին են, բայց ես՝ ոչ: Ինձի համար ինքնաշարժը պարզապէս գործիք է: Անշուշտ, ինձի հաճելի կը թուի լաւ ինքնաշարժ ունենալը, բայց սովորաբար ես կը քչեմ ինքնաշարժներն այնքան ժամանակ, մինչեւ որ ատոնք փոխարինելու կարիք կ'ըլլայ:

Երբ իմ աշխատակազմի անդամը կայանեց իր ինքնաշարժը մեր տան քով, ես գացի իմ կառատունը, դրի ձեռքերս այդ ինքնաշարժին վրայ եւ ըսի.

- Հա՛յր, ես կու տամ այս ինքնաշարժը Քու ծառայութեան գործին համար, եւ տալով այս ինքնաշարժը՝ ես կ'ընդունիմ մէկ այլ ինքնաշարժ...

Ես վարանեցայ. գիտէի, թէ որքան ճշգրիտ է Աստուծոյ Թագաւորութիւնը, եւ գիտէի, որ պարզապէս «ինքնաշարժ» բառը բաւական չէր: Ես նոյնպէս գիտէի, որ պէտք է ճշգրտօրէն խօսէի, եւ որ Տրե՛նտան եւ ես պէտք է յստակ համաձայնութիւն ունենայինք այն մասին, թէ մենք ինչ պիտի ստանայինք: Կանգ առնելով նախադասութեան կէսէն, ես նոյնպէս հասկցայ, որ չէի գիտեր, թէ ինչ ինքնաշարժ կ'ուզեմ: Այնպէս որ, կրկին սկսայ.

- Տէ՛ր, ես այսօր կու տամ այս ինքնաշարժը Քու ծառայութեան համար եւ կը հաւատամ, որ պիտի ստանամ շատ լաւ ինքնաշարժ՝ այս ցանքին շնորհիւ, բայց ես տակաւին պէտք է ըսեմ Քեզի այդ ինքնաշարժին ձեւն ու տեսակը, երբ որոշեմ:

Ատորնով աւարտեցի, եւ իմ աշխատակազմի անդամը տարաւ այդ ինքնաշարժը: Իմ մտքին մէջ իսկապէս չկար որեւէ ինքնաշարժ, որուն վերաբերեալ կրնայի ըսել. «Այո՛, ես ցանկան ունենալ ԱՅՂ ինքնաշարժը»:

Անցաւ քանի մը ամիս: Անշուշտ, Տրե՛նտան եւ ես համաձայնութիւն ունէինք այդ ինքնաշարժը նուիրելու հարցին մէջ, եւ, ինչպէս ես, ան չէր պատկերացներ, թէ ինչ տեսակի ինքնաշարժ կը ցանկար ունենալ: Աւելի քան երկու ամիս մենք կը խօսէինք ինքնաշարժներու մասին, եւ վերջապէս մէկ անգամ ան ըսաւ.

- Գիտես, կը կարծեմ՝ ես կուզէի ծալուող տանիքով ինքնաշարժ ունենալ:

Ես ըսի անոր, որ համաձայն եմ, եւ որ իմ կարծիքով ատիկա հետաքրքրական պիտի ըլլայ, բայց ի՞նչ տեսակի: Կրկին, մենք նոյնիսկ չէինք գիտեր, թէ ինչ տեսակի ծալուող տանիքով ինքնաշարժներ կային: Բայց մէկ անգամ, երբ մենք կ'երթայինք ճաշելու, կինս յանկարծ ըսաւ.

- Ահա՛ այն:

- Ի՞նչը, - ըսի ես:

- Ահա՛ այն, - ըսաւ ան՝ մատնացոյց ընելով այն ճաշարանի կառատունին միւս կողմը, որ մենք եկած էինք:

- Ի՞նչը, - հարցուցի ես:

- Այդ ինքնաշարժը, ես կը ցանկամ այդպիսի ինքնաշարժ ունենալ:

Ես տեսայ շատ գեղեցիկ, ծալուող տանիքով ինքնաշարժ մը կառատունին միւս կողմը:

- Եկո՛ւր երթանք եւ տեսնենք, թէ ինչ ինքնաշարժ է ատիկա, - ըսի ես:

Մենք մօտեցանք այդ ինքնաշարժին եւ կայանեցինք մեր ինքնաշարժն ատոր ետեւը:

Ջարմանալի չէ, որ այն Տրենտային հաճելի կը թուէր: Ատիկա «BMW 645Ci» էր՝ անկասկած, շատ լաւ ծալուող տանիքով ինքնաշարժ, որ նոյնպէս շատ սուղ կ'արժէր: Ես անկեղծ կ'ըլլամ ձեզի հետ. երբ տեսայ այդ ինքնաշարժը, մտածեցի.

- Լաւ, Տէ՛ր, ցոյց տուր մեզի, թէ ինչ ընենք:

Ես գիտէի, որ չէի պատրաստուեր 115.000 տուար վճարել «BMW»-ի այդ նոր տեսակին համար, բայց նոյնպէս գիտէի, որ Աստուած կրնայ զարմանալի բաներ ընել: Տրենտան եւ ես ոչ ոքի պատմեցինք այդ ինքնաշարժին մասին, եւ ո՛չ ալ ըսինք ոեւէ մէկուն, որ ինքնաշարժ կը փնտռէինք:

Գրեթէ երկու շաբաթ յետոյ Տրենտային եղբայրը հեռաձայնեց մեզի եւ ըսաւ.

- Ես գտա՛ծ եմ Տրենտային ինքնաշարժը:

- Ի՞նչ նկատի ունիս՝ ըսելով, որ գտած ես Տրենտային ինքնաշարժը, - հարցուցի անոր:

- Ես տեսայ, որ այդ ինքնաշարժը կը վաճառուի, եւ յանկարծ պարզապէս զգացի, որ ատիկա պէտք է Տրենտային ինքնաշարժն ըլլայ, եւ որ ես պէտք է ըսեմ ձեզի այդ մասին:

- Ի՞նչ ինքնաշարժ է ատիկա, - հարցուցի ես:

- Ատիկա «BMW 645Ci» է, եւ այն գերազանց վիճակի մէջ է: Իրականութեան մէջ՝ գերազանց վիճակի մէջ: Այն քանի մը տարուայ

է, ցած վազքով, եւ նոյնիսկ մէկ քերծուածք չունի: Այն գերազանց է: Բացի այդ, դուք կը ճանչնաք այն վաճառող մարդուն:

- Իսկապէ՞ս, - հարցուցի ես:

- Այո՛, - ըսաւ ան, - դուք պէտք է հեռաձայնէք անոր եւ խօսիք:

Երբ ան անուանեց այդ ինքնաշարժին տեսակը եւ ըսաւ ինծի ատոր վիճակին մասին, ես հասկցայ, որ Աստուած կը պատրաստուէր ինչ որ բան մը ընել, քանի որ ատիկա նոյն այն ինքնաշարժն էր, որուն վերաբերեալ Տրենտայն եւ ես համաձայնեցանք երկու շաբաթ առաջ:

Ես հեռաձայնեցի այն մարդուն, որուն կը պատկանէր այդ ինքնաշարժը: Այո՛, ես կը ճանչնայի անոր: Մենք քիչ մը զրուցեցինք ինքնաշարժին մասին, եւ ան նկարագրեց, թէ ինչ գերազանց վիճակի մէջ էր այն: Ատկէ յետոյ ան ըսաւ ինծի հետեւեալը.

- Գիտես, այն պահէն, երբ մենք սկսանք խօսիլ այս ինքնաշարժին մասին, ես իսկապէս կը զգամ, որ այս ինքնաշարժը պէտք է Տրենտայինը ըլլայ:

Ես ոչինչ ըսած էի այն մասին, որ կը ցանկայի գնել այդ ինքնաշարժը Տրենտային համար: Ան շարունակեց.

- Ահա թէ ինչ կ'ընեն. ես կը վաճառեմ այն ձեզի 28.000 տոլարով:

Ես հազիւ կը հաւատայի ականջներուս: Այդ ինքնաշարժը շատ աւելին կ'արժէր: Երբ ես ըսի Տրենտային այդ մասին, ան, մեղմ ըսած, խիստ ոգեւորուեցաւ: Մենք գնեցինք այդ ինքնաշարժը կանխիկ գումարով եւ մինչեւ օրս կը քշենք: Ատոր վրայ մինչեւ հիմա նոյնիսկ մէկ գծուածք չկայ, եւ մենք շատ ուղեւորութիւններ կատարած ենք այդ ինքնաշարժով՝ վար իջած տանիքով, բարձր միացած սթերիօ համակարգով եւ արեւի կենարար ճառագայթներու ներքոյ:

Մեր ամենասիրելի ճանապարհորդութիւնն այդ ինքնաշարժով Քոլորատոյի լեռներու մէջէն էր, որուն ընթացքին մեր ճամբորդելու յարմարանքները դրուած էին ինքնաշարժի սնտուկը: Մեր դուստր Քիրսթընը մեզի հետ էր այդ ճանապարհորդութեան ժամանակ, եւ ես կը յիշեմ, որ կը քշէի այդ ինքնաշարժը Քանգաս նահանգի Այ-70 մայրուղիով, գիշերով, վար իջած տանիքով: Քիրսթընը

քնացած էր ետեւի նստարանին, մինչ մենք ճամբան էինք: Աստղերն այնքան վառ կը շողային մեր գլխավերելը, եւ ճանապարհը դատարկ էր՝ բացառութեամբ հազուադէպ հանդիպող մէկ-երկու բեռնատարներու: Ատիկա այն գերագանց գիշերներէն մէկն էր, երբ եղանակն արտակարգ է եւ ամէն ինչ այս աշխարհին մէջ հրաշալի է: Յաջորդ երկու շաբթուան ընթացքին մենք անցանք ժայռոտ Լեռներու մէջէն, եւ ես բացայայտեցի, թէ որքան հաճելի էր այդ ինքնաշարժով ճամբորդելը: Ես կրնամ նկարագրել մէկ բառով. ատիկա հիասքանչ էր:

Բայց կ'ուզեմ «մէկ միլիոն տոլարի» հարցում հարցնել: Ինչպէ՞ս այդ ինքնաշարժը յայտնուեցաւ մեր քով: Ինչո՞ւ յայտնուեցաւ ճիշդ այն ինքնաշարժը, որուն մասին Տրենտան ըսաւ՝ ահա՛ այն: Ես գիտէի, որ Աստուծոյ Թագաւորութիւնը բերած էր այդ ինքնաշարժը մեզի: Ես գիտէի, որ երբ ցանցի իմ ինքնաշարժը՝ տալով այդ հովիւին, ես կիրառեցի հոգեւոր օրէնք: Կը յիշեմ՝ ես ըսի, որ պիտի ստանամ սետան (սովորական), ոչ թէ բազմաբնոյթ ինքնաշարժ, ոչ թէ ճիւղ, այլ պարզ կը յիշեմ, որ ըսի՝ շատ լաւ ինքնաշարժ: Թէեւ ես տուի այդ ինքնաշարժը հաւատքով, սակայն մենք չէինք մօտեցուցած մանգաղը, քանի դեռ Տրենտան չէր ըսած. «Ահա՛ այն»:

Տեղի ունեցաւ եւս մէկ իրադարձութիւն, որն ի յայտ բերաւ այս սկզբունքն ա՛լ աւելի տպաւորիչ ձեւով: Ինչպէս գիտէք, ես որսորդութեան սիրահար եմ: Կ'ապրիմ որսորդութեան համար հրաշալի երկրի մը մէջ եւ օրինուած եմ այն բանով, որ ունիմ իմ սեփական որսորդական տարածքը: Իմ սեփական 24 հեքթար տարածքին գրեթէ 7.5 հեքթարը բաղկացած է անտառէ, եւ մօտաւորապէս 4-ը՝ ճահճուտէ: Ամէն տարի ես մեծ յաջողութեամբ եղնիկներ եւ սկիւռներ կ'որսամ: Իմ տարածքով մշտապէս բաղեր եւ սագեր կը թռչին, բայց, ինչ-ինչ պատճառով, ես երբեք չէի մտածած ասոնք որսալու մասին: Հոն ապրելու տարիներուն որդիներս եւ ես մէկ կամ երկու անգամ յանկարծակի որսացած էինք քանի մը սագ՝ ընթրիքի համար: Բայց մենք երբեք բաղի որս չէինք ըրած:

Քանի մը տարի առաջ, տեսնելով, թէ ինչպէս տասնեակ բաղեր շարունակ կը թռչին դէպի իմ ճահճուտը, ես մտածեցի, որ կրնամ



փորձել բաղեր որսալ: Ատիկա այնքա՛ն ոգեշնչող էր: Ես կլանուեցայ ատորմով: Աշնանային բաղի որսի ընթացքին հասկցայ, որ պէտք է լրջօրէն վարժուիմ բաղեր կրակելու մէջ: Ես կրցայ որսալ քանի մը հատ եւ պարզեցի, որ ատոնք նաեւ շատ համեղ են: Ես նկատեցի, որ յաճախ բաղերը դուրս են իմ հրացանի հասանելիութենէն կամ հագի հասանելի են, որն ալ, կը կարծեմ, իմ վրիպումներէն քանի մը հատին պատճառն էր: Ես կը փորձէի որսալ ատոնց իմ հրացանով, որ կ'օգտագործէի ամէն տեսակի որսի համար՝ սկսեալ նապաստակներէն մինչեւ եղնիկները. այն «Ռեմինկթոն 11-87» էր: Սխալ մի՛ հասկնաք. ինծի հաճելի է այդ հրացանը, եւ այն շատ լաւն է: Բայց ես լսած էի, որ կային հրացաններու նոր տեսակներ, որոնք պատրաստուած էին յատուկ բաղի որսի համար: Ատոնք քողածածկուած էին եւ նախատեսուած էին երեք ու կէս մատնաչափի փամփուշտներու համար, որն ալ, ինչպէս ես գիտէի, պիտի օգնէր խոցելու հեռուն գտնուող թիրախները: Ես կը ծրագրէի գնել այդպիսի հրացան մը մինչեւ բաղերու յաջորդ որսաշրջանի սկիզբը:

Բաղերու որսաշրջանն աւարտեցաւ. արդէն Յունուար ամիսն էր: Ես «Քապելաս» կոչուող յայտնի որսորդական խանութներէն մէկն էի եւ որոշեցի երթալ հրացաններու բաժին՝ տեսնելու համար, թէ ինչպիսին էին այդ հրացանները: Հասնելով այդ բաժին՝ տեսայ ամբողջ ենթաբաժին մը՝ նախատեսուած միայն բաղի որսի հրացաններու համար: Ես նայեցայ ատոնցմէ քանի մը հատին եւ ուզեցի գնել հրացան մը, որ շատ հաւնեցայ, բայց 2.000 տոլար կ'արժէր, իսկ որսաշրջանը պիտի սկսէր միայն քանի մը ամիսէն: «Ես կը սպասեմ», - մտածեցի: Բայց անմտածուած ու անսովոր բան մը ըրի, երբ կը հեռանայի: Ես մատնացոյց ըրի այն հրացանին, որ կը ցանկայի ունենալ, եւ բարձրաձայն ըսի.

- Ես կ'ունենամ այս հրացանը, Յիսուսի անունով»:

Կրկին, ես շատ չմտածեցի ատոր վերաբերեալ. պարզապէս հռչակեցի, որ պիտի ունենայի այդ հրացանը: Իմ սրտին մէջ կար պարզ պատկեր այն բաղի որսի հրացանին մասին, որ կը ցանկայի:

Քանի մը շաբաթ յետոյ ինծի հրաւիրեցին քարոզելու գործարար

համաժողովի մը, եւ հոն տեղի ունեցաւ բան մը, որ գրաւեց իմ ուշադրութիւնը: Իմ խօսքէն յետոյ այն կազմակերպած ընկերութեան տնօրէնը մօտեցաւ ինձի եւ ըսաւ, որ իրենք կ'ուզէին շնորհակալական նուէր մը տալ ինձի՝ իրենց հրաւերն ընդունելու համար: Ան ըսաւ.

- Գիտենք, որ դուք որսորդութեան սիրահար էք. այնպէս որ, մենք գնեցինք ձեզի համար այս հրացանը:

Ես ցնցուած էի, քանի որ անոնք գնած էին նոր «Պենելլի» կիսահինքնաձիգ բաղի որսի հրացան, ճիշդ այն տեսակը, որ ես տեսած էի այդ խանութին մէջ եւ որ մատնացոյց ըրած էի: Դուք կը հասկնա՞ք: Ինչպէ՞ս այդ հրացանը եկաւ քոյս: Տարիներ շարունակ ես տասնեակ հրացաններ նուիրած էի, բայց ոչ մէկ անգամ մօտեցուցած էի մանգաղը: Ուրիշ ձեւով ըսելու համար, ես ցանած էի այդ հրացանները՝ հաւատքով եւ առատածեռնութեամբ, բայց այդպէս ալ չէի մօտեցուցած մանգաղը: Ես երբեք չէի ըսած. «Տէ՛ր, ահա՛ այն: Ես կը ցանկան ունենալ այս հրացանը»: Բայց այն պահուն, երբ ըրի ատիկա, հունձքը եկա՛ւ:

Ես կը պատմէի այդ հրացանի պատմութիւնը մէկ այլ ծառայողի, որ իմ ընկերն է: Ան ըսաւ.

- Այո՛, կը կարծեմ՝ երբեմն Աստուած կը վարուի այդպէս: Ան պարզապէս կ'օրհնէ քեզի որեւէ յատուկ փոքր նուէրով, որպէսզի ցոյց տայ, որ կը սիրէ քեզի:

Մտածելով այդ մասին՝ ես հասկցայ. «Ո՛չ, այդպէս չէ: Այո՛, Աստուած կը սիրէ ինձի, բայց Ան չէր ուզեր պարզապէս զարմացնել ինձի պզտիկ նուէրով»: Շնիկը, մեծ ծուկը, եղջերուները եւ եղնիկները, որոնք կու գային ճիշդ հերթականութեամբ, ինքնաշարժները՝ այդ ամէնը չեկաւ պարզապէս այն պատճառով, որ Աստուած կ'ուզէր ցոյց

**...ԱՍՏՈՒԱԾ Կ'ՈՒԶԷՐ  
ՑՈՅՑ ՏԱԼ, ՈՐ ԿԸ  
ՍԻՐԷ ԻՆԾԻ: ԱՆ ՑՈՅՑ  
ՏՈՒՄ, ՈՐ ԿԸ ՍԻՐԷ  
ԻՆԾԻ, ԵՐԲ ՈՒՂԱՐԿԵՑ  
ՅԻՍՈՒՄԻՆ ԻՆԾԻ ՀԱՄԱՐ  
ԵՒ ՏՈՒՄ ԻՆԾԻ ԻՐ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ:**

տալ, որ կը սիրէ ինծի: Ան ցոյց տուաւ, որ կը սիրէ ինծի, երբ ուղարկեց Յիսուսին ինծի համար եւ տուաւ ինծի Իր Թագաւորութիւնը:

Կ'ուզեմ պատմել ձեզի եւս մէկ պատմութիւն հունձքի մասին: Ինչպէս արդէն ըսի, ես ինքնաշարժներու սիրահար չեմ: Մենք կը քշենք ինքնաշարժներն այնքան ժամանակ, մինչեւ որ ատոնք փոխարինելու կարիք կ'ըլլայ: Ատոր օրինակը մեր ութ տարուան «Հոնտա Փիլոթն» է: Այդ ինքնաշարժը մենք կը սիրենք. այն որակեալ է, անխափան կ'աշխատի, նոր տեսք ունի, եւ այդ պատճառով կը պահենք այն: Բայց մենք յաճախ կը մտածէինք աւելի մեծ, բազմաբնոյթ ինքնաշարժ ունենալու մասին՝ ուղեւորներու եւ հիւրերու համար: Որոշ ժամանակ առաջ «Քատիլաք Էսքալատ» վարձած էինք մեր «Նաու Սենթըր» կեդրոնը տեղի ունեցող միջոցառումներէն մէկուն համար: Տրենտան ու ես քշեցինք, եւ հաւնեցանք այն: Մեզի հաճելի էր ատոր մարգարիտէ սպիտակ գոյնը, նաեւ՝ կարճ տեսակը, որ կը վարէինք՝ ի տարբերութիւն «Էսքալատի» սովորական երկար տեսակին: Մենք ըսինք. «Մենք կը ցանկանք ունենալ այս ինքնաշարժէն՝ «Քատիլաք Էսքալատ», մարգարիտէ սպիտակ գոյնէ, կարճ տեսակը: Մենք պէտք է այսպիսի ինքնաշարժ գնենք»: Մենք շատ զբաղած էինք եւ ժամանակ չունէինք այդպիսի ինքնաշարժ փնտռելու եւ գնելու համար:

Սօտաւորապէս մէկ ամիս յետոյ ես բացի մեր տան դուռը՝ առաւօտեան օրաթերթը վերցնելու համար, երբ իմ բջիջային հեռախօսը հնչեց: Տղամարդ մը ըսաւ.

- Ողջո՛յն հովիւ, ես կ'ուզեմ Քատիլաք Էսքալատ գնել ձեզի համար: Ո՞ր գոյնը կը նախընտրէք:

Անակնկալի եկած՝ ըսի.

- Հրաշալի՛ է: Տրենտան եւ ես կը նախընտրենք մարգարիտէ սպիտակ գոյնը:

- Լա՛ւ, - ըսաւ ան, - ես կը փնտռեմ եւ կը տեսնեմ, թէ ինչ կրնամ գտնել:

Ես այնպէս ոգեւորուեցայ, որ մոռցայ ըսելու, որ մենք կը ցանկայինք ունենալ կարճ տեսակը: Ան որոշած էր գտնել մէկ կամ

երկու տարուան ինքնաշարժ՝ գերազանց վիճակով եւ ցած վազքով:

Գրեթէ մէկ ամիս մենք ոչ մէկ լուր ստացանք անորմէ: Ի վերջոյ, ան հեռաձայնեց եւ ըսաւ.

- Ձեր «Էսքալատը» քովս է: Եկէք այսինչ վայրը, այսինչ ժամուն, եւ կրնաք տուն տանիլ այն: Մենք հանդիպեցանք անոր, եւ անոր քով մարգարիտէ սպիտակ գոյնի «քատիլաք» էր՝ կարճ տեսակը: Այն շատ գեղեցիկ էր:

- Ներողութիւն, որ այդքան երկար ժամանակ անցաւ, մինչեւ ձեզի հեռաձայնելը, - ըսաւ ան: - Ես շատ կը փորձէի գտնել երկար տեսակը, բայց ատոնց պահանջարկը այնքա՛ն մեծ է, որ ոչ մէկ հաստ կար: Ես կրցայ գտնել միայն կարճ տեսակը: Յոյսով եմ՝ ատիկա խնդիր չէ:

Խնդի՞ր: Մենք կը ցանկայինք ունենալ ճիշդ այդ ինքնաշարժը եւ ըսինք անոր այդ մասին:

Կրկին, կ'ուզեմ հարցնել. ինչպէ՞ս մեր քով եկաւ ճիշդ այն «Էսքալատը», որ կը ցանկայինք ունենալ: Առաջին հերթին, ես նուիրած էի ութ ինքնաշարժ՝ բացի այն ինքնաշարժէն, որ նուիրեցի այն հովիւին, որուն մասին աւելի կանուխ պատմեցի ձեզի: Բայց ես երբեք չէի ըսած. «Ահա՛ այն»՝ նկատի ունենալով որեւէ ինքնաշարժ, մինչեւ որ Տրենտան չըսաւ ատիկա՝ իր «BMW»-ն ստանալու համար: Այս անգամ Տրենտան եւ ես կրկին համաձայնեցանք եւ բարձրաձայն ըսինք. «Ահա՛ այն»: Տարիներ շարունակ ես ըսած եմ, որ եկեղեցին փայլուն կերպով սորվեցուցած է տալու մասին, բայց գրեթէ ոչինչ սորվեցուցած է այն մասին, թէ ինչպէս հնձել: Այսպիսով, կրնա՞ք ըսել՝ հիմնուելով նախորդ պատմութիւններուն վրայ, թէ ո՞րն է մանգաղը: Յոյսով եմ՝ պատասխանն ակնյայտ է: Ես ցանած էի շատ ինքնաշարժներ՝ հաւատալով հունձքի, բայց Տրենտան եւ ես երբեք համաձայնութեան չէինք եկած նոր ինքնաշարժի համար: Կրկին, որոշ ժամանակ մենք տակաւին կը վարէինք մեր ունեցած ինքնաշարժները: Բայց այն պահուն, երբ ըսինք. «Ահա՛ այն», այն յայտնուեցաւ. մանգաղը մեր խօսքէ՛րն են:

*«Մահն ու կեանքը լեզուի ձեռքն է, եւ անոր սիրողը կ'ուտէ  
անոր պտուղը»:*

– Առակաց 18.21

Կար ժամանակ, երբ եկեղեցին, կը թուի, շատ կը սորվեցնէր մեր դաւանութեան մասին: Ես հաղորդակցած եմ այնպիսի մարդոց հետ, միգուցէ, դուք նոյնպէս, որոնք ինչ որ բան կ'ըսէին, իսկ յետոյ կը դնէին ձեռքն իրենց բերանին՝ ըսելով. «Ես պէտք է հետեւիմ իմ դաւանութեանը»: Ատիկա պատուաւոր ձգտում է, եւ ես համաձայն եմ, որ ատիկա պիտի օգնէ պահելու Խօսքը ձեր սրտին մէջ: Այնուամենայնիւ, ձեր դաւանութեան հետեւիլն իրականութեան մէջ ոչ մէկ կապ ունի մանգաղին հետ: «Ի՞նչ: Իսկ ես կը կարծէի, որ մանգաղը մեր խօսքերն են»: Այո՛, ես ըսի ատիկա, բայց ճիշդ խօսելու բանաձեւին տիրապետելն ինքնին բանալի չէ:

*«Որովհետեւ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ով որ այս լեռան  
ըսէ՝ «Ելի՛ր եւ ծովն ինկիր», եւ իր սրտին մէջ չերկմտի,  
բայց հաւատայ, թէ ինչ որ կ'ըսէ՝ պիտի ըլլայ անոր, պիտի  
ըլլայ, ինչ որ ըսէ»:*

– Մարկոս 11.23

Կրկին, Մարկոս 4-րդ գլուխի մանգաղը ձեր խօսքերն են: Մինչեւ մանգաղի մասին խօսիլը, Մարկոս 4-րդ գլուխին մէջ արդէն կը ներկայացուի հաւատքի գործընթացը եւ թէ ինչպէս հաւատք ստանալ: Գրուած է, որ երբ սերմը կը հասուննայ, դուք կը մօտեցնէք մանգաղը, քանի որ հունձքը հասած է: Հունձքը հասած է, քանի որ դուք հաւատքի մէջ էք, այսինքն՝ համաձայնութիւն ունիք Երկինքի հետ ձեր սրտին մէջ: Վերոյիշեալ բերուած խօսքը Մարկոս 11-րդ գլուխէն կը նկարագրէ նոյն սկզբունքը: Ձեր սիրտը կը հաւատայ Խօսքին, եւ յետոյ դուք կը խօսիք՝ արձակելով Երկինքի իշխանութիւնը: Բայց ուշադրութիւն դարձուցէք հետեւեալ արտայայտութեանը. *«հաւատա՛, թէ ինչ որ կ'ըսէ՝ պիտի ըլլայ անոր»:* Հաւատքի ստուգումն այն է, թէ արդեօ՞ք դուք համոզուած էք ձեր

ըսածին մէջ: Խօսքը դաւանիլն ինքնին հաւատք չէ: Եթէ ձեր սիրտը չունի համաձայնութիւն Երկինքի հետ, դուք կրնաք դաւանիլ մինչեւ վերջին շունչը, եւ ոչինչ տեղի կ'ունենայ: Այսպիսով, մենք պէտք է հսկենք մեր դաւանութի՞ւնը, թէ՞ մեր սիրտը:

*«Բարի մարդը դուրս կը բերէ բարի բաներ այն բարիէն, որ պահուած է իր սրտին մէջ, եւ չար մարդը դուրս կը բերէ չար բաներ այն չարէն, որ պահուած է իր սրտին մէջ: Որովհետեւ մարդու սրտի առատութենէն կը խօսի անոր բերանը»:*

– Ղուկաս 6.45, NIV

*«Ամէն ինչէն առաւել հսկէ՛քու սիրտը, որովհետեւ այն կեանքի աղբիւրն է: Հեռացո՛ւր արատաւորութիւնը քու բերանէն. հեռո՛ւ պահէ անբարոյ խօսակցութիւնը քու շուրթերէն»:*

– Առակաց 4.23,24, NIV

Հասկնալի է, որ այն, ինչ որ մենք կը խօսինք, կը բխի մեր սրտէն եւ այն ամէնէն, ինչին մեր սիրտը կը հաւատայ: Համաձայն Մարկոս 4-րդ գլուխին մէջ նկարագրուած գործընթացին, մենք գիտենք, թէ ինչպէս փոխենք մեր սրտի համոզմունքները, ինչպէս բերենք մեր սիրտը համաձայնութեան Երկինքի հետ, եւ ինչպէս հաւատք ունենանք: Եւ երբ բոլորովին համոզուած ըլլանք, մենք կը մօտեցնենք մանգաղ՝ մեր խօսքերով եւ գործերով: Դուք հասկցա՞ք ասիկա: Շա՛տ լաւ, առջեւ երթանք:

Շարունակելով խօսիլ հաւատքի մասին՝ կը ցանկամ հարցում մը հարցնել, որուն դուք պէտք է կարենաք պատասխանել:

## **Ինչպէ՞ս իմանամ, որ ես իրականութեան մէջ կը հաւատամ**

Ասիկա կարելոր հարցում է, որուն պատասխանը պէտք է իմանաք, քանի որ անկարելի է հաւատքի աղօթք ընել՝ առանց

հաւատքի մէջ ըլլալու: Կան շատ ձեւեր, որպէսզի իմանաք՝ արդեօ՞ք դուք հաւատքի մէջ էք, կան շատ նշաններ, որոնց մասին դուք պէտք է իմանաք եւ որոնք պէտք է փնտռէք: Երբ հաւատքի մէջ չէք, դուք կրնաք բազմաթիւ վատ եւ վախի վրայ հիմնուած որոշումներ կայացնել: Վախի վրայ հիմնուած որոշումները մշտապէս կը ստրկացնեն ձեզի այս երկրի անէծքին մէջ եւ պատճառ կը դառնան, որ կորսնցնէք այն, ինչ որ Աստուած կը ցանկայ տալ ձեզի: Այսպիսով, ո՞րն է հաւատքի մէջ ըլլալու ապացոյցը: Առաջին նշանը դիւրին է որոշելը. դուք կրնաք կրկին կարդալ հաւատքի մեր սահմանումը եւ հասկնալ, որ իրական բանալին՝ ձեր սրտին մէջ բոլորովին համոզուած ըլլալն է: Սակայն յաճախ կը մտածենք, որ համոզուած ենք, մինչդէռ մենք միայն կը համաձայնինք Խօսքին հետ մեր մտքով, ոչ թէ սրտով: Դուք պէտք է կարենաք տարբերել այս վիճակները: Երբ բոլորովին համոզուած էք, անշուշտ, դուք ունիք մտաւոր համաձայնութիւն Աստուծոյ Խօսքին հետ, բայց ձեր մէջ կայ նաեւ վստահութիւն՝ համոզուածութիւն, որը խաղաղութիւն եւ սպասում կը բերէ:

*«Հաւատքը կը նշանակէ համոզուած ըլլալ այն բանին մէջ, ինչին հանդէպ մենք յոյս ունինք, եւ վստահ ըլլալ այն բանին մէջ, ինչ որ մենք չենք տեսներ»:*

– Եբրայեցիս 11.1, NIV

Եթէ դուք ունիք ապացոյց, որ ինչ որ բան մը կը պատկանի ձեզի, մի՞թէ ձեզի պէտք է համոզել ատոր մէջ: Անշուշտ՝ ո՛չ: Կրկին, երբ դուք հաւատքի մէջ էք, ձեր մէջ կայ գիտելիք, խաղաղութիւն եւ վստահութիւն, որ դուք ունիք այն, ինչ որ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, թէ եւ դեռ չէք տեսներ: Շատերը այսպէս կը ձեւակերպեն այս վստահութիւնը. «Ես գիտեմ, որ ես գիտեմ, որ ես գիտեմ, որ ես գիտեմ, որ ես ունիմ ատիկա»: Այս գիտելիքը կը բխի ներսէն, ոչ թէ ձեր հանգամանքներէն: Այն ձեր հոգեւոր մարդու կամ սրտի մէջ է: Վախը կը հեռանայ, եւ անհանգստութեան կաշուն մտքերն այլեւս չեն ռմբակոծեր ձեր միտքը. դուք գիտէք, որ ատիկա կատարուած է:

Հաւատքի մէջ ըլլալու եւս մէկ կողմ՝ ուրախութիւն եւ սպասում: Դուք ստացած էք ձեր պատասխանը: Այն ձե՛րն է: Հաւատքն աւելին է, քան խաղաղութեան կամ վստահութեան զգացումը, թէեւ դուք կ'ունենաք ատիկա: Դուք նոյնպէս պէտք է կարենաք հոգեւորապէս պաշտպանել ձեր դիրքը: Որպէսզի հասկնաք, թէ ինչ նկատի ունիմ, պատկերացուցէք դատաւարութիւն, որուն մէջ դուք՝ որպէս վկայ, կը մասնակցիք խաչաձեւ հարցաքննութեան: Ո՞րն է ձեր հաւատքի եւ համոզմունքներու հիմքը: Ինչպէ՞ս կը պաշտպանէք ձեր դիրքորոշումը: Կայ միայն մէկ պատասխան՝ Աստուծոյ խօսքով:

Օրինակ, եթէ ինչ որ մէկը ձեր տուն գար եւ ըսէր. «Դո՛ւրս իմ տունէն», մի՞թէ դուք պիտի ըսէիք. «Ներողութիւն, մեզի մէկ օր ժամանակ տուէ՛ք, եւ մենք կը հեռանանք հոսկէ»: Ո՛չ, դուք այդպէս չէիք վարուեր: Հաւանաբար, կը ծիծաղէիք: Եթէ այդ մարդն ըսէր. «Ո՛չ, ասիկա ի՛մ տունն է. դո՛ւրս հոսկէ, այլապէս ես

կը հանդիպիմ ձեզի դատարանին մէջ», դուք պիտի պատասխանէիք. «Ես ուրախ կ'ըլլամ տեսնել ձեզի դատարանին մէջ»: Լսման ժամանակ դուք հանդարտօրէն ցոյց պիտի տայիք դատաւորին ձեր սեփականութեան վկայականը: Ան ընդամենը մէկ անգամ աչքէ կ'անցընէր այն եւ կը ձերբակալէր այդ մարդուն ոտնձգութեան համար՝ հարկադրելով վճարել դատաւարութեան հետ առնչուող բոլոր ծախսերուն համար: Ձեր վստահութիւնը հաստատուած էր ոչ թէ ձեր զգացումներուն, այլ օրէնքի վրայ եւ այն փաստին, որ այդ տունն օրէնքով կը պատկանի ձեզի:

**«ՀԱՄԱՔՔ՝ ԿՈ ՆՇԱՆԱԿԷ  
ՀԱՄՈՋՈՒԾ ԸԼԼԱԼ ԱՅՆ  
ԲԱՆԻՆ ՄԷՋ, ԻՆՉԻՆ  
ՀԱՆԴԵՊ ՄԵՆՔ ՅՈՅՍ  
ՈՒՆԻՆՔ, ԵՒ ՎՍՏԱՀ  
ԸԼԼԱԼ ԱՅՆ ԲԱՆԻՆ ՄԷՋ,  
ԻՆՉ ՈՐ ՄԵՆՔ ՉԵՆՔ  
ՏԵՄՆԵՐ»:**

– ԵԲՐԱՅԵՑԻՍ 11.1, NIV

Երբ խօսքը հաւատքի մասին է, ես պարզած եմ, որ հաճախ մարդիկ, որոնք չեն հասկնար, թէ ինչ է հաւատքը, դիւրաբար կը շփոթին՝ վստահելով իրենց գործերուն, ոչ թէ իրենց հաւատքի միակ աղբիւրին, որ Աստուծոյ խօսքն է: Դիւրին է շփոթել գործողութիւնը



Կամ Աստուծոյ Խօսքի հիման վրայ գործելու բանաձեւը Թագաւորութեան իրական գորութեան հետ, որ կը բխի սրտէն եւ մեծ վստահութիւն ունի: Օրինակ, եթէ դուք ֆինանսներ ցանէիք Աստուծոյ Թագաւորութեան մէջ, եւ ես հարցնէի ձեզի, թէ ինչու կը հաւատաք, որ հունձք կը ստանաք այդ ցանքին պատճառով, ձեր պատասխանը պէտք չէ ըլլար. «Որովհետեւ այսինչ ամսաթիւին ես այսքան գումար ցանած եմ»: Այդ դաւանութիւնը կեդրոնացած է միայն ձեր գործողութեան վրայ, այսինքն՝ բանաձեւին վրայ, եւ չունի վստահութեան խարիսխ: Ձեր վստահութիւնը կրնայ բխիլ միայն Աստուծոյ Խօսքէն:

Ես կորսնցուցած եմ այն մարդոց թիւը, որոնց համար աղօթելէն յետոյ կը հարցնէի, թէ ինչու անոնք կը հաւատային, որ պատասխան պիտի ստանային իմ աղօթքին շնորհիւ, եւ անոնք ապշահար ինծի կը նայէին՝ առանց պատասխանի: Ես կը հարցնէի, որ հասկնայի, թէ արդեօ՞ք անոնք ունէին հաւատք, այսինքն՝ համաձայնութիւն Երկինքի հետ: Ես կը ցանկայի լսել անոնցմէ. «Ես գիտեմ, որ պիտի ստանամ, քանի որ Աստուած խոստացած է ինծի այսինչ գիրքի, այսինչ Խօսքի հիման վրայ, որ ատիկա իմս է»: Եթէ մարդիկ չեն կրնար որեւէ սուրբգրային հատուած ներկայացնել այդ պահուն, հաւանական է, որ անոնք խարսխուած չեն եւ իրականութեան մէջ նոյնիսկ գաղափար չունին, թէ ուր կը լողայ իրենց նաւը:

Յիշեցէք՝ հաւատքը կրնայ գոյութիւն ունենալ, միայն երբ դուք գիտէք Աստուծոյ կամքը: Ինչո՞ւ: Քանի որ հաւատքը կրնայ գոյութիւն ունենալ, միայն երբ ձեր սիրտն ունի համաձայնութիւն Աստուծոյ Խօսքին հետ: Ես համոզուած եմ, որ շատերը կը մտածեն, որ իրենք հաւատքի մէջ են, մինչդեռ այդպէս չէ: Կրկին, թերեւս անոնց միտքը համաձայն է, որ Աստուծոյ Խօսքը ճշմարիտ եւ բարի է, բայց մարդն ունի հաւատք, միայն՝ երբ իր սիրտը բոլորովին համոզուած է: Շատերը մտովի համաձայն են Աստուծոյ Խօսքին հետ, բայց անոնց սրտերը հաստատուած չեն:

Ահալաւ օրինակ մը այն մասին, թէ ինչ նկատի ունիմ, եւ համոզուած եմ, որ այս օրինակը ցոյց պիտի տայ, որ շատերը հաւատքի մէջ չեն, թէեւ, իրենց կարծիքով, կը հաւատան: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ

Ես վերջերս բացայայտած եմ, որ երկինքը կապոյտ չէ, ինչպէս որ մարդիկ կ'ըսեն, այլ որ այն գոյնը, որ մենք կապոյտ կ'անուանենք, իրականութեան մէջ դեղին է: Ի՞նչ կ'ընէիք: Մի՞թէ դուք զարմանքէն հոգոց կը հանէիք, արագօրէն կը վերցնէիք ձեր բջիջային հեռածայնը, կը զանգէիք ձեր առաջին դասարանի ուսուցչուհիին եւ կը պոռայիք անոր վրայ՝ մեղադրելով, որ ան խառնաշփոթի վերածած է ձեր կեանքը, քանի որ սխալ սորվեցուցած է ձեզի բոլոր գոյները: Չեմ կարծեր: Դուք զգացմունքօրէն չէիք արծագանգեր, չէիք վախճար եւ տեսարան չէիք շիներ: Դուք պարզապէս կը մտածէիք, որ ես անմիտ մարդ եմ, կ'անտեսէիք իմ խօսքերը՝ ատոնք անտրամաբանական համարելով, եւ կը շարունակէիք զբաղիլ ձեր գործերով: Ինչո՞ւ: Քանի որ դուք բոլորովին համոզուած էք, որ կապոյտ գոյնը կապոյտ է:

Համեմատենք այս օրինակը հաւատքի հետ: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ բոլորովին համոզուած ըլլայիք այն բանին մէջ, ինչ որ Աստուած կ'ըսէ բժշկութեան մասին, եւ բժիշկ մը ըսէր ձեզի, որ դուք պիտի մահանաք քաղցկեղէն: Դուք պիտի նայէիք այդ բժիշկին եւ պիտի մտածէիք, որ ան անմիտ է, քանի որ դուք գիտէք, որ նման բան չի կրնար տեղի ունենալ: Ինչո՞ւ: Քանի որ բոլորովին համոզուած էք այն բժշկութեան մէջ, որուն համար Յիսուսը վճարած է: Դուք կը հասկնա՞ք: Անշուշտ, շատերը կ'աղօթեն, բայց քննելով անոնց աղօթքները՝ կը տեսնեն, որ ատոնք ոչ թէ հաւատքի աղօթքներ են, այլ յոյսի, եւ այդ մարդիկ չունին համոզուածութիւն իրենց աղօթքներու արդիւնքին մէջ: Իմ ընկե՛ր, ահա թէ ինչու անչափ կարելոր է, որ մենք կառուցենք մեր անձերն Աստուծոյ խօսքով: Մենք պէտք է իմանանք Աստուծոյ կամքը, որպէսզի վստահ ըլլանք Անոր խօսքին մէջ եւ նոյնպէս կարենանք մերժել այն, ինչ որ Անոր կամքը չէ: Թոյլ տուէք օրինակ մը բերել իմ կեանքէն, որ կը նկարագրէ, թէ որքան կարելոր է սնուիլ այն ամէնով, ինչ որ Աստուած կ'ըսէ այս կեանքին մասին:

Ես յոգնած էի իմ ձեռնարկութեան մէջ քանի մը ծանր աշխատանքային շաբաթէ ետք (այդ ժամանակ տակաւին եկեղեցւոյ հովիւ չէի): Իմ օրերը ծանրաբեռնուած էին վաճառքի վերաբերեալ հեռախօսագանգերով եւ, անշուշտ, միջնորդավճարներով ապրելու ֆինանսական ճնշումով: Ես գացի ատամնաբոյժին քով

պարզ ատամնալիցքի համար: Ամէն ինչ լաւ էր, քանի տակաւին ատամնաբոյժը չէր ներարկած նովոքաինը (ցաւազրկիչ քիմիական դեղամիջոց): Երբ ան մտցուց ասեղը, ես մէկ անգամէն ցնցուեցայ, եւ ծնօտս անմիջապէս թմրեցաւ՝ դանդաղ թմրելու փոխարէն: Ես զարմացայ, ըսի ատամնաբոյժին այդ մասին, եւ ան ըսաւ.

- Ո՛չ, կ'երեւի թէ ես ջիղին դպայ:

- Ատիկա խնդիր չէ՞, - արագօրէն հարցուցի անոր:

- Սովորաբար ատիկա կը լաւանայ:

Ի՞նչ: Ես ճի՞շդ լսեցի:

- Բժի՛շկ, ի՞նչ նկատի ունիք՝ ըսելով, որ սովորաբար ատիկա կը լաւանայ:

- Այն, որ 80-85 տոկոսի պարագային ատիկա բոլորովին կ'անցնի՝ առանց տեսական բացասական հետեւանքներու:

Ի՞նչ: Յանկարծ ներսս վախ բարձրացաւ: Ի՞նչ պիտի ըլլայ: Ատիկա պիտի անցնի՞: Միտքս սկսաւ համակուիլ վախով: Այդ այցէն յետոյ իմ դէմքը դեռ թմրած էր՝ ի տարբերութիւն սովորական այցերու, որոնցմէ յետոյ թմրածութիւնն աստիճանաբար կ'անցնէր: Ատամնաբոյժին այցելելէն զրեթէ մէկ ժամ յետոյ ես հանդիպում մը ունէի յաճախորդին հետ. այնպէս որ, շատ ժամանակ ունէի, որպէսզի մտածէի այն մասին, ինչ քիչ առաջ տեղի ունեցաւ: Այդ հանդիպումին երթալու ճանապարհին սաստիկ տագնապ կը զգայի՝ ոչ թէ ցաւէն, այլ խաղաղութեան բացակայութենէն եւ մտքիս մէջ պտըտող վախերէն:

Աւելի ուշ այդ օրը, երբ տուն կը վերադառնայի այդ հանդիպումէն յետոյ, որոշեցի այցելել իմ ընկերներէն մէկուն: Դէմքս դեռ թմրած էր, եւ ես կը ցանկայի, որ ինչ որ մէկը հաւաստիացնէր ինծի, որ ատիկա պիտի անցնէր: Ուշադրութիւն դարձուցէք, թէ ինչպիսի սխալ գործեցի. ես չդիմեցի Աստուծոյ Խօսքին՝ վստահութիւն ստանալու համար, այլ մարդու մը, որ նոյնիսկ հաստատուն հաւատացեալ չէր: Ես պատմեցի անոր կատարուածի մասին, եւ կը սպասէի, որ ան պիտի ըսէր ինծի. «Ատիկա խնդիր չէ, Կէ՛րի: Ամէն ինչ կ'անցնի»: Փոխարէնը, լսեցի հետեւեալը.

- Ո՛չ: Ես ընկեր մը ունիմ, որուն հետ նման բան մը տեղի ունեցաւ, եւ անոր դէմքը այդպէս ալ չբուժուեցաւ. այն կաթուածահար է մինչեւ օրս:

Ես չէի հաւատար ականջներուս: Վախը բոլորովին տիրեց իմ մտքին: Ես ծեւացուցի, թէ համոզուած էի, որ ամէն ինչ կ'անցնէր, եւ շնորհակալութիւն յայտնեցի անոր ինծի ժամանակ տրամադրելուն համար: Յուսահատութեան մէջ այցելեցի եւս մէկ ընկերոջ: Ես հարցուցի անոր նոյն հարցումը եւ անակնկալի եկայ՝ լսելով նոյն պատասխանը.

- Ո՛չ, այդպիսի բան մը կատարուեցաւ նաեւ իմ ընկերներէն մէկուն հետ, եւ անոր դէմքն այդպէս ալ չլաւացաւ. ան մինչեւ օրս կաթուածահար է:

Այդ այցելութենէն յետոյ ես բոլորովին յուսալքուեցայ: Գիտէի, որ Աստուած կը բժշկէ (իմ մտքին մէջ), բայց չէի կրնար ազատիլ այդ վախէն: Իմ սրտին մէջ չկար համոզուածութիւն: Այդ գիշեր ես սաստիկ տազնապի մէջ էի.

**ԱՅՂ ՊԱՀՈՒՆ ԵՍ  
ՀԱՍԿՑԱՅ, ՈՐ ԻՄ ՄԻԱԿ  
ՅՈՅՍՆ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԽՕՍՔՆ ԷՐ:**

միտքս լեցուն էր վախով, իսկ երեսս տակաւին թմրած էր, ինչպէս որ ատամնաբոյժին սենեակն էր: Ես կը փորձէի քնանալ, բայց յանկարծ սկսայ քիչ մը ցաւ զգալ աջ ականջիս ներքեւի հատուածը: Մի՞թէ ես կը զգայի այն, ինչին մասին որ կը մտածէի: Հայրս կը պայքարէր դիմային կաթուածի հետ ատկէ մէկ, երկու տարի ամառ, եւ ատիկա սկսած էր քիչ մը ցաւէն ականջի ներքեւի հատուածը: Դիմային կաթուածը տեղի կ'ունենայ, երբ դիմային մկանները վերահսկող ջիղը, որ կ'անցնի անմիջապէս ականջի ներքեւը գտնուող ոսկորի փոքրիկ անցքով, կը վնասուի վարակի կամ բորբոքման պատճառով:

Ես պառկած էի եւ կը փորձէի քնանալ, բայց մտքիս մէջ կը պտըտէին հետեւեալ բառերը. «Դուն դիմային կաթուած պիտի ստանաս, ինչպէս եւ հայրդ»: Առաւօտեան, երբ արթնցայ, ես դիմային կաթուածի ցայտուն ախտանշաններ ունէի: Այժմ թմրած էր ոչ միայն

ծնօտս, այլեւ դէմքիս աջ կողմն ամբողջութեամբ, չէի կրնար փակել աչքերս եւ բերանս. ես շատ վատ վիճակի մէջ էի:

Գացի տեղական բժիշկի քով՝ իմ կասկածները հաստատելու համար: Զննումէն յետոյ ան նայեցաւ ինձի եւ ըսաւ, որ քովս իսկապէս դիմային կաթուածի լիարժէք դէպք է:

- Ի՞նչ կը կատարուի հետս, - հարցուցի ես:

- 80-85 տոկոսի պարագային ատիկա կ'անցնի՝ առանց մշտական կաթուածի:

Մի՞թէ ան ըսաւ այն, ինչ ես լսեցի:

Ես հասկցայ, որ լուրջ խնդիրի մէջ եմ: Գիտէի, որ սատանան կանգ պիտի չառնէր ատորմով, եւ չէի ցանկար տեսնել, թէ ինչ պիտի կատարուի ատորմէ յետոյ: Իմ գիտելիքը հոգեւոր պատերազմի մասին բաւական էր՝ հասկնալու համար, որ ես սխալ ուղղութեամբ կ'երթայի: Յիշեցէք՝ ատիկա տարիներ առաջ էր այն ժամանակէն, երբ ես սպառիչ գիտելիք ձեռք ձգեցի նման բաներու մասին: Բայց իմ գիտելիքը բաւական էր՝ հասկնալու համար, որ ես պէտք է պայքարէի այդ խնդիրի հետ հոգեւորապէս, եթէ կը ցանկայի պարտութեան մատնել այն: Ես նոյնպէս հասկցայ, որ ատիկա դիւային յարձակում էր, որ անակնկալի բերաւ ինձի, երբ յոգնած էի եւ ոչ մէկ վտանգի կը սպասէի:

Այդ պահուն ես հասկցայ, որ իմ միակ յոյսն Աստուծոյ խօսքն է: Ես բոլորովին անկարող էի ինքնուրոյն կանգնեցնել այն վախը, որ կը տանջէր իմ միտքը: Այնպէս որ, գրեցի բժշկութեան խօսքեր 7x12սմ. չափի քարտերու վրայ եւ փակցուցի ատոնք ամբողջ տունով: Ես ապաշխարեցի Տիրոջ առջեւ եւ սկսայ իմ սրտին մէջ հաւատքը զարգացնելու գործընթացը: Գիտէի, որ պէտք է ցանէի խօսքն իմ սրտին մէջ, որպէսզի իմ մէջ հաւատք զարգանար: Այնպէս որ, սկսայ մտորել Աստուծոյ խօսքին շուրջ ամբողջ օրուան ընթացքին:

Սկիզբը ոչինչ փոխուեցաւ: Իմ դէմքը տակաւին թմրած էր, եւ ես շարունակ կը պայքարէի վախի հոգիին դէմ: Մօտաւորապէս մէկ շաբաթ յետոյ, երբ դէմքս տակաւին նոյն վիճակին մէջ էր, ատիկա տեղի՝ ունեցաւ: Նման այն գործընթացին, որուն մասին կը սորվեցնէ

Մարկոս 4.26-ին մէջ գտնուող մեր հատուածը, մինչ ես կը ցանէի Խօսքը իմ սրտին մէջ, հաւատքը սկսաւ աճիլ՝ սկիզբը ծիլը, յետոյ ցօղունը, յետոյ հասկը, եւ վերջապէս հասած ցորենը հասկի մէջ:

Ամբողջ այդ ընթացքին մէջ չկար համաձայնութիւն, այսինքն՝ չկար հաւատք: Այնուամենայնիւ, թէեւ ես փոփոխութիւն չէի տեսներ եւ չէի գիտեր այդ գործընթացի մասին, համաձայն Մարկոս 4.26-ին մէջ գտնուող մեր հատուածին, ամէն ինչ կը փոխուէր: Այդ փոփոխութիւնը, որ նկատի ունիմ, տակաւին յայտնուած բնական տիրոյթին մէջ չէ. այն տեղի կ'ունենայ մեր սրտին մէջ: Եթէ մենք յենինք Խօսքին վրայ, Խօսքը դանդաղօրէն կը փոխէ մեր սրտի համոզմունքները՝ բոլորովին ինքնաբերաբար փոխարինելով անհաւատութիւնը Երկինքի հետ համաձայնութեամբ: Այս պարագային ես յենեցայ Խօսքին վրայ՝ հասկնալով, որ այն իմ միակ պատասխանն էր:

Յանկարծ, մէկ անգամ, երբ կը քալէի մեր տան մէջ, ուր ամէնուր փակցուած էին բժշկութեան Խօսքեր 7x12սմ. չափի քարտերու վրայ, ես պարզապէս նայեցայ Խօսքի մը, որ հարիւր անգամ տեսած էի: Բայց այս անգամ, երբ նայեցայ ատոր, ըսես ՊԱՅԹԻՒՆ տեղի ունեցաւ: Յանկարծ իմ վրաս օծութիւն եկաւ, վախն անմիջապէս հեռացաւ, եւ ես ԳԻՏԷԻ, որ բժշկուած էի: Այո, իմ դէմքը տակաւին թմրած էր: Փոփոխութիւն չկար, բայց ես գիտէի, որ բժշկուած էի: Քանի մը ժամուան ընթացքին դէմքս բոլորովին վերականգնեցաւ, եւ թմրածութիւնը բոլորովին հեռացաւ: Փա՛ռք Աստուծոյ: Խօսքը կը գործէ՛:

Թէեւ ես առիթ տուած էի, որ իմ հոգեւոր կեանքը տկարանար իմ անփութեան եւ զբաղուածութեան պատճառով, ի վերջոյ հասկցայ իմ սխալը եւ ապաշխարեցի իմ անմտութենէն: Ասիկա այն ժամանակն էր, երբ նոր կը սորվէի, թէ ինչպէս կը գործէր հաւատքը, եւ տակաւին չունէի շատ փորձառութիւն այս բնագաւառին մէջ: Ետ նայելով՝ կրնամ ըսել հետեւեալը. այն, որ գտնուելով նեղութեան մէջ՝ ես հարցուցի իմ ապագայի մասին մարդոց՝ Աստուծոյ հարցնելու փոխարէն, անմտութիւն էր: Հազիւ որ հասկցայ, թէ ինչ տեղի կ'ունենար, ես վստահաբար դիմեցի Աստուծոյ Խօսքին: Դժբախտաբար, շատերը չունին վստահութիւն այս գործընթացին

մէջ, քանի որ անոնց երբեք չեն սորվեցուցած, թէ ինչ է հաւատքը եւ ինչպէս այն կը յառաջանայ: Անոնք տեղեակ չեն այս գործընթացէն, ճնշումի ներքոյ անոնք կը դադրին Խօսքին վրայ յենել՝ մտածելով, որ այն չի գործեր:

## **Հասկնալ սատանային հակայարձակումը**

Քրիսթինը շատ բան չէր գիտեր Աստուծոյ մասին, երբ եկաւ մեր եկեղեցի: Ան վերստին ծնաւ մեր կիրակնօրեայ ծառայութիւններէն մէկուն ժամանակ, եւ անոր կեանքը շրջադարձային փոխուեցաւ: Մեր եկեղեցիին մէջ մենք ունինք «Թագաւորութեան կողմնորոշում» կոչուող դասընթացք: Այն բնագաւառներէն մէկը, որուն մասին մենք կը խօսինք եւ կը սորվեցնենք, բժշկութիւն ստանալու իրաւաբանական իրաւունքն է: Քրիսթինը տարիներ շարունակ խնդիրներ ունէր լսողութեան հետ: Ան 40 տարի լսողական սարք կը կրէր, եւ արդէն իսկ կորսնցուցած էր իր լսողութեան 50 տոկոսէն աւելին: Անոր մայրը խուլ էր, եւ անոր եղբայրը նոյնպէս լսողութեան խնդիր ունէր: Երբ Քրիսթինն իմացաւ, որ որպէս քրիստոնեայ՝ ան բժշկուելու օրինական իրաւունք ունի, այնպէ՛ս ոգեշնչուեցաւ:

Դասի ժամանակ կինս դրաւ իր ձեռքերն անոր վրայ եւ աղօթեց, որ լսողութիւնը բացուի, եւ նոյն պահուն ան սկսաւ գերազանց լսել: Քրիսթինը սկսաւ ճչալ, լալ եւ փառաբանել Աստուծոյ: Երբ կինս՝ Տրենտան, եւ Քրիսթինը եկան եւ պատմեցին ինծի այդ բարի լուրը, ես զգացի, որ պէտք է զգուշացնեմ անոր սատանայի հակայարձակման մասին: Ես խնդրեցի Տրենտայէն սորվեցնել Քրիսթինին, որ եթէ անոր ախտանշանները վերադառնան, ան պէտք է համարձակ խօսի այդ խնդիրին, հռչակէ, որ ինքը բժշկուած է, եւ հրամայէ սատանային հեռանալ: Անոր փորձութիւնն սկսաւ յաջորդ առաւօտեան: Անոր լսողութիւնը վատացաւ: Եւ ան ըրաւ ճիշդ այն, ինչ որ ես ըսի.

- Ո՛չ, սատանա՛, ես չե՛մ ընդունիր ասիկա: Ես բժշկուա՛ծ եմ, եւ ես *բժշկուած եմ*, Յիսուսի անունո՛վ:

Յանկարծ անոր ականջները կրկին բացուեցան, եւ բաց են մինչեւ օրս:

Յիշեցէք, որ սատանան հակայարձակում կը ձեռնարկէ՝ փորձելով ետ վերցնել տարածքը: Թոյլ մի՛ տաք, որ ան ընէ ատիկա: Յենեցէ՛ք Աստուծոյ խօսքին վրայ:

Այս գլուխին մէջ ես որոշ ժամանակ յատկացուցի՝ տալով ձեզի հիմքային պատկերացում այն մասին, թէ ինչ է հաւատքը, ինչպէս այն կը գործէ, ինչպէս իմանալ, որ դուք հաւատքի մէջ էք, եւ ինչպէս հաւատք ստանալ: Դուք պէտք է գիտնաք այս մասին, որպէսզի Աստուծոյ Թագաւորութիւնը գործէ ձեր կեանքին մէջ: Յիշեցէ՛ք՝ Յիսուսն ըսաւ արինահոսութիւն ունեցող կնոջը. «Քու հաւա՛տքը բժշկեց քեզի»: Թող որ նոյնը կատարուի ձեզի հետ. թող որ ձեր հաւատքը, ձեր սիրտը, որ բոլորովին համոզուած կ'ըլլայ երկնային խօսքերուն մէջ, նաեւ մանգաղը մօտեցնելն ըլլան ձեր պատասխանը որեւէ խնդիրի եւ կարիքի համար, որուն դուք կը բախիք ձեր կեանքին մէջ:





## ԳԼՈՒԽ 6

# ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Ես ճաշարանն էի իմ կնոջ եւ կին քարոզիչի մը հետ, որ հիւր էր մեր եկեղեցիին մէջ: Երեկոյեան ժամը 22:00-ն էր, եւ մենք նոր աւարտած էինք մեր ազդեցիկ երեկոյեան ծառայութիւնը: Մատուցողը մօտեցաւ մեր պատուէրն առնելու, եւ մենք սկսանք գրուցել: Իմ հիւրը կը պատմէր մեր եկեղեցիին մասին, նաեւ՝ թէ որքան հրաշալի ծառայութիւն անցուցինք: Այնուհետեւ ան հարցուց մատուցողին.

- Դուք կը սիրէ՞ք որսորդութիւն:

Ան պատասխանեց, որ կը սիրէ: Իմ հիւրը միշտ ոգեշնչումով կը լսէր իմ որսորդական պատմութիւնները, եւ այդ երեկոյ նուիրած էի անոր իմ «Հաւատքի որսորդութիւն» գիրքէն օրինակ մը՝ անոր ընկերուհիներէն մէկուն համար: Նուիրած գիրքս դրուած էր կողքիս՝ յատակին:

Մատուցողը շարունակեց՝ ըսելով, որ երկար ժամանակ է՝ կը փորձէ եղնիկ որսալ, բայց չի կրնար: Իմ հիւրը եւ ես սկսանք բացատրել անոր, թէ ինչպէս կը գործէ Աստուծոյ Թագաւորութիւնը, եւ որ ինքը կրնայ ակնկալել, որ եղնիկ պիտի որսայ ամէն անգամ, երբ որսի երթայ: Ան իսկապէս չէր գիտեր, թէ ինչ մտածէր մեր մասին: Բայց ես յիշեցի այդ գիրքը եւ առաջարկեցի նուիրել այն անոր: Ես խոստացայ իմ հիւրին գիրքի մէկ ուրիշ օրինակ, եւ ան համաձայնեցաւ: Մատուցողը շնորհակալութիւն յայտնեց ինծի եւ խոստացաւ կարդալ, բայց ես մտածեցի, որ թերեւս վերջին անգամ կը հանդիպէի անոր: Սակայն ատիկա վերջին անգամը չէր:

Մէկ տարի յետոյ նոյն կին քարոզիչը հիւրընկալուեցաւ մեր եկեղեցիին մէջ: Ան ըսաւ, որ իրեն համար հաճելի էր այն ճաշարանը, ուր գտնուած էինք մէկ տարի առաջ, եւ հարցուց, թէ կրնա՞ յինք կրկին երթալ հոն: Մենք այդպէս ալ ըրինք: Երբ նստեցանք, զարմացանք, որ մեզի պիտի սպասարկէր նոյն մատուցողը, որ սպասարկած էր մէկ տարի առաջ: Երբ ան մօտեցաւ, նայեցաւ մեզի եւ ըսաւ.

- Բարեւ ձե՛զ, դուք հոս էիք մէկ տարի առաջ, եւ մենք կը խօսէինք որսորդութեան մասին:

- Այո՛, կը յիշենք, - պատասխանեցինք մենք:

- Ես կարդացի ձեր նուիրած գիրքը եւ վարուեցայ այնպէս, ինչպէս գրուած էր: Ես երկու եղնիկ որսացի անցեալ տարի, եւ այս տարի եւս կը սպասեմ իմ որսին:

Մենք ոգելորուեցանք՝ լսելով անոր պատմութիւնը, բայց չզարմացանք: Թագաւորութիւնը կը գործէ ամէն անգամ:

Ես հաւաքոյթ կ'առաջնորդէի մօտաւորապէս 25 հովիւի համար: Կը սորվեցնէի Աստուծոյ Թագաւորութեան մասին եւ կը բացատրէի, թէ ինչպէս այն կը գործէ: Ամէն ինչ հրաշալի ընթացաւ: Երբ կը պատրաստուէի հաւաքոյթի սրահէն հեռանալ, եւ իմ աշխատակազմը կը մաքրէր տարածքը, հովիւներէն մէկը վերադարձաւ: Ան կնոջ հետ մօտեցաւ իմ կնոջը եւ խնդրեցին խօսիլ մեզի հետ: Այդ հովիւը պատմեց մեզի, որ մինչեւ շաբթուան վերջ անոր տունն արգելանքի տակ պիտի դրուէր, եթէ չվճարէր մօտաւորապէս 6.900 տոլար: Ան ըսաւ, որ դրամ չունի, ընդամենը 100 տոլար ունի:

- Ասիկա իմ ամբողջ գումարն է, - ըսաւ ան, - բայց ես կ'ուզեմ ցանել ասիկա, ինչպէս սորվեցուցիք այս երեկոյ, եւ կը խնդրեմ, որ դուք եւ ձեր կինը համաձայնութեան գաք մեզի հետ այն գումարին համար, որուն կարիքը մենք ունինք այս շաբաթ:

Բոլորս ձեռք-ձեռքի տուինք, աղօթեցինք եւ զոհացանք Աստուծմէ՛ այդ գումարին համար:

Գրեթէ մէկ ամիս յետոյ ես տեսայ այդ հովիւին մէկ այլ միջոցառման ժամանակ: Ան խիստ ոգելորուած շտապեց քովս:

- Ես պէտք է պատմեմ ձեզի, թէ ինչ տեղի ունեցաւ, - ըսաւ ան: - Ես չէի ըսած ձեզի այն ժամանակ, որ կինս եւ ես շապիկներու վրայ մետաքսազիր տպագրութեան փոքրիկ մասնակի գործ կ'ընենք մեր կառատան մէջ: Մենք մեծ գումար չենք շահիր, բայց ժամանակ առ ժամանակ պատուէրներ կը ստանանք: Մեր միացեալ աղօթքի յաջորդ օրը քանի մը պատուէր ստացանք, որոնց ընդհանուր գումարը կազմեց 8.900 տոլար: Այդ շաբաթ մենք ստիպուած էինք շատ աշխատելու, բայց մինչեւ ուրբաթ օրը մենք ունէինք անհրաժեշտ 6.900 տոլարը՝ մեր տունը պահպանելու համար: Շնորհակալ՛ եմ:

Ես ներկայ էի հովվական համաժողովի մը Հիւսիսային Քարոլինայի մէջ, ուր կար գրեթէ 500 հովիւ: Ես չէի քարոզեր հոն, այլ պարզապէս կը մասնակցէի: Մարդ մը մօտեցաւ ինձի ու ըսաւ.

- Ես պէտք է խօսիմ ձեզի հետ:

Ան հովիւ էր Գերմանիայէն եւ ըսաւ, որ կը ցանկայ հետաքրքրական պատմութիւն մը պատմել ինձի:

Անոր որդին, որ դեռահաս էր, ինչ որ ձեռով ձեռք բերած էր իմ լսասկաւառակները: Ատոնք լսելէն յետոյ որոշած էր, որ հաւատքով պիտի ստանայ «PlayStation 3», քանի որ դրամ չունէր ատոր համար: Կը կարծեմ՝ իւրաքանչիւրը գիտէ, թէ ինչ է «PlayStation 3»-ը, բայց եթէ չէք գիտեր, ատիկա համակարգչային խաղային համակարգ է: Այդ հովիւը պատմեց, որ անգամ մը անոր որդին եկաւ իր գրասենեակ եւ հարցուց, թէ համաձայնութեան պիտի գա՞յ իրեն հետ «PlayStation 3» ստանալու համար: Ան պատմեց իր հօրն այն, ինչ որ գիտցած էր իմ լսասկաւառակներէն, եւ ըսաւ, որ կը ցանկայ սերմ ցանել եւ աղօթել իր հօր հետ ատոր համար: Այդ հովիւն ըսաւ, որ մեծ կարելորութիւն չէ տուած ատոր, բայց, որպէս եկեղեցւոյ հովիւ, ընդունած է իր որդիին ցանքը՝ անոր տուած ֆինանսական զոհաբերութիւնը եկեղեցւոյ համար: Ան աղօթած է որդիին հետ՝ համաձայնելով, որ որդին արդէն ունի «PlayStation 3», եւ մտածած է, որ ատորմով ամէն ինչ աւարտած է:

Յաջորդ օրը մարդ մը այդ հովիւին եկեղեցիէն կը հեռաձայնէ անոր եւ կը հարցնէ, թէ որդին դէմ չ'ըլլա՞ր քիչ մը աւելի գումար վաստկիլ,

քանի որ ինքը կարճաժամկէտ նախագիծ ունէր, ուր իրեն օգնութիւն պէտք էր: Անոր որդին հիացմունքով կ'ընդունի այդ առաջարկը: Աշխատելով այդ երկօրեայ նախագիծին մէջ՝ ան այնքան գումար կը վաստկի, որ կարենայ «PlayStation 3» գնել:

Այդ դէպքը գրաւեց անոր որդիին ուշադրութիւնը: Այդ հովիւը պատմեց, որ քանի մը շաբաթ յետոյ ան կրկին եկաւ իր հօր գրասենեակ եւ խնդրեց համաձայնութեան գալ հետը մէկ ուրիշ հարցի համար: Այդ հովիւը, անշուշտ, պատրաստ էր, բայց ան քիչ մը զարմացաւ, երբ որդին խնդրեց աղօթել հետը, որ Աստուած աւելի մեծ մկաններ տայ իրեն: Ան ըսաւ ինծի, որ չէր գիտեր՝ ինչ պատասխանէր որդիին: Բայց, ի վերջոյ, կ'ըսէ անոր, որ եթէ խնդրենք Աստուծո՛ւմէ աւելի մեծ մկաններ, որդին նոյնպէս պէտք է ինչ որ բան մը ընէ իր կողմէն, եւ որ ինքը համաձայնութեան կու գայ որդիին հետ, եթէ ան հասկնայ ատիկա: Անոր որդին կ'ընդունի ատիկա եւ կրկին ֆինանսական սերմ կը ցանէ՝ աւելի մեծ մկաններ ունենալու համար, եւ անոնք համաձայնութեան աղօթք կ'ընեն:

Յաջորդ օրը ինքնաշարժ մը կը կանգնի այդ հովիւի տան դիմացը: Այցելուները ընտանիք մըն էին անոր եկեղեցիէն: Հովիւը դուրս կ'ելլէ՝ անոնց հետ զրուցելու: Եւ անոնք կ'ըսեն, որ իրենց կառատունը մաքրելու ժամանակ սկաւառակաձողերու հաւաքածոյ գտած են եւ մտածած են, որ թերեւս հովիւի որդին ուզէ ատոնք, իսկ եթէ ոչ, մտածած են, որ հովիւը եկեղեցիին մէջ գոնէ կը ճանչնայ ինչ որ մէկուն, որ կը փափաքի առնել ատոնք: Այդ հովիւն ըսաւ ինծի, որ մէկը չէր գիտէր այն մասին, որ իր որդին կը ցանկար մեծ մկաններ ունենալ, եւ որ իրենք աղօթած էին ատոր համար ընդամենը նախորդ երեկոյեան: Այդ հովիւը ցնցուած էր: Ան տուն կը վերադառնայ եւ կը հարցնէ իր որդիին.

- Ո՞ւր են այդ լսասկաւառակները:

Նման պատմութիւնները սովորական են ինծի համար: Ես մշտապէս կը լսեմ ատոնք եւ կ'ուզեմ, որ ձեր կեանքին մէջ նոյնպէս սովորական բան ըլլան: Մինչեւ այս պահը, մենք արդէն ներկայացուցինք եւ քննարկեցինք քանի մը բանալի սկզբունքներ այն մասին, թէ ինչպէս

կը գործէ Աստուծոյ Թագաւորութիւնը: Խօսեցանք նաեւ այն մասին, որ համաձայնութիւնը կամ հաւատքն անհրաժեշտ են, որպէսզի Երկինքն օրինական իշխանութիւն կամ իրաւասութիւն ստանայ այս երկրային տիրոյթին մէջ: Այժմ քիչ մը աւելի խորունկ ուսումնասիրենք այն, թէ ինչպէս Թագաւորութեան այս օրէնքները կրնան օգնել մեզի մեր ֆինանսական կարիքներու պարագային:

*«Տիրոջ օրհնութիւնը հարստութիւն կը բերէ, եւ Ան նեղութիւն չ'աւելցնէր ատոր»:*

– Առակաց 10.22, NIV

Կարդալով այս խօսքն առաջին անգամ՝ ես մտածեցի. «Այս խօսքը չի նշանակեր այն, ինչ որ կ'ըսէ, այնպէս չէ՞»: Բայց ես պարզեցի, որ այն կը նշանակէ ճիշդ այն, ինչ որ կ'ըսէ: Հասկնալու համար, թէ ինչի մասին է այս հատուածը, մենք պէտք է անդրադառնանք սկիզբին, երբ մարդը նոր կը ստեղծուի:

*«Մէկը վկայեց տեղ մը՝ ըսելով.*

*«Մարդն ի՞նչ է, որ Դուն յիշես անոր, կամ մարդու որդին, որ այցելես անոր: Քիչ մը ցած ըրիր անոր հրեշտակներէն, փառքով եւ պատիւով պսակեցիր անոր, եւ Քու ձեռքի գործերուն վրայ կանգնեցուցիր անոր: Ամէն բան հնազանդ ըրիր անոր ոտքերուն տակ»:*

*Որովհետեւ ամէնը, որ հնազանդեցուց անոր, ոչինչ թողեց, որ հնազանդ չըլլայ անոր. բայց հիմա տակաւին չենք տեսներ, թէ ամէն բան հնազանդուած է անոր»:*

– Եբրայեցիս 2.6-8

Մենք արդէն կարդացած ենք այս հատուածը, բայց այս պահուն այն շատ կարեւոր է մեր քննարկման համար: Ըստ այս հատուածին, երբ մարդը ստեղծուեցաւ, ամէն ինչ այս երկրին վրայ դրուեցաւ անոր իշխանութեան տակ: Չկար նոյնիսկ մէկ բան, որ ենթակայ չէր անոր:

Ան կը տիրէր այս երկրին մէջ իրեն լիազօրուած իշխանութեան դիրքէն եւ կը կրէր այդ իշխանութեան պսակը՝ որպէս ատոր ներկայացուցիչ: Ան կը կրէր այդ դիրքի օծութիւնը եւ կը վայելէր ատոր պատիւը: Սատանան, որ ապստամբած էր Աստուծոյ դէմ, արդէն իսկ նետուած էր երկիր մինչեւ Ադամին ստեղծուիլը: Սատանան կ'ատէր Աստուծոյ իշխանութեան պսակը կրող մարդուն, քանի որ ինքը յայտնուած էր անոր իշխանութեան ներքոյ: Այժմ սատանան ստիպուած էր հպատակելու այդ արարածին, որ իր ստեղծուած բնական, նիւթական վիճակին մէջ շատ աւելի թոյլ էր իրմէ: Այնուամենայնիւ, հոգեւոր առումով, ամէն մէկ բառ, որ Ադամը կ'ըսէր, ունէր նոյն իշխանութիւնը, ինչ՝ եթէ անձամբ Աստուած ըսէր ատիկա: Ադամը՝ Աստուծոյ որդին, կը տիրէր այս երկրի վրայ իշխանութեան եւ վեհութեան զարմանալի դիրքէն:

**«ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ  
ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԿԸ ԲԵՐԷ,  
ԵՒ ԱՆ ՆԵՂՈՒԹԻՒՆ  
Զ'ԱԻԵԼՑՆԵՐ ԱՏՈՐ»:**

**– ԱՌԱԿԱՅ 10.22, NIV**

Այնպէս որ, սատանան կ'ատէր մարդուն եւ սաստիկ կը ցանկար ստանալ անոր իշխանութիւնն այս երկրի վրայ: Ան ունէր միայն մէկ տարբերակ. ինչ որ կ'երպով խլել մարդէն անոր պսակը կամ այն դիրքը, որ ան կը զբաղեցնէր: Այնուամենայնիւ, կար պզտիկ

խնդիր մը. սատանան չունէր զօրութիւն՝ այդ պսակը Ադամէն խլելու համար. անոր միակ յոյսը մարդուն ինչ որ ձեւով խաբելն էր, որպէսզի Ադամն ինքը հանէր իր վրայէն այդ պսակը: Ան համոզեց Եւային, որ Աստուծոյ կարելի չէր վստահիլ, եւ որ կեանքը կրնար առաջարկել անոնց շատ աւելին, քան այն, ինչ որ Աստուած թոյլ կու տար: Ադամն ու Եւան որոշեցին հաւատալ սատանային աւելի, քան Աստուծոյ, եւ դաւաճանութիւն գործեցին Աստուծոյ դէմ: Վերջաւորութեան անոնք կորսնցուցին իրենց օրինական իշխանութիւնն Աստուծոյ Թագաւորութեան մէջ, իսկ սատանան դարձաւ այս աշխարհի աստուածը, ինչպէս որ Պօղոսը կ'անուանէ անոր Բ. Կորնթացիսի հետեւեալ խօսքին մէջ.

*«Որոնց մէջ այս աշխարհի աստուածն այն անհաւատներուն սրտերը կուրցուց, որ Քրիստոսի փառաւոր Աւետարանի լուսաւորութիւնը չծագի անոնց վրայ, որ աներեւոյթ Աստուծոյ պատկերն է»:*

– Բ. Կորնթացիս 4.4

Իր ապստամբութենէն առաջ Ադամը կը վայելէր որդիութեան առաւելութիւնները: Ան կը վայելէր այն ամէնը, ինչ որ կը պատկանէր Աստուծոյ. ան նոյնիսկ մէկ օր չէր ապրած կարիքի մէջ եւ չէր ունեցած նոյնիսկ վախի նշոյլ: Այն, ինչ որ անհրաժեշտ էր երկիր մուրակի վրայ ապրելու համար, արդէն իսկ տրուած էր իրեն ստեղծուելէն առաջ:

Մտորելով Ծննդոց գիրքին մէջ նկարագրուած աշխարհի արարման վեց օրուան շուրջ, կը տեսնենք, որ մարդը ստեղծուեցաւ արարչագործութեան վեցերորդ օրուան վերջաւորութեան, եւ ան Աստուծոյ արարչագործութեան ծրագիրի վերջին մասն էր: Ան նախասահմանուած էր ապրելու եօթներորդ օրուան մէջ, որ Աստուած հռչակեց հանգիստի օր: Աստուած չըրաւ ատիկա, որովհետեւ Ինքը յոգնած էր, այլ որովհետեւ Ինքն աւարտած էր Իր գործը, եւ ամէն ինչ լիարժէք էր: Պահ մը մտածեցէք Աստուծոյ աւարտած աշխատանքին մասին եւ այն փառաւոր ծրագիրի մասին, որ Ան որոշած էր մարդուն համար: Ցաւօք, Ադամը ձգեց այդ ամէնը եւ վերջաւորութեան կորսնցուց իր օրինական դիրքն Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

Մօտենալով Ադամին այն բանէն յետոյ, երբ ան որոշեց անհնազանդ ըլլալ՝ Աստուած ըսաւ անոր.

*«Անիծեալ ըլլայ երկիրը քու պատճառով, նեղութիւնով (կամ՝ «տանջալի աշխատանքով») ուտես անորմէ կեանքիդ բոլոր օրերուն մէջ: Եւ ան փուշ ու տատասկ բուսցնէ քեզի համար, եւ դաշտի խոտն ուտես: Երեսիդ քրտինքով հաց ուտես, մինչեւ որ ետ դառնաս դէպի երկիրը, որովհետեւ անորմէ առնուեցար, անոր համար, որ հող էիր դուն, եւ դէպի հողը դառնաս»:*

– Ծննդոց 3.17-19



Առաջին բանը, ինչ որ կ'ուզեմ հասկնաք, հետեւեալն է. Աստուած չանհծեց երկիրը. Ադամն անհծեց այն: Ան ունէր կատարեալ իշխանութիւն երկրի վրայ: Երկիրը յանձնուած էր անոր խնամքին: Ունենալով լիարժէք եւ բացարձակ իշխանութիւն երկրի վրայ՝ Ադամը դաւաճանութիւն գործեց Աստուծոյ իշխանութեան դէմ եւ, ըստ էութեան, հեռացուց Աստուծոյ: Այդ որոշումն անասելի հետեւանքներ ունեցաւ ոչ միայն Ադամին համար, այլեւ ամբողջ երկրի համար, իւրաքանչիւր տղամարդու եւ կնոջ համար, որոնք ապրեցան այս երկրի վրայ ատորմէ յետոյ: Թէեւ ան տակաւին կը պահպանէր իր իրաւասութիւնն Աստուծոյ կողմէն իրեն տրուած երկրային տիրոջին մէջ, ան արդէն անկարող էր իշխելու՝ իր պսակի եւ կառավարման դիրքէն, որ ինքը ժամանակ առաջ կը ներկայացնէր, եւ որ կը սատարէր իր իշխանութեան: Քանի որ Ադամը բաժնուեցաւ կեանքէն, մահը, որ օտար էր անոր համար, սկսաւ իշխել:

Աստուած յանդիմանեց Ադամին՝ ցոյց տալով, թէ ինչ ըրաւ ան, եւ ըսաւ անոր, որ առաջինը՝ իր մեղքի պատճառով ան կորսնցուց իր օրինական դիրքն Աստուծոյ կառավարման մէջ: Եւ քանի որ Ադամն այդ կառավարման ներկայացուցիչն էր երկիր մոլորակի վրայ, Երկինքը կորսնցուց իր օրինական ներկայացուցչութիւնը, որուն միջոցով այն իրաւասութիւն ունէր երկրի վրայ: Երկրորդը՝ երկիրն ինքը ազդեցութիւն կրեց ատորմէ, եւ այն այլեւս պիտի չմատակարարէր այնպէս, ինչպէս նախկինին՝ Եդէմի պարտէզին ժամանակ: Այժմ անհրաժեշտ պիտի ըլլար Ադամի տանջալի աշխատանքը եւ երեսի քրտինքը, որպէսզի երկիրը տար այն, ինչ որ անհրաժեշտ էր անոր՝ իր գոյութեան համար: Այժմ փուշերը եւ տատասկները պիտի ծածկէին դաշտերը, եւ կեանքը պիտի դժուարանար. կեանքը պիտի վերածուէր գոյատեւման:

Ես կ'անուանեմ այս դժուարին կեանքը եւ գոյատեւման մտածելակերպը՝ ներծծուած վախի եւ մահուան գարշահոտութեամբ, որ կը ծանրանայ Ադամէն յետոյ ծնած իւրաքանչիւր մարդու վրայ, «այս երկրի անէծքի համակարգը»: Մենք մեծցած ենք ճիշդ այդ միջավայրի մէջ եւ քաջ ծանօթ ենք այս գոյատեւման համակարգին: Դաւիթը կ'անուանէ այն մահուան շուքի ծոր 23-րդ Սաղմոսի մէջ:

*«Թէեւ երթամ մահուան շուքի ձորով, չար բանէն չեմ վախճնար, որովհետեւ Դուն ինձի հետ ես»:*

– Սաղմոս 23.4

Մեր երկրային մթնոլորտը համակուած է մահուան վախով: Բայց կայ եւս ուրիշ բացասական հետեւանք: Մարդը կը կորսնցնէ իր հաղորդակցութիւնն Աստուծոյ հետ եւ, հետեւաբար, չի ճանչնար ինքզինքը, այսինքն՝ չի գիտակցիր իր նպատակն ու ինքնութիւնը: Երբ ստեղծուեցաւ մարդը, ան ստացաւ նպատակ եւ առաջադրանք: Ան պէտք է տիրէր երկրին մէջ Աստուծոյ անունէն: Ուրիշ ձեւով ըսելու համար, Աստուած առաջադրանք եւ նպատակ տուած էր անոր կեանքի համար: Բայց այժմ մարդու մտածելակերպն ամբողջութեամբ կ'անցնի կատարեալ գոյատեւման: Գոյատեւումը դարձած է անոր նպատակը եւ նոր առաջադրանքը:

Այժմ իւրաքանչիւր որոշում, որ մարդը կը կայացնէ, կը գտուի այս գոյատեւման անէծքով. անոր նպատակը կա՛մ միջոցներ հայթայթելն է, կա՛մ ատոնք կուտակելը: Խաղաղութիւն չկայ. իւրաքանչիւր օր լեցուն է տանջալի աշխատանքով եւ քրտինքով: Միակ հնարաւոր փախուստն այս գոյատեւումէն՝ այս առնետավազքէն, ինչպէս որ այն կ'անուանեն այսօր, այն է, որ մենք ինչ որ ձեւով կարենանք կուտակել բաւականաչափ միջոցներ, որպէսզի վերջապէս դադրինք վազելէն: Ասիկա իւրաքանչիւր տղամարդու եւ կնոջ երազանքն է մարդու անկումէն ի վեր: Անոնց գլխաւոր նպատակն իրենց վազքը դադրեցնելն է: Այն մարդը, որ այնքան յաջողակ կը գտնուի, որ կրնայ յաւելեալ միջոցներ ձեռք բերել, կը սկսի կուտակել եւ մեծ զգուշաւորութեամբ պահպանել ատոնք: Այդ մարդիկ կը կառչին իրենց միջոցներէն՝ ատոնք կորսնցնելու մեծ վախով, քանի որ եթէ ասիկա տեղի ունենայ, անոնք կրկին ստիպուած պիտի

**ԱՅՍ ԵՐԿՐԱՅԻՆ  
ԳՈՅԱՏԵՄԱՆ ԱՆԷԾՔԻ  
ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԷՋ  
ԻՐԱՔԱՆՉԻՒՐԸ ՅՈՂՆԱԾ Է  
ՎԱԶՔԷՆ:**

ըլլան վերադառնալու տանջալի աշխատանքով եւ քրտինքով լեցուն վազքին:

Մարդու երազանքը՝ անոր գոյատեւման նպատակը, ինչպէս արդէն ըսի, հետեւեալն է. հայթայթել բաւականաչափ միջոցներ, որպէսզի ան դադրեցնէ ստրկական վազքը գոյատեւման համար եւ հանգիստ գտնէ: Ես կ'ուզեմ վստահ ըլլալ, որ դուք յստակ կը գիտակցիք այս փաստը. այս երկրային գոյատեւման անէծքի համակարգին մէջ իւրաքանչիւրը յոգնած է վազքէն:

Կը յիշեմ, որ առաւօտ մը նստած կը գրուցէի հովիւի մը հետ: Ամէն առաւօտ՝ արթննալով, ան կ'ըսէր, որ կը սիրէր իր ծառայութիւնը, քանի դեռ չէր յիշեր իր ֆինանսական վիճակը, պարտքերը եւ միջոցներու սղութիւնը: Ան կը պատմէր, որ ֆինանսական խնդիրները նման են թաց ծածկոցի. ատոնք կը փորձեն խեղդել կեանքը եւ զրկել ուրախութեամբ ծառայելէն: Այնպէս չէ, որ միայն հովիւները նման նեղութիւններ կը կրեն. այսպէս կ'ապրի ընտանիքներու մեծ մասը՝ պարտքերու մէջ եւ աշխատավարձքէ՝ աշխատավարձք:

Իւրաքանչիւրը ելք կը փնտռէ, եւ միակ ելքը հարստութիւնն է՝ երբ մարդն ունի աւելին, քան բաւական է: Այս երկրային անէծքի համակարգին մէջ ինքնութիւնը կ'որոշուի այն բանով, թէ ինչ ունիք եւ որքան կրնաք շահիլ: Առաջին հերթին, մարդը յուսահատօրէն կը փորձէ ծածկել իր մերկութիւնը՝ Աստուծոյ իրեն տրուած նպատակն ու ինքնութեան կորուստը, եւ կեղծիք կ'ընտրէ: Ան կը փորձէ փոխարինել Աստուծոյ օծութիւնը, որ ժամանակ մը կը ծածկէր իրեն աներեւակայելի փառքով եւ հարստութեամբ: Երկրորդը՝ ան նոյնպէս կը փորձէ փոխարինել իր պատուաւոր Թագաւորական դիրքը (որուն միջոցով ան կ'իշխէր Աստուծոյ Թագաւորութեան մէջ), այս կեանքի հպարտութեամբ եւ այլ մարդոց վրայ իշխելով: Այժմ մարդը կլանուած է մէկ բանով՝ հարստութիւն գտնելով եւ կուտակելով: Մարդու ինքնութիւնը կ'որոշուի այն բանով, թէ որքան հարստութիւն ունի եւ որքան իշխանութիւն կրնայ գործադրել այլ մարդոց վրայ: Հասարակական կարգավիճակը եւ դիրքը շատ կարեւոր են անկում ապրած մարդու ինքնագնահատականի համար:

Մտածեցե՛ք այս մասին: Որպէս կանոն, տղամարդիկ ի՞նչ կը հարցնեն իրար առաջին հերթին: «Ինչո՞վ դուք կը զբաղիք»: Ինչո՞ւ: Մի՞թէ մեզի իրականութեան մէջ կը հետաքրքրէ ատիկա: Ոչ այնքան, բայց այդ հարցը կ'որոշէ մեր յարգանքի մակարդակն այդ մարդուն հանդէպ: Ուրիշ ձեւով ըսելու համար, մենք կը հարցնենք մենք մեզի. «Ո՞վ է այս մարդը: Ի՞նչ դիրք կամ աստիճան ան ունի այս աշխարհին մէջ: Որքա՞ն յարգանք ես պէտք է ցուցաբերեմ անոր հանդէպ»: Կանա՛յք, ես կ'ըսեմ այս ամէնը տղամարդոց տեսանկիւնէն: Ես կը հասկնամ, որ դուք բոլորովին ուրիշ ձեւով կը դիտարկէք մարդու ինքնութիւնը:

Այսօր այս երկրի անծէքի համակարգը դեռեւս կը գործէ: Մարդիկ կ'անցընեն իրենց բոլոր որոշումները դրամ հայթայթելու եւ կուտակելու գտիչով: Մարդիկ կը տեղափոխուին իրենց երկրէն՝ աւելի լաւ վճարուող աշխատանք գտնելու համար, եւ նոյնիսկ չեն մտածեր այն մասին, թէ որն է իրենց նպատակը: Իւրաքանչիւրը կ'ուզէ ռոք աստղ ըլլալ: Ինչո՞ւ: Ինքնութիւն (դիրք) եւ հարստութիւն ստանալու համար:

Հազարաւոր միջին դպրոցականներու միջեւ հարցում անցընուած էր այն մասին, թէ ինչով անոնք կը փափաքին զբաղիլ, երբ մեծան: Անոնցմէ 65 տոկոսը ըսած է, որ իրենց զբաղուածութեան նպատակը յայտնի դառնալն է: Յայտնի՞: Որքանով տեղեակ եմ, յայտնի դառնալը ինքնին զբաղուածութիւն չէ:

Եւս հարցում մը ցոյց տուած է, որ աշխատող մարդոց գրեթէ 30 տոկոսը կ'ատէ իրեն աշխատանքը, իսկ այլ հարցում պարզած է, որ մարդոց 40 տոկոսը չի սիրեր իրեն աշխատանքը: Այնպէս որ, ԱՄՆ-ի մէջ աշխատող մարդոց 70 տոկոսին հաճելի չէ այն, ինչով որ իրենք կը զբաղին: Այդ պարագային, ինչո՞ւ անոնք կը շարունակեն կատարել այդ աշխատանքը: Պատճառն այն է, որ անոնք գոյատեւման ստրուկներ են, որոնք կը գտնուին տանջալի աշխատանքով եւ քրտինքով վազքի մէջ՝ պարզապէս գոյատեւելու համար: Այս աշխատող մարդոցմէ շատերուն կեանքին մէջ կը բացակայի որեւէ նպատակ եւ ձգտում. անոնց դրդապատճառն իրենց հաշիւները վճարելն է: Դրամ հայթայթելու նպատակին ստրկացուած ըլլալը

գրեթէ տեղ չի ձգեր այլ տարբերակներու համար: Ան, որ ամենաշատը կը վճարէ, կը յաղթէ ամէն անգամ: Ասիկա կը կոչուի արձեւտավագք: Ահա թէ մենք ուր կ'ապրինք: Մտովի պատկերացուցէք փայտէ անիւի մէջ գտնուող մուկը, որ կը վազէ՝ լարելով ուժերը, սակայն ոչ մէկ տեղ կ'երթայ: Մենք կը ծիծաղինք եւ կը կարծենք, թէ ասիկա զուարճալի է: Բայց իրական կեանքին մէջ ասիկա զուարճալի չէ, բոլորովին զուարճալի չէ: Մարդիկ կը մահանան այդ անիւի մէջ եւ այդպէս ալ չեն հասնիր հոն, ուր հասնելու յոյս ունէին:

*«Եւ մի՛ փնտռէք այն, թէ ինչ պիտի ուտէք կամ խմէք. մի՛ անհանգստանաք այդ մասին: Որովհետեւ հեթանոս աշխարհը կը վագէ այդ ամէնուն ետեւէն, իսկ ձեր Հայրը գիտէ, որ աստուք պէտք են ձեզի: Բայց փնտռեցէ՛ք Անոր Թագաւորութիւնը, եւ այդ բաները ձեզի նոյնպէս պիտի տրուին»:*

– Դուկաս 12.29-31, NIV

Տանջալի աշխատանքով եւ քրտինքով վազելը միակ համակարգն է, որ մենք կը ճանչնանք: Եթէ ըսէի ձեզի, որ դուք պէտք է ազատիք պարտքէն, այսինքն՝ դուք ՊԷՏՔ է բոլորովին ազատիք ձեր պարտքէն 12 ամսուան մէջ, հակառակ պարագային, ձեր ընտանիքին յաւիտեան պիտի արտաքսեն Հիւսիսային բեւեռ (ես կը բերեմ ծայրայեղ օրինակ՝ իմ ըսելիքը հասկնալի դարձնելու համար), ի՞նչ կ'ընէիք: Կ'ըսեմ ձեզի, թէ ինչ կ'ընէիք: Դուք անմիջապէս ծրագիր կը կազմէիք ւաւելի արագ քրտնելու եւ վազելու համար: Դուք կ'ըսէիք. «Ես կրնամ ընդունուիլ եւս երկու կէս դրոյքով աշխատանքի: Կհին նոյնպէս կրնայ ընդունուիլ երկու կէս դրոյքով աշխատանքի, երեխաներս նոյնպէս կրնան օգնել ձեզի»: Պատճառն այն է, որ տանջալի աշխատանքի եւ քրտինքի համակարգը մատակարարման միակ համակարգն է, որուն մասին դուք գիտէք: Թոյլ տուէք բերել եւս օրինակ մը այս համակարգի մասին:

Պատկերացուցէք, որ ես կը վազեմ ձեր փողոցով եւ կը գտնեմ սրճագոյն թուղթ տոպրակ ձեր տան հակառակ կողմը, որուն մէջ

տասը միլիոն տողար կայ: Ես այնպե՛ս կ'ոգեշնչուիմ, բայց այդ մասին պէտք է զեկուցեմ ուստիկանութեան: Եւ քանի որ ես կը ճանչնամ ձեզի, կու գամ ձեր տուն եւ ձեր տունէն հեռաձայնելու թոյլտուութիւն կը խնդրեմ: Ես կը հեռաձայնեմ ուստիկանական բաժանմունք, մինչ դուք կանգնած կը լսէք ինձի: Ես կը պատմեմ անոնց, թէ ինչ գտած եմ, եւ կարճ լռութենէն յետոյ, երբ անոնք կը ստուգեն իրենց տուեալները, կ'ըսեն ինձի, որ ոչ ոք ահագանգած է անոնց կորսուած դրամի մասին, եւ ես կրնամ ինձի պահել այդ գումարը (չեմ կարծեր, որ անոնք այդպէս կ'ըսէին, բայց իմ օրինակի համար այդպէս պէտք է): Երբ անոնք կ'ըսեն ատիկա, ես կը ցատկեմ եւ կը գոչեմ ուրախութենէն: Ապա կը փոխանցեմ ձեզի անոնց խօսքերը եւ չեմ կրնար զսպել իմ ուրախութիւնը:

Դուք քաղաքավարօրէն կը ժպտաք, մինչ ես, ուրախութեամբ լեցուած, կը բացատրեմ ձեզի այդ ամէնը: Բայց ի՞նչ կ'ընէք այդ օրուան ընթրիքի սեղանին, երբ պատմէք այդ պատմութիւնը ձեր կնոջը: Կը ժպտա՞ք: Չեմ կարծեր: Դուք կ'ըսէք. «ԱՏԻԿԱ \_\_\_\_\_ ՉԷ՛»: Դուք գուշակեցիք այս բառը, այնպէս չէ՞: Ի՞նչ իմացաք, որ ճիշդ պատասխանը «ԱՐԴԱՐ» բառն է: Քանի որ դուք այդպէս դաստիարակուած էք, դուք մեծցած էք այդ համակարգին մէջ, ըստ որուն ամէն ինչ տեղի կ'ունենայ տանջալի աշխատանքով եւ քրտինքով:

Իմ օրինակին մէջ ես դրամ գտայ առանց որեւէ ջանքի, ինչ որ հակառակ է այդ համակարգին: Ատիկա արդար չէ: Ատիկա արդար չէ, քանի որ ես չէի աշխատած՝ այդ դրամը վաստկելու համար. ես պարզապէս գտած էի այն: Գիտակցելով, որ ձեզի, հաւանաբար, բախտը երբեք այդպէս չի ժպտար, դուք կը լեցուիք նախանձով եւ դառնութեամբ, քանի որ պիտի շարունակէք ապրիլ հարկադրուած ստրկութեան մէջ, որպէսզի գոյատեւէք:

Ի տարբերութիւն ատոր, եթէ մէկ օր ես եկեղեցի գալի աղտոտ եւ պատռուած հագուստով, բարձրանալի ամպիոնին քով եւ ըսէի. «Մեր քով ատիկա յաջողեցա՛ւ: Վերջին տասը տարուան ընթացքին Տրենտան եւ ես կ'աշխատէինք օրը 22 ժամ, եւ վերջապէս վճարեցին՝ք մեր տան համար», դահլիճը կը պայթէր ցնծութեան

ծայներէն եւ ծափահարութիւններէն: Ինչո՞ւ: Քանի որ ինչ որ մէկուն քով ատիկա յաջողեցաւ, եւ դուք խրախուսական համարեցիք ատիկա: Ինչ որ մէկուն ատիկա յաջողեցաւ. կը նշանակէ՝ կայ ելք: Թերեւս մենք կրնանք սեղմել մեր ատամները, քշտել մեր թելերը, գին վճարել եւ նոյնպէս ազատ ըլլալ: Բայց ինչո՞ւ մէկը չէր պոռար եւ չէր ծափահարեր այն պարագային, եթէ ես գտնէի մայթին նետուած դրամը: Եւ ինչո՞ւ դուք այդքան դիւրութեամբ գուշակեցիք այդ կորսուած բառը: Պատճառն այն է, որ դուք այդպէս կը մտածէք, եւ այդպէս ալ կ'երագէք: Մեզի սորվեցուցած են, որ ինչ որ բան արդար է միայն տանջալի աշխատանքի եւ քրտինքի պարագային: Դրամն առանց ծանր աշխատանքի արդար չէ:

Այնուամենայնիւ, իւրաքանչիւրը կ'երագէ ազատիլ այդ տանջալի աշխատանքի եւ քրտինքի համակարգէն: Հարուստ դառնալը, միլիոնատէր դառնալը այն միտքն է, որ կը տանջէ մեծամասնութեան: Այսօր միլիոն տոլարն այն չէ, ինչ որ անցեալի մէջ, բայց միայն որպէս թիւ՝ այն տակաւին հարստութիւն կը խորհրդանշէ: Հարստութիւնը կ'ընծեռէ ազատ ըլլալու հնարաւորութիւն՝ ի հակադրութիւն այն ամենօրեայ կեանքին, որուն մէջ կ'ապրի մարդոց մեծ մասը: Բոլորը յոգնած են վազքէն, եւ միլիոն տոլար ունենալը կը նշանակէր, որ անոնք կանգ պիտի առնէին եւ վերջապէս պիտի զբաղէին այն բանով, ինչով որ իրենք կը ցանկան: Մտածեցէք այս մասին. ո՞րն է վիճակախաղի հրապուրանքը: ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ: Ազատութիւն, որ թոյլ կու տայ ձեզի ընտրել այն, ինչ որ կը ցանկաք, կայացնել որոշումներ, որոնք չեն դառնար հաշիւներ փակելու եւ ապրուստ վաստկելու շուրջ:

*«Ո՞վ կը ցանկայ դառնալ միլիոնատէր»* հաղորդումը մեծ համբաւ կը վայելէ: Այն գրաւիչ է, քանի որ իւրաքանչիւրը կ'երագէ այդ ազատութեան մասին: Դիտելով այդ հաղորդումը՝ մարդիկ զգացմունքօրէն կը ներգրաւուին՝ ուրախանալով մասնակիցին համար եւ յուսալով, որ ան կը յաջողի յաղթել:

Պահ մը փոխենք մեր թեման. գողութեան ամենապարզ սահմանումը նոյնպէս առանց աշխատելու մատակարարում ստանալն է: Այսինքն, թէեւ խեղաթիւրուած, այն նոյնպէս կ'առաջարկէ

ազատութիւն այս աշխարհի անէծքի համակարգէն: Այսպիսով, եկէք պարզապէս համաձայնինք, որ իւրաքանչիւրը կը ցանկայ վազքը դադրեցնել: Բայց արդեօ՞ք ելք կայ: Գոյութիւն ունին բազմաթիւ ֆինանսական խարդախութեան ծրագիրներ եւ մտածելութիւններ: Ես օրական առնուազն տասը ելեկտրոնային նամակ կը ստանամ արտասահմանն ապրող մարդոց ողբերգական պատմութիւններով: Անոնք կը գրեն, որ 20 միլիոն տոլար ժառանգած են, բայց իրենց պէտք է ինչ որ մէկը, որ կ'օգնէ պահելու այդ գումարը ապահով վայրի մէջ: Անոնք կ'առաջարկեն այդ գումարին կէսը, միայն թէ ես համաձայնիմ ընդունիլ եւ պաշտպանել այդ միջոցները: Անշուշտ, ատորմէ յետոյ անոնք կ'ուղարկեն ինծի ելեկտրոնային հասցէ եւ կը խնդրեն ուղարկել փոքր գումար կազմող դիմումնագրի մշակման վճար, փոխանցման վճար, ապահովագրութեան վճար (կամ՝ ինչ ալ որ անոնք անուանեն ատիկա), որ կը պահանջուի՝ իրենց ժառանգութիւնն ստանալու համար: Դուք լո՞ւրջ կ'ըսէք: Մի՞թէ յիմարի կը նմանիմ:

Ինծի հեռաձայնեց յաճախորդ մը, որուն անհրաժեշտ էր խորհրդատուութիւն ներդրումներու համար: Ես հարցուցի անոր իմ սովորական հարցումները եւ պարզեցի, որ ան ունէր մօտաւորապէս հինգ միլիոն տոլար՝ ներդրումներու համար: Ան ըսաւ, որ այդ պահուն այդ գումարը դեռ իր քովը չէ, բայց պիտի ստանայ այն՝ որպէս ժառանգութիւն: Ես հարցուցի անոր, թէ՛ իր կարծիքով, որքա՞ն ժամանակուան մէջ կը կարգաւորուի իր ժառանգութեան հարցը, եւ ան ըսաւ, որ գրեթէ երկու շաբթուան ընթացքին: Ես հեռաձայնեցի անոր երկու շաբաթ յետոյ, իսկ ան ըսաւ, որ անհրաժեշտ էր աւելի շատ ժամանակ: Ան չէր կրնար վերցնել այդ ժառանգութիւնը եւրոպական դրամատունէ մը, որն արգելանք դրած էր այդ միջոցներուն վրայ: Ատիկա գրաւեց իմ ուշադրութիւնը, եւ ես սկսայ հարցումներ հարցնել անոր: Ան ըսաւ, որ մարդ մը, որ, ինչպէս կ'ենթադրուի, իր քեռին էր, մահացած էր Ֆրանսայի մէջ եւ հինգ միլիոն տոլարի ժառանգութիւն ձգած էր իրեն: Այնուամենայնիւ, կային 50.000 տոլարի հարկային պարտաւորութիւններ, որոնք պէտք էր վճարել, մինչեւ որ այդ ժառանգութիւնը փոխանցէին իրեն: Ան ըսաւ, որ դեռ



կը փորձէ այդքան գումար գտնել, եւ դիմել կալուածագրաւային վարկ ստանալու համար:

Ես հարցուցի, թէ իրաւաբան ունի՞, եւ ան ըսաւ.

- Այո՛, այս հարցով կը զբաղի այն իրաւաբանը, որ զանգեց ինձի Ֆրանսայէն:

- Այսինքն, դուք չունի՞ք ամերիկեան իրաւաբան, որ կը զբաղի ատորմով:

- Ո՛չ, - ըսաւ ան, - միայն այն մարդը, որ հեռաձայնեց ինձի Ֆրանսայէն:

Ան շարունակեց՝ ըսելով, որ քանի որ չէ կրցած գտնել այդ 50.000 տոլարը, Ֆրանսայի մէջ գտնուող այդ իրաւաբանն ըսած է, որ պիտի տայ իրեն այդ գումարին կէսը, իսկ ինքը պիտի վերադարձնէ ատիկա, երբ դրամատունը փոխանցէ իր ժառանգութեան գումարը:

- Ո՛չ, - ըսի ես, - ատիկա խարդախութի՛ւն է:

Թէեւ նախկինին ան ոչ մէկ անգամ լսած էր այդ ենթադրեալ քեռիին մասին, ան համոզուած էր, որ այդ ամէնը ճիշդ է: Ես հեռաձայնեցի անոր եւս երկու շաբաթ յետոյ, եւ ան ըսաւ, որ գտած է գրեթէ ամբողջ գումարը՝ այդ դրամատան փոխանցելու համար: Կրկին, ես ըսի անոր.

- Այդ հաշիւին արդէն հինգ միլիոն տոլար կայ: Եթէ անոնք իսկապէս հարկային պահումներու կարիք ունենային, պարզապէս ձեւ մը կ'ուղարկէին ձեզի ելեկտրոնային փոստով կամ արագ փոստով, որ դուք կը ստորագրէիք եւ ետ կ'ուղարկէիք՝ լիազօրելով անոնց առնել այդ 50.000 տոլարն այդ հաշիւէն:

Բայց ան չհաւատաց ինձի եւ համոզուած էր, որ այդ մարդը ճիշդ կը խօսէր:

Անցեալ Կիրակի մեր եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ նման դէպք մը: Երիտասարդ մը կը հարցնէր ինձի ներդրումներու մասին՝ մօտաւորապէս նոյն չափի գումարով, որ ան պիտի ստանար այլ աշխարհամասի մէջ ունեցած ժառանգութենէն: Ես առիթ չտուի անոր աւարտելու իր նախադասութիւնը՝ ըսելով.

- Գիտեմ, գիտեմ, անոնք կ'ուզեն, որ ինչ որ վճարում ընես, որպէսզի փոխանցեն քու գումարը, ճի՞շդ է:

- Այո՛, ուրկէ՞ գիտէք:

Ես նոյնն ըսի անոր, որ ասիկա խարդախութիւն է: Թէեւ ան չէր ճանչնար այն մարդուն, որ ենթադրաբար մահացած էր, եւ չունէր իրաւաբան հոս՝ ԱՄՆ-ի մէջ, ան դեռ կը շարունակէր ընդդիմանալ իմ ըսածին, որ այդ գումարն իրականութեան մէջ չկար: Ինչո՞ւ մարդիկ կը հաւատան նման բաներու. քանի որ անոնք կ'ուզեն ազա՛տ ըլլալ: Անոնք չեն կրնար հրաժարիլ այդ գաղափարէն, քանի որ, իրենց մտքին մէջ, եթէ նոյնիսկ ատոր հաւանականութիւնը հաւասար է մէկ տասնորդականի՝ մէկ միլիառէն, անոնք կ'ուզեն հաւատալ ատոր:

Թոյլ տուէք մէկ ուրիշ օրինակ մը բերել: Տրենտային եւ ինծի պատկանող ֆինանսական ծառայութիւններով զբաղող ընկերութիւնը կը գործէ ամբողջ Միացեալ Նահանգներու մէջ: Ատիկա հրաշալի՛ ընկերութիւն է: Այն իրական հնարաւորութիւններ կ'ընծեռնէ. ես ունիմ աշխատակիցներ, որոնք տարեկան քանի մը հարիւր հազար տոլար կը վաստկին: Բայց իմ ընկերութեան մէջ աշխատելու համար անհրաժեշտ է շատ բան սորվիլ: Մենք կը զբաղինք մարդոց դրամներով: Կան օրէնքներ, որոնք անհրաժեշտ է իմանալ, եւ կան ֆինանսական ծրագրաւորման մարտավարութիւններ, որոնք անհրաժեշտ է սորվիլ:

Ես ռատիօ գովազդներ պատուիրած էի Օհայօ նահանգի Քոլամպուս քաղաքի մէջ գտնուող քրիստոնէական ռատիօ եթերով մը, որպէսզի աշխատանքի դիմումնագիր ստանայի մարդոցմէ, քանի որ կը ցանկայի քանի մը հեռանկարային թեկնածու գտնել իմ ընկերութեան համար: Մեզի դիմեց մօտաւորապէս 50 մարդ: Անմիջապէս հարցազրոյցներ կազմակերպելու փոխարէն ես որոշեցի նախնական հանդիպում կազմակերպել մօտակայ պանդոկի մը մէջ, որ կ'օգնէր ինծի առանձնացնելու հնարաւոր թեկնածուներուն: Այդ հանդիպման ընթացքին ես պիտի ներկայացնէի այն մեծ ներուժը, որ մեր ընկերութիւնն ունէր գործարար ոլորտի մէջ, եւ որ մեր դիրքորոշումն էր ոչ միայն խորհրդատուութիւն տալ այն

մասին, թէ ինչպէս կը գործեն ֆինանսները, այլեւ ներկայացնել ատիկա քրիստոնէական աշխարհայեացքի տեսանկիւնէն: Մենք նոյնպէս ներկայացուցինք մեր ընկերութեան գործունէութիւնը՝ ընթացակարգերու, փոխհատուցումներու, ուսուցման եւ արտօնագրման պահանջներու տեսանկիւնէն: Իմ փորձառութենէն ես գիտէի, որ իմ թեկնածուներէն շատերը պիտի հրաժարէին՝ հասկնալով, թէ որքան աշխատանք պիտի պահանջուէր տարեկան 200.000 տոլար վաստկելու համար:

Հանդիպումէն յետոյ դուրս ելայ այդ սրահէն եւ տեսայ, որ պանդոկի գլխաւոր դահլիճը լեփ-լեցուն է, աւելի քան 1000 մարդ կար: Բոլորը եկած էին միեւնոյն պատճառով. յայտնի բազմաշերտ մարքեթինկային առետրական ընկերութիւն մը շնորհանդէսի հաւաքոյթ կազմակերպած էր՝ առաջարկելով միանալ իրենց ընկերութեան: Բայց ինչո՞ւ հոն այդքան շատ մարդ՝ իմ սրահին մէջ հաւաքուած 50 մարդու համեմատ: Պատասխանը պարզ է՝ դրամը: Դժբախտաբար, եւ ատիկա, ըստ էութեան, այն չէր, որ կ'առաջարկէր այդ բազմաշերտ ընկերութիւնը, մարդոց պատկերացումն այսպիսին էր. «Եթէ արձանագրուիմ, պիտի գտնեմ երեք մարդ, եւ հո՛ւփ, ես միլիոնատէր կը դառնամ»: Ես արդէն բաւականին ժամանակ է՝ կը հետեւիմ գործարար աշխարհին՝ հասկնալու համար, որ ոեւէ մարդ, որ մեծ գումարներ կը վաստկի բազմաշերտ ընկերութիւններուն մէջ, մեծ աշխատանք կը կատարէ: Այո՛, հոն կայ ներուժ, բայց կրկին, մարդիկ կ'ենթադրեն, որ դիւրին դրամ պիտի վաստկին, եւ կը մտածեն. «Տե՛ս, թէ որքան մարդ կայ հոս: Եթէ ես չարձանագրուիմ հիմա, կը կորսնցնեմ իմ ամբողջ կեանքի հնարաւորութիւնը»: Կը խնդրեմ, սխալ մի՛ հասկնաք ինծի: Ես ունիմ շատ լաւ ընկերներ, որոնք միլիոններ վաստկած են նման ընկերութիւններէն, եւ գոյութիւն ունին շատ լաւ բազմաշերտ մարքեթինկային առետրական ընկերութիւններ: Բայց ես պարզապէս կը նկարագրեմ այն մտածելակերպը, որ ունի հոն դիմող միջին մարդը: Դիւրին եկամուտ առաջարկելը մեծ գումարներ կը բերէ այս երկրային գոյատեւման անէծքի համակարգի մէջ:

Եթէ դուք պահ մը կանգ առնէք եւ հարցնէք ձեզի, թէ որքան կը մտածէք դրամի մասին՝ թէ՛ այն ձեռք բերելու, թէ՛ ձեր ունեցուածքը

պաշտպանելու համար, կը զարմանաք: Ես կրկին կ'ըսեմ աստիկա, պարզապէս որպէսզի դուք հասկնաք. Բոլորը կը ցանկան դադրեցնել իրենց վազքը, եւ մարդիկ յոգնած են ապրիլ միայն գոյատեւելու համար: Շաբաթավերջի հրապուրանքն այն է, որ մենք կրնանք դադրեցնել մեր վազքը: Արձակուրդի հրապուրանքն այն է, որ մենք կրնանք դադրեցնել մեր վազքը: Թոշակի անցնելու հրապուրանքն այն է, որ մենք վերջապէս կրնանք դադրեցնել մեր վազքը եւ ընել այն, ինչ կը ցանկանք: Սխալ մի՛ հասկնաք ինձի: Մարդոց մեծ մասը չի ցանկար պարզապէս նստիլ եւ բան մը չընել: Եւ ես չեմ ըսեր, որ աստիկա է Աստուծոյ կամքը ձեզի համար: Ո՛չ, մենք ստեղծուած ենք, որպէսզի կատարենք մեր առաջադրանքը՝ մեզի համար պատրաստուած եզակի նպատակը: Դժբախտաբար, մարդոց մեծ մասն այնքա՛ն զբաղած է գոյատեւման վազքով, որ արդէն տարիներ շարունակ հրաժարած է իր երազանքներէն:

Ես համոզուած եմ, դուք լսած էք, որ մարդիկ կ'ըսեն, կամ, թերեւս, դուք անձնապէս ըսած էք. «Ես ստիպուած եմ աշխատանքի երթալու այսօր»: Ինչպէս արդէն հասկցած էք, մարդիկ զգացմունքօրէն լաւ վիճակի մէջ չեն, եթէ անոնք «ստիպուած» կ'երթան աշխատանքի: Այնուամենայնիւ, անոնք կը ծաղկին, երբ կը ցանկան եւ կը ձգտին երթալ աշխատանքի, եւ եռանդով ու նուիրումով կը կատարեն այն, ինչով որ իրենք կը զբաղին: Սովորաբար մարդոց մեծ մասն այսպէս չ'ապրիր: Փոխարէնը, անոնք կ'ըսեն. «Ես ստիպուած եմ աշխատանքի երթալու այսօր»: Պարզապէս գումար վաստկելու համար՝ աշխատանքի վայրին մէջ եւս օր մը անցընելով, գոյատեւելով եւ հազիւ եւս մէկ օր ծայրը ծայրին հասցնելով: Սկիզբը շատերը լեցուած էին լաւատեսութեամբ

**ԵԹԷ ԴՈՒՔ ՉԼՈՒԾԷՔ  
ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՄԻՆՉԵՒ  
ՁԵՐ ԿԵԱՆՔԻ ԱՒԱՐՏԸ  
ՀԱՐԿԱՂՈՒԱԾ  
Կ'ԸԼԼԱՔ ԱՊՐԵԼՈՒ ԱՅՍ  
ԵՐԿՐԱՅԻՆ ԳՈՅԱՏԵԻՄԱՆ  
ԱՆԷԾՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՈՎ:**

Եւ ոգեւորութեամբ: Այն աշխատանքը, որ անոնք կը կատարէին՝ իրենց հաշիւները վճարելու համար, ժամանակաւոր էր, մինչեւ որոշէին, թէ ինչով պէտք է զբաղին: Սակայն կեանքն աւելի ու աւելի անորոշ կը դառնար, եւ արդէն քառասունէն յետոյ անոնք հասկցան, որ այլեւս ելք չունին: Ատիկա կը կոչուի միջին տարիքի ճգնաժամ, երբ կեանքին մէջ առաջին անգամ մարդը կը հասկնայ, որ ծուղակի մէջ է:

Իմ ընկեր, ասիկա այն կեանքը չէ, որ Աստուած որոշած է ձեզի համար: Դուք արդէն գիտէք այս մասին: Բայց հազիւ այս խղճալի ապագայէն խուսափելու համար է, որ Տրենտան եւ եւ տարիներ շարունակ կ'ըսենք, որ եթէ դուք չլուծէք ձեր ֆինանսական խնդիրները, երբեք չէք գտներ ձեր կեանքի եզակի նպատակը: Եթէ դուք չլուծէք ձեր ֆինանսական խնդիրները, մինչեւ ձեր կեանքի աւարտը հարկադրուած կ'ըլլաք ապրելու այս երկրային գոյատեւման անէծքի համակարգի մտածելակերպով:

Եթէ դուք չլուծէք ձեր ֆինանսական խնդիրները, դուք երբեք չէք բացայայտեր այն նպատակը, որուն համար ստեղծուած էք:

Որպէս համեմատութիւն, խօսինք այն մասին, թէ ինչպիսին կրնայ ըլլալ ձեր կեանքը: Խօսինք ձեր նախասիրութեան մասին: Պատկերացուցէք, որ այն կոլֆն է: Դուք երբեք լսած էք, որ ինչ որ մէկն ըսէ. «Գրո՛ղը տանի, այսօր ես պէտք է երթամ կոլֆ խաղալու»: Կամ, դուք երբեք լսած էք. «Գրո՛ղը տանի, արդէն Ուրբաթ երեկոյ է. ես կ'ատեն Ուրբաթ երեկոները: Երանի՛ հիմա Երկուշաբթի առաւօտ ըլլար, որպէսզի ես աշխատանքի վերադառնայի»: Կամ, պատկերացուցէք, որ ձեր նախասիրութիւնը ձկնորսութիւնն է: Մի՞թէ ես երբեք կը լսէի ձեզմէ. «Գրո՛ղը տանի, այսօր ես պէտք է ձկնորսութեան երթամ»: Ո՛չ, կը կասկածիմ, որ երբեք կը լսէի ատիկա, քանի որ դուք ձգտում ունիք այդ զբաղմունքին հանդէպ: Ի՞նչ տեղի կ'ունենար, եթէ ապրէիք նոյն եռանդով ու նուիրումով ձեր գործին հանդէպ, եթէ կարենայիք իրականացնել ձեր ձգտումները եւ գտնէիք ոչ թէ տանջալի աշխատանքի տեղը, այլ ձեր ամէնէն արդիւնաւետ տեղը կեանքին մէջ: Ի՞նչ տեղի կ'ունենար, եթէ դուք ունենայիք անհրաժեշտ գումար՝ հոգալու ձեր ընտանիքի մասին եւ ապրելու

Ֆինանսական ճնշումներին ազատ: Արդեօ՞ք իրականութեան մէջ հնարաւոր է ընել աստիկա: Տրեւնտան եւ ես պարզեցինք, որ աստիկա հնարաւոր է:

*«Տիրոջ օրհնութիւնը հարստութիւն կը բերէ, եւ Ան նեղութիւն չ'աւելցնէր ատոր»:*

– Առակաց 10.22, NIV

Ժամանակ տրամադրեցէ՛ք եւ դանդաղօրէն կարդացէ՛ք այս խօսքը: Եբրայերէնը բառացիօրէն նկատի ունի հարստութիւն՝ առանց տանջալի աշխատանքի: Դուք կը հասկնա՞ք: Աստուծոյ Թագաւորութիւնը ելք կ'առաջարկէ այն տանջալի աշխատանքին եւ քրտինքին համակարգէն, որ մենք ստացանք Ադամին պատճառով: Հնարաւոր է արդեօք, որ այս խօսքը նշանակէ՝ ինչ որ այն նկատի ունի: Դուք կը համաձայնիք, որ եթէ այդպէս է, կը նշանակէ՝ դուք հազիւ նոր կարդացիք երկար ժամանակուան ընթացքին ձեր լսած լաւագոյն բարի լուրը: Եւ այդպէս ալ կա՛յ: Ահա թէ ինչու Եսայիա 61-ը, որ մարգարէաբար կը ներկայացնէ Յիսուսին, եւ այն, ինչ Ան պիտի ընէ Իր ծառայութեան մէջ, կը յայտարարէ.

*«Գերիշխան Տիրոջ Հոգին Իմ վրայ է, որովհետեւ Տէրը  
օժած է ինձի՝ ազդարարելու բարի լուրը աղքատներուն»:*

– Եսայիա 61.1, NIV

Ո՞րն է բարի լուրը այն մարդուն համար, որ կը գտնուի այս երկրի անէծքի համակարգի գոյատեւման ծուղակին մէջ: Անշուշտ՝ ֆինանսական ազատութիւնը: Յիսուսը բառացիօրէն կ'ըսէ, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կը մատակարարէ ատելին, քան այս երկրային անէծքի համակարգի սահմանափակումները, որոնց մէջ մարդիկ կը գտնուին վազքի մէջ՝ տանջալի աշխատանքով եւ քրտինքով: Եկէ՛ք խոստովանինք. դուք կրնաք վազել այնքան արագ, որքան կրնաք, եւ վերջ: Եւ շատերը կը վազեն մեծ ջանքով, բայց անոնց արագութիւնը բաւական չէ՝ ազատելու համար: Ես կը վազէի

այնքան արագ, որքան կրնայի, այն ինը տարուան ընթացքին, երբ Տրենտան եւ ես ծանր պարտքերու տակ էինք: Այն հարիւր հազարաւոր յաճախորդները, որոնց մեր ընկերութիւնը հանդիպած է վերջին 27 տարուան ընթացքին, նոյնպէս կը վազէին այնքան արագ, որքան կրնային: Չնայած ատոր, անկախ անոնց աշխատասիրութենէն, անոնք դեռ ֆինանսական ստրկութեան ծուղակի մէջ էին: Բոլոր այդ մարդիկ կը զանգէին մեզի, որովհետեւ եկած էին այն զարհուրելի գիտակցութեան, որ իրենք անյուսալի ֆինանսական վիճակի մէջ էին, որ իրենց երազանքները ֆինանսական ազատութեան մասին աւելի ու աւելի անհասանելի կը թուէին, եւ իրենց տեսիլքը փոխարինուած էր գոյատեւմամբ: Պահ մը մտածենք նիւթական ապահովութեան մասին:

Նիւթական ապահովութիւնը կ'օգնէ մեզի իրականացնելու մեր տեսիլքը:

Առանց նիւթական ապահովութեան տեսիլք չի կրնար ըլլալ, քանի որ այդ պարագային ձեր միակ տեսիլքը պիտի ըլլայ նիւթական ապահովութիւն ձեռք բերելը: Կրկին, մարդոց մեծ մասը կ'ապրի ճիշդ այսպէս՝ առանց տեսիլքի: Ասիկա ստրկութեան ամենախաբուսիկ ձեւն է:

## ԳԼՈՒԽ 7

# ԴՈՒՌԸ

Եկէք պահ մը կրկնենք այն, ինչ որ սորվեցանք Աստուծոյ Թագաւորութեան մասին: Առաջինը՝ մենք սորվեցանք, որ մարդը դրուեցաւ այս երկրի վրայ որպէս իշխան: Մենք տեսանք Եբրայեցիս 2.7,8-ին մէջ, որ երկրի վրայ չկար բան մը, ինչ ենթակայ չէր մարդուն: Այսպիսով, մենք բացայայտեցինք, որ մարդը երկրային տիրոջի դուռն էր կամ բանալին: Սատանան գիտէր այդ մասին, այդ պատճառով ան թիրախաւորեցաւ Ադամին եւ Եւային՝ ծրագրելով իշխանութիւն ձեռք բերել այս երկրի վրայ: Երբ Ադամն ու Եւան տեղի տուին անոր խաբէութեան, անոնք մեղանչեցին եւ կտրուեցան Աստուծոյ օրինական իշխանութենէն, որմով կը կառավարէին այս երկիրը: Աստուծոյ Հոգին, որ կը ծածկէր անոնց արարչագործութեան մէջ, այժմ ստիպուած էր հեռանալ: Անոնք մերկացան ոչ միայն ֆիզիքապէս, այլեւ հոգեւորապէս: Կրնամ պատկերացնել այն ցնցումը, որ անոնք վերապրեցան, երբ Աստուծոյ Հոգին գնաց անոնցմէ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ անոնք անմիջապէս սկսան թգենիի ճիւղեր գործել՝ իրենց ծածկելու համար, քանի որ իրենց մերկ զգացին:

Թէեւ մարդը տակաւին կը պահպանէր այս երկրի իշխանի դիրքը, քանի որ արարչագործութեան ժամանակ այն տրուած էր իրեն, ան կորսնցուց այս երկիրը հոգեւորապէս կառավարելու իշխանութիւնն ու զօրութիւնը: Որոշելով ապստամբիլ Աստուծոյ դէմ, նաեւ հաւատալ եւ միանալ սատանային, ոչ թէ Աստուծոյ, մարդը յայտնուեցաւ սատանայի իշխանութեան ներքոյ եւ, հետեւաբար, ենթակայ դարձաւ



նոյն դատաստանին, որ իրեն վրայ բերաւ սատանան (արուսեակը), երբ վար նետուեցաւ Երկինքէն: Այդ դատաստանը դժոխք կոչուող վայր մըն է՝ չարչարանքի վայր, որուն մէջ յայտնուողները յաւիտեան արտաքսուած են Աստուծոյ ներկայութենէն: Անհրաժեշտ է նշել, որ դժոխքը ոչ մէկ պարագային ստեղծուած եւ նախատեսուած է մարդու համար: Աստուած երբեք չէ մտադրած, որ ոեւէ մարդ հոն երթայ:

*«Այն ժամանակ պիտի ըսէ ծախս կողմիններունն ալ.  
«Ինձմէ դէ՛ն գացէք, ո՛վ անիծեալներ, յաւիտենական  
կրակի մէջ, որ պատրաստուած է սատանային եւ անոր  
հրեշտակներուն համար»:*

– Մատթէոս 25.41

Մարդուն այս արհաւիրքէն ազատելու համար Աստուած պէտք է վերահաստատէր Իր իշխանութիւնն այս երկրի վրայ: Ան պէտք է գտնէր միջոց մը՝ ետ վերցնելու այն իշխանութիւնը, որ այժմ սատանայի ձեռքն էր: Ատիկա կրնար տեղի ունենալ միայն մէկ ճանապարհով: Ինչ որ մէկը, որ յանցաւոր չէր մեղքի մէջ, պէտք է ինքնակամ գրաւէր Ադամին դիրքը եւ իրեն վրայ վերցնէր մահուան պատիժը: Սակայն կար խոչընդոտ մը, որ անկարելի կը դարձնէր այս ծրագիրի իրականացումը: Երկրի վրայ գտնուող իւրաքանչիւր մարդ ապականուած էր մեղքով եւ անկարող էր կրելու Աստուծոյ Հոգին ու Անոր իշխանութիւնը: Բայց Աստուած ծրագիր ունէր՝ այդ խոչընդոտը յաղթահարելու համար: Անոր ծրագիրին համար անհրաժեշտ էր, որ Իր արդար պահանջները (Իր օրէնքը) հաստատուէին եւ գրուէին այս երկրի վրայ, որպէսզի ինչ որ մէկը երկրային տիրոջին մէջ անմեղ համարուէր ըստ այդ օրէնքին, եթէ ատիկա հնարաւոր ըլլար: Միայն այդ պարագային այդ մարդը պիտի կարենար օրինաւոր կերպով ինքնակամ գրաւել Ադամին դիրքը՝ վերցնելով իրեն վրայ Ադամին հասանելի տուգանքն ու պատիժը:

Այնուամենայնիւ, այս գաղափարը լուրջ խնդիր ունէր. այն մարդը, որուն կը յաջողէր իրականացնել այս անձնագոհ ծրագիրը, չէր կրնար ըլլալ Ադամի ժառանգը, քանի որ Ադամին սերունդը ապականուած

Եւ կտրուած էր Աստուծոյ ներկայութենէն: Այդ պարագային, ինչպէ՞ս այդ ծրագիրը կրնար իրականանալ: Որպէսզի այն հնարաւոր դառնար, Աստուած պէտք է բերէր այս երկիր այնպիսի մարդ մը, որ Ադամի սերունդէն չէր, եւ որ պատրաստ կ'ըլլար զոհաբերելու իր անձը մարդկութեան համար: Սակայն երկրային տիրոջը տրուած էր Ադամին եւ անոր սերունդներուն. այնպէս որ, այդ իրաւաբանական կարգավիճակին տակ, ասիկա նաեւ ապօրինի պիտի ըլլար: Կար միայն մէկ միջոց՝ այս ծրագիրն իրականացնելու համար, եւ միայն մէկ թեկնածու. այդ մարդը պէտք է ծնէր այս երկրի վրայ, բայց չըլլար Ադամի սերունդէն:

Առաջին հայեացքէն, դուք պիտի համաձայնիք, որ ասիկա կրկին անկարելի պիտի ըլլար: Բայց տեխնիկապէս կար հնարաւոր տարբերակ մը: Աստուած օրինապէս կրնար արու գաւակի սերմ դնել այս երկրի մէջ ապրող կնոջ մը մէջ, եթէ գտնէր այնպիսի տղամարդ մը, որ կը հաւատար Իրեն այդ բանին համար՝ ատորմով իսկ տալով Իրեն ատիկա ընելու օրինական իրաւասութիւն: Յիշեցէք՝ այս երկրային տիրոջի բանալին մարդու ձեռքն է: Սատանան օգտագործեց այդ բանալին, որպէսզի մուտք գործէր այս երկրային տիրոջ եւ գողնար այն հոգեւոր իշխանութեան դիրքը, որ տրուած էր Ադամին այս երկրի վրայ: Որպէսզի Աստուծոյ ծրագիրը յաջողէր, եւ որպէսզի սատանան ստիպուած ըլլար ընդունելու, որ այն օրինական է, քանի որ հակառակ պարագային ան անպայման կը բարձրաձայնէր խարդախութեան մասին, Աստուած պէտք է գտնէր այնպիսի տղամարդ եւ կին, որոնք կը հաւատային Իրեն երեխայի համար՝ այն պարագային, երբ երեխայ ունենալը անոնց կեանքին մէջ բոլորովին եւ մշտապէս անհնար էր: Անոնք պէտք է հաւատային, որ Աստուած պիտի ընէր անհնարինը:

Այդ երեխայի ծնունդը նոյնպէս կը նշանակէր, որ անոր (երեխայի) կեանքին մէջ խոստում պիտի ըլլար. ան պիտի ստանար կոչում, ըստ որուն անոր սերունդին միջոցով բոլոր ազգերը պիտի օրհնուէին, եւ անոր սերունդին միջոցով Աստուած պիտի ստանար օրինականութիւն եւ իրաւասութիւն՝ բերելու այս աշխարհ Յիսուսին: Եթէ ըլլար այնպիսի զոյգ, որ կը հաւատար, որ Աստուած ի զօրու էր

ընելու ատիկա, պիտի յղանար մահացած որովայնի մէջ եւ պիտի հաւատար, որ իրենց երեխային միջոցով բոլոր ազգերը օրինուած պիտի ըլլային, եւ որ անոր միջոցով յառաջացած սերունդը պիտի ըլլար աւելին, քան ծովափի աւազը, Աստուած պիտի ստանար այն օրինական թոյլտուութիւնը, որ անհրաժեշտ պիտի ըլլար Իրեն հետագային՝ Իր սերմը Յիսուսի մայր Մարիամին մէջ դնելու համար: Բայց կրնա՞ր արդեօք Աստուած նման տղամարդ գտնել. անոր անունն Աբրահամ է, եւ ան մեր հաւատքի հայրն է:

*«Հակառակ ամէն յոյսի՝ Աբրահամը յոյսով հաւատաց, եւ այդ կերպով դարձաւ շատ ազգերու հայր, ինչպէս որ ըսուեցաւ անոր. «Այնպէս պիտի ըլլայ քու գաւակը»: Չտկարանալով իր հաւատքին մէջ՝ ան ընդունեց այն փաստը, որ իր մարմինը մահացածի պէս էր, քանի որ ինքը մօտաւորապէս հարիւր տարեկան էր, եւ որ Սառայի արգանդը նոյնպէս մահացած էր: Այնուամենայնիւ, ան չերկմտեցաւ անհաւատութեամբ Աստուծոյ խոստումին վերաբերեալ, այլ զօրացաւ իր հաւատքով եւ փառք տուաւ Աստուծոյ՝ լիովին համոզուած ըլլալով, որ Աստուած ի զօրու էր կատարելու այն, ինչ խոստացած էր»:*

– Հռովմայեցիս 4.18-21, NIV

Աբրահամը եւ Սառան հաւատացին Աստուծոյ եւ ծնունդ տուին Իսահակին, երբ անոնք շատ ծեր էին եւ անկարող էին երեխաներ ունենալու: Քանի որ Աբրահամն էր հաւատացած Աստուծոյ, խոստումը կրնար գալ միայն այն դռնէն, որ բացաւ Աբրահամը: Յիսուսը ստիպուած պիտի ըլլար գալու Աբրահամի սերունդէն: Թոյլ տուէք շատ պարզ կերպով բացատրել: Ան չէր կրնար գալ այլ ճանապարհով: Աբրահամի միջոցով գալը միակ օրինական ճանապարհն էր: Ասիկա է պատճառը, որ բանալով Մատթէոսի Աւետարանի առաջին գլուխը, դուք կը տեսնէք ձանձորալի ցուցակ այն մասին, որ այսինչը ծնաւ այնինչին: Այս ամէնն այնպէս գրուած չէ առաջին գլուխին մէջ: Այս ցուցակը կը հաստատէ այն փաստը,

որ այս երկրային տիրոջին մէջ Յիսուսն Աբրահամի ժառանգն էր: Ասիկա պէտք է արձանագրուէր այս երկրի վրայ, ուր սատանան կը յայտարարէ իր օրինական տիրապետութեան եւ իշխանութեան մասին: Եթէ այս ցուցակը ճշգրիտ չըլլար, կամ՝ եթէ Յիսուսն իրականութեան մէջ եկած չըլլար Աբրահամի սերունդէն, սատանան պիտի կարենար յայտարարել, որ Յիսուսի ծնունդը եւ կեանքը հիմնուած էին խարդախութեան վրայ, եւ որ Ան իրաւասու չէր մեր մեղքի գինը վճարելու համար:

Եթէ կը յիշէք, Իսրայէլի մէջ կային շատ օրէնքներ, որոնք կ'արգիլէին ամուսնանալ սեփական ազգէն դուրս: Սեփական ազգէն դուրս ամուսնութիւնը կ'արժանանար մահապատիժի: Այժմ կը հասկնաք, թէ ինչու այդ սերունդը պէտք է մաքուր մնար, եւ ինչու անոնք խստօրէն կը հետեւէին այդ օրէնքներուն: Այո, դուք կը գտնէք բացառութիւններ, երբ որոշ կանայք, որոնք չէին պատկաներ Իսրայէլի ժողովուրդին, ամուսնացան Իսրայէլցիներու հետ: Անոնցմէ մէկը Ռախաբն էր, որ կ'ապրէր Երիթով քաղաքի մէջ եւ պահեց այն լրտեսներուն, որոնք ուղարկուած էին՝ այդ երկիրը լրտեսելու համար: Այո, ան թուարկուած է Մատթէոսի Աւետարանի առաջին գլուխին մէջ, քանի որ ան ամուսնացած էր իսրայէլցիի հետ: Բայց դուք պէտք է հասկնաք, որ հրէական մշակոյթին մէջ սերունդը շարունակողը տղամարդն էր:

**ԱՆՈՆՔ ԱՐԴԷՆ ԻՍԿ  
ՎԵՐ ԷԻՆ ՏԱՆՋԱԼԻ  
ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԵՒ  
ՔՐՏԻՆՔՈՎ ԳՈՅԱՏԵԻԼՈՒ  
ԱՆԷԾՔԷՆ:**

Թոյլ տուէք հպանցիկ կողմնակի միտք մը արտայայտել: Մարդիկ շատ կը խօսին այն մասին, թէ որքան ժամանակ է, որ մարդն այս երկրի վրայ է: Արդեօ՞ք հնարաւոր է պատասխանել այս հարցումին: Այո՛: Կրնամ հաւաստիացնել ձեզի, որ Մատթէոսի Աւետարանի առաջին գլուխի ցուցակը ճշգրիտ է: Հոն չի կրնար ըլլալ որեւէ բացթողում. հակառակ պարագային, դուք եւ ես չէինք վայելեր այն փրկութիւնը, որ ներկայիս կը պատկանի մեզի: Սատանան խարդախութիւն կ'անուանէր այն: Այդ ցուցակը պէտք է կատարեալ

ըլլայ: Այնպէս որ, հիմնուելով այդ ցուցակին վրայ, դուք կրնաք մօտաւորապէս հաշուարկել, թէ որքան ժամանակ է, ինչ մարդը կը գտնուի այս երկրի վրայ: Պարզապէս մտածեցի, որ կրնայի մէջբերել այս միտքը:

*«Ես կը դարձնեմ քեզ մեծ ազգ, եւ Ես քեզ կ'օրհնեմ: Ես մեծ կը դարձնեմ քու անունը, եւ դուն օրհնութիւն կը դառնաս: Ես կ'օրհնեմ անոնց, որոնք կ'օրհնեն քեզի. անոր, որ անհծէ քեզի, Ես կ'անհծեմ, եւ երկրի բոլոր ժողովուրդներն օրհնուած կ'ըլլան քու միջոցով»:*

– Ծննդոց 12.1-3, NIV

Ինչպէս կը տեսնէք այս խօսքին մէջ, Աբրահամի կողմէն բացուած դուռը դէպի այս երկրային տիրոյթ այն օրինական մուտքն է, որուն միջոցով Յիսուս Քրիստոսը հետագային պիտի գար եւ պիտի օրհնէր այս աշխարհին մէջ ապրող մարդոց: Թէեւ Աբրահամը եւ անոր սերունդները Աստուծոյ տրամադրեցին օրինական իրաւունք եւ իրաւասութիւն, որոնք անհրաժեշտ էին՝ Անոր կառավարման գորութիւնը եւ ազդեցութիւնն այս երկիր բերելու համար, այնուամենայնիւ, մարդը տակաւին կ'ապրէր մեղքի եւ հոգեւոր մահուան ճնշումի ծուղակին մէջ, մինչեւ որ Աստուած չուղարկեց Յիսուսին այս աշխարհ՝ վճարելու համար Ադամի մեղքի գինը: Սակայն, ինչ կը վերաբերի մատակարարմանը, մենք կը տեսնենք, որ Աբրահամը եւ անոր ժառանգները, որոնք կը կրէին թլփատութեան նշանը, կը բարգաւաճէին: Անոնք արդէն իսկ վեր էին տանջալի աշխատանքով եւ քրտինքով գոյատեւելու անէծքէն:

*«Աբրամը դարձաւ շատ հարուստ՝ անասուններով եւ արծաթով եւ ոսկիով»:*

– Ծննդոց 13.2, NIV

Այս խօսքին մէջ կը տեսնենք խոշոր փոփոխութիւն, որ այս ուխտը յառաջացուց մատակարարման վերաբերեալ: Դուք կը

նկատե՞ք տարբերությունն այն խօսքերուն մէջ, որոնք Աստուած ըսաւ Աբրահամին, եւ այն խօսքերուն, որոնք Ան ըսաւ Ադամին Ծննդոց 3.17-ին մէջ: Յիշեցէ՛ք՝ այն բանէն յետոյ, երբ Ադամը մեղանչեց, Աստուած ըսաւ անոր, որ պիտի գոյատեւէր իր տանջալի աշխատանքով եւ քրտինքով: Սակայն մենք այլ բան կը տեսնենք Աբրահամի կեանքին մէջ: Աստուած կ'ըսէ. «Ես կը դարձնեմ քեզ»: Գրուած չէ, որ Աբրահամը լքուեցաւ իր կարողութեան՝ վազելու իր քրտինքով եւ տանջալի աշխատանքով: Գրուած է, որ Աստուած ներգրաւուեցաւ անոր կեանքին մէջ: Աստուած ըսաւ. «Ես կը դարձնեմ քեզ»: Արդեօ՞ք այս իրադարձութենէն յետոյ մենք կը տեսնենք Աբրահամին իր գոյութիւնը ձեւով մը պաշտպանելով: Հազիւ թէ:

Աբրահամը հարո՛ւստ էր: Անոր երեխաները հարուստ էին: Աբրահամի կեանքն այս երկրի անէծքի համակարգի մէջ չէր: Ան ունէր աւելին, քան բաւական էր: Շատ ժամանակ չանցաւ, մինչեւ որ մարդիկ տեսան այս տարբերութիւնը: Այս տարբերութիւնը շարունակեց երեւիլ անոր սերունդներու կեանքին մէջ: Որպէս օրինակ, Աբրահամէն քանի մը սերունդ յետոյ անոր թոռ Յակոբը կ'աշխատէր Լաբանի՝ իր աներոջ քով, եւ Լաբանը, տեսնելով Յակոբին վրայ եղող օրհնութիւնը, փորձեց խաբէութեամբ խլել անոր բարգաւաճման արդիւնքը: Սակայն Աստուած Յակոբի օրհնութիւնը գողնալու ծրագիրները դարձուց ի վնաս Լաբանի եւ, միեւնոյնն է, օրհնեց Յակոբին մեծ հարստութեամբ: Ես նկատի ունիմ, որ թէեւ մարդիկ կը փորձէին կեցնել այս օրհնութիւնը, անոնց քով ոչինչ կը յաջողէր: Քանի դեռ ժառանգները հաւատարիմ էին իրենց ուխտին եւ կ'երկրպագէին Աստուծոյ, Աստուած բարգաւաճում կու տար անոնց:

Մտածեցէ՛ք վերոյիշեալ խօսքէն բխող հետեւութիւններու մասին:

**«ԵՀՈՎԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
Կ'ՈՒՂԱՐԿԷ ՔԵԶԻ ՔՈՒ  
ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵՒ  
ՔՈՒ ԲՈՒՈՐ ՁԵՆԱՐԿԵԼՈՒ  
ԲԱՆԵՐՈՒՆ ՄԷՋ...»:**

– ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՅ 28.8ա.

Ես կը ստանամ բազմաթիւ նամակներ եւ ելեկտրոնային նամակներ, որոնց մէջ մարդիկ կը գրեն, որ ես չափազանց շատ կը խօսիմ դրամի մասին: Անոնք կ'ըսեն ինծի, որ բարգաւաճումն Աստուծոյ կամքը չէ: Անոնք կը շեշտեն, որ մենք պէտք է տառապինք այս կեանքին մէջ եւ ծառայենք Աստուծոյ մեր կեանքի գնով: Ես կրնամ համաձայնիլ անոնց պնդումի մէկ բաժինի հետ: Յիսուսն իրականութեան մէջ ըսաւ Մարկոս 10.30-ին մէջ, որ մենք հալածանքներ կը կրենք՝ մեր բարգաւաճման պատճառով: Դժբախտաբար, բազմաթիւ քրիստոնէաներ կը հաւատան, որ Աստուած խիստ վերակացու է, եւ մենք պէտք է ձեռով մը գոյատեւենք՝ աղքատութեան երդում ընելով եւ տառապելով հիւանդութիւններէն ու տկարութենէն: Ո՛չ, ատիկա այս երկրի անէծքն է, ոչ թէ օրհնութիւնը: Աստուած կը ցանկայ ֆինանսապէս հաստատել ձեզի:

## **Աստուած կը ցանկայ հաստատել ձեզի**

Չունենալով ապահով եւ հաստատուած ֆինանսական կեանք՝ դուք հարկադրուած կ'ըլլաք մնալու գոյատեւման վագրի մէջ ձեր ամբողջ կեանքին մէջ եւ չէք կրնար կատարել ձեր հոգեւոր առաջադրանքը՝ ապրելով, ըստ էութեան, ստրկութեան մէջ: Կարդացէ՛ք Երկրորդ Օրինաց 28.8-13-ին մէջ գրուածը, թէ Աստուած ինչ ըսաւ Աբրահամի ժառանգներուն.

*«Տէրն օրհնութիւնը կ'ուղարկէ քեզի քու շտեմարաններուն մէջ եւ քու բոլոր ձեռնարկելու բաներուն մէջ: Եւ քեզի կ'օրհնէ քու Տէր Աստուծոյն քեզի տուած երկրին մէջ: Ինչպէս որ քեզի երդում ըրած է, եթէ քու Տէր Աստուծոյն հրամանները պահես եւ Անոր ճանապարհներով երթաս, Տէրը քեզի Իրեն համար սուրբ ժողովուրդ կը հաստատէ: Եւ երկրի բոլոր ժողովուրդները պիտի տեսնեն, որ Տիրոջ անունը կոչուած է քու վրայ, եւ քեզմէ պիտի վախնան: Եւ Տէրը քեզի առատութիւն պիտի տայ քու բարութեան համար՝ քու որովայնի պտուղը, քու անասուններու պտուղը եւ քու երկրի պտուղը շատցնելով այն երկրի վրայ,*

*որ Տէրը քու հայրերուն երդում ըրաւ քեզի տալու համար:  
Տէրն Իր բարութեան գանձը, այսինքն՝ Երկինքը քեզի  
համար կը բանայ, որ քու երկրի անձրեւը տայ իր  
ժամանակին եւ քու ձեռքի ամէն գործը օրհնէ: Եւ դուն  
շատ ազգերու փոխ կու տաս, բայց դուն փոխ չես առներ:  
Եւ Տէրը գլուխ կ'ընէ քեզ, եւ ոչ թէ պոչ: Դուն միշտ բարձր  
տեղը կ'ըլլաս, եւ վարը չես ըլլար, եթէ քու Տէր Աստուծոյն  
պատուիրանները լսես, որոնք ես այսօր քեզի կը  
պատուիրեմ, որ պահես ու կատարես»:*

Ուշադրութիւն դարձուցէք, որ անոնք տակաւին հաստատուած  
չէին այդ նոր երկրին մէջ, թէւ ունէին խոստում այդ մասին:  
Բայց Մովսէսը կ'ըսէ անոնց, որ Աստուած կը հաստատէ անոնց:  
Հասկնալու համար, թէ ինչ կը նշանակէ ասիկա, եւ Աստուած ինչ կը  
փորձէ ըսել անոնց, պատկերացուցէք կաղնի մը: Երբ այն տակաւին  
տնկի է, այն հաստատուած չէ: Իւրաքանչիւրը կրնայ տանիլ այն՝  
ՈՒՐ ՈՐ ԿԸ ՑԱՆԿԱՅ: Բայց երբ կաղնին կ'աճի ու կը մեծնայ, ոչ ոք  
կրնայ տեղաշարժել: Այն հաստատուած է:

*«Տէրն օրհնութիւն կ'ողարկէ քու շտեմարաններուն մէջ եւ  
այն ամէնուն մէջ, ինչին որ քու ձեռքը կը դպնայ: Քու Տէր  
Աստուած կ'օրհնէ քեզ այն երկրին մէջ, որ կու տայ քեզի:  
Տէրը կը հաստատէ քեզ...»:*

– Երկրորդ Օրինաց 28.8,9ա., NIV

Այսպիսով, ի՞նչ կը նշանակէ ֆինանսապէս հաստատուած  
ըլլալը: Աստուած կը խօսի այս մասին յատկապէս այս հատուածի՝  
12բ. խօսքին մէջ (NIV).

*«Դուն փոխ կու տաս շատ ազգերու, բայց փոխ չես առներ:  
Տէրը կը դարձնէ քեզ գլուխ, եւ ոչ թէ պոչ»:*

Աստուած կ'ըսէր, որ այնքան պիտի օրհնէ անոնց, որ անոնք



պարտք (փոխ) տուողներ պիտի ըլլան եւ այլեւս պարտք (փոխ) պիտի չվերցնեն: Անոնք պիտի ըլլան գլուխ, եւ ոչ թէ պոչ: Պոչը խօսք չունի իր ընթացքին մէջ. այն կ'երթայ միայն՝ հոն ուր գլուխը կ'առաջնորդէ:

*«Հարուստն կ'իշխէ աղքատին վրայ, եւ փոխառուն պարտատիրոջ ստրուկն է»:*

– Առակաց 22.7, NIV

Փոխառուն հաստատուած չէ: Ան կը գտնուի պարտատիրոջ ողորմութեան ներքոյ եւ կ'աշխատի որպէս ստրուկ՝ չունենալով ազատութիւն: Բայց Աստուած կ'ըսէ. «Ո՛չ, Ես պիտի հաստատե՛մ քեզ: Ոչ ոք կրնայ պարտադրել քեզի քու տունէն հեռանալու, որովհետեւ դուն պարտք չես ըլլար ատոր համար: Ոչ ոք կրնայ վերցնել քու ինքնաշարժը, որովհետեւ դուն պարտք չես ըլլար ատոր համար: Քու խոհանոցին մէջ լեցուն մթերք կ'ըլլայ, եւ դուն կը քալես քու կողմէն ձեռք բերուած հողին վրայ եւ կը կատարես Աստուծո՛ւմէ քեզի տրուած առաջադրանքները՝ կատարեալ ֆինանսական խաղաղութեան մէջ: Դուն հաստատուած կ'ըլլաս»:

**Աստուած կը ցանկայ, որ դուք բարգաւաճի՛ք:**

## ԳԼՈՒԽ 8

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Այն, ինչի մասին որ դուք պիտի կարդաք, Թագաւորութեան զօրաւոր սկզբունքներէն մէկն է՝ այնքան զօրաւոր, որ ես համարեցի, որ այն կ'արժէ դարձնել այս գիրքի ենթավերնագիրը: Մենք կը գտնենք այս սկզբունքը Աբրահամի ծոռ Յովսէփի կեանքի պատմութեան մէջ: Որպէս կարճ նախապատմութիւն, Յովսէփի եղբայրները կ'ատէին անոր եւ կը ցանկային ազատիլ անորմէ: Իրականութեան մէջ, անոնք կ'ուզէին սպաննել Յովսէփին, բայց եղբայրներէն մէկը չուզեց այդքան հեռու երթալ. այնպէս որ, փոխարէնը անոնք Յովսէփին ծախեցին ճամբորդող առետրականներուն: Այդ մարդիկ անոր տարին Եգիպտոս, ուր ան վաճառուեցաւ Փարաւոնի թիկնագորի հրամանատար Պետափրէսին:

*«Եւ Յովսէփին իջեցուցին Եգիպտոս: Եւ փարաւոնի ներքինի եգիպտացի Պետափրէս դահճապետը ծախու առաւ անոր իսմայէլցիներու ձեռքէն, որ անոր հոն իջեցուցած էին: Եւ Տէրը Յովսէփին հետ էր, եւ ան յաջողակ մարդ էր, եւ իր եգիպտացի տիրոջ տանն էր: Եւ անոր տէրը տեսաւ, որ Տէրը անոր հետ էր, եւ թէ ինչ որ կ'ընէր, Տէրը կը յաջողցնէր անոր ձեռքով: Եւ Յովսէփը շնորհք գտաւ անոր առջեւ եւ կը ծառայէր անոր, եւ ան իր տան վրայ*

*վերակացու ըրաւ անոր եւ իր ամբողջ ունեցուածքը անոր ձեռքը յանձնեց:*

*Եւ եղաւ, որ անոր իր տան եւ իր ամբողջ ունեցուածքին վրայ վերակացու ըրած ժամանակէն յետոյ Տէրը եզիպտացիին տունը օրհնեց Յովսէփին պատճառով: Եւ Տիրոջ օրհնութիւնը կ'ըլլար թէ՛ տունին, եւ թէ՛ դաշտին մէջ անոր ամբողջ ունեցուածքին վրայ: Եւ ան իր ամբողջ ունեցուածքը Յովսէփին ձեռքը ձգեց եւ անոր քով եղած մէկ բանէն տեղեկութիւն չունէր՝ բացի իր կերած հացէն»:*

– Ծննդոց 39.1-6

Ուշադրութիւն դարձուցէք 2ա. խօսքին. «Եւ Տէրը Յովսէփին հետ էր, եւ ան յաջողակ մարդ էր (կամ՝ եւ ան կը բարգաւաճէր)»: Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Մի՞թէ Աստուած իւրաքանչիւրին հետ չէ: Այն ամէն մտքերու համայօդուածին մէջ, որ նախորդ գլուխներուն մէջ քննարկեցինք տոհմաբանութեան վերաբերեալ, պատասխանն է՝ ո՛չ: Յիշեցէք՝ Աբրահամին հաւատքը եւ ատոր յաջորդող ուխտը թոյլ տուին Աստուծոյ օրինաւոր կերպով գործել Աբրահամի եւ անոր ժառանգներու կեանքին մէջ՝ միայն անոնց կեանքին մէջ: Այնպէս որ, փաստն այն մասին, որ Աստուած բոլորին հետ չէ, պէտք չէ շփոթել այն բանին հետ, որ Աստուած չի սիրեր բոլորին: Ան կը սիրէ բոլորին, բայց Անոր ձեռքերը կապուած են այն մարդոց կեանքերուն մէջ, որոնք չունին իրաւաբանական դիրք Իր առջեւ:

*«Յիշեցէք, որ այն ժամանակ դուք առանձնացուած էիք Քրիստոսէն, արգիլուած էիք քաղաքացիութենէն Իսրայէլի մէջ եւ օտարականներ էիք խոստման ուխտերուն՝ առանց յոյսի եւ առանց Աստուծոյ այս աշխարհին մէջ: Բայց այժմ Քրիստոս Յիսուսին մէջ դուք, որ ժամանակ մը հեռու էիք, մօտեցուած էք Քրիստոսի արեամբ»:*

– Եփեսացիս 2.12,13, NIV

Ուշադրութիւն դարձուցէք, որ Աստուածաշունչը կը խօսի առանց

ուխտի ըլլալու մասին, որ կը նշանակէ, թէ Աստուած եւ Անոր զօրութիւնն իրաւաբանօրէն կտրուած են այդ մարդէն: Ինչո՞ւ: Քանի որ Աստուած չունի օրինական իշխանութիւն կամ իրաւասութիւն երկրային տիրոյթին մէջ, եթէ չկայ օրինական պայմանագիր՝ հաստատուած ուխտ այս երկրի վրայ գտնուող ռեւէ տղամարդու կամ կնոջ հետ: Այս հաստատածը պարզօրէն ցոյց կու տայ այս ճշմարտութիւնը. գրուած է, որ առանց ուխտի՝ մարդիկ առանց յոյսի եւ առանց Աստուծոյ են այս աշխարհին մէջ: Յիշեցէք՝ քանի որ Յիսուսը նոր ուխտ հաստատեց մեզի համար, այժմ մենք Աստուծոյ ընտանիքի անդամներ եւ Անոր հրաշալի Թագաւորութեան քաղաքացիներ ենք (տե՛ս Եփես. 2.19): Այնպէս որ, ետ նայելով Ծննդոց 39-րդ գլուխին մէջ գտնուող մեր խօսքին՝ կը հասկնանք, որ «Տէրը Յովսէփին հետ էր» արտայայտութիւնը կը նշանակէ, որ Աստուած օրինական ազդեցութիւն ունէր Յովսէփի կեանքին մէջ՝ այն ուխտի պատճառով, որը կնքած էր անոր պապ Աբրահամը: Այս օրինական ուխտը, որուն շնորհիւ Աստուծոյ օրհնութիւնը եւ ազդեցութիւնը կը դրսեւորուէին, չեղարկեց այս երկրային տիրոյթի տանջալի աշխատանքի եւ քրտինքի համակարգը: Աստուած կրնար օրինաւոր կերպով օրհնել Յովսէփին:

**ԱՍՏՈՒԱԾ ԶՈՒՆԻ ՕՐԻՆԱԿԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՍ  
ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԱՅԻՆ  
ՏԻՐՈՅԹԻՆ ՄԵՋ, ԵԹԷ ՉԿԱՅ  
ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝  
ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՈՒՄՏ ԱՅՍ  
ԵՐԿՐԻ ԿՐԱՅ ՉՏՆՈՒՂ ՈՇԷ  
ՏՐԱՄԱՐԴՈՒ ԿԱՍ ԿՆՈՋ ՀԵՏ:**

Յիշեցէք, թէ Աստուած ինչ ըսաւ Աբրահամին. «*Ես կը դարձնեմ քեզ*»: Քանի որ Աստուած Յովսէփին հետ էր եւ կ'օգնէր անոր, ան կը յաջողէր իր բոլոր գործերուն մէջ՝ այն աստիճան, որ նոյնիսկ անոր հեթանոս տէր Պետափրէսը մեծ տարբերութիւն տեսաւ Յովսէփին կարողութեան մէջ՝ շատ այլ մարդոց համեմատ, որոնց ան տեսած էր: Հոս ես պէտք է նշեմ, որ երբ մենք կը բարգաւաճինք Աստուծոյ օգնութեամբ, այն մարդիկ, որոնք կը գոյատեւեն այս երկրի անէծքի համակարգին մէջ, կը նկատեն տարբերութիւնը: Պետափրէսն

այնքան տպաւորուած էր, որ Յովսէփին դրաւ իր ամբողջ ունեցուածքին վրայ:

Գոյութիւն ունին Թագաւորութեան բազմաթիւ սկզբունքներ, որոնք կը յայտնուին այս սուրբգրային հատուածին մէջ, սակայն բանալիներու բանալին յայտնուած է հոս: Ես կ'անուանեմ այն «Համաձայնութեան գորութիւնը». այն կարելի է անուանել նաեւ «Պետափրէսի սկզբունքը»: Այս մասին գրուած է Ծննդոց 39.5-ին մէջ.

*«Եւ եղաւ, որ անոր իր տան եւ իր ամբողջ ունեցուածքին վրայ վերակացու ըրած ժամանակէն յետոյ Տէրը եգիպտացիին տունը օրհնեց Յովսէփին պատճառով: Եւ Տիրոջ օրհնութիւնը կ'ըլլար թէ՛ տունին, եւ թէ՛ դաշտին մէջ անոր ամբողջ ունեցուածքին վրայ»:*

Կ'ուզեմ, որ յստակ պատկերացնէք, թէ ինչ տեղի կ'ունենար: Ժամանակ մը Յովսէփը չէր ղեկավարէր ամէն ինչ, բայց եկաւ պահը, երբ ան սկսաւ ղեկավարել: Աստուածաշունչը պարզօրէն կը նշէ այն պահը, երբ տեղի ունեցաւ այդ փոփոխութիւնը: Տիրոջ օրհնութիւնը եկաւ Պետափրէսի ամբողջ ունեցուածքին՝ անոր ամբողջ սեփականութեան վրայ: Բայց ան չէր ճանչնար Յովսէփի Աստուծոյն եւ Իսրայէլի ժողովուրդին մասը չէր: Ուրեմն, ինչպէ՞ս ասիկա կրնար տեղի ունենալ, եւ ի՞նչ կը նշանակէ ասիկա: Ահա պատասխանը: Երբ Պետափրէսը յանձնեց իր ամբողջ ունեցուածքը Յովսէփի իշխանութեան, առանց հասկնալու, անոր ունեցուածքը յայտնուեցաւ այն ուխտի ներքոյ, որ Յովսէփին ունէր Աստուծոյ հետ:

**Պետափրէսին ունեցուածքը, սեփականութիւնը եւ գոյքը յայտնուեցան այլ Թագաւորութեան ներքոյ:**

Իրաւաբանօրէն, Պետափրէսի ունեցուածքը ենթակայ էր այս երկրի անէծքի համակարգին, մինչեւ որ այն յայտնուեցաւ Յովսէփի խնամքին ներքոյ: Երբ Պետափրէսը յանձնեց իր ունեցուածքը Յովսէփի իշխանութեան իրաւասութեան, ան չհասկցաւ, որ նոյնպէս կը յանձնէր այն Աստուծոյ օրհնութեան ազդեցութեանը:

Աստուածաշունչը կը շարունակէ՝ ըսելով, որ երբ Յովսէփը կը դեկավարէր ամէն ինչ, Պետափրէսը ոչինչէն տեղեակ էր, այսինքն՝ ստիպուած չէր մտահոգուելու կամ անհանգստանալու բանի մը մասին՝ բացի այն հացէն, որ կ'ուտէր: Ան ոչ մէկ հոգ ունէր: Չունենալով հոգեր՝ Պետափրէսը միայն կեդրոնացած էր իր առաջադրանքին եւ նպատակին վրայ՝ որպէս եգիպտական թիկնազօրի հրամանատար: Հոս կայ շատ բան, ինչին մասին կարելի է խօսիլ, բայց այն, ինչ վերապրեցաւ Պետափրէսը՝ առանց գիտակցելու, Եբրայեցիս 4-րդ գլուխին մէջ կը կոչուի շաբթուան հանգիստ, եւ այո, այն հասանելի է Նոր կտակարանի հաւատացեալներուն:

Եթէ ուսումնասիրէք Շաբաթը, կը տեսնէք, որ Աստուած թոյլ չէր տար իսրայէլցիներուն որեւէ գործ ընել այդ օրը, եւ այդ օրը չկար քրտինք ու տանջալի աշխատանք: Շաբաթը, անշուշտ, շաբթուան եօթներորդ օրն էր, եւ այն կը համապատասխանէր արարչագործութեան եօթներորդ օրուան: Թերեւս յիշէք, որ արարչագործութեան եօթներորդ օրն այն օրն էր, որն Աստուած հանգիստի օր հռչակեց: Եւ պատճառն այն չէր, որ Աստուած յոգնած էր, այլ որ Ան աւարտած էր Իր

գործը, եւ ամէն ինչ լիարժէք էր: Ըստ սկզբնական ծրագիրին, եօթներորդ օրն այն օրն էր, որուն մէջ մարդը պէտք է ապրէր առանց հոգերու, որուն մէջ արդէն իսկ կար այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ էր անոր, մինչեւ որ ատիկա պէտք

**ԱՅՆ ԿԸ ԿՈՉՈՒԷՐ ՇԱԲԱԹ՝  
ԱՅՆ ՕՐՈՒԲԱՆ ՕՐԻՆԱԿԸ,  
ՈՐՈՒՄ ՄԷՋ ՄԱՐԴԸ ԿԱՐԻՔ  
ՉԷՐ ՈՒՆԵՆԱՐ ԶԱՆՔ ԹԱՓԵՆՈՒ  
ԻՐ ՏԱՆՋԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ  
ԵՒ ՔՐՏԻՆՔՈՎ՝ ՊԱՐԶԱՊԵՍ  
ԳՈՅԱՏԵՒԵՆՈՒ ՀԱՄԱՐ:**

կ'ըլլար անոր: Բայց անշուշտ, մենք գիտենք, որ Ադամը կորսնցուց այդ հանգիստը, երբ ապստամբեցաւ Աստուծոյ դէմ: Ապստամբելով Աստուծոյ դէմ՝ Ադամը կտրուեցաւ իրեն համար մատակարարելու Աստուծոյ կարողութենէն: Ան կորսնցուց այն մատակարարման վայրը, որն Աստուած նախապէս պատրաստած էր: Այժմ Ադամը հարկադրուած էր անձամբ մատակարարելու իրեն համար՝

տրամադրելով իր ամբողջ ժամանակը տանջալի աշխատանքով եւ քրտինքով գործելուն՝ պարզապէս գոյատեւելու համար:

Բայց Աստուած չէր ուզեր ձգել մարդուն անյոյս վիճակի մէջ: Ան տուաւ անոր այդ հանգիստի օրինակը, որ օր մը պիտի վերականգնէր: Այն կը կոչուէր Շաբաթ՝ այն օրուան օրինակը, որուն մէջ մարդը կարիք չէր ունենար ջանք թափելու իր տանջալի աշխատանքով եւ քրտինքով՝ պարզապէս գոյատեւելու համար: Երբ Պետափրէսը ճաշակեց Աստուծոյ օրհնութիւնը, որ Յովսէփին վրայ էր այդ ուխտին շնորհիւ, ան վերապրեցաւ Աստուծոյ մատակարարման կարողութիւնը՝ Յովսէփին միջոցով, եւ հանգիստ գտաւ: Բոլոր խնդիրները լուծուած էին. ան ոչ մէկ հոգ ունէր:

*«Եւ ան իր ամբողջ ունեցուածքը Յովսէփի ձեռքին ձգեց եւ անոր քով եղած բանէ մը տեղեկութիւն չունէր՝ բացի իր կերած հացէն»:*

– Ծննդոց 39.6

Հասկնալու համար, թէ որքան կարելոր է Շաբաթը, եւ թէ Աստուած ինչ ցոյց տուած էր մարդուն, դուք պէտք է պարզ հարցում մը հարցնէք: Ինչպէ՞ս էր Շաբաթ օրը հնարաւոր: Չէ՞ որ այս երկրի անէծքի համակարգին ներքոյ մարդը վազքի մէջ էր ամէն օր՝ պարզապէս գոյատեւելու համար: Եթէ ասիկա ճիշդ է, ինչպէ՞ս է, որ մարդը կրնար դադարեցնել իր վազքը Շաբաթ օրը: Ինչպէ՞ս ան պիտի հոգար իր Շաբաթ օրուան կարիքները, եթէ ան չէր կրնար աշխատիլ այդ օրը: Ասիկա լաւ հարցում է, որ պէտք է պատասխանուի, եւ այս պատասխանին մէջ մենք կը գտնենք «Տիրոջ օրհնութեան» մասին յայտնութիւնն ամբողջութեամբ, որուն մէջ կը վարուէր Յովսէփը:

Կը կարծեմ՝ այս սկզբունքի հրաշալի օրինակներէն մէկը Ղեւտացւոց 25-րդ գլուխին մէջ է, որուն մէջ Աստուած կը բացատրէր Յոբելենական տարին Իսրայէլի ժողովուրդին: Որպէս տեղեկութիւն՝ Յոբելենական տարին կ'ըլլար 50 տարին մէկ: Այդ տարին նշանակալի է բազմաթիւ առումներով, որոնք ես պիտի չմանրամասնեմ հոս: Այնուամենայնիւ, կ'ուզեմ, որ հասկնաք հետեւեալը. անոնց

արգիլուած էր ցանել այդ տարին: Եւ անոնց նոյնպէս արգիլուած էր ցանել 49-րդ տարուան մէջ, քանի որ այն եօթներորդ կամ շաբաթական տարի էր: Կ'ուզեմ, որ պարզ հասկնաք, թէ ինչ տեղի կ'ունենար. Իսրայէլին պատուիրուած էր ոչինչ ցանել 49-րդ եւ 50-րդ տարիներուն: Ատոնցմէ յետոյ անոնք պէտք է սպասէին մինչեւ 51-րդ տարուան աւարտը՝ մինչեւ իրենց նոր ցանած սերմերու հունձքը: Այնպէս որ, ըստ էութեան, Աստուած կ'ըսէր անոնց, որ պէտք է ապրէին երեք տարի՝ առանց հունձքի: Եթէ ես ըստի ձեզի, որ դուք երեք տարի աշխատավարձք պիտի չստանաք, դուք քիչ մը կը մտահոգուէիք: Իսրայէլը մտահոգուած էր: Բնականօրէն ատիկա անհնար էր: Բայց Աստուած ինչ որ բան մը ցոյց տուած էր անոնց:

*«Եւ եթէ ըսէք, թէ «Եօթներորդ տարին ի՞նչ կ'ուտենք: Ահա պիտի չվարենք եւ մեր արդիւնքները պիտի չժողվենք»:* Սակայն ես կը հրամայեմ Իմ օրհնութեանը ձեզի համար վեցերորդ տարին, եւ երեք տարուան արդիւնք կու տայ: Եւ ութերորդ տարին վար կ'ընէք, եւ հին արդիւնքէն կ'ուտէք մինչեւ իններորդ տարին: Մինչեւ անոր արդիւնքի հասնիլը հինէն կ'ուտէք»:

– Ղեւտացւոց 25.20-22

Շաբաթը հնարաւոր էր, միայն որովհետեւ Աստուած օրհնած էր վեցերորդ օրը կրկնակի չափով կամ աւելի, քան բաւական է: Թոյլ տուէք, որ այս արտայայտութիւնը որոշ ժամանակ պտղտի ձեր մտքին մէջ: Մի՞թէ ասիկա իւրաքանչիւր տղամարդու եւ կնոջ ձգտումը չէ՝ աւելին, քան բաւական է: Տալով մարդուն կրկնակի չափ վեցերորդ օրը՝ Աստուած կը յիշեցնէր, որ Ինքն է անոնց մատակարարը, եւ Ան մշտապէս կը մատակարարէ աւելին, քան բաւական է: Եկէք անկեղծ ըլլանք. եթէ մենք ստանանք աւելին, քան բաւական է, ատիկա կ'ազատէ մեզի այս կեանքի առնետավազքէն: Ատիկա կ'ազատէ մեզի ստրկութենէն՝ տալով ընտրութեան հնարաւորութիւն: Ամենակարեւորը՝ մենք ազատութիւն կը ստանանք, որպէսզի գտնենք մեր նպատակը եւ ձգտումը եւ բարգաւաճիւնք ատոնց



մէջ: Ահա թէ ինչ կը վայելէր Պետափրէսը: Ոչ մէկ հոգ: Ամէն կարիք լրացուած էր: Միակ բանը, ինչին վրայ ան կը կեդրոնանար, իր նպատակն էր: Կրկին, ինչպէս Տրենտան եւ ես կ'ըսենք. «Քանի դեռ չէք լուծած ձեր ֆինանսական խնդիրները, դուք երբեք չէք գտներ ձեր նպատակը»: Բայց կայ հրաշալի՝ լուր: Շաբթուան հանգիստը դեռ հասանելի է այսօր. աստոր մէջ մեր բոլոր կարիքները լրացուած են, եւ մենք կրնանք բարգաւաճիլ՝ բարձրանալով գոյատեւման մակարդակէն:

*«Այսպիսով, կը մնայ շաբթուան հանգիստ Աստուծոյ ժողովուրդին համար, որովհետեւ ոեւէ մարդ, որ կը մտնէ Աստուծոյ հանգիստը, նոյնպէս կը հանգստանայ իր գործէն (տանջալի աշխատանքի եւ քրտինքի համակարգէն, գոյատեւումէն), ինչպէս որ Աստուած ալ հանգստացաւ Իր գործերէն»:*

– Եբրայեցիս 4.9, NIV

Աստուծոյ Թագաւորութիւնը գերազանցեց երկրային տիրոջին մէջ գոյութիւն ունեցող տանջալի աշխատանքի եւ քրտինքի օրէնքը Պետափրէսի պարագային, եւ այն կ'ընէ նոյնը ձեզի համար: Երբ սորվինք, թէ ինչպէս ստանանք Աստուծոյ Թագաւորութենէն, մենք կրնանք բարգաւաճիլ եւ գտնել մեր նպատակը: Կեանքն իսկապէս կրնայ ըլլալ արկածային՝ լեցուն եռանդով եւ ուրախութեամբ:

*«Տիրոջ օրհնութիւնը հարստութիւն կը բերէ, եւ Ան նեղութիւն չ'աւելցնէր ասոր»:*

– Առակաց 10.22, NIV

Տիրոջ օրհնութիւնը հարստութիւն կը բերէ, եւ Աստուած տանջալի աշխատանք չ'աւելցնէր ասոր: Մենք կրնանք բարձրանալ Ծննդոց 3.17-ին մէջ նկարագրուած տանջալի աշխատանքի եւ քրտինքի համակարգէն: Տարիներ շարունակ ես ապրած եմ այդ գոյատեւման հին համակարգի ներքոյ, մինչեւ որ իմացած եմ, թէ ինչպէս կը

գործ է Աստուծոյ Թագաւորութիւնը: Դուք նոյնպէս կրնաք իմանալ այս մասին: Աստուած ձեզի հետ է: Ան կրնայ օգնել ձեզի: Դուք կրնաք բարգաւաճիլ: Ո՛չ, թոյլ տուէք այլ կերպ ըսել. դուք պէ՛տք է բարգաւաճիք: Այս աշխարհի «Պետափրէսները»՝ մարդիկ, որոնք չեն ճանչնար Աստուծոյն եւ կը տառապին անյոյս եւ ծանր աշխատանքի անէծքի ներքոյ՝ փորձելով գոյատեւել, կը հետեւին ձեզի: Անոնք տպաւորուած չեն ձեր կրօնով, ձեր եկեղեցական շէնքերով եւ ձեր սուրբգրային հատուածներով, քանի որ չեն տեսներ ձեր չպատասխանուած հարցերէն այն կողմ: Դուք չէք կրնար ակնկալել, որ մարդիկ կը լսեն ձեզի, երբ պատմէք անոնց, թէ որքան մեծ է Աստուած, եւ միեւնոյն ժամանակ ապրիք նոյն ֆինանսական ճնշումին, պակասութեան եւ գոյատեւման պայմաններուն մէջ, ինչ անոնք: Ո՛չ, դուք պէ՛տք է ցոյց տաք, թէ ինչպիսին է Թագաւորութիւնը, ինչպէս որ Յովսէփը կ'ընէր: Ես չեմ ուզեր խիստ ըլլալ, բայց մարդիկ յիմար չեն: Անոնք պատասխաններ կը փնտռեն:

**ԴԱՂՈՇՑԷՔ ՁԵՐ ՇՈՒԲԸ  
ԳՏՆՈՒՈՂ ԿԱՍԿԱԾԻ ԵՒ  
ԱՆՀԱՒԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ  
ՀԱՄԱՁԱՅՆԵԼԷ: ՓՈԽԵՑԷՔ  
ԱՅՆ, ԻՆՉԻՆ ՀԵՏ ՈՐ  
ԿԸ ՀԱՄԱՁԱՅՆԻՔ, ԵՒ  
ԿԱՅԵԼԵՑԷՔ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ:**

Տարիներ շարունակ ես ոչ մէկ ազդեցութիւն ունէի: Ոչ ոք կը հրաւիրէր ինծի հեռուստատեսային հաղորդումներու, եւ ես չունէի հազարաւոր մարդոցմէ բաղկացած եկեղեցի: Ինչո՞ւ: Քանի որ չունէի ըսելիք, լուծումներ, պատասխաններ եւ ապացոյց, որ Աստուած կենդանի է, եւ որ Ան ինծի հետ է: Ես պարտքեր կ'առնէի, որպէսզի իմ ընտանիքը պարգապէս գոյատեւէր: Իմ ինքնաշարժն անսարք էր, իմ տունը խարխլած էր, եւ իմ կեանքը նոյնպէս խարխլած էր: Ինչո՞ւ ինչ որ մէկը պէ՛տք է ցանկար լսել, թէ որքան մեծ է իմ Աստուած: Այո՛, ես Երկինք կ'երթայի, եւ Երկինքն ամենահրաշալի վայրն է, բայց մարդիկ չեն լսեր այն մասին, թէ որքան հրաշալի է Երկինքը, քանի տակաւին դուք ցոյց չէք տուած Երկինքն այստեղ՝ երկրի վրայ: Լսեցէ՛ք, ես ընդամէնը կ'ըսեմ, որ եթէ Աստուած իրական է, եւ Անոր

Խօսքը ճշմարիտ է, կը նշանակէ՝ այն պէտք է գործէ: Մեր կեանքը պէտք է տարբերուի. մենք անձնապէս պէտք է տարբերուինք: Մենք պէտք է հասնինք այս սերունդին Թագաւորութեան ճշմարտութեամբ. «Պետափրէսները» կը հետեւին մեզի:

Այսպիսով, ինչո՞ւ այսէ գիրքի ենթավերնագիրը «Համաձայնութեան գորութիւնը»: Քանի որ Պետափրէսը վերապրեցաւ Աստուծոյ Թագաւորութիւնը եւ վայելեց շաբթուան հանգիստը, որուն մէջ մարդը չ'ապրիր քրտինքով եւ տանջալի աշխատանքով, որուն մէջ չկայ վախ, եւ կը թագաւորէ խաղաղութիւնը: Այդ հանգիստի մէջ գոյատեւումը կը փոխարինուի նպատակով եւ եռանդով, եւ աղքատութիւնը կը կլանուի մատակարարմամբ: Ինչպէ՞ս ան ըրաւ ատիկա: Ան բերաւ իր խնդիրները եւ անհանգստութիւններն Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան ներքոյ: Ըստ էութեան, թէեւ ան չէր հասկնար, թէ ինչ կ'ընէր, ան համաձայնեցուց իր կեանքն Աստուծոյ հետ: Ան եկաւ համաձայնութեան Աստուծոյ Թագաւորութեան հետ եւ մտաւ ատոր իրաւասութեան ներքոյ: Պետափրէսը բաւականին խելացի գտնուեցաւ՝ յանձնելով իր բոլոր գործերը Յովսէփի խնամքին, քանի որ ան տեսաւ պատասխաններ: Դուք նոյնպէս կրնաք ընել ատիկա. Տրենտան եւ ես վարուեցանք ճիշդ այդպէս: Ահա թէ ինչպէս յայտնուեցաւ իմ եղջերուն, իմ ֆինանսները, ինքնաշարժները եւ տունը, որոնց կարիքը մենք ունէինք: Այնպէս որ, թոյլ տուէք խորհուրդ մը տալ: Եթէ կը ցանկաք վայելել այն, ինչ որ Աստուած պատրաստած է ձեզի համար, փոխեցէ՛ք այն, ինչին հետ որ դուք կը համաձայնեցնէք ձեր կեանքը: Ղադրեցէ՛ք համաձայնել ձեր շուրջը գտնուող կասկածի եւ անհաւատութեան հետ: Փոխեցէ՛ք այն, ինչին հետ որ կը համաձայնիք, եւ վայելեցէ՛ք Աստուծոյ Թագաւորութիւնը:

## ԳԼՈՒԽ 9

# ԴՈ՛ՒՔ ԿԵՐԱԿՐԵՑՔԷ ԱՆՈՆՑ

Երբ առաջին անգամ իմ գրասենեակին մէջ հանդիպեցայ Տոնին, ան խիստ յուսահատած էր եւ պարտքերու մէջ էր: Այդ պահուն անոր կեանքին մէջ, կը թուէր, ամէն ինչ վատ էր: Զրուցելով անոր հետ՝ իմացայ, որ ան երեքէն չորս ամիս չէր վճարած բնակարանի վարձավճարը, ինչպէս նաեւ չէր փակած գրեթէ բոլոր հաշիւները: Կային նաեւ ամուսնական խնդիրներ. անոր կինը յոգնած էր իրենց ֆինանսական վիճակէն եւ յարգանքը կորսնցուցած էր Տոնին հանդէպ, քանի որ ան անկարող էր յոգալու իր եւ իրենց հինգ երեխաներու մասին: Իրականութեան մէջ, Տոնն ինքը կորսնցուցած էր յարգանքն իր հանդէպ, եւ ան շատ հարցումներ ունէր:

Ան կը զբաղէր առողջութեան ապահովագրութեան փաթեթներու վաճառքով Օհայօ նահանգին մէջ, բայց յաջողութիւն չունէր այդ գործին մէջ, եւ անոր ֆինանսական կեանքն արագօրէն կը կործանէր:

Զնայած այն բանին, որ ամէն ինչ Տոնին դէմ էր՝ ես տեսայ ներուժ անոր մէջ: Ան պատրաստ էր սորվելու եւ աշխատելու: Այդ ազդեցիկ համադրութիւնն այն աստիճան գրաւեց ինձի, որ ես աշխատանքի ընդունեցի անոր եւ որոշեցի ներդրում կատարել անոր ապագայ բարեկեցութեան մէջ: Ի վերջոյ, այդ ներդրումը մեծ շահոյթ բերաւ երկուքիս:

Իմ նորաստեղծ ընկերութիւնը շահած էր ճանապարհորդութիւն դէպի Հաուայեան կղզիներ մեր մատակարարներէն մէկէն, եւ

Ես զգացի, որ աստիկա փայլուն հնարաւորութիւն էր, որպէսզի պատմէի Տոնին Աստուծոյ Թագաւորութեան մասին: Թէեւ Տոնը քրիստոնեայ էր, ան չունէր միեւնոյն ընկալումը, ինչ եւ: Ու թէեւ քանի մը անգամ փորձած էի պատմել անոր Աստուծոյ Թագաւորութեան սկզբունքներուն մասին ֆինանսական բնագաւառին մէջ, ան, կը թուէր, պարզապէս չէր հաւատար իմ խօսքերուն:

Ես շարունակ կը մտածէի, թէ ինչը կրնար գրաւել Տոնի ուշադրութիւնը, որպէսզի ան հասկնար, որ ինքը նոյնպէս կրնար յաջողութեան հասնիլ՝ սորվելով Աստուծոյ Թագաւորութեան սկզբունքները: Այնուամենայնիւ, Տոնն այնքան յուսահատած էր, որ չէր կրնար հաւատալ իր ուժերուն եւ այն բանին, որ իր կեանքն իսկապէս կրնար փոխուիլ: Ես գիտէի, որ այդ ուղեւորութիւնը դէպի Հաուայեան կղզիներ իմ հնարաւորութիւնն էր:

Քանի մը շաբաթ Տոնի եւ իմ մեկնելէն առաջ մենք կը զրուցէինք այն մասին, թէ ուր պիտի երթայինք եւ ինչ պիտի ընէինք այդ ուղեւորութեան ընթացքին: Կար բան մը, ինչ որ խիստ կը հետաքրքրէր Տոնին: Ան կը ցանկար կապոյտ մարլին որսալ Խաղաղ ովկիանոսի գեղեցիկ ջուրերուն մէջ:

- Հաուայեան կղզիները կապոյտ մարլինի մայրաքաղաքն է ամբողջ աշխարհին մէջ,- ոգեւորուած կ'ըսէր ինծի Տոնը: - Ես միշտ փափաքած եմ կապոյտ մարլին որսալ. աստիկա եղած է իմ երազանքը:

Առաջին անգամ քանի մը շաբթուան ընթացքին ես փայլք տեսայ Տոնի աչքերուն մէջ: Վերջապէս ինչ որ բան կ'ոգեշնչէր անոր, եւ ես գիտէի, որ անոր ոգեշնչումը դուռ կը բանար շատ կարելոր դասի մը համար:

Տոն, - ըսի ես, - դուն գիտե՞ս, որ հնարաւոր է գիտնալ՝ ոչ թէ յուսալ, այլ իմանալ, որ դուն կապոյտ մարլին կ'որսաս Հաուայեան կղզիներուն մէջ՝ Աստուծոյ Թագաւորութեան շնորհիւ:

Տոնը շփոթեցաւ եւ հետաքրքրուեցաւ. ան կը ցանկար աւելին գիտնալ, եւ ես շարունակեցի խօսիլ Թագաւորութեան մասին: Մէջբերեցի Մարկոս 11.24-ը, ուր գրուած է. *«Ասոր համար կ'ըսես՞*

*ծեզի, թէ ամէն ինչ, որ աղօթք ընելով խնդրէք, հաւատացէք, թէ կ'առնէք, եւ կ'ըլլայ ձեզի»:* Տոնին համար ատիկա չափազանց լաւ էր՝ հաւատալու համար: Ես որոշ ժամանակ տրամադրեցի, որպէսզի օգնէի անոր հասկնալու Թագաւորութեան սկզբունքները եւ այն, թէ ինչպէս գործադրել հաւատքը: Եւ մինչեւ մեր ճանապարհորդութիւնը, անոր կիներ եւ ան սերմ ցանեցին՝ ճիշդ այնպէս, ինչպէս որ ես ցանեցի իմ եղջերուի համար, միաբան աղօթեցին եւ հաւատացին, որ կապոյտ մարլին ստացած էին:

Միեւնոյն ժամանակ, Տոնը կ'ընէր այն, ինչ որ կրնար՝ հունձքի իր բաժինը կատարելու համար: Ան ուսումնասիրեց հասանելի վարձոյթով տրուող նաւերը եւ ատոնց գիները եւ վերջապէս վարձեց նաւապետ մը, որ շատ հաւնեցաւ անոր: Ամէն ինչ կազմակերպուած էր, եւ բոլորս խիստ ոգեշնչուած էինք Հաուայեան կղզիներու կապոյտ ջուրերը դուրս գալու պատճառով:

Եկաւ նաւարկութեան օրը, եւ մենք, բարձրանալով նաւը, խանդավառութեամբ ըսինք նաւապետին, որ այդ օրը կապոյտ մարլին պիտի որսանք: Մենք կ'ակնկալէինք յաջողակ մարգային ձկնորսութեան օր, սակայն նաւապետը հաւաստիացուց, որ այդ օրը կապոյտ մարլին որսալու հաւանականութիւնը մեծ չէր: Անոր նաւերն օրական երկու շրջագայութիւն կը կատարէին, եւ վերջին չորս ամսուան ընթացքին անոր նաւակազմերը որսացած էին ընդամենը մէկ կապոյտ մարլին: Հիմնական պատճառն այն էր, որ դեռեւս մարլիններու որսաշրջանի ժամանակը չէր, քանի որ մարլինը գաղթական ձուկ է: Հրաժարելով յուսալքուելէ՝ մենք յարգալից ըսինք անոր, որ պիտի որսանք այդ ձուկը, եւ շարունակեցինք պատրաստել մեր սարքաւորանքը:

**«ԱՍՈՐ ՀԱՍԱՐ Կ'ՈՍԵՄ  
ՁԵՁԻ, ԹԷ ԱՄԷՆ ԻՆՉ, ՈՐ  
ԱՂՕԹՔ ԸՆԵՆՈՎ ԽՆԴՐԷՔ,  
ՀԱԲԱՏԱՑԷՔ, ԹԷ Կ'ԱՌՆԷՔ, ԵՒ  
ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՁԵՁԻ»:**

– ՍԱՐԿՈՍ 11.24

Վեց ժամ ովկիանոսին մէջ անցընելէն յետոյ մեր կարթերը նոյնիսկ մէկ անգամ չչարժեցան, եւ ես քիչ մը կ'անհանգստանայի,

որ այդ վիճակը կրնար թուլցնել Տոնի հաւատքը: Իմ մտահոգութեան պատճառով, հարցուցի անոր.

- Տո՛ն, - գոչեցի ես իմ դիրքէն, որ կը գտնուէր կամրջակի վրայ՝ անոր գլխավերեւը,- կ'ուզեմ հարցնել քեզի՝ ե՞րբ դուն ստացար այդ կապոյտ մարլինը, երբ այն յայտնուի՞, թե՞ երբ մենք աղօթեցինք:

- Կէ՛րի, ատիկա պարզ է, - վստահաբար պատասխանեց Տոնը: - Ես ստացայ այն, երբ աղօթեցի:

Ես ոգեշնչուեցայ եւ վստահութիւն առի՝ լսելով անոր պատասխանը: Այդ պահուն էր, որ հասկցայ, թէ Տոնը լրջօրէն ընդունած է իմ հրահանգները եւ վճռած է որսալ իր մարլինը:

Քանի մը վայրկեան յետոյ Տոնի կարթածողը սկսաւ քաշուիլ՝ իջնելով դէպի ջուրը, եւ ամուսինները պոռացին.

- Ձո՛ւկ է:

- Չափէն շատ մի՛ ոգելորուիք, - զգուշացուց նաւապետը: - Ճիշդ է, որ ասիկա մեծ ծուկ է, բայց ասիկա կապոյտ մարլին չէ: Մարլինները կը լողան անմիջապէս ջուրի մակերեսին քով եւ մեծ թռիչքներ կ'ընեն ջուրի վրայ, իսկ այս ծուկը խորքն է:

Վայրկեանները կը թռչէին, մինչ Տոնը կը շարունակէր պայքարիլ այդ ծուկին հետ, որուն դեռ պէտք էր հանել մակերեսի վրայ՝ տեսնելու համար: Որքան ալ Տոնը յոգնած էր, այդ ծուկն աւելի յոգնած էր, եւ շուտով այն յանձնուեցաւ: Տոնը եւ ես չգարմացանք, երբ ան վեր հանեց մեծ, գեղեցիկ մարլին, բայց բոլորն այդ նաւուն վրայ ապշած էին:

Տոնին եւ անոր ծուկին լուսանկարը մինչ օրս իմ գրասենեակին մէջն է՝ որպէս Թագաւորութեան իրական ըլլալու վկայութիւն այլ մարդոց համար եւ յիշեցում ինձի համար: Առաջին հայեացքէն ատիկա ընդամէնը ծուկ էր: Բայց Տոնին համար այդ մարլինն այնքա՛ն բան կը նշանակէր: Եթէ Թագաւորութիւնը գործեց մարլինի պարագային, այն, անկասկած, կը գործէ մնացած ամէն ինչի պարագային, ինչի կարիքը որ ան ունէր այս կեանքին մէջ: Տոնը դեռ նոր կը սկսէր գիտակցիլ, թէ ինչպիսի ազդեցութիւն Աստուծոյ Թագաւորութիւնը կրնար ունենալ իր կեանքին մէջ:

Երկու հազար տարի առաջ Նիկողենոս անունով մարդ մը հարցուց Յիսուսին Աստուծոյ Թագաւորութեան մասին: Յովհաննէս 3-րդ գլուխին մէջ գրուած է Տիրոջ պատասխանը. «Քամին ուր կ'ուզէ՝ կը փչէ, եւ անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր, թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Այսպէս է ամէն Հոգիէն ծնածը» (Խս. 8): Տոնին հետ նաւուն վրայ անցուցած այդ գեղեցիկ օրն այս խօսքի փայլուն օրինակն է:

**ԻՆՉՊԷՍ ՈՐ ԱՆԿԱՐԵԼԻ Է  
ՏԵՄՆԵԼ ՔԱՍԻՆ, ԲԱՅՑ ԱՅՆ  
ՏԵՍԱՆԵԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ  
ՈՒՆԻ ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ  
ՄԷՋ, ԱՅՆՊԷՍ ԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ Է.  
ԱՅՆ ԻՐԱԿԱՆ Է, ԵՒ ԱՅՆ  
ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ  
ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ:**

Թէեւ ե՛ւ Տոնը, ե՛ւ ես չէինք տեսներ Աստուծոյ Թագաւորութիւնն այդ օրը, բայց, անկասկած, տեսանք եւ զգացինք աստոր արդիւնքը՝ որսալով այդ մեծ մարլիւնին: Ինչպէս որ անկարելի է տեսնել քամին, չնայած որ այն տեսանելի ազդեցութիւն ունի բնական աշխարհին մէջ, այնպէս ալ Աստուծոյ Թագաւորութիւնն է. այն իրական է եւ ազդեցութիւն ունի բնական աշխարհին մէջ: Սորվելով այն օրէնքները, որոնցմով կը կառավարուի Աստուծոյ Թագաւորութիւնը՝ մենք կը կատարենք փոփոխութիւններ մեր կեանքին մէջ՝ ճիշդ այնպէս, ինչպէս Տոնն ըրաւ այդ օրը:

Ես կ'ուզեմ հարցում մը հարցնել: Ինչպէ՞ս յայտնուեցաւ այդ մարլիւնը: Այս հարցումը պատասխան ունի: Դուք չէք կրնար պարզապէս ըսել, որ Աստուած ըրաւ ասիկա: Ո՛չ, մենք պէտք է իմանանք, թէ ուրկէ՞ գիտէինք, որ այն պիտի յայտնուէր: Դուք իրականութեան մէջ պէտք է իմանաք ասիկա, քանի որ կրնայ գալ օր մը, երբ ձեզի պէտք կ'ըլլայ կապոյտ մարլիւն, կապոյտ ինքնաշարժ կամ պարզապէս մթերք: Փաստն այն է, որ այս պատմութիւնն այնքան ալ ձկնորսութեան մասին չէ, ինչպէս որ իմ որսորդական պատմութիւններն իրականութեան մէջ եղնիկներու մասին չեն: Այս պատմութիւնը պատկերացում կու տայ մեզի Թագաւորութեան մասին եւ այն մասին, թէ ինչպէս այն կը գործէ: Կար յստակ պատճառ,



թէ ինչու այդ մարլինը յայտնուեցաւ: Յիսուսը շատ ժամանակ կը տրամադրէր՝ սորվեցնելով Իր աշակերտներուն այն մասին, թէ ինչպէս կը գործէր Թագաւորութիւնը, եւ խօսելու հետ մէկտեղ, Ան նոյնպէս կը ցուցադրէր այն:

Ուշադրութիւն դարձուցէք, որ Թագաւորութիւնը չի գործեր այնպէս, ինչպէս այն երկրային տիրոյթը, ուր մեծցած էք: Դուք իրականութեան մէջ չէք կրնար բոլորովին ընկալել այն ձեր մտքով: Այո, այն կը գործէ որոշակի օրէնքներու հիման վրայ, պարզապէս այդ օրէնքներն այնպիսին չեն, որոնց մենք ընտելացած ենք այս երկրին մէջ: Բայց մենք կրնանք սորվիլ այդ օրէնքները: Յիսուսը շատ ժամանակ կը տրամադրէր՝ ցուցադրելով եւ սորվեցնելով Թագաւորութեան օրէնքները, ուր ալ որ կ'երթար: Իմ ամենասիրելի պատմութիւններէն մէկը, որուն մէջ Յիսուսը կը ցուցադրէ Թագաւորութիւնը, Մարկոս 6-րդ գլուխին մէջ է: Ատիկա յայտնի պատմութիւնն է այն մասին, որ Յիսուսը կերակրեց 5.000 տղամարդու հինգ հացով եւ երկու ձուկով: Թէեւ մեծնալով եկեղեցւոյ մէջ՝ ես լսած էի այս պատմութիւնը միլիոնաւոր անգամներ, բայց ոչ ոք բացատրած էր ինձի, թէ ինչպէս Յիսուսն ըրաւ ասիկա:

*«Եւ երբ որ արդէն շատ ժամանակ անցած էր, Անոր աշակերտները մօտ եկան եւ ըսին, թէ. «Այս տեղն անապատ է, եւ ժամանակն ալ՝ արդէն ուշ: Արձակէ՛ ատոնց, որ չորս կողմի շէներն ու գիւղերը երթան, իրենց համար հաց առնեն, որովհետեւ հոս ուտելու բան չունին»:*

*Ան ալ պատասխանեց եւ անոնց ըսաւ. «Դո՛ւք տուէ՛ք ատոնց ուտել»:* Անոնք ալ ըսին. «Երթա՞նք երկու հարիւր դահեկանի հաց առնենք եւ ատոնց տանք, որ ուտեն»: Ան ալ անոնց ըսաւ. «Քանի՞ հաց ունիք: Գացէ՛ք եւ տեսէ՛ք»:

*Երբ որ գիտցան, Անոր ըսին. «Հինգ հաց եւ երկու ձուկ»:*

*Եւ հրամայեց անոնց, որ ամէնը զունդ-զունդ կանաչ խոտի վրայ նստին: Եւ դաս-դաս նստան՝ հարիւր-հարիւր եւ յիսուն-յիսուն: Եւ այն հինգ հացը եւ երկու ձուկն առած*

*դէպի Երկինքը նայեցաւ, օրհնեց, կտրեց հացերը եւ Իր աշակերտներուն տուաւ, որ նետեն անոնց առջեւ, եւ այն երկու ձուկը բաժնեց ամէնուն: Եւ ամէնը կերան եւ կշտացան եւ փշրանքներէն տասներկու կողով լեցուն վեր առին, եւ ձուկերէն ալ: Եւ հացը ուտողները հինգ հազարի չափ մարդիկ էին»:*

– Մարկոս 6.35-44

«Յիսու՛ս, մենք խնդիր ունինք: Մարդիկ սոված են, եւ եթէ հիմա անոնք չերթան, շատ ուշ տուն կը հասնին, եւ մենք կ'անհանգստանանք»: Ի՞նչ ըսաւ Յիսուսն անոնց: «Աստուած իմ, դուք ճիշդ էք: Ես չէի հետեւիր ժամանակին. եկէք ասարտենք այս հաւաքոյթը ճիշդ հիմա»: Ո՛չ, Ան պարզապէս ըսաւ. «Դո՛ւք կերակրեցէք անոնց»: Ի՞նչ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ հոն 5.000 տղամարդ կար, իսկ կանանց եւ երեխաներուն հաշուելու պարագային դիւրաբար կրնար 20.000 մարդ ըլլալ: Այդքան մարդ կերակրելը, նոյնիսկ եթէ դուք միջոցներ ունենայիք, շատ դժուարին առաջադրանք կ'ըլլար, եթէ ոչ՝ անհնարին: Համոզուած եմ, որ աշակերտներու հաւատալը չէր գար, երբ անոնք լսեցին Յիսուսի խօսքերը: Անոնց արծագանգը Անոր լուծման պարզօրէն ցոյց կու տայ այս երկրային իրականութեան սովորական մտածելակերպը. «Բայց Յիսու՛ս, ատոր համար ութ ամսուան աշխատավարձք հարկաւոր է: Մի՞թէ մենք պէտք է երթանք եւ այդքան գումար ծախսենք կերակուրի համար»: Առաջինը՝ ուշադրութիւն դարձուցէք, որ անոնք անմիջապէս փոխարկեցին այդ կարիքն այս երկրային անէծքի համակարգի տնտեսութեամբ, տանջալի աշխատանքով եւ քրտինքով, իսկ աւելի ճիշդ՝ ատոր ութ ամսուան համարժեքով:

Մէկ անգամ, երբ կ'աղօթէի, Աստուած ըսաւ, որ ես մարմնաւոր մտածելակերպ ունիմ: Ես շփոթեցայ. Ի՞նչ կը նշանակէր ասիկա: Թերեւս ես խնդիր ունէի կիրքի՞ հետ: Ո՛չ, Ան նկատի ունէր, որ իմ միտքը սահմանափակ էր, քանի որ ես կը զտէի իմ ապագան այս երկրային անէծքի մտածելակերպով՝ այն բանով, թէ որքան արագ կրնայի վազել: Բոլորս այդպէս կը վարուինք: Եթէ մեզի նոր տուն

հարկաւոր է, մենք կը հետաքրքրուինք, թէ որքան այն կ'արժէ, եւ անմիջապէս կը հաշուարկենք՝ արդեօ՞ք կրնանք թոյլ տալ այն մեզի: Ինչի՞ հիման վրայ մենք կը կատարենք մեր հաշուարկը: Այս երկրային անէժքի պատկերացման վրայ. մենք կը մտածենք, թէ որքան արագ կրնանք վազել: Ենթադրենք, ես կ'աշխատիմ ժամական 15 տոլար, եւ շաբաթական 40 ժամը հաւասար է... կը պարզուի՝ ես երբեք չեմ կրնար թոյլ տալ ինձի այդ տունը գնել: Այնպէս որ, դուք կը մոռնաք այդ միտքը՝ համարելով այն անհնարին: Եթէ մենք զտենք իւրաքանչիւր գաղափար այն բանով, թէ որքան արագ կրնանք վազել, մենք ԵՐԲԵՔ մուտք չենք գործեր Թագաւորութեան կեանքի մէջ, քանի որ Աստուած սահմանափակուած չէ այս երկրային համակարգով: Աստուած կ'ըսէր ինձի, որ եթէ ես կը ցանկայի ներգրաւել Թագաւորութիւնը, պէտք է ընդունէի Թագաւորութեան մտածելակերպը՝ այն, որ ամէն ինչ հնարաւոր է:

Ահա թէ ինչու աշակերտներն ըսին. «Աստոր համար անհրաժեշտ է ութ ամսուան աշխատավարձք»: Ըստ էութեան, անոնք նկատի ունէին, որ այդքան մարդոց կերակրելն անհնարին սխրանք էր:

Թոյլ տուէք նկարագրել, թէ ինչպիսին թուացին Յիսուսի՝ «Դուք տուէք անոնց ուտել» խօսքերը աշակերտներուն: Պատկերացուցէք, որ ես ձեր հովիւն եմ, եւ դուք չէք կրցած կատարել ձեր կալուածագրաւային վճարումները՝ ֆինանսական խնդիրներու պատճառով: Դուք երեք ամսուան ժամկէտանց փակում ունիք եւ շուտով պիտի կորսնցնէք ձեր տունը: Կու գաք քովս եւ կը հարցնէք՝ արդեօ՞ք եկեղեցին կրնայ օգնել, որպէսզի կատարէք ձեր վճարումները: Ես շատ հանգիստ ձայնով կը պատասխանեմ ձեզի. «Ես աւելի լաւ միտք ունիմ: Ինչո՞ւ բոլորովին չփակէք այդ գումարը, որպէսզի այլեւս ստիպուած չըլլաք վճարումներ կատարելու»: Ձեր հայեացքն կ'արտայայտէ հետեւեալը. «Ան չհասկցաւ, թէ ինչ նկատի ունիմ»: Դուք կ'ըսէք. «Ո՛չ, հովի՛ւ, կը կարծեմ՝ դուք չհասկցաք ինձի: Մենք ընդհանրապէս դրամ չունինք. ահա թէ ինչու եկած եմ ձեր քով: Մեզի պարզապէս հարկաւոր է, որ եկեղեցին օգնէ, որպէսզի կատարենք մեր ժամկէտանց վճարումները»: Կրկին, ես հանգիստ կը նայիմ ձեզի եւ կը պատասխանեմ. «Ո՛չ, ես հասկցայ ձեզի: Դուք

պարզապես պետք է փակեք ձեր կալուածագրաւային ամբողջ գումարը եւ այլեւս չէք ունենար վճարումներ»: Դուք կը մտածէք, որ եւ խենթեցած եմ՝ նման ժանրաբեռնուած խաղասարքի, որ շարունակ նոյն ազդանշանը կու տայ:

Հաւանաբար, աշակերտները ճիշդ այդպէս կը զգային իրենց: «Յիսո՛ւս, Դուն իրականութեան մէջ լուրջ չես խօսիր՝ պատուիրելով կերակրել այս 20.000 մարդուն, այնպէս չէ՞: Ատիկա անհնա՛ր է: Մենք չունինք միջոցներ ատոր համար: Եւ եթէ ծրագիր կազմէինք, որպէսզի երթայինք եւ այնքան աշխատէինք, մինչեւ որ վաստկէինք այդ գումարը, սայլեր գտնէինք եւ յանձնաժողովներ կազմէինք՝ հաց գնելու համար, մինչեւ որ վերադառնայինք այդ հացով, բոլոր այս մարդիկ արդէն մահացած կ'ըլլային: Նոյնիսկ եթէ ունենայինք այդ գումարը, ժամանակը չէր բաւեր՝ ամէն ինչ կազմակերպելու համար»: Մենք ճիշդ այսպէս կ'արձագանգենք անհնարին թուացող իրավիճակներուն բնական աշխարհին մէջ, երբ ոչ մէկ ճանապարհ կը տեսնենք, որուն միջոցով ատոնք կրնան լուծուիլ: Երբ մենք չենք ունենար մատակարարում, մեր տեսիլքը կը մահանայ:

Յիսուսն անպատասխան չձգեց աշակերտներուն այդ իրավիճակին մէջ, եւ Ան չէր պատուիրեր անոնց կերակրել այդ մարդոց, եթէ ատիկա անկարելի ըլլար: Ան կը պատրաստուէր ցոյց տալու անոնց բոլորովին այլ համակարգ՝ Թագաւորութիւնը՝ գործի մէջ: Քանի որ աշակերտները շփոթած էին, Յիսուսն Ինքը զբաղեցաւ այդ հարցով:

«Ի՞նչ ունիք: Գացէ՛ք եւ տեսէ՛ք», - ըսաւ Յիսուսը: Աշակերտները վերադարձան եւ ըսին. «Մենք գտած ենք հինգ հաց եւ երկու ձուկ»:  
Հազիւ որ գտնուեցան հինգ հացը եւ երկու ձուկը, Յիսուսը խնդրեց աշակերտներուն բերել ատոնք Իր քով: Ան վերցուց հացն ու ձուկը, օրհնեց եւ վերադարձուց աշակերտներուն: Բնականօրէն ոչինչ փոխուեցաւ, բայց հոգեւորապէս տեղի ունեցաւ շատ կարեւոր բան մը՝ այն, ինչ որ Թագաւորութիւնը հասկնալու բանալիներէն մէկն է: Յիսուսը պատուիրեց աշակերտներուն բաժնել հացն ու ձուկը, եւ անոնք երկիւղածութեամբ կը հետեւէին, թէ ինչպէս այդ կերակուրը կը բազմապատկուէր իրենց աչքերուն առջեւ եւ կը կերակրէր բոլոր

20.000 մարդոց: Ի՞նչ տեղի ունեցաւ: Ինչպէ՞ս ատիկա տեղի ունեցաւ:

Ասիկա պարզելու համար պէտք է որոշ դիտարկումներ ընենք այս պատմութեան մէջ: «Օրինել» բառը բառացիօրէն կը նշանակէ առանձնացնել կամ ընծայել: Այնպէս որ, կարելի է ըսել, որ երբ Յիսուսն օրհնութիւն խօսեցաւ այդ կերակուրին վրայ, այդ հացն ու ձուկն առանձնացուեցան՝ անցում կատարելով թագաւորութենէն միւսը: Երկրային տիրոջին մէջ հնարաւոր չէ կերակրել 20.000 մարդու հինգ հացով եւ երկու ձուկով: Եւ անոնց կերակրելը դեռ ամէնը չէր: Երբ մարդիկ աւարտեցին, աշակերտները հաւաքեցին 12

զամբիւղ՝ կերակուրի մնացած կտորներով: Ինչպէ՞ս տեղի ունեցաւ, որ հինգ հացը եւ երկու ձուկը, որոնք բաւական չէին, կշտացուցին 20.000 մարդու, իսկ վերջաւորութեան մնացաւելի շատ, քան սկիզբն էր: Այսպիսին է Թագաւորութիւնը. այն աւելին է, քան բաւական է:

**ԱՍՏՈՒԾ ՍՈՐՎԵՑՈՒՑ  
ԻՆԾԻ ՑԱՆԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՔԻՉ  
ՄԸ ԱՅՆ ԲԱՆԷՆ, ԻՆՉԻՆ  
ԿԱՐԻՔԸ, ՈՐ ԵՍ ՈՒՆԻՄ:**

Որպէս հոգեւոր գիտնական, ուշադրութեամբ ուսումնասիրելով այս պատմութիւնը, ես տեսայ նոյն բանաձեւը, որն Աստուած տուած էր ինծի եղնիկներու վերաբերեալ: Եղնիկներու որսի միջոցով Աստուած սորվեցուց ինծի ցանել Աստուծոյ Թագաւորութեան մէջ քիչ մը այն բանէն, ինչին կարիքը, որ ես ունիմ: Ահա թէ ինչ ըրաւ այս պատմութեան տղան իր քով եղած հացով ու ձուկով: Ան յանձնեց ատոնք Աստուծոյ Թագաւորութեան իշխանութեանը, եւ ատոնք բազմապատկուեցան. 20.000 մարդ կերակրուեցաւ, եւ դեռ 12 կողով աւելցաւ: Ուշադրութիւն դարձուցէք, որ հացը բազմապատկուեցաւ՝ որպէս հաց, իսկ ձուկը՝ որպէս ձուկ: Ահա թէ ինչպէս կը գործէ այս սկզբունքը: Ես կրնամ ձուկ ցանել Աստուծոյ Թագաւորութեան մէջ, եւ այն կը բազմապատկուի՝ ձուկ դառնալով: Բայց ի՞նչ, եթէ ինծի ձուկ պէտք է, իսկ ես չունիմ ձուկ՝ ցանելու համար: Պատասխանը դրամն է: Յիշեցէք՝ դրամը փոխանակման համակարգ է: Մենք «կ'անուանենք» դրամն ամէն օր: Մենք կ'անուանենք այն կաթ, տուն,

հազուստ, հաց եւ որբէւ այլ բան, ինչն անհրաժեշտ է մեզի ամէն օր: Դրամը կը դառնայ այն, ինչին կարիքը, որ մենք ունինք: Նոյնը տեղի կ'ունենայ, երբ մենք կը ցանենք. մենք կրնանք անուանել մեր դրամը: Փոխարէնը խանութ երթանք եւ ձուկ առնենք՝ այն ցանելու համար, մենք կրնանք պարզապէս անուանել մեր դրամը: Դուք կրնաք այդպէս վարուիլ ձեր նուիրատուութիւններուն հետ, բայց ոչ՝ տասանորդի, քանի որ Աստուած արդէն իսկ անուանած է այն: Մենք կրնանք տեսնել նոյն բազմապատկման կանոնը Ղուկաս 5-րդ գլուխին մէջ:

*«Եւ եղաւ, երբ որ ժողովուրդն Անոր վրայ կը դիզուէր՝ Աստուծոյ խօսքը լսելու, եւ Ինքը Չեննեսարէթի ծովակի քով կանգնած էր, եւ երկու նաւ տեսաւ՝ ծովակի քով կանգնած, ձկնորսներն ալ անոնցմէ դուրս ելած էին եւ ուռկանները կը լուային: Եւ ան մտաւ այն նաւերէն մէկուն մէջ, որ Սիմոնին էր, եւ խնդրեց անոր նաւը ցամաքէն քիչ մը ներս տանիլ, նստեցաւ եւ նաւէն կը սորվեցնէր ժողովուրդներուն: Եւ երբ որ խօսելէն դադրեցաւ, Սիմոնին ըսաւ. «Նաւը դէպի խորը տար, եւ ձեր ուռկանները նետեցէք որսի»:*

*Եւ Սիմոնը պատասխանեց ու ըսաւ Անոր. «Վարդապետ, ամբողջ գիշեր աշխատեցանք եւ ոչինչ բռնեցինք, բայց Քու խօսքին համար ուռկանը կը ձգեմ»:* Եւ երբ որ այս ըրին, ձուկերու մեծ բազմութիւն մը ներս ժողվեցան, եւ անոնց ուռկանը կը պատռէր: Եւ նշան կ'ընէին միւս նաւուն մէջ եղող ընկերներուն, որ գան իրենց օգնեն: Եւ անոնք եկան, եւ երկու նաւը լեցուցին, մինչեւ որ կը թաղուիէն (կամ՝ կը «խորտակէին»):»:

– Ղուկաս 5.1-7

Որպէս հոգեւոր գիտնական՝ եկէք ուսումնասիրենք այս պատմութիւնը: Ինչպէ՞ս յայտնուեցաւ այդ ձուկը: Դուք կը հասկնա՞ք ասիկա: Յիսուսը կը քալէր ակո՛վ եւ գտաւ նաւ մը, որ փափաքեցաւ

օգտագործել՝ բազմութեան քարոզելու համար: Ան հարցուց Պետրոսին՝ նաւուն տիրոջը՝ արդեօ՞ք կրնար օգտուիլ ասորմէ, եւ Պետրոսն ըսաւ. «Անշո՛ւշտ»: Չէ՞ որ այդ պահուն նաւը պէտք չէր անոնց. անոնք ծուկ որսացած էին ամբողջ գիշեր, բայց ոչինչ բռնած էին: Այն բանէն յետոյ, երբ Յիսուսն օգտուեցաւ նաւէն, պատուիրեց Պետրոսին վերադառնալ խորքը եւ ծուկ որսալ: Համոզուած եմ, որ Անոր խնդրանքը յանկարծակիի բերաւ Պետրոսին, քանի որ ան պատասխանեց. «Յիսու՛ս, մենք ձկնորսութեան էինք ամբողջ գիշեր, եւ ոչինչ բռնեցինք»: Պետրոսն արհեստավարժ ձկնորս էր եւ գիտէր, թէ ինչպէս ծուկ որսալ: Ըստ իր փորձառութեան, այնտեղ պարզապէս ծուկ չկար: Բնական տեսանկիւնէն, հոն վերադառնալը պարզապէս անիմաստ էր: Անոնք արդէն հաւաքած էին իրենց սարքաւորանքը եւ մաքրած էին ցանցերը:

Ես չեմ հաւատար, որ Պետրոսը կ'ընէր ատիկա, եթէ քիչ առաջ լսած չըլլար Յիսուսի՝ հաւանաբար գրեթէ մէկ ժամ տեսող քարոզը, որմէ ան այնպէս ազդուած էր, ինչպէս երբեք անցեալին: Այնպէս որ, ան ըսաւ. «Քանի որ Դուն կ'ըսես ատիկա, ես կը նետեմ իմ ցանցերը»: Պետրոսը կրկին ծով դուրս ելաւ եւ այնքա՛ն ծուկ բռնեց, որ անոր ցանցերը գրեթէ կը պատռէին, իսկ նաւը գրեթէ կը խորտակէր: Աստուածաշունչը գրի կ'առնէ Պետրոսի արծագանգը. ան ապշա՛ծ էր:

Ինչպէ՞ս ատիկա տեղի ունեցաւ: Դուք ունի՞ք տարբերակներ: Կրնա՞նք արդեօք իմանալ ատիկա: Կարճ ամփոփելով՝ հոս գործեց համաձայնութեան զօրութեան սկզբունքը, որ մենք դիտարկեցինք աւելի վաղ: Երբ Պետրոսը թոյլ տուաւ Յիսուսին օգտագործել իր ձկնորսական նաւը, անոր նաւը եւ գործը անցում կատարեցին այլ թագաւորութեան մէջ: Անոր գործը դուրս եկաւ երկրային անէծքի համակարգի իրաւասութենէն եւ յայտնուեցաւ Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան ներքոյ: Եւ քանի որ այն Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան ներքոյ էր, Աստուած օրինապէս կրնար գիտութեան խօսք փոխանցել Յիսուսին եւ յայտնել Անոր ծուկին գտնուելու ճշգրիտ վայրը՝ «դէպի խորը»:

Վերլուծենք այս պատմութիւնը: Յիսուսը փոխ կ'առնէ ձկնորսական նաւը Պետրոսէն, որ քիչ առաջ վերադարձած էր ամբողջ գիշեր

տելող անարդիւնք ձկնորսութենէն յետոյ: Այս փոխանակման մէջ անոր նաւը յայտնուեցաւ Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան ներքոյ: Յիսուսը գիտելիք ստացաւ ձուկին գտնուելու ճշգրիտ վայրին մասին՝ Սուրբ Հոգիին միջոցով: Ան ուղղորդեց Պետրոսի նաւն անմիջապէս դէպի այդ վայրը: Եւ Պետրոսի նաւը գրեթէ խորտակեցաւ ձուկերու պատճառով: Անոր գործընկերներու նաւը նոյնպէս գրեթէ խորտակեցաւ՝ արատ որսի պատճառով: Այսպիսով, ինչպէ՞ս այդ ձուկը բռնուեցաւ: Պարզ ըսելու համար, Երկինքէն եկող անմիջական հրահանգի միջոցով: Համաձայնեցէք, որ իւրաքանչիւրը կրնայ ձուկ որսալ, եթէ իմանայ, թէ ուր է այն: Մտածեցէ՛ք այս պնդումին մասին: Աստուած գիտէ ամէն ինչ: Ան կրնայ օգնել ձեզի եւ ըսել, թէ ինչ ընէք:

Երբ Տրենտան եւ ես, սնանկ ըլլալով, սկսանք սորվիլ Թագաւորութեան մասին, գիշեր մը Աստուած երազ տուաւ ինծի՝ ցոյց տալով գործ մը, որ իրականութեան մէջ չէի գիտեր՝ ինչպէս սկսէի: Արդէն 28 տարի անցած է, իսկ այդ գործը դեռ կայ, եւ այն տարեկան հարիւր հազարաւոր տոլարներու շահոյթ կու տայ մեզի: Այդ 28 տարուան ընթացքին այն թոյլ տուած է մեզի ցանել միլիոններ ծառայութեան եւ մարդոց օգնելու մէջ: Ինչպէ՞ս. ես լսեցի Երկինքէն, եւ նոյնը կրնայ կատարուիլ ձեզի հետ: Թոյլ տուէք օրինակ մը բերել:

Քանի մը տարի արաջ ես հինգօրեայ համաժողով կ'անցընէի Աստուծոյ Թագաւորութեան մասին: Երկրորդ երեկոյէն յետոյ Քրիստոս անունով տղամարդ մը մօտեցաւ ինծի եւ խնդրեց աղօթել իրեն համար: Ես հարցուցի, թէ ինչի համար կը ցանկայ, որ աղօթեմ: Եւ ան պատմեց ինծի իր պատմութիւնը: Ան գործ ձեռնարկած էր մարդու մը հետ, որ վատնած էր իրենց գումարները եւ սնանկութեան հասցուցած էր գործը: Ան արդէն չորս անգամ ամուսնացած էր եւ ամուսնական խնդիրներ ունէր եւ ընդամէնը 40 տարեկան էր: Ան պատմեց ինծի, որ այնքան ընկճուած էր, որ մէկ օր լիցքաւորած էր իր ատրճանակը, նստած էր ինքնաշարժը եւ որոշ ժամանակ քշելէն յետոյ կեցած էր չաշխատող վառելանիւթի կայանի քով՝ մտադրուելով անձնասպանութիւն գործել:

Գիշերուան ժամը 03:00-ն էր, եւ մինչ ան նստած էր լիցքաւորուած ատրճանակով, անոր քիջային հեռաձայնը կը հնչէ: Ան անմիջապէս



Կը ճանչնայ այդ թիւը. իր նախկին գործընկերն էր: Ան ոչ մէկ պարգային կ'ուզէր գրուցել անոր հետ եւ չի պատասխաներ: Հեռաձայնը կը հնչէր կրկին ու կրկին: Երբ եկաւ 11-րդ զանգը, Քրիսն ի վերջոյ որոշեց պատասխանել: Անոր նախկին գործընկերոջ առաջին բառերը հետեւեալն էին.

- Ո՞ւր ես, եւ ի՞նչ կ'ընես:

Երբ Քրիսը պատասխանեց անոր, ան ըսաւ.

- Բան մը չընե՛ս, ես ճիշդ հիմա կու գամ:

Պարզուեցաւ, որ իր նախկին գործընկերը նուիրած էր իր կեանքն Աստուծոյ եւ կ'ուզէր պատմել այդ մասին Քրիսին: Զարմանալի է, որ ան հրատապութիւն զգացած է ատարանելու Քրիսին գիշերուան ժամը 03:00-ին, եւ երբ Քրիսը չէ պատասխանած, ան շարունակած է հեռաձայնել անոր:

Երբ Քրիսի գործընկերը եկաւ, ան առաջնորդեց անոր դէպի Տէրը, եւ Քրիսի կեանքն արմատապէս փոխուեցաւ: Ամէն ինչ բարելաւուեցաւ: Ան գտաւ լաւ եկեղեցի, անոր ամուսնութիւնը վերականգնուեցաւ: Ամէն ինչ կը բարելաւուէր՝ բացի եկամուտէն: Քրիսն աշխատանք չունէր, եւ յատկապէս ատոր համար կը խնդրէր ինձմէ աղօթել: Ամբողջ այդ համաժողովի ընթացքին ես կը սորվեցնէի ճիշդ այն, ինչ կը պատմեմ ձեզի այս գիրքին մէջ, որ Թագաւորութիւնը կրնայ կատարել զարմանալի բաներ, որոնք վեր են մեր կարողութենէն:

Մտածելով այն մասին, որ Սուրբ Հոգին կրնայ առաջնորդել եւ օգնել մեզի՝ տալով ցուցումներ եւ գաղափարներ, յանկարծ Քրիսի մտքին մէջ՝ գաղափար մը ծնաւ: Ան չունէր շատ ֆինանսական հնարաւորութիւններ, բայց համեղ շոռաբլիթներ (չիզթէյթ) կը պատրաստէր: Ան մասնագիտացած էր պահեցողական, առողջապահական շոռաբլիթներ պատրաստելու մէջ, եւ անոր պատրաստածը լաւագոյնն էր իր բոլոր փորձածներէն: Իրականութեան մէջ, Քրիսի բոլոր ընկերները կը ճանչնային անոր որպէս ամենահամեղ շոռաբլիթներ պատրաստող: Ան շատ անգամներ եղած էր տեղական առողջ սնունդի խանութի մէջ եւ

Վործած էր անոնց թխուածքներէն քանի մը հատը, բայց ստոնցմէ բան մը չէր հաւնած: Քրիսը չունէր շատ հնարաւորութիւններ, բայց ան կը զգար, որ կար բան մը, որ ինքը կրնար ընել՝ շոռաբլիթներ վաճառելը: Ան համոզուած էր, որ եթէ տանէր իր պատրաստած շոռաբլիթն իրենց տեղական առողջ սնունդի խանութ եւ առաջարկէր համտեսել, անոնք կը ցանկային վաճառել այն: Ան համոզուած էր, որ այն պիտի վաճառուէր աւելի լաւ, քան անոնց ունեցածը: Եւ ճիշդ այդպէս ալ վարուեցաւ: Շոռաբլիթ պատրաստեց եւ տարաւ առողջ սնունդի խանութ՝ առանց նախապէս անոնց տեղեկացնելու: Այնպէս յաջողեցաւ, որ Քրիսի երթալու ժամանակ այդ առողջ սնունդի ամբողջ ցանցի գործադիր տնօրէնն այցելած էր այդ մասնաձիւղ: Գործադիր տնօրէնը համաձայնած էր համտեսել անոր շոռաբլիթը եւ պատասխանել անոր:

Այդ երեկոյ Քրիսը կրկին առջեւ եկաւ հաւաքոյթին յետոյ՝ հետս խօսելու համար: Ան պատմեց ինծի, թէ ինչ ըրած էր, եւ խնդրեց կրկին միաբան աղօթել այդ առողջ սնունդի խանութներու ցանցին հետ պայմանագիր կնքելու համար: Յաջորդ օրը Քրիսը կրկին ներկայ էր հաւաքոյթին եւ այնքան ոգեւորուած էր: Ան ըսաւ, որ այդ գործադիր տնօրէնը կը ցանկայ, որ ինքը շոռաբլիթներ պատրաստէ ոչ միայն մէկ խանութի համար, այլ նոյնպէս իրենց ամբողջ խանութներու ցանցին համար: Ան նոյնպէս հարցուցած էր, թէ ուրիշ ինչ կրնար պատրաստել: Քրիսը ցնցուած էր: Ջարմանալի է, բայց այդ գլխաւոր տնօրէնը եկաւ մեր համաժողովին, նուիրեց իր սիրտը Տիրոջը եւ մկրտուեցաւ Սուրբ Հոգիով: Երկու շաբաթ յետոյ ես նամակ մը ստացայ այդ մարդէն, որ ան կը ցանկայ ցանել Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Ան նուիրաբերեց այդ ընկերութեան մէջ ունեցած իր բաժնեմասերու տասը տոկոսը մեր «Հաւատքի կեանք՝ հիման» ծառայութեան: Անհաւատալի՜ է: Աստուած կարող է գաղափար մը առնել եւ կարելոր բան մը ընել ոչինչէն:



## ՎԵՐՅՈՒՐ՝ ԱՌԱՆՑ ՔՐՏՆԵԼՈՒ

Դուք երբեք տեսա՞ծ էք ձին ամառը՝ երկար վազքեն յետոյ: Անոր մարմինն ամբողջովին պատուած է ճերմակ փրփրոտ քրտինքով: Կարելի է տեսնել, որ ան ծանր աշխատանք կատարած է: Ինձի մշտապէս կը հարցնեն. «Կէ՛րի, մի՞թէ դուք նկատի ունիք, որ ես պէտք չէ աշխատիմ»: Ո՛չ, ես չըսի ատիկա, եւ ո՛չ ալ Աստուծոյ խօսքն այդպէս կ'ըսէ: Բայց մեծ տարբերութիւն կայ, թէ ինչպէս դուք կ'աշխատիք: Որպէս օրինակ, դիտարկենք պատմութիւնը Պետրոսի եւ անոր գործընկերներու մասին, որոնք երկու նաւ ձուկ բռնեցին՝ այնքան շատ, որ նաւերը գրեթէ կը խորտակէին: Անոնք աշխատած էին ամբողջ գիշեր՝ փորձելով ձուկ որսալ, բայց ապարդիւն: Այնուհետեւ եկաւ Յիսուսը եւ գիտութեան խօսքի միջոցով ցոյց տուաւ ձուկին տեղը: Այդ ժամանակ անոնք նոյնպէս կ'աշխատէին, բայց այդ աշխատանքը բոլորովին այլ բնոյթի էր: Անշուշտ, անոնք ջանք կը գործադրէին՝ հանելով այդ ձուկերը: Բայց արդեօ՞ք անոնք ձուկ կ'որսային՝ ատոր ընդունուած իմաստով: Չէ՞ որ անոնք ձուկ չէին փնտռեր:

Մենք կրնանք շատ բաներ փնտռել: Օրինակ՝ կինը կրնայ հաճոյախօսութիւններ փնտռել: Ինչ որ մէկը կրնայ ձեռքը տանիլ գրպանը՝ բանալիներ փնտռելով: Ձկնորսները ձուկ կը փնտռէին՝ որսալու համար: Այդ պարագային, արդեօ՞ք Պետրոսը ձկնորսութիւն կ'ընէր՝ ատոր ընդունուած իմաստով: Ես պատմած եմ ձեզի, որ երբ որսի կ'երթամ, ես եղնիկ կը գտնեմ մօտաւորապէս 40 վայրկեանի մէջ: Արդեօ՞ք ատիկա որս ընել է: Ուրիշ ձեւով ըսելու համար, եթէ

գիտէք, թէ ուր է ձուկը, մի՞թէ դուք իրականութեան մէջ ձկնորսութիւն կ'ընէք: Եթէ ես վստահ եմ, որ եղնիկ կամ եղջերու պիտի որսամ, մի՞թէ աստիկա որսորդութիւն է: Ես կ'ըսեմ այս ամէնը, միայն որպէսզի դուք հասկնաք տարբերութիւնը: Այո, ես կ'աշխատիմ, բայց չեմ աշխատիր ամբողջ գիշեր՝ ոչինչ բռնելով: Ունենալով անհրաժեշտ ամէն ինչ կեանքին մէջ, ես կրնամ աշխատիլ Թագաւորութեան մէջ՝ կատարելով իմ Հօր գործը եւ իրականացնելով իմ նպատակը:

## **Ես կ'անուանէի աստիկա «վերցնել»**

Մատթէոս 17.26բ.-ին մէջ, երբ Պետրոսը եկաւ Յիսուսին քով՝ հարցնելով Անոր, թէ ինչպէս վճարէ իրենց հարկերը, Յիսուսն ըսաւ.

*«Գնա՛ ծովը եւ կարթը նետէ՛ եւ առաջին դուրս ելլող ձուկն ա՛ր, բերանը բա՛ց եւ սատեր մը կը գտնես. ա՛ր այն, տո՛ւր անոնց՝ Իմ եւ քու տեղը»:*

Ուշադրութիւն դարձուցէք, որ Յիսուսը չըսաւ. «Լա՛ւ, Պետրոս, մենք պէտք է հարկեր վճարենք: Ես կ'ըսեմ, թէ ինչ ընես: Գնա՛ քաղաք, մնա՛ հոն մօտաւորապէս երեք ամիս, աշխատանք գտիր, դրամ շահիր, իսկ յետոյ, երբ գումար շահիս եւ վճարես մեր հարկերը, կրկին եկո՛ւր եւ միացի՛ր մեր խումբին»: Ո՛չ, Յիսուսը նման բան մը չըսաւ: Ինչո՞ւ: Քանի որ, եթէ Պետրոսը վերադառնար այս երկրային անէծքի համակարգի մտածելակերպին, ան ստիպուած պիտի ըլլար ձգելու իր առաջադրանքը եւ վազելու դրամին ետեւէն: Փոխարէնը, Յիսուսը ցոյց կու տայ մեզի, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը, եւ ինչպէս մենք պէտք է վարուինք, քանի դէռ կ'ապրինք այս աշխարհին մէջ: Պետրոսի պատասխանը նաեւ ձեր պատասխանն է: Յիսուսը պարզապէս ցոյց տուաւ Պետրոսին, թէ ուր էր մատակարարումը, ինչ միջոց անհրաժեշտ էր՝ այն վերցնելու համար, եւ ան ինչ պէտք է փնտռէր: Պետրոսը միայն պէտք է երթար եւ վերցնէր աստիկա:

Հետեւելով Յիսուսին եւ Անոր աշակերտներուն՝ մենք կը տեսնենք, որ սովորաբար անոնք ապշած ու ցնցուած էին, երբ կը տեսնէին Թագաւորութեան դրսեւորումները: Աստուածաշունչը կ'ըսէ, որ երբ

Յիսուսը չորցուց թզենին Իր խօսքով Մարկոս 11-րդ գլուխին մէջ, Պետրոսը զարմացաւ: Երբ Ղազարոսը դուրս ելաւ գերեզմանէն չորս օր մահացած ըլլալէն յետոյ, աշակերտները զարմացան: Երբ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը շատ ձուկ որսացին, անոնք զարմացան: Տրենտան եւ ես կրկին ու կրկին ըսած ենք զարմանքէն բաց բերաններով. «Դուն տեսա՞ր, թէ ինչ կատարուեցաւ»՝ տարիներ շարունակ նորանոր բաներ սորվելով այն մասին, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը: Սուրբ Հոգիին օգնութեամբ մենք կը վերցնենք, եկէք կարդանք Մատթէոս 6-րդ գլուխը: Իմ Աստուածաշունչին մէջ այս հատուածն ունի «Հոգ մի՛ ընէք» ենթավերնագիրը: Ես հաւնեցայ ասիկա:

*«Ոչ որ կրնայ երկու տէրերու ծառայել, որովհետեւ կա՛մ մէկուն պիտի ատէ եւ միւսին սիրէ, կա՛մ մէկուն պիտի մեծարէ եւ միւսին արհամարհէ: Չէ՛ք կրնար Աստուծոյ ծառայել եւ մամոնային:*

Ասոր համար կ'ըսեմ ձեզի. հոգ մի՛ ընէք ձեր կեանքին համար, թէ ինչ պիտի ուտէք, եւ ինչ պիտի խմէք, եւ ո՛չ ձեր մարմինին համար, թէ ինչ պիտի հագնիք: Չէ՞ որ կեանքն աւելի է կերակուրէն, եւ մարմինը՝ հագուստէն: Մտի՛կ ըրէք Երկինքի թռչուններուն, որ չեն սերմեր, եւ ո՛չ ալ կը հնծեն, եւ ո՛չ ամբարներու մէջ կը ժողվեն, եւ ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ անոնց: Չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւն էք: Հիմա ձեզմէ ո՞վ կրնայ հոգ ընելով իր հասակին վրայ մէկ կանգուն աւելցնել:

Եւ հագուստի համար ի՞նչ հոգ կ'ընէք: Նայեցէ՛ք դաշտի շուշաններուն, թէ ինչպէս կը մեծնան: Ո՛չ ջանք կ'ընեն, եւ ո՛չ կը մանեն: Բայց կ'ըսեմ ձեզի, թէ Սողոմոնն ալ իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս չհագուեցաւ: Իսկ թէ որ դաշտի խոտը, որ այսօր կայ եւ վաղը փոռը կը նետուի, Աստուած այնպէս կը հագցնէ, չէ՞ որ շատ աւելի ձեզի, թերահաւատներ՝:

*Ուրեմն հոգ մի՛ ընէք՝ ըսելով, թէ ի՛նչ պիտի ուտենք, կամ ի՛նչ պիտի խմենք, կամ ի՛նչ պիտի հագնիք: Որովհետեւ*

*այդ ամէնը հեթանոսները կը խնդրեն, որովհետեւ ձեր երկնաւոր Հայրը գիտէ, որ այդ ամէնը պէտք է ձեզի: Սակայն առաջ Աստուծոյ Արքայութիւնը եւ Անոր արդարութիւնը խնդրեցէք, եւ այդ ամէնը կտրուի ձեզի: Ուրեմն վաղուան համար հոգ մի՛ ընէք, որովհետեւ վաղուան օրն իրեն համար հոգ պիտի ընէ: Օրուան համար բաւական է իր նեղութիւնը»:*

Մատթէոս 6.24-34

Յիսուսը կ'ըսէ, որ դուք չէք կրնար ծառայել երկու տէրերու: Թերեւս մտածէք, որ կրնաք, բայց չէք կրնար: Դուք կը սիրէք մէկուն, եւ միայն մէկուն: Ես կ'ըսեմ ձեզի, թէ որուն: Անոր, որուն դուք կը վստահիք՝ ձեր կարիքները լրացնելու համար: Երբ Տէրն ըսաւ ինձի մեր վարձակալած հին գիւղական տունին մէջ, որ ես երբեք ժամանակ չէի յատկացուցած՝ սորվելու համար, թէ ինչպէս կը գործէր Իր Թագաւորութիւնը, Ան նկատի ունէր, որ Ան իրականութեան մէջ իմ տէրը չէր: Ան այն անձնաւորութիւնը չէր, որուն հանդէպ ես լիարժէք վստահութիւն ունէի, եւ որուն ես կը ծառայէի ու կը վստահէի: Անշուշտ, ես եկեղեցի կը յաճախէի, ես առատածեռն էի, ես կը սիրէի Աստուծոյ եւ գիտէի, որ Երկինք կ'երթայի: Բայց երբեք ժամանակ չէի յատկացուցած, որպէսզի սորվէի Աստուծոյ ֆինանսական համակարգի մասին եւ իմանայի, թէ ինչպէս կը գործէ Անոր Թագաւորութիւնը:

*«Որովհետեւ ուր որ ձեր գանձն է, հոն ալ ձեր սրտերը կ'ըլլան»:*

– Դուկաս 12.34

Դանդաղօրէն կարդացէ՛ք այս խօսքը. «Ուր որ ձեր գանձն է, հոն ալ ձեր սրտերը կ'ըլլան»: Շատերը կը սիրեն շրջել այս խօսքը եւ ըսել. «Ուր ձեր սիրտն է, հոն ալ ձեր գանձն է»: Բայց ատիկա ճիշդ չէ, քանի որ այս խօսքն այլ բան կ'ըսէ: Մարդիկ կը մտածեն, որ ատիկա կը նշանակէ, որ անոնք կրնան սիրել Աստուծոյ Կիրակի

առաւօտեան, եւ հոն կ'ըլլայ իրենց գանձը: Ատիկա ՍԽԱ՛Լ է: Չեր գանձն այն համակարգի մէջ է, որուն դուք կը վստահիք՝ ձեր կարիքները լրացնելու համար:

Յիսուսը կ'ըսէ, որ մենք ամէն ինչ հակառակ կ'ընենք:

Աստուած կը ցանկայ, որ առաջինը մեր կեանքին մէջ ըլլայ Ինքը, ոչ թէ դրամը: Եթէ դրամն է մեր գանձը, այն կ'ըլլայ առաջինը, եւ այն կը պահանջէ մեր ժամանակը, առաջնահերթութիւնները եւ սէրը: Ահա թէ ինչու Պետրոսը պէտք չէ ձգեր իր առաջադրանքը եւ երթար գումար շահելու՝ հարկ վճարելու համար: Ահա թէ ինչու Աստուած կը ցանկայ սորվեցնել մեզի առնել, ոչ թէ քրտնիլ: Յիսուսը կը ցանկայ սորվեցնել մեզի Թագաւորութեան ճանապարհները՝ այն, թէ ինչպէս վստահիլ Աստուծոյ մեր մատակարարման համար, որպէսզի մեր սրտերն ազատ ըլլան, եւ մենք սիրենք Աստուծոյ մեր ամբողջ սրտով: Յիսուսն ըսաւ. «Չէ՞ որ կեանքը աւելի է կերակուրէն, եւ մարմինը՝ հագուստէն»: Ան նկատի ունէր, որ կեանքի նպատակն առարկաներ ունենալը չէ: Կեանքի նպատակն է, որպէսզի ունեցուածքը ծառայէ ձեզի եւ ձեր առաջադրանքին այս երկրի վրայ:

Սակայն ի՞նչ կը տեսնենք մենք: Մարդոց մեծ մասն անդադար վազքի մէջ է՝ ծառայելով ունեցուածքին: Մարդիկ վազքի մէջ են, որպէսզի վճարեն իրենց կալուածագրաւային վարկը, ինքնաշարժի վարկը եւ փակեն հաշիւները: Յիսուսը

**ԵԹԷ ԴՐԱՄՆ Է ՄԵՐ  
ԳԱՆՁԸ, ԱՅՆ Կ'ԸԼԱՅ  
ԱՌԱՋԻՆԸ, ԵՒ ԱՅՆ ԿԸ  
ՊԱՀԱՆՋԷ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ,  
ԱՌԱՋՆԱԿԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԵՒ ՍԷՐԸ:**

կ'ըսէ, որ ասիկա չէ կեանքը: Մի՛ յարձակիք իմ վրայ՝ ըսելով. «Կը նշանակէ՞ Յիսուսը կ'ըսէ, որ ունեցուածքը վատ բան է»: Ո՛չ, Ան նման բան չ'ըսեր: Ան ըսաւ 33-րդ խօսքին մէջ, որ եթէ դուք, նախ, փնտռէք Աստուծոյ Թագաւորութիւնը եւ Անոր արդարութիւնը, այդ ամէնը կ'աւելնայ ձեզի: Խնդիրը ոչ թէ ունեցուածքն է, այլ սիրտը: Եթէ Աստուած չ'ուզեր, որ մենք որեւէ բան ունենայինք, Յիսուսն այդպէս ալ կ'ըսէր: Փոխարէնը Ան կ'ըսէ, որ այն ամէնը, ինչին ետեւէն կը



վազէ այս աշխարհը, կաւելնայ մեզի, եթէ ապրինք Աստուծոյ ուզած կերպով:

Ուրիշ ձեւով ըսելու համար, կեանքի նպատակն ունեցուածքին ծառայելը չէ, սակայն, դժբախտաբար, մարդոց մեծ մասը ճիշդ այդպէս կը վարուի: Անոնք չունին ընտրութիւն. անոնք ստրուկ են: Անկարելի է ծառայել երկու տէրերու, եւ ունեցուածքին ծառայելը կեանք չէ: Յիսուսը կը շարունակէ՝ բացատրելով, որ կայ մէկ ուրիշ համակարգ՝ ֆինանսական խաղաղութեան եւ մատակարարման վայր, որ կու տայ ձեզի ազատութիւն՝ ապրելու համար: Այն կը կոչուի Աստուծոյ Թագաւորութիւն:

Մատթէոս 6-րդ գլուխին մէջ Իր ուսուցման մէջ Յիսուսը երկու օրինակ կը բերէ այն մասին, թէ ինչպիսին է Թագաւորութիւնը: Ան կ'ըսէ. «Մտի՛կ ըրէք Երկինքի թռչուններուն, որ չեն սերմեր, եւ ո՛չ ալ կը հնձեն, եւ ո՛չ ամբարներու մէջ կը ժողվեն, եւ ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ անոնց» (Խս. 26):

Թռչունները որդեր չեն բուծեր:

Անոնք իրենց վրայ չեն առներ առօրեայ կարիքներու հոգը: Ո՛չ, Հայրը կը կերակրէ անոնց: Անոնք պարզապէս պէտք է վերցնեն այն, ինչի կարիքը որ ունին ամէն օր: Դուք կը հասկնա՞ք: Անոնք չեն քրտնի՞ր՝ տանջալի աշխատանք կատարելով, որ պահպանեն իրենց կեանքը. անոնք կը վերցնեն:

Ծաղիկները ջանք չեն ըներ եւ չեն մաներ:

*«Եւ հազուստի համար ի՞նչ հոգ կ'ընէք: Նայեցէ՛ք դաշտի շուշաններուն, թէ ինչպէս կը մեծնան: Ո՛չ ջանք կ'ընեն, եւ ո՛չ կը մանեն: Բայց կ'ըսեն ձեզի, թէ Սողոմոնն ալ իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս չհագուեցաւ» (Խս. 28):*

Ծաղիկները չեն հագնիր տանջալի աշխատանքով եւ քրտնիքով: Ո՛չ, Հայրը կը հագցնէ անոնց: Յիսուսը կը շարունակէ՝ յայտնելով ձեզի եւ ինձի մեր պատասխանը: Կայ կեանքի մէկ այլ ճանապարհ՝

Թագաւորութեան ճանապարհը: Յիսուսը կ'ըսէ. «Առաջ Աստուծոյ Արքայութիւնը եւ Անոր արդարութիւնը խնդրեցէք (կամ՝ փնտռեցէք), եւ այդ ամէնը կը տրուի ձեզի» (Խս. 33): Ի՞նչ կը նշանակէ փնտռել Աստուծոյ Թագաւորութիւնը: Ատիկա կը նշանակէ հասկնալ, թէ ինչպէս կը գործէ այն: Ուսումնասիրել այն օրէնքները, որոնք կը կառավարեն այն: Սորվիլ, թէ ինչպէս կը գործէ Աստուծոյ համակարգը:

Եթէ օդանաւով իջեցնեն ձեզի երկիր մը, ուր նախկինին չէիք գտնուած, ձեր առաջին գործը պիտի ըլլար սորվիլը, եւ ինչպիսին է այդ թագաւորութեան կեանքը՝ ինչով անոնք կը սնուին, ինչպէս կը գնեն եւ կը վաճառեն, եւ ինչ օրէնքներով կը կառավարուի անոնց երկիրը: Դուք պէտք է սորվիք, թէ ինչպէս կը կառավարուի Աստուծոյ Թագաւորութիւնը, որպէսզի կարենաք վայելել ատոր բաժինը ըլլալու առաւելութիւնները: Ես գիտեմ իմ իսկ փորձառութենէն, թէ որքան բաներէ գրկուած էի, երբ չէի գիտեր, թէ ինչպէս այն կը կառավարուի: Ձեր պատասխանը պարզ է: Ձեզի պէտք է ֆինանսական յեղափոխութիւն: Յեղափոխութեան ժամանակ մարդիկ կ'ընդվզին իրենց կառավարութեան դէմ եւ նոր կառավարութիւն կը կարգեն: Դուք պէտք է նոյնը ընէք: Դուք պէտք է մէկ կողմ նետէք այս երկրային անէծքի համակարգի հին կառավարումը՝ իր կարիքներով եւ յուսահատութեամբ, եւ վայելել նոր կեանք Աստուծոյ Թագաւորութեան մէջ՝ նոր օրէնքներով, առանց կարիքներու եւ մեծ ուրախութեամբ:



## ԹՈՉԻԼԸ ՔԱԼԵԼԵՆ ԴԻՒՐԻՆ Է

Եթէ ետ երթայիք ժամանակով եւ ուզէիք հասնիլ Նիւ Եորքէն Սան Ֆրանսիսքօ, դուք պէտք է նաւ նստէիք: Ուղեւորութիւնը Հարաւային Ամերիկան շրջանցող ճանապարհով, որ կար Փանամայի ջրանցքը բանալէ առաջ, կրնար տեսել մօտաւորապէս մէկ տարի: Աւելի ուշ, երբ բացուեցաւ Օրեկոնի ճանապարհը, դուք կրնայիք հասնիլ Սան Ֆրանսիսքօ չորս ամսուան մէջ: Այսօր կրնաք հասնիլ հոն չորս ժամուան մէջ: Ինչպէ՞ս: Օգտուելով նոր օրէնքէն՝ ամբարձիչ ուժի օրէնքէն: Ամբարձիչ ուժի օրէնքը միշտ եղած է (թռչունները կ'օգտագործեն այն ամէն օր), բայց մարդիկ չէին հասկնար այն: Նման թռիչքի բնական օրէնքներուն, քրիստոնեաները մեծ մասամբ պարզապէս անտեղեակ են Թագաւորութեան օրէնքներէն, թէեւ անոնք կարդացած են ատոնց մասին գրեթէ իրենց ամբողջ կեանքին մէջ: Աստուծոյ Թագաւորութիւնը հոս է, այն ձեր ներսն է, եւ դուք աստոր արտօնութիւնները ստանալու օրինական իրաւունք ունիք: Բնական աշխարհին մէջ թռիչքի օրէնքները չեն չեղարկեր ծանրութեան ուժի օրէնքը, այլ կը գերազանցեն այն: Ուրիշ ձեւով ըսելու համար, քանի դեռ դուք կը կիրառէք թռիչքը վերահսկող օրէնքները, դուք կը թռչիք, թէեւ ծանրութեան ուժը կը շարունակէ գործել: Դուք պէտք է համաձայնիք, որ շատ ատելի դիւրին է թռչիլ չորս ժամ, քան ճանապարհորդել նաւով մէկ տարի: Այդ պարագային, սկսէք արագ գործել եւ ձգեցէք ձեր հին դանդաղագործ մեթոտները:

Դուք երբեք տեսա՞ծ էք միապետ թիթեր: Հոս՝ Օհայոյի մէջ, աշնան

ընթացքին կարելի է տեսնել հարիւրաւոր միապետ թիթեռներ, որոնք հարաւ կը թռչին՝ ձմեռելու համար: Անոնք կը թռչին Մեքսիքա՝ գրեթէ 3.000 քիլոմէթր ճանապարհ անցնելով: Բայց հետաքրքրականը հետեւեալն է. անոնք երբեք չեն եղած հոն: Ուրկէ՞ գիտեն, թէ ինչպէս կամ երբ երթալ հոն: Եթէ Աստուած գոյատեւման միջոց ստեղծած է միապետ թիթեռներու համար, Ան ունի ճանապարհ նաեւ ձեզի համար: Ինչպէ՞ս թիթեռին կը յաջողի ասիկա:

Թիթեռի կեանքին մէջ տեղի կ'ունենայ կերպափոխութիւն (յունարէն «մեթամորֆոզա», որուն «մորֆ» արմատը կը նշանակէ փոփոխութիւն): Գրեթէ բոլորը գիտեն, որ սկիզբը միապետը թիթեռ չէ. ան թրթուր է: Թրթուր ըլլալու փուլին մէջ ան կ'ապրի մէկ կաթնաթոռ բոյսի վրայ եւ կը մեծնայ, մինչեւ որ պատրաստ կը դառնայ խոշոր փոփոխութեան համար: Որոշակի չափի հասնելէն յետոյ ան բոժոժ կը պատրաստէ. այն պարկուճի պէս բան մըն է, որուն մէջ թրթուրը կը փակուի 7-15 օր: Ատորմէ յետոյ բոժոժէն դուրս կու գայ թիթեռը, որուն տեսքը եւ վարքը կտրուկ կը տարբերի այն փուլէն, երբ ան թրթուր էր: Թիթեռը կ'ապրի գոյութեան բոլորովին այլ մակարդակի վրայ: Ան կը թռչի՝ Փոխարէնը մէկ կաթնաթոռ բոյսով սահմանափակուիլը, այժմ ան կրնայ թռչիլ՝ ուր կը ցանկայ: Ան գեղեցիկ է. ան ունի շնորհք եւ վայելչութիւն, որուն նմանը չկայ բնութեան մէջ:

Բայց ամենագարմանալի առաւելութիւնը, որ ան կը ստանայ, թռչելով փորձանքէն փախչելու կարողութիւնն է: Գիտէ՞ք, որ միապետ թիթեռը չի կրնար ապրիլ պաղ ձմեռնային ամիսներուն, որոնք կու գան հիւսիսային կլիմայական գօտիներուն մէջ: Ան կը մահանայ: Բայց Աստուած այնպէս ըրած է, որ այդ արարածը կարենայ թռչելով հեռանալ փորձանքէն՝ անցնելով 3.000 քիլոմէթր եւ երթալով տեղ մը, ուր նախկինին երբեք չէ եղած: Ինչպէ՞ս անոր կը յաջողի ասիկա: Կերպափոխման շնորհիւ: Եւ Աստուածաշունչը կ'ըսէ, որ նոյն գործընթացի միջոցով դուք նոյնպէս կրնաք վեր թռչիլ ձեր խնդիրներէն՝ նման միապետ թիթեռի, նոյնիսկ այնպիսի իրավիճակներուն մէջ, որոնցմէ բոլորովին ելք չէք տեսներ:

Սթիւը, որ իմ ընկերն է, գիշեր մը ինքնաշարժով տուն վերադառնալու ատեն ճանապարհին կը հարուածէ եղնիկի

մը, ինչին պատճառով անոր ինքնաշարժը բոլորովին կը փճանայ: Դժբախտաբար, անոնց միակ մնացած ընտանեկան ինքնաշարժի շարժիչն անսարք կը դառնայ մէկ շաբաթ յետոյ: Սթիւի ապահովագրական ընկերութիւնը կը տրամադրէ անոր անվճար երկշաբաթեայ ինքնաշարժի վարձոյթ իր մեքենայի կորուստի համար, բայց անոնց ընտանեկան ինքնաշարժը ենթակայ չէր որեւէ ապահովագրական փոխհատուցման, որն ալ կ'օգնէր անոր նոր ինքնաշարժ գնելու: Սթիւը եւ Քա'րէնը չէին գիտեր ինչ ընել: Սթիւի գործին համար ինքնաշարժ ունենալը պարտադիր էր, քանի որ ան վաճառքի գործակալ էր եւ ամէն երեկոյ յաճախորդներու կ'այցելէր:

Անոնք արդէն երկար ժամանակ ծանօթ էին Թագաւորութեան ուսմունքին եւ գիտէին, որ Աստուած էր իրենց պատասխանը: Այդ ժամանակ անոնք չունէին բաւականաչափ խնայած գումար՝ նոր ինքնաշարժ գնելու համար: Այնպէս որ, գիտէին, որ իրենց միակ յոյսն Աստուած էր եւ Անոր Թագաւորութիւնը: Անվճար վարձոյթի երկու շաբաթն արագօրէն կ'աւարտէր, եւ անոնք դեռ չունէին պատասխան: Զարմանալիօրէն, վարձոյթի ինքնաշարժն ետ վերադարձնելու նախօրէին Սթիւին կը հեռաձայնէ մարդ մը՝ ըսելով, որ ինքն ունի ինքնաշարժ մը, որ կը ցանկայ նուիրել, եւ քանի որ ան գիտէր, որ Սթիւը կը յաճախէր իմ եկեղեցի, ան կը հեռաձայնէ եւ կը հարցնէ՝ արդեօ՞ք ան կը ճանչնար որեւէ ընտանիք մը մեր եկեղեցիին մէջ, որ ինքնաշարժի պէտք ունէր: Սթիւն արագօրէն կը բացատրէ իր իրավիճակը եւ կ'ըսէ, որ ինքը շնորհակալ կ'ըլլար, եթէ կարենար առնել այդ մեքենան իր եւ իր ընտանիքին համար: Ատիկա հրաշալի էր, բայց Սթիւը վեց երեխայ ունէր, եւ այդ փոքր ինքնաշարժը բաւական չէր անոր համար: Այնուամենայնիւ, այդ ինքնաշարժի յայտնուիլը մեծապէս խրախուսեց անոնց:

Յաջորդ Կիրակի Սթիւը եւ անոր կինն առջեւ եկան հաւաքոյթէն յետոյ եւ խնդրեցին ինձմէ միաբան աղօթել իրենց յաջորդ ինքնաշարժի համար: Քա'րէնն ըսաւ.

- Հովի՛ւ, մենք կը հաւատանք, որ կը ստանանք Հոնտա Օտիսէյ, եւ կ'ուզենք, որ համաձայնիք մեզի հետ՝ մեր սերմը ցանելու ժամանակ:
- Անշո՛ւշտ, - ըսի ես:

Մենք աղօթեցինք: Ես իսկապէս չեմ կրնար յիշել, թէ քանի շաբաթ անցաւ, բայց ոչ շատ, թերեւս երեք կամ չորս, երբ մենք այցելեցինք անոնց: Երբ անոնց տանն էինք, մենք մտանք խոհանոց, եւ սառնարանի վրայ փակցուած էր Հոնտա Օտիսէյի լուսանկար: Քա՛րէնն ըսաւ, որ ամէն օր, երբ կը բանար սառնարանը, ան կը դնէր ձեռքն այդ լուսանկարի վրայ եւ կը գոհանար Աստուծո՛մէ այդ ինքնաշարժի համար:

Մօտաւորապէս մէկ շաբաթ յետոյ իմ քարտուղարուիին հեռաձայնեց ինձի.

- Հովի՛ւ, այսօր մենք հետաքրքրական զանգ մը ստացանք: - Մարդ մը կը ցանկայ ինքնաշարժ նուիրել եկեղեցիին: Այդ ժամանակ ոչ ոք գիտէր, որ Սթիւը եւ Քա՛րէնը կը հաւատային նոր ինքնաշարժի համար, եւ ո՛չ ալ՝ թէ ինչպիսի ինքնաշարժ կը ցանկային ունենալ: - Այդ ինքնաշարժը Հոնտա Օտիսէյ է, - ըսաւ ան:

- Ի՞նչ վիճակի մէջ է այն:

Ան ըսաւ, որ այդ մարդուն խօսքով՝ ինքնաշարժը գերազանց վիճակի մէջ էր՝ առանց որեւէ գծուածքի, եւ վազքն ընդամէնը 110.000 քիլոմետր էր: Ես ըսի անոր, որ գիտեմ, թէ որուն այն պէտք է տրուի: Պատմեցի Տրենտային այդ մասին եւ խնդրեցի անոր հեռաձայնել Քա՛րէնին: Տրենտան հեռաձայնեց Քա՛րէնին եւ հարցուց, թէ ինչպէս էին անոնց գործերը, եւ արդեօ՞ք կար որեւէ նորութիւն իրենց անհրաժեշտ ինքնաշարժի վերաբերեալ: Քա՛րէնը պատասխանեց.

- Ես եւս մէկ օրով մօտ եմ ասոր:

- Դուն շատ աւելի մօտ ես ասոր, քան կը մտածես, - ըսաւ Տրենտան: - Եկո՛ւր եւ վերցո՛ւր այն:

Ես կը սիրեմ նման պատմութիւններ, իսկ դո՞ւք: Այս պատմութիւնն ունի շարունակութիւն, քանի որ Սթիւի եւ Քա՛րէնի վստահութիւնը Թագաւորութեան հանդէպ աւելցաւ:

Մօտաւորապէս այդ ժամանակ Սթիւը եւ Քա՛րէնը կը ցանկային տուն ունենալ: Անոնք քանի մը տարի շարունակ տուն կը վարձակալէին, եւ կը զգային, որ ժամանակն էր, որ ունենային իրենց սեփական տունը: Սակայն կրկին, անոնք չունէին բաւականաչափ

գումար՝ կանխավճարի համար: Անոնք այցելած էին բազմաթիւ դրամատուներ՝ փորձելով հողատարածք ձեռք բերել, բայց բոլոր դրամատուներն ունէին նոյն պահանջը՝ 50 տոկոս կանխավճար: Այդ պահուն այդ երիտասարդ ընտանիքը չունէր բաւականաչափ գումար՝ նման պահանջ կատարելու համար: Քա՛րէնը յուսալքուած էր, եւ ան խօսեցաւ հետս այդ մասին: Մենք համաձայնեցանք, որ Աստուած ճանապարհ կը բանայ: Եւ անոնք սկսան փնտռել այլ հողատարածքներ եւ տուներ:

**ՇԱՏ ՅԱՃԱՆ ՄԵՆՔ ԿՐ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵՆՔ ՄԵՉԻ՝  
ԿՇՈՒԼՈՎ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ԱՅՆ  
ԲԱՆՈՎ, ԻՆՉ ԱՆՁՆԱՊԷՍ  
ՀՆԱՐԱԻՐ ԿՐ ՀԱՍԱՐԵՆՔ:  
ԲԱՅՑ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՄԱՐ  
ԱՄԷՆ ԻՆՉ ՀՆԱՐԱԻՐ Է, ԵԹԵ  
ՊԱՐՁԱՊԷՍ ԹՈՅԼ ՏԱՆՔ, ՈՐ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ ՓՈԽԵ  
ՄԵՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ:**

Հողատարածք մը, որ անոնք տեսան, գրաւեց անոնց ուշադրութիւնը: Անոնք կը ցանկային տուն կառուցել ճիշդ այդ վայրը: Այդ 22 հեքթար հողատարածքը կը վաճառուէր ընդամէնը 55.000 տոլարով: Կրկին, անոնք չունէին անհրաժեշտ կանխավճարը: Սակայն ես գիտէի փոքր տեղական դրամատուների մը մասին (որն այդ տարածքի մէջ չէր, այլ կը գտնուէր մօտաւորապէս երկու ժամուան հեռաւորութեան վրայ ինքնաշարժով), որ կ'ընդունուէր ձեռք բերուող հողատարածքը որպէս կանխավճարի մաս: Այդ հողատարածքը գնահատուեցաւ 100.000 տոլարով, եւ դրամատունն ըսաւ, որ անոնք ընդհանրապէս կանխավճար տալու պէտք չունին: Այնպէս որ, անոնք գնեցին այդ հողատարածքը՝ առանց կանխավճարի, եւ գեղեցիկ տուն կառուցեցին այդ գեղեցիկ վայրին մէջ՝ առանց նախապէս որեւէ գումար տալու: Սթին ու Քա՛րէնը կը շարունակեն բարգաւաճիլ մինչեւ օրս, քանի որ անոնք, ինչպէս Տրենտան եւ ես, կը քալեն Թագաւորութեան ճանապարհներով:

Ես նման պատմութիւններ ունիմ իմ եկեղեցւոյ անդամներէն շատերու մասին եւ բոլորովին կ'ակնկալեմ նոյն տեսակի պատմութիւններ ձեր կեանքին մէջ: Աստուած կրնայ ընել զարմանալի,



իսկ երբեմն անհաւանական բաներ՝ մեր կարիքները լրացնելու համար: Շատ յաճախ մենք կը սահմանափակենք մեզ՝ կշռելով մեր ապագան այն բանով, ինչ անձնապէս հնարաւոր կը համարենք: Բայց Աստուծոյ համար ամէն ինչ հնարաւոր է, եթէ պարզապէս թոյլ տանք, որ Աստուծոյ Խօսքը փոխէ մեր մտածելակերպը:

*«Մի՛ համապատասխանիք այս աշխարհի օրինակին, այլ վերափոխուեցէ՛ք՝ նորոգելով ձեր միտքը: Այդ պարագային դուք կրնաք քննել եւ հաստատ իմանալ, թէ որն է Աստուծոյ կամքը՝ Անոր բարի, հաճելի եւ կատարեալ կամքը»:*

– Հռովմայեցիս 12.2, NIV

Որպէս հաւատացեալներ, մենք պէտք չէ համապատասխանինք այս աշխարհի օրինակին: Պօղոսը նկատի ունի այս երկրի անէծքի համակարգը եւ ատոր կենսաոճը, մասնաւորապէս այն, թէ ինչպէս մենք կը մտածենք: Երբեք եղա՞ծ է, որ զգեստ կարէք կամ ինչ որ բան պատրաստէք՝ օգտուելով ինչ որ գծագիրէ: Եթէ այո, եւ ձեզի հաճելի չէ արդիւնքը, ի՞նչ կ'ըլլայ, եթէ կրկին փորձէ՛ք՝ նոյն գծագիրով: Դուք կը ստանաք միեւնոյն արդիւնքը: Այնպէս որ, Պօղոսը կ'ըսէ, որ մենք պէտք է վերափոխուինք՝ նորոգելով մեր միտքը. մենք պէտք է փոխենք այն, թէ ինչպէս մենք կ'ապրինք: Մեր մտածելակերպը պէտք է տարբերի այս աշխարհի մտածելակերպէն:

«Վերափոխուիլ» բառն այս խօսքին մէջ «մորֆ» բառն է, որուն մասին քիչ առաջ խօսեցանք, եւ այն կը նշանակէ փոփոխութիւն: Մեզի անհրաժեշտ է կերպափոխութի՛ւն: Մենք պէտք է մտածենք Աստուծոյ նման: Մենք պէտք է մտածենք Թագաւորութեանը վայել կերպով: Փոխարէնը մտածենք՝ ինչպէս տգեղ թրթուր մը, որ ծուղակի մէջ է ձմրան պատճառով եւ դատապարտուած է մահուան, պէտք է վստահինք Աստուծոյ բոլորովին նոր կեանքի համար: Այդ պարագային, եւ միայն այդ պարագային մենք կարողութիւն կ'ունենանք թռչելով վեր բարձրանալ մեր խնդիրներէն եւ կ'իմանանք, թէ ո՛րն է Աստուծոյ հաճելի եւ կատարեալ կամքն ամէն իրավիճակի մէջ: Եթէ մենք չընդունինք մտածելակերպի փոփոխութիւնը, մեր հին

մտածելակերպը մշտապես պիտի ըսէ. «Ո՛չ, ո՛չ, ես չե՛մ կրնամ ընել ատիկա: Ո՛Չ, ես չեմ տեսներ, թէ ինչպէս ատիկա կրնայ ըլլալ»:

Ո՞վ կրնար մտածել, որ այդ տգեղ թրթուրը երբեք կարողութիւն կ'ունենայ թռչելու շնորհքով եւ կատարելութեամբ: Եթէ նայիք թրթուրին եւ մտածէք, որ այն պէտք է 3.000 քիլոմէթր ճանապարհ անցնի, դուք պարզապէս կը տարուբերէք ձեր գլուխը եւ կ'ըսէք. «ԱՆՆԱՐ Է»: Բայց Աստուծոյ Թագաւորութեան մէջ ամէն ինչ հնարաւոր է: Տեսէ՛ք: Երբ կը սկսի իմ հեռուստատեսային հաղորդումը, ինծի կը ներկայացնեն որպէս ֆինանսական փորձագէտ: Երբեմն ես կը յիշեմ այն օրերը, երբ դեռ թրթուր էի, եւ կը մտածեմ. «Որքա՛ն զարմանալի է»:

Քանի դեռ մենք կը խօսինք թռչելու մասին, հազիւ որ Տրենտան եւ ես սկսանք սորվիլ, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը, եւ որոշեցի, որ կը ցանկամ օդանաւ ունենալ: Ես օդանաւ կը քշէի 19 տարեկանէն: Ես միշտ օդանաւեր վարձած եմ, բայց երբեք չեմ ունեցած իմ սեփականը, եւ անշուշտ, դուք գիտէք, թէ ինչու. քանի որ դրամ չունէի: Այնպէս որ, օր մը որոշեցի, որ այդպէս պէտք չէ ըլլայ, եւ որ օդանաւը դժուար բան չէ Աստուծոյ Թագաւորութեան համար: Ինչո՞ւ ես կը սահմանափակէի Թագաւորութիւնն այն բանով, ինչ որ անձնապէս ես հնարաւոր կը համարէի: Ես չէք մը դուրս գրեցի եւ նշումներու բաժինին մէջ գրեցի. «Իմ օդանաւի համար» (եւ թուարկեցի մանրամասնութիւնները): Ես դրի իմ ձեռքերը այդ չէքին վրայ եւ ուղարկեցի այն փոստով՝ հաւատալով, որ ստացայ այդ օդանաւն աղօթելու ժամանակ՝ համաձայն Մարկոս 11.24-ի:

*«Ասոր համար կ'ըսեմ ձեզի, թէ ամէն ինչ, որ աղօթք ընելով խնդրէք, հաւատացէ՛ք, թէ պիտի առնէք (կամ՝ «որ ստացած էք»), եւ պիտի ըլլայ ձեզի»:*

Մէկ ամիս ալ չէր անցած, եւ ես գացի բժիշկի՝ հերթական ստուգման: Ես զարմացայ, երբ յանկարծ բժիշկն ըսաւ.

- Դուք կը ճանչնա՞ք ինչ որ մէկուն, որ կը ցանկայ օդանաւ գնել:  
Ես մտածեցի, որ ատիկա տարօրինակ էր:

- Ի՞նչ տեսակի օդանաւ, - հարցուցի:

Ես զարմացայ եւ ոգեշնչուեցայ, քանի որ այդ օդանաւը ճիշդ այնպիսին էր, որուն համար ես հաւատքով աղօթած էի: Այնպէս որ, հարցուցի անոր, թէ ուր կրնամ տեսնել այն, եւ ան ըսաւ, որ այն մեր շրջանի օդակայանին մէջ է, որ կը գտնուէր իմ տան կողքին: Թոյլ տուէք բացատրել: Իմ հողատարածքը կը սահմանակցի մեր շրջանի օդակայանին: Իւրաքանչիւր օդանաւ, որ վայրէջք կը կատարէ հոն, կը թռչի ուղիղ իմ տան վրայէն: Այն, որ ես կը հետեւէի, թէ ինչպէս օդանաւերն ամբողջ օրը կ'երթային եւ կու գային, եւ որ օդակայանի թռիչքուղին ընդամէնը մէկուկէս քիլոմէթրով հեռու էր իմ տան մուտքի դուռէն, կը նշանակէր, որ ես պարզապէս պէ՛տք է օդանաւ ունենայի:

Ես խնդրեցի իմ ընկերոջը, որ ամբողջ կեանքին մէջ կը թռչէր եւ նոյնպէս թռիչքներու հրահանգիչ էր, գալ հետս եւ տեսնել այդ օդանաւը: Երբ մենք կը գննէինք այն, ես գիտէի, որ այդ օդանաւն իմս էր. այն գերազանց վիճակի մէջ էր: Այդ օդանաւը ճիշդ այն էր, ինչ ես կը ցանկայի ունենալ: Այնուամենայնիւ, կար միայն մէկ խնդիր՝ նոյն խնդիրը, որն ունէի տարիներ շարունակ, երբ կը ցանկայի օդանաւ ունենալ. ես չունէի դրամ ասոր համար: Երբեք ունեցա՞ծ էք այս խնդիրը: Բայց այս անգամ ես վախով ետ պիտի չընկրկէի: Գիտէի, որ այդ օդանաւն իմս էր. ես պարզապէս դեռ չէի գիտեր, թէ ինչպէս Աստուած միջոցներ պիտի տայ ինձի ասոր համար:

Այդ պարագային երկու ամիս առաջ Տրենտան եւ ես գրասենեակային տարածք կը փնտռէինք մեր ընկերութեան համար: Մենք գիտէինք, թէ ուր կ'ուզէինք, որ այն ըլլար, բայց այդ տարածքին մէջ ոչինչ կը վաճառուէր: Այնպէս որ, սկսանք տարածք փնտռել այլ վայրերուն մէջ: Մենք գտանք երկու շէնք, որոնք համարեա՛ր գնեցինք, բայց երկու պարագային ալ արգելք զգացինք մեր հոգիին մէջ: Մենք շարունակ կը վերադառնայինք այն վայրը, ուր, ինչպէս գիտէինք, պէտք է ըլլար մեր գրասենեակը՝ յուսալով ինչ որ տարածք գտնել: Շարունակ կ'աղօթէինք ասոր համար, եւ օր մը հայրս հեռաձայնեց ինձի.

- Ես գիտեմ՝ դուն կ'ըսես, որ ասիկա Աստուծմէ է, բայց մայրդ եւ ես խօսեցանք եւ կ'ուզենք նուիրել ձեզի մեր շէնքը՝ ձեր գրասենեակին համար:

Այն շէնքը, որ կը պատկանէր անոնց, ճիշդ այն վայրին մէջ էր, ուր ես յոյս ունէի տարածք գտնել՝ մեր գործը տեղափոխելու համար: Ես ցնցուած էի:

Որպէսզի հասկնաք, թէ ինչ տեղի ունեցաւ, դուք պէտք է իմանաք, որ այդ ժամանակ իմ հայրը հաւատացեալ չէր: Ան շատ անպարկեշտ ձեւով կ'արծազանգէր, երբ անոր քով կը յիշատակէին Աստուծոյ: Անոր արծազանգն այնքան տհաճ էր, որ ես կարողութիւն չէի ունենար խօսելու անոր հետ Աստուծոյ մասին: Ես նոյնիսկ կ'աղօթէի, որ Աստուած ուղարկէր ինչ որ մէկուն, որ կարողութիւն կ'ունենար քարոզելու անոր Քրիստոսի մասին: Ես գիտէի, որ չէի կրնար փրկութեան բերել անոր. ան չէր լսեր ինծի: Բայց իմ հայրը փրկուեցաւ քանի մը տարի յետոյ՝ 80 տարեկանին: Ջարմանալի է, բայց ան փրկուեցաւ՝ դիտելով մեր հեռուստահաղորդումները եւ տեսնելով այն զարմանալի գործերը, որոնք Աստուած կ'ընէր: Անոր կեանքի վերջին երեք ու կէս տարուան մէջ ան փոխուած մարդ էր եւ եկեղեցւոյ մէջ էր ամէն շաբաթավերջին:

Մէկ անգամ, հաւաքոյթի աւարտէն յետոյ, երբ կը քալէի նստարաններու կողքով, տեսայ, որ հայրս կը զրուցէր մեր եկեղեցւոյ անդամներէն մէկուն հետ, որուն ան կը ճանչնար տարիներ շարունակ: Երբ կը մօտենայի անոնց, լսեցի, որ այդ մարդը կը հարցնէ հօրս, թէ ինչու սկսած է եկեղեցի յաճախել: Հայրս պատասխանեց, որ ինքը տեսած էր շատ բաներ, որոնք չէր կրնար բացատրել: Փա՛ռք Աստուծոյ: Ճիշդ այդպէս ալ պէտք է ըլլայ:

Բայց մենք պէտք է վերադառնանք հօրս հեռախօսազանգին այդ շէնքի վերաբերեալ, երբ ան դեռ փրկուած չէր: Տրեւտան եւ ես ցնցուած էինք, երբ ան նուիրեց այդ

**ԻՄ ԿԵԱՆՔԸ, ՈՐ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒԱԾ ԷՐ  
ԳՈՅԱՏԵՄԱՄԲ ԵՒ ՎԱԽՈՎ,  
ՎԵՐԱՓՈԽՈՒԱԾ ԷՐ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԹԱԳԱՒՐՈՒԹԵԱՄԲ:  
ՕԳՏՈՒԵԼՈՎ ԹԱԳԱՒՐՈՒԹԵԱՆ  
ՕՐԷՆՔՆԵՐԷՆ՝ ԵՍ  
ԳՏԱՅ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ  
ՀՆԱՐԱՒՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ  
ԼԵՑՈՒՆ ԿԵԱՆՔ:**

շէնքը մեզի: Անշուշտ, գիտէինք, որ ստիկա Աստուծմէ էր, եւ մենք պատասխանեցինք իօրս այդ ժամանակ.

- Այո՛, հայրիկ, դուն ճի՛շդ ես, ասիկա Աստուծմէ է:

Այդ շէնքը հիմնովին վերանորոգման կարիք ունէր, որպէսզի համապատասխանէր առեւտրական չափանիշներուն եւ ծառայէր մեզի որպէս գրասենեակ: Հայրս նուիրեց մեզի այդ շէնքը Ղերկտեմբեր ամսուն, եւ ես պիտի սպասէի մինչեւ գարուն՝ վերանորոգումը սկսելու համար: Շէնքը փակուած էր ամբողջ ծմրան ընթացքին: Ոչ ոք կ'օգտագործէր այն, եւ հայրս ըսաւ ինծի, որ անջատած է ջուրը: Ձմեռնային ամիսներն անցան, ինչպէս նաեւ անցաւ մէկ շաբաթ այն բանէն յետոյ, երբ ես գացի՝ օդանաւը տեսնելու համար: Եւ օր մը եղբայրս հեռաձայնեց ինծի եւ ըսաւ, որ աւելի լաւ է՝ երթամ իմ շէնքը, քանի որ շէնքէն ջուր կը լեցուէր փողոց: Ես գացի հոն ինքնաշարժով, եւ պարզուեցաւ, որ երկրորդ յարկի լոգարանի ջուրը բաց էր քանի մը օր եւ թերեւս քանի մը շաբաթ: Ներքեւի յարկի պատերուն ամբողջ ծեփը թափած էր:

Ես գիտեմ, որ առաջին հայեացքէն ստիկա վատ կը թուի, բայց դուք չէք գիտեր, եւ եղբայրս նոյնպէս չէր գիտեր, որ ես արդէն պայմանագիր ստորագրած էի ամբողջ շէնքի ներքին եւ արտաքին յարդարանքը հեռացնելու եւ շէնքն ամբողջովին ձեւափոխելու մասին, եւ աշխատանքները պիտի սկսէին երկու շաբաթէն: Այնպէս որ, ջուրէն յառաջացած վնասը բոլորովին խնդիր չէր, քանի որ այն, ինչ վնասուած էր, միեւնոյնն է՝ պիտի հեռացուէր: Բայց կատարուեցաւ հետեւեալը. իմ ապահովագրական ընկերութիւնը փոխհատուցեց վնասը, եւ այդ գումարը բաւական էր՝ իմ օդանաւը գնելու համար:

Մի՞թէ այդ ամէնը կատարուեցաւ հետս: Ես ստացայ օդանաւ եւ գրասենեակային շէնք՝ առանց պարտքի: Որքա՞ն պէտք է ջանք քափէի, որպէսզի իրագործէի այդ ամէնը սովորական պայմաններուն մէջ: Այո, այդ ամէնն ի՛մն էր: Այժմ, երբ կը թռչիմ այդ օդանաւով եւ կ'անցնիմ իմ հողատարածքի վրայով, ես կը յիշեմ, որ օդանաւը կառավարելը նման է Աստուծոյ թագաւորութեան, որուն կառավարումը եւ օրէնքները թոյլ կու տան մեզի ապրիլ այլ հարթութեան մէջ: Ինչպէս թրթուրի եւ թիթեռի

պարագային, թրթուրը երբեք չէր կրնար Մեքսիքա հասնիլ, որքան ալ արագ վազէր իր ուղքերով: Իմ կեանքը, որ սահմանափակուած էր գոյատեւմամբ եւ վախով, վերափոխուած էր Աստուծոյ Թագաւորութեամբ: Օգտուելով Թագաւորութեան օրէնքներէն՝ ես գտայ անսահմանափակ հնարաւորութիւններով լեցուն կեանք:

Աւարտելով այս գիրքը՝ կ'ուզեմ բաժնեկցիլ եւս մէկ սուրբգրային հատուածով: Համոզուած եմ, որ դուք լսած էք այն ձեր ամբողջ կեանքին մէջ: Բայց կը կարծեմ՝ այժմ այն բոլորովին նոր իմաստ կը ստանայ ձեզի համար:

*«Ինծի եկէ՛ք, բոլոր վաստկածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կու տամ ձեզի: Ձեր վրայ առէք Իմ լուծը եւ Ինձմէ՛ սորվեցէ՛ք, որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ ձեր անձերուն համար հանգստութիւն կը գտնէք: Որովհետեւ Իմ լուծը քաղցր է, եւ Իմ բերը՝ թեթեւ:»*

– Մատթէոս 11.28,29

Յիսուսը եկաւ՝ վերցնելու մեզմէ մեր լուծը՝ այս երկրի անէծքի համակարգի տանջալի աշխատանքը եւ քրտինքը: Այժմ մենք պէտք է վերցնենք Անոր լուծը (այն, ինչ որ կատարուած է) եւ հանգստութիւն գտնենք (եօթներորդ օրը՝ ճշմարիտ Շաբաթը) մեր անձերու համար:

Դուք կրնաք վերապրիլ զարմանալի բաներ ձեր կեանքին մէջ՝ պարզապէս ընելով այն, ինչ ըսաւ Պետափրէսը, այսինքն՝ ապրելով Թագաւորութեան օրէնքներով: Որոշո՛ւմ կայացուցէք այսօր համաձայնեցնել ձեր կեանքն Աստուծոյ Թագաւորութեան օրէնքներուն եւ սկսէ՛ք վայելել համաձայնութեան գօրութիւնը: Սկսէ՛ք ձեր ֆինանսական յեղափոխութիւնն այսօր, մէկ կողմ նետեցէ՛ք հին կեանքի ոճը, հին կառավարումը, այս երկրի անէծքի համակարգը, որուն մէջ կայ աղքատութիւն, հիւանդութիւն եւ անյուսութիւն: Ձգեցէ՛ք ձեր հին թրթուրային կենսաոճը եւ սկսէ՛ք թռչիլ՝ կիրառելով Թագաւորութեան օրէնքները, որոնք Յիսուսը հասանելի դարձուց ձեզի համար: Դուք այդ Թագաւորութեան քաղաքացին էք:

**Դուք օրինական իրաւունքնե՛ր ունիք:**

\*\*\*

Եթէ այս գիրքը հետաքրքրեց ձեզի, եւ եթէ դուք որոշում կայացուցած էք դառնալ Թագաւորութեան աշակերտ, կ'առաջարկեմ ձեզի այցելել GaryKeesee.com կայքը, ուր կը գտնէք տեղեկութիւններու ամբողջ դարան, որ կ'օգնէ ձեզի եւ կ'աշակերտէ Թագաւորութեան մէջ: Ես նոյնպէս կը ցանկամ խրախուսել ձեզի, որ դառնաք «Յեղափոխական խումբի գործընկեր», ինչի շնորհիւ դուք հնարաւորութիւն կ'ունենաք դիտել յատուկ միջոցառումներ եւ ուսուցողական տեսանիւթեր:

Ֆինանսական բնագաւառին մէջ յաղթող ըլլալու համար անհրաժեշտ է ե՛ւ հոգեւոր, ե՛ւ երկրային՝ բնական գիտելիք: Եթէ կը ցանկաք իմանալ, թէ ինչպէս ազատիք պարտքերէն եւ ստանաք պարտքերէն ազատելու անվճար ծրագիր՝ պատրաստուած իմ «Ֆորուըրտ Ֆայնենշլ Կրուփ» (Forward Financial Group) ընկերութեան կողմէն, հեռաձայնեցէ՛ք 1-800-815-0818 թիւին:

Ձեր մեծ ջանքերով վաստկած կենսաթոշակային միջոցները պաշտպանելը նոյնքան կարեւոր է, որքան իմանալը, թէ ինչպէս վաստկիք ատոնք, յատկապէս ներկայ անկայուն ֆինանսական պայմաններուն մէջ: Մեր ընկերութիւնը ներդրած է աւելի քան հարիւր միլիոն տոլար մեր յաճախորդներու համար, եւ անոնցմէ ոչ ոք կորսնցուցած է նոյնիսկ մէկ սենթ վերջին 15 տարուան մէջ՝ մեր երկրին մէջ տիրող ֆինանսական խառնաշփոթի պայմաններուն մէջ: Կրկին, ձեր հեռախօսազանգը եւ մեր խորհուրդներն անվճար են: Հեռաձայնեցէ՛ք 1-800-815-0818 թիւին՝ տեղեկութիւն ստանալու համար:

Տրենտան եւ ես որոշում կայացուցած ենք օգնել անհատներուն եւ ընտանիքներուն յաղթելու կեանքին մէջ: Ահա թէ ինչու Տրենտան կը թողարկէ իր «Տրենտա» կոչուող հեռուստատեսային հաղորդումը: Այս հաղորդման նպատակն է խօսիլ ընտանեկան կեանքի մասին եւ խրախուսել բոլոր տարիքի կանանց: Այցելեցէ՛ք Drenda.com կայքը՝ աւելին իմանալու համար:

Վերջապէս, Տրենտան եւ ես կը ցանկայինք առաջարկել ձեզի

աջակցիլ աշխարհով մէկ սփռուած եկեղեցիներու եւ հովիւներու: Մեր «H-3» աջակցութեան նախագիծի նպատակն է օգնել մարդոց կեանքի գործնական հարցերուն մէջ, ինչ որ մեր սրտի ցանկութիւնն է: Ամէն տարի «H-3»-ը կը տրամադրէ տասնեակ հազարաւոր ուսումնական նիւթեր աշխարհով մէկ գտնուող հովիւներուն: Մենք նոյնպէս կ'օգնենք կերակրելու քաղցածներուն, կ'աջակցինք այնպիսի ծառայութիւններու, որոնց նպատակն է վերջ տալ սեռական մարմնավաճառութեանը (կանանց եւ երեխաներու ապօրինի վաճառքին) բազմաթիւ երկիրներու մէջ, աջակցիլ մանկատներու, ֆինանսապէս աջակցիլ հովիւներու բազմաթիւ երկիրներու մէջ, ինչպէս նաեւ ապաստան տրամադրել կանանց մեր քով՝ Օհայօ նահանգին մէջ: Մեր նպատակն է օգնել ամբողջ աշխարհի մարդոց իմանալու Աստուծոյ Թագաւորութեան մասին եւ բացայայտելու այն ազատութիւնը եւ բաւականութիւնը, որոնք Աստուած կը ցանկայ պարգեւել բոլորիս:

Անչափ շնորհակալութիւն, որ թոյլ տուիք ինծի պատմել մեր զարմանալի պատմութիւնը: Այժմ սկսէք գրել ձե՛ր կեանքի զարմանալի պատմութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութեան հետ:





## Կերի Քիսիի

### «Ձեր ֆինանսական յեղափոխությունը» գրքաչարի գիրքերը

Համաձայնության գործունի

Հանգիստի գործունի

Մարտավարության գործունի

Մատակարարման գործունի

Առատաձեռնության գործունի

# ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

## Համաձայնության զորութիւնը

Կարդացէ՛ք այս գիրքը, եթէ դուք....

**ՅՈԳՆԱԾ ԷՔ ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԵՆ**

**ԿԸ ՅԱՆԿԱՔ ԱԶԱՏԻԼ ՊԱՐՏՔԵՐԷՆ**

**ԶԷՔ ԳԻՏԵՐ, ԹԵ ՈՒՐԿԵ ԿՐՆԱՔ ՍԿՍԻԼ**

**ԱՆՅՈՒՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԷՔ**

Կերի Քիսին անձամբ եղած է այդ վիճակի մէջ: Ինը տարի շարունակ, ծանր ֆինանսական դրութեան պատճառով, անոր կեանքը եղած է սաստիկ զգացմունքային խառնաշփոթի մէջ: Վարկային կազմակերպութիւններու հեռախօսազանգերը, Հարկային տեսչութեան արգելանքները, դատերն ու ամօթը կը կազմէին անոր կեանքի մասը: Այնուամենայնիւ, օր մը ամէն ինչ փոխուեցաւ, երբ Աստուած խօսեցաւ Կերիին հետ անոր ֆինանսներուն վերաբերեալ եւ տուաւ զաղտնիք մը, որ շրջադարձօրէն փոխեց անոր կեանքը. ան ազատեցաւ պարտքերէն, հիմնադրեց միլիոնաւոր տոլարներ արժող ընկերութիւններ, եւ այսօր ան կը պատմէ այն բանալիներուն մասին, որոնք փոխեցին իր կեանքն իր՝ «Ֆինանսներու կարգաւորում» հեռուստատեսային հաղորդման միջոցով, որ կը հեռարձակուի ամէն օր աշխարհի բոլոր ժամային գօտիներուն մէջ: Կերին այս մասին սորվեցուցած է հարիւր հազարաւոր մարդոց աշխարհով մէկ՝ համաժողովներու ընթացքին եւ անձնական խորհրդատուութիւններու միջոցով: Անոր խօսքով, կան բազմաթիւ սկզբունքներ, որոնք յաջողակ կեանքի մաս կը կազմեն, բայց եթէ ան կարենար բաժնեկցիլ միայն ատոնցմէ մէկով, կը խօսեր այս սկզբունքին մասին: Կերին կը հրաւիրէ ձեզ միանալու ֆինանսական յեղափոխութեան եւ արմատապէս փոխելու ձեր ֆինանսական վիճակը Համաձայնության զորութեան միջոցով:



Կերի Քիսին հեղինակ է, քարոզիչ, գործարար, ֆինանսական մասնագետ եւ հովիւ, որուն ձգտումն է օգնել մարդոց յաղթելու կեանքի մէջ, յատկապէս հաւատքի, ընտանիքի եւ ֆինանսներու բնագաւառներուն մէջ: Կերին եւ կ'ինը՝ Տրենտան, ստեղծած են քանի մը յաջողակ ձեռնարկութիւններ եւ «Հաւատքի կեանք հիմա» ծառայութեան հիմնադիրներն են, որ կը թողարկէ երկու հեռուստատեսային հաղորդում՝ «Ֆինանսներու կարգաւորում» եւ «Տրենտա» անուանումներով, կ'առաջնորդեն համաժողովներ աշխարհով մէկ եւ կը սրամարդեն գործնական նիւթեր: Քիսիները կը հովուեն նաեւ «Հաւատքի կեանք» եկեղեցին, որ կը գտնուի Օհայօ նահանգի Զոլմարտ քաղաքի մօտակայքը:

**GKM** GARY KEESEE  
MINISTRIES

garykeesee.com